# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

**1–2** (27–28). **2001**

301–2001 ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ



ХРИСТИАНСКАЯ АРМЕНИЯ CHRISTIAN ARMENIA



**ՄԱՀ ՈՉ ԻՄԱՑԵԱԼ՝ ՄԱՀ Է,**
**ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ՝ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ**

*Եղիշէ, 5-րդ դար*

**СМЕРТЬ НЕОСОЗНАННАЯ ЕСТЬ СМЕРТЬ,**
**СМЕРТЬ ОСОЗНАННАЯ ЕСТЬ БЕССМЕРТИЕ**

*Егише, V век*

**DEATH NOT UNDERSTOOD IS DEATH,**
**DEATH UNDERSTOOD IS IMMORTALITY**

*Eghishe, 5th century*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ **1–2** (27–28). **2001**

**Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն**
**Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ**

**Գրիգորյան Մ. Գ.**
(նախագահ)
**Սարգսյան Ա. Ե.**
(գլխավոր խմբագիր)
**Ագոյան Բ. Բ.**
**Աղաբեկյան Ա. Ա.**
**Աղայան Գ. Ա.**
**Այդինյան Ռ. Ա.**
**Ապրիամով Է. Ա.**
**Գասպարյան Վ. Ս.**
**Գասպարյան Տ. Շ.**
**Գրիգորյան Մ. Ս.**
**Գևորգյան Ս. Յ.**
**Իսրայելյան Վ. Ս.**
**Խաչատուրով Յ. Գ.**
**Կարապետյան Լ. Ս.**
**Հայրապետյան Վ. Ա.**
**Հարությունյան Ա. Թ.**
**Հարությունյան Մ. Հ.**
**Ղազարյան Ա. Վ.**
**Մարտիրոսյան Ս. Ս.**
**Մարտիրոսով Լ. Ա.**
**Մելքոնյան Գ. Գ.**
**Մելքոնյան Մ. Գ.**
**Միրզոյան Ս. Վ.**
**Շադյան Պ. Ա.**
**Չիլինգարյան Դ. Ս.**
(գլխ. խմբ. տեղակալ)
**Սարգսյան Ա. Գ.**
**Սարգսյան Մ. Ս.**
**Սիմոնյան Ռ. Ա.**
**Տեր-Գրիգորյանց Ն. Գ.**
**Քոթանջյան Հ. Ս.**
**Քոչունց Կ. Գ.**

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ—1700

*Շահե արքեպիսկոպոս Աճեմյան*, Սրտի խոսք հայ զինվորին . . . . . . . . . . 9

*Հ. Ա. Գևոր·յան*, Քրիստոնեության ընդունումը Հայաստանում պատմության փիլիսոփայության տեսանկյունից . . 15

*Է. Լ. Դանիելյան*, Հայրենիք—պետություն—եկեղեցի եռամիասնությունը . . . . . . . . . . 34

*Ս. Հ. Հարությունյան*, Քրիստոնեությունը՝ հայրենիքի պաշտպանության հո·ևոր-բարոյական զորույթ . . . . . . . . . . 44

*Ս. Մ. Ստեփանյանց*, Հայ առաքելական եկեղեցու և աշխարհիկ կառույցների փոխհարաբերությունները պատմական հոլովույթում . . . . . . . . . . 58

*Մ. Լ. Կարապետյան*, Հայ առաքելական եկեղեցու դերը Հայաստանի առաջին հանրապետության ազ·ային բանակի կազմավորման և ամրապնդման ·ործում . . . . . . . . . . 69

*Կ. Ա. Հարությունյան, Ա. Ս. Տերչանյան*, Հայ առաքելական եկեղեցու օ·նությունը Կարմիր բանակին Հայրենական մեծ պատերազմում . . . . . . . . . . 74

*Պար·և արքեպիսկոպոս Մարտիրոսյան, Մ. Ա. Հարությունյան*, Արցախի թեմը և Ադրբեջան—Ղարաբաղ հակամարտությունը . . . . . . . . . . 84

*Ա. Ա. Դաբաղյան*, Միջնադարյան խաչադրոշները հայկական քրիստոնեական մշակույթում . . . . . . . . . . 90

### ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*Արշեն աբեղա Սանոսյան*, Բանակային քահանաների հաստատությունը ՀՀ զինված ուժերում . . . . . . . . . . 99

### ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

*Լ. Ս. Կարապետյան*, Անձնակազմով զորքերի համալրման հիմնական զորահավաքային միջոցառումները . . . . 104

*Մ. Է. Մկրտչյան և ուրիշներ*, Ռազմական կորուստների դասակար·ման հարցի շուրջ . . . . . . . . . . 110

### ՀՕՊ-Ի ԶՈՐՔԵՐՈՒՄ

*Ա. Ա. Պողոսյան, Ս. Ա. Ասատրյան*, Հակառակորդի ավիացիայի հակազդեցությունը զենիթահրթիռային զորքերին և դրա դեմ պայքարի որոշ եղանակներ . . . . . . . . . . 117

## ՌԱԶՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

*Ն. Գ. Տեր-Գրի·որյանց,* Զինված ուժերի դերը և տեղը պետական կառավարման ընդհանուր համակար·ում ........................................ 124

## ՌԱԶՄԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

*Մ. Ա. Սար·սյան,* Զինված ուժեր պահելու ծախսերի կանխատեսման հարցի շուրջ ........................................................ 129

## ՌԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

*Ա. Ս. Աղաբալյան և ուրիշներ,* Բարձր լեռնային պայմաններին պինծառայողների հարմարման որոշ առանձնահատկություններ .......................... 134

*Մ. Գ. Մար·արյան և ուրիշներ,* Հրազենային վերքերի տեղային բուժումը դեզօքսիկորտիկոստերոնով ........................................ 137

## ԶՈՐՔԵՐԻ ԹԻԿՈՒՆՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

*Վ. Վ. Աբրահամյան,* Աղիքային նեմատոդներով վարակված ոչխարների կաթի որակի վրա ախտահարության ազդեցության վերացման անասնաբուժասանիտարական միջոցառումները ........................................ 140

## ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

*Լ. Պ. Արտիշչև,* Մարտական իրադրությունում անձնակազմի հուզական անկայունության կանխման հարցի շուրջ ........................................ 144

## ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

*Մ. Լ. Կարապետյան,* Ռուսական բանակի հայկական հրաձ·ային ·ումարտակները որպես 20-րդ դարի առաջին հայկական կանոնավոր զորամասեր ........ 158

ՌԱԶՄԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՈՒՅԹՆԵՐ .............. 170

## ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

*Ա. Ռ. Մարտիրոսյան,* Հայերենի ռազմա·իտական տերմինաբանության ձևավորման պատմությունից ........................................ 173

*Վ. Խ. Բաղդասարյան,* Համարի բառարան ................................ 176

* * *

**Ի գիտություն հեղինակների և ընթերցողների**

**ՀՀ ՊՆ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:**

**Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ մեքենագրված երկու ինտերվալով, մինչև 15 էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինի նրա ռուսերեն ամփոփումը մինչև 2 էջ ծավալով:**

**Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:**

**Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:**

**Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:**

**Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:**

**Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:**

**Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:**

**«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)**
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
**№ 1—2** (27—28)**. 2001**
Издается 4 раза в год

**РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ**
*М. Г. Григорян* (председатель); *А. Е. Саркисян* (гл. редактор);
*А. А. Агабекян; Г. А. Агаян; Б. Б. Азоян; Р. А. Айдинян; Э. А. Априамов; В. А. Айрапетян;*
*А. Т. Арутюнян; М. А. Арутюнян; В. С. Гаспарян; Т. Ш. Гаспарян; С. Ц. Геворгян;*
*М. С. Григорян; В. С. Исраелян; А. В. Казарян; Л. С. Карапетян; Г. С. Котанджян;*
*К. Г. Кочунц; Л. А. Мартиросов; С. С. Мартиросян; Г. Г. Мелконян; М. Г. Мелконян;*
*С. В. Мирзоян; А. Г. Саргсян; М. С. Саркисян; Р. А. Симонян; Н. Г. Тер-Григорьянц;*
*Ю. Г. Хачатуров; Д. С. Чилингарян* (зам. гл. редактора); *П. А. Шадян.*

## СОДЕРЖАНИЕ

**ХРИСТИАНСКАЯ АРМЕНИЯ—1700**

*Архиепископ Шаге Аджемян.* Сердечное слово армянскому воину . . . . . 9

*Г. А. Геворкян.* Принятие христианства в Армении с точки зрения философии истории . . . . . . . . . . 15 (30)*

*Э. Л. Даниелян.* Триединство Родина—Государство—Церковь . . . . . . 34 (41)

*С. Г. Арутюнян.* Христианство как духовно-моральный фактор в деле защиты родины . . . . . . . . . . 44 (55)

*С. М. Степанянц.* Взаимоотношения Армянской апостольской церкви и светских структур в историческом аспекте . . . . . . . . . . 58 (67)

*М. Л. Карапетян.* Роль Армянской апостольской церкви в формировании и укреплении национальной армии первой Республики Армения . 69 (73)

*К. А. Арутюнян, А. С. Терчанян.* Помощь Армянской апостольской церкви Красной армии в Великой Отечественной войне . . . . . . . . . . 74 (80)

*Архиепископ Паргев Мартиросян, М. А. Арутюнян.* Арцахская епархия и конфликт Азербайджан—Карабах . . . . . . . . . . 84 (88)

*А. А. Дабагян.* Средневековые крестные знамена в армянской христианской культуре . . . . . . . . . . 90 (97)

**СТРОИТЕЛЬСТВО ВООРУЖЕННЫХ СИЛ**

*Иеромонах Аршен Саносян.* Институт армейских капелланов в Вооруженных силах РА . . . . . . . . . . 99 (102)

**МОБИЛИЗАЦИОННАЯ ГОТОВНОСТЬ**

*Л. С. Карапетян.* Основные мобилизационные мероприятия по пополнению войск личным составом . . . . . . . . . . 104 (115)

*М. Э. Мкртчян и др.* К вопросу классификации военных потерь . . 110 (115)

**В ВОЙСКАХ ПВО**

*А. А. Погосян, С. А. Асатрян.* Противодействие авиации противника зенитно-ракетным войскам и некоторые способы борьбы с ним . . . . . . 117 (122)

---

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

**ВОЕННАЯ ПОЛИТИКА**

*Н. Г. Тер-Григорянц.* Роль и место вооруженных сил в общей системе государственного устройства . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 124 (127)

**ВОЕННАЯ ЭКОНОМИКА**

*М. А. Саркисян.* К вопросу прогнозирования расходов на содержание вооруженных сил . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 129 (133)

**ВОЕННАЯ МЕДИЦИНА**

*А. С. Агабалян и др.* Некоторые особенности адаптации военнослужащих к условиям высокогорья . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 134 (138)

*М. Г. Маргарян и др.* Местное лечение огнестрельных ранений дезоксикортикостероном . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 137 (138)

**ТЫЛОВОЕ ОБЕСПЕЧЕНИЕ ВОЙСК**

*В. В. Абрамян.* Ветеринарно-санитарные мероприятия по устранению влияния кишечных нематод на качество молока от больных овец . . . . . . 140 (142)

**ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ**

*Л. П. Артищев.* К вопросу о предотвращении эмоциональной неустойчивости личного состава в боевой обстановке . . . . . . . . . . . . . . . . . . . 144 (153)

**ВОЕННАЯ ИСТОРИЯ**

*М. Л. Карапетян.* Армянские стрелковые батальоны русской армии— первые армянские регулярные военные формирования XX века . . . . . . 158 (167)

**НОВОСТИ В ВОЕННОЙ ОБЛАСТИ** . . . . . . . . . . 170

**ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ**

*А. Р. Мартиросян.* Из истории формирования армянской военной терминологии . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 173

*В. Х. Багдасарян.* Словарь номера . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 176

**Список иллюстраций к статьям** . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 190

* * *

## К сведению авторов и читателей

Военно-научный журнал МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 15 страниц, напечатанных в два интервала, с приложением резюме на русском языке объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)
MILITARY-SCIENTIFIC QUARTERLY
OF THE MINISTRY OF DEFENSE OF THE REPUBLIC OF ARMENIA
**N 1—2** (27—28). **2001**
Is published 4 times a year

**EDITORIAL BOARD**

*M. G. Grigorian* (Chairman), *A. E. Sarkissian* (Editor-in-Chief),
*A. A. Aghabegian, G. A. Aghayan, E. H. Apreamov, B. B. Azoian, D. C. Chilingarian* (Deputy Editor-in-Chief), *T. Sh. Gasparian, V. S. Gasparian, S. Ts. Gevorgian, A. V. Ghazarian, M. C. Grigorian, V. A. Hairapetian, A. T. Haroutunian, M. H. Haroutunian, R. A. Idynian, V. S. Israelian, L. S. Karapetian, U. G. Khachaturov, H. S. Kotanjian, K. G. Kotchunts, S. S. Martirossian, L. A. Martirossov, G. G. Melkonian, M. G. Melkonian, S. V. Mirzoyan, A. G. Sargsian, M. S. Sarkissian, R. A. Simonian, P. A. Shadian, N. G. Ter-Grigoriants.*

# CONTENTS

**CHRISTIAN ARMENIA—1700**

*Shahe Archbishop Ajemian.* Heart's word to the Armenian soldier . . . . . . . . 9

*H. A. Gevorkian.* The adoption of Christianity in Armenia: a philosophy of history approachs . . . . . . . . 15 (32)*

*E. L. Danielian.* The triunity motherland—state—church . . . . . . . . 34 (41)

*S. H. Haroutunian.* Christianity as a spiritual and moral factor in the case of the native land's defence . . . . . . . . 44 (56)

*S. M. Stepaniants.* The relations of the Armenian Apostolic church and temporal structures in the historical aspect . . . . . . . . 58 (68)

*M. L. Karapetian.* The role of Armenian Apostoloc church in formation and fortification of National Army of the first Republic of Armenia . . . . . . . . 69 (73)

*K. A. Haroutunian, A. S. Terchanian.* The help of the Armenian Apostolic church to the Red army in the Great Patriotic War . . . . . . . . 74 (82)

*Archbishop Pargev Martirossian, M. A. Haroutunian.* The Artsakh diocese and the conflict Azerbaijan—Karabakh . . . . . . . . 84 (89)

*A. A. Dabaghian.* Medieval crossflags in Armenian Christian culture . . . . . 90 (98)

**CONSTRUCTION OF ARMED FORCES**

*Celibate priest Arshen Sanossian.* Institute of the army's chaplains in the Armed Forces of the Republic of Armenia . . . . . . . . 99 (103)

**THE MOBILIZATIONAL READINESS**

*L. S. Karapetian.* The main mobilizational measures on the reinforcement of the troops with the staff . . . . . . . . 104 (116)

*M. E. Mkrtchian & others.* About the issue of the classification of the military losses . . . . . . . . 110 (116)

**IN THE TROOPS OF THE ANTI-AIRCRAFT DEFENCE**

*A. A. Poghossian, S. A. Asatrian.* The counteraction of the air force of the enemy to the anti-aircraft and racket troops and some ways of fighting with hime . . . . . . . . 117 (123)

* Numbers in brackets mean page of text in English.

MILITARY POLICY

*N. G. Ter-Grigoriants.* The role and place of the Armed Forces in the common system of the state structure . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 124 (127)

MILITARY ECONOMICS

*M. A. Sarkissian.* To the issue of forecasting the expenditures on the support of the Armed Forces . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 129 (133)

MILITARY MEDICINE

*A. S. Agabalian & others.* Some peculiarities of the adaptation of military men to the conditions of the alpine . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 134 (139)

*M. G. Margarian & others.* The local treatment of the bullet wounds with dezoksicorticosteron . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 137 (139)

LOGISTIC SUPPORTS OF ARMIES

*V. V. Abrahamian.* Veterinary-sanitary measures on the removal of intestinal nematods' influence on the quality of the milk of the sick sheep . . . . . . 140 (143)

MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION

*L. P. Artishchev.* Concerning the issue of preventing the emotional unsteadiness of the staff in the fighting situations . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 144 (155)

MILITARY HISTORY

*M. L. Karapetian.* Armenian shooting battalions of Russian army—first Armenian regular military formation of XX century . . . . . . . . . . . . . . . . . . 158 (169)

SOMETHING NEW IN MILITARY FIELD . . . . . . . . 170

MILITARY-SCIENTIFIC TERMINOLOGY

*A. R. Martirossian.* From history of formation of Armenian Military terminalogy . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 173

*V. Kh. Bagdassarian.* Volume dictionary . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 176

**The list of illustrations affiliated to the articles** . . . . . . . . . . . . . . . 191

* * *

## For the information of the authors and readers

Military-scientific magazine of Ministry of Defence of Republic of Armenia «Haikakan banak» is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be double spaced and should not exceed 15 pages in length. Provide Russian summaries (2 page maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinion expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures, and photos should be of print quality.

Please explain acronyms.

Manuscripts are not returned.

301 2001



# ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

**1700**

ХРИСТИАНСКАЯ АРМЕНИЯ CHRISTIAN ARMENIA

# ՍՐՏԻ ԽՈՍՔ ՀԱՅ ԶԻՆՎՈՐԻՆ

*ՇԱՀԷ արքեպիսկոպոս ԱՃԵՄՅԱՆ, փիլիսոփայության և բանասիրության դոկտոր, պրոֆեսոր*

Անկախ Հայրենիքի հայ զինվո՛ր, որ ամուր կան·նած ես Հայաստանի և Արցախի սահմաններին և նայում ես հեռուն, շատ հեռուն՝ դեպի ապա·ան, տեսնու՞մ ես արդյոք ·ալիք սերունդների Հայաստանը, ամուր՝ իր լեռների նման, տերը իր հողերի և իր ճակատա·րի: Կարո՞ղ ես երևակայել, որ պիտի ·ա այն օրը, երբ փախստականը պիտի վերադառնա իր հողին՝ կառուցելու համար նոր տուն, նոր ·յուղ, նոր քաղաք:

Նայի՛ր ավելի հեռուն և կտեսնես այն օրը, երբ հայ պանդուխտը, կարոտի եր·ը շուրթերին, պիտի վերադառնա նոր Հայաստան՝ ամբողջ հայության հայրենիքը՝ ծաղկած և առավել կորացած:

Միայն անցյալ ունեցող ազ·ն է, որ տեսիլքներ է ծնում, և տեսիլքներն են, որ ·ծում են հաղթանակի ճանապարհները: Դու, հայ զինվո՛ր, վերջնական հաղթանակների ճանապարհին հառաջացող առաջին զինվորներից ես, որոնք առաջնորդում են մեր երազները դեպի իրա·ործում:

Դու, հայ զինվո՛ր, և քո բոլոր ընկերները ձեր քաջությամբ մեկ ան·ամ ևս փաստեցիք, որ որակն է էականը և ոչ քանակը, որ «փոքր ածուն» կարող է մեծ լինել, երբ արիության ·ործերով հերկվի:

Արիության աղբյուրը հավատքն է առ մեր հայրերի Աստվածը:

Ձեր կրծքի տակ ամուր պահեք ձեզ ավանդված հավատքը, որ կապել է մեզ մեր սրբազան հողին, մեր նահատակների կարմիր արյունին, մեր սրբերի խնկաբույր աղոթքին, մեր եկեղեցիների հպարտ ·մբեթին և հայկական մեր ինքնությանը:

Բավական պիտի լինի, որ մի օր ձեր զավակներին և թոռներին ասեք, թե դուք եղաք արցախյան ճակատի արի զինվորը, և նրանք միաբերան պիտի բացականչեն. «Ահա՛ հերոսը»:

Հերոս քաջամարտի՛կ, մեր բոլորի հույսերով փայլող աչքերը մեծ ակնկալություններով ուղղված են քեզ: Ստրկության երկար դարերին, կարծես անբացատրելի մի հրաշքով, հաջորդել են իրապարտության օրերը. պտտվեց մեր պատմության անիվը: Քո ձեռքերը իրականացրին այդ հրաշքը:

Մեր հայրերի Աստվածը դարձյալ այցի եկավ քրիստոնյա իր ժողովրդին, և առանց վարանումի կարող ենք ասել. «Եթե Տերը ինձ հետ է, ո՞վ կարող է ինձ հակառակվել»:

Քո կողքին է Նա, քեզ հետ՝ հիշելով իր ուխտը. «Մի՛ երկնչիր, հոտ փոքրիկ, զի հաճեցաւ հայր ձեր տալ ձեզ արքայութիւն»: Այնքան ժամանակ, որքան որ դու կան·նած ես դիրքերիդ վրա՝ խրոխտ կեցվածքով, փոքրիկ հոտը պիտի ապրի անվախ, աներկյուղ և ամուր, որովհետև այն հավատում է, թե փոքր ու մեծ չկա Աստծո հայրական նայվածքի տակ:

Մեր հայրերը հավատացին, թե սուրբ է մեր երկիրը: Նրանք կարդացել էին Աստվածաշունչը և ·իտեին Աստծո խոսքը՝ ուղղված Մովսեսին.

«Լոյծ զկապանս ոտից քոց, զի տեղի ուր կաս, երկիր սուրբ է» (Ելից, Գ, 5): («Արձակիր ոտքիդ կապերը, որովհետև այնտեղ, ուր կան·նած ես, երկիրը սուրբ է»):

Աստվածաշնչյան այս խոսքերը առաջին հիշատակությունն են մի երկրի, որ սուրբ է: Այս խոսքերն էին, որ հնչեցին Մովսես մար·արեի ականջին, երբ նա արածեցնում էր ոչխարները և հանկարծ մի մորենի տեսավ, որ վառվում էր, բայց չէր այրվում: Անկեզ մորենուց լսվեց աստվածային ձայնը, որ կոչում էր Մովսեսին լինելու իր ժողովրդի ազատարարը: Այնտեղ Աստված հայտնեց իր ինքնությունը, երբ, պատասխանելով Մովսեսի

հարցին, թե ով է իր հետ խոսողը, Նա ասաց. «ԵՍ ԵՄ ՈՐ ԷՆ»: Ըստ Աստվածաշնչի սուրբ է այն երկիրը, այն վայրը, ուր հայտնվում է կենդանի Աստված: Սուրբ նշանակում է մաքուր, անբիծ, պաշտելի, կատարյալ: Սա է Աստծո ստորո·ելիների ստորո·ելին: Եսայի մար·արեի տեսիլքի մեջ հրեշտակները փառաբանում են



«Նոյը իջնում է Արարատից» (1889 թ.), հատված. գործ՝ Հովհաննես Այվազովսկու

Աստծուն երեքսրբյան կոչված եր·ով. «ՍՈՒՐԲ, ՍՈՒՐԲ, ՍՈՒՐԲ, Տէր զօրութեանց, լի են երկինք և երկիր փառօք քո» (Եսայի, Զ, 3): Նույն բառը հնչում է նաև մեր եկեղեցիներում, երբ հավատացյալները ձայնակցում են հրեշտակներին ·ովաբանելու համար երկնի ու երկրի արարչին: Պատարա·ի ·երա·ույն պահին, երբ աստվածորդին մարմնանալու է պատարա·ի սկիհի մեջ, ·ինու և նշխարի սրբա·ործումով, եկեղեցին ողջունում է իր փրկչին նույն բառերով. «ՍՈՒՐԲ, ՍՈՒՐԲ, ՍՈՒՐԲ, Տերը զորությունների, երկինքը և երկիրը լի են քո փառքով»:

Հարց է ծա·ում, թե ինչպես կարելի է աստվածային ստորո·ելին կապել մի տեղի, վայրի, որ նյութական է՝ ավազ, ժայռ, քար կամ շենք: Պատասխանը պարզ կարող է թվալ առաջին ակնարկով, եթե ասենք, թե սրբի ներկայությունն է սրբա·ործում ներկայության վայրը: Սակայն չէ՞ որ տասնաբանյայի երկրորդ պատվիրանը խստիվ ար·ելում է կռապաշտությունը, որևէ պատկերի, արձանի, կուռքի կամ որևէ նյութական առարկայի պաշտամունքը: Անշուշտ, կռապաշտություն է պաշտել քարն ու ջուրը, կրակն ու մարդը, եթե աստվածացնենք նրանց, որովհետև մեկ Աստված կա, և բացի նրանից չունենք ուրիշ Աստված: Սակայն, եթե որևէ տեղ հատկանշենք իբրև սրբավայր և «սուրբ» ածականով պատորոշենք այն ուրիշ վայրերից, իրականում տեղը չէ, որ ընդունում ենք սուրբ, պաշտելի, այլ նկատում ենք այն իբրև մի ժամադրավայր, հանդիպման վայր, սպասման մի տեղ, ուր ·նում ենք փնտրելու Աստծո ներկայությունը: «ՈՒրախ եղէ ես ոյք ասէին ցիս ի տուն Տեառն երթիցուք մեք», ասում է սաղմոսեր·ուն, երբ տարեկան իր ուխտը կատարելու է ·նում Երուսաղեմի տաճարը: Տիրոջ տունն է տաճարը՝ սրբավայրերից սրբա·ույնը, դեպի ուր ·նում էր ամեն հրեա, դեմ-հանդիման կան·նելու իր Աստծո հետ և խոսելու, եր·ելու, փառաբանելու համար նրան, բայց, մանավանդ, նորո·ելու իր ուխտը, թե միշտ հավատարիմ պիտի լինի նրան: Գընալ դեպի ուխտավայր՝ վերանորո·ելու հաստատված ուխտը. ահա ինչ է ուխտա·նացությունը:

Հին ՈՒխտի հնա·ույն ուխտավայրը ·տնվում է Հայոց աշխարհում: Մովսես մար·արեից շատ առաջ Աստվածաշունչը հիշատակում է Նոյի ուխտը Աստծո հետ: Ծննդոց ·իրքը պատմում է, թե երբ Նոյ նահապետը իջավ տապանից դեպի Արարատյան դաշտ, կան· առավ մի բարձունքի վրա, սեղան կան·նեցրեց և ·ոհություն մատուցեց Աստծուն, որ բոլոր մարդկանցից ինքն էր ընտրված իբրև արդար, որ իրավունք ունի նաև ապրելու: Այնտեղ Աստված նահապետին խոստացավ, թե մարդկությունը այլևս չի կործանվի, և դաշինքը անխախտ կմնա մարդու և իր Աստծո միջև: Այդ վայրը Արտաշատի բլուրն է, ուր Խոր Վիրապն է՝ հայի հո·ևոր փրկության մեծ ուխտավայրը: Իրապես, եթե կան·նեք Խոր Վիրապի բարձունքին և նայեք Արարատին, այն անսահման մոտ կթվա ձեզ: Իսկ եթե հավատքի ձեր աչքերով նայեք նրան,

պիտի տեսնեք մարդկության նախապետին՝ Նոյին, և իր սերունդը, որ կարծես ·ալիս են դեպի ձեզ, ու պիտի վ·աք, թե դուք որդիներն եք Հաբեթի որդի Գոմերի որդու՝ Թոր·ոմի:

Այսօր դուք կոչված եք վերական·նելու նախնյաց հավատքով սրբացած մեր երկիրը իր սրբավայրերով և տաճարներով, որպեսզի նորո·վի ուխտը մեր հայրերի Աստծո հետ, առաջին ուխտը բոլոր ազ·երի նախահայր, միակ արդար Նոյ նահապետի հետ՝ կնքված Արարատյան դաշտավայրի դեպի Արարատ նայող բարձունքի վրա: Վերական·նեք լույսի խորանները ոչ միայն հայ հողի վրա, այլև մանավանդ ձեր սրտերի մեջ: Արձակեք աշխարհի տիղմերի մեջ աղտոտված ձեր կոշիկների կապերը, որպեսզի կարողանաք մաքուր ոտքերով մտնել այնտեղ, ուր երկիրը սուրբ է:

Դարեր, երկար դարեր մեր հայրերը ըմպուր ճաշակեցին բռնության, հալածանքի, անարդարության լեղին: Նրանց շատերի ճակատա·իրը եղավ ·աղթականությունը, անապատը և անխիղճ մահը: Ամբողջ ազ·ը սարսափազդու մի եղեռն ապրեց: Ամբողջ հայրենիքից մնացին միայն անուններ՝ Անի, Վան, Բիթլիս, Կարին... Իսկ կոտորածից ազատված խրտվիլակների մեջ, որոնք փրկվեցին, մնաց միայն ս·ավոր սիրտ և ահավոր վրեժ: Աշխարհի չորս ծա·երում ցրված այդ վերապրողների մեջ կորել էր հույսը, և տկարացել էր հավատքը, թե որևէ օր մեր երկնքի լազուրի տակ պիտի ծածանվի անկախության եռա·ույնը, նորից պիտի վառվի Լուսավորչի կանթեղը, և մեր հայրենիքի «թշվառ ու անտեր»-ից պիտի ծնվի «ազատն ու անկախը»:

Տասնյակ տարիներ հայ կոչված ձեռքերը լռեցրին եկեղեցիների զան·երը, ավարի ու ավերի մատնեցին մեր վանքերը, կողոպտել ուզեցին մեր հայրերի մաքուր հավատքը, փորձեցին սպանել ազ·ային հպարտությունը: Երբ եկավ ժամանակը, նույն այդ հավատքից ու նույն ազ·ից ոտքի կան·նեցիր դու, փինյալ հայորդի՛: Դու երդվեցիր քո հայրենիքի և Աստծո առջև հավատարիմ մնալ քո ժողովրդին, քո պատմությանը, վերական·նել քո հո·եկան անպարտելի ուժը, և, հո·ու վենքերով վինված, դու հավաքեցիր ամբողջ զորությունդ և կան·նեցիր և շարունակում ես մնալ հայրենյաց պաշտպան:

Ինչպես հավատում ես ուժիդ և արիությանդ, պիտի հավատաս նաև, որ արդարությունը դեռ չի ասել իր վերջին խոսքը, որ պիտի տեսնենք բոլորս արդարության արե·ակի ծա·ելը մեր լեռների բարձունքներից ու պիտի փառք տանք մեր հայրերի Աստծուն, որին է միայն պատկանում դատաստանն ու վրեժխնդրությունը:

Կարդա՛ մեր պատմությունը, որպեսզի արիանա քո հո·ին: Կարդա՛ մեր հնա·ույն պատմիչ Փավստոս Բուզանդից քաղված մի հատված: Նշեմ, որ Բուզանդը ·րել է հայոց պատմությունը՝ սկսած 4-րդ դարից, այսինքն՝ քրիստոնեության ընդունումից հետո: Պատմության 12-րդ ·լուխը հայոց Արշակ թա·ավորի մասին է, որը 30 տարի Բյուզանդիայի և Պարսկաստանի հետ մարտեր էր մղում: Նրան հրավիրում է պարսից Շապուհ արքան խաղաղության բանակցություններ վարելու նպատակով: Արշակ թա·ավորը ընդունում է հրավերը և մեկնում Տիզբոն: Բանակցություններին նախորդած ճաշկերույթի ընթացքում հայոց թա·ավորը ձերբակալվում է և դատապարտվում, քանի որ նա մերժում է պարսից թա·ավորի՝ հայերի դավանափոխ լինելու պահանջը:

Այսուհանդերձ, բանակցությունները շարունակվում են: Պարսից թա·ավորը ·ալիս է այն համոզման, որ կարելի է Արշակին ազատ արձակել և վստահել նրա ազնվությանը իբրև դաշնակցի ընդդեմ Բյուզանդիայի: Պարսից հո·ևորականները միջամտում են և վ·ուշացնում Շապուհին, որ հավատ չընծայի հայոց թա·ավորին, քանի որ վերջինս կան·նած չէ իր հայրենի հողին: «Ապա Շապուհ թա·ավորը հրաման է տալիս՝ իր խորանի հատակի կեսի վրա շաղ տալ Հայաստանից բերած հողը և վրայից ջուր ցանել, իսկ մյուս կեսը թողնել բնական հողով: Եվ Հայոց Արշակ թա·ավորին բերել

տվեց իր առաջ և մյուս մարդկանց հրամայեց հեռանալ և նրա ձեռքից բռնած ճեմելով շրջում էր: Խորանում երթևեկելիս, երբ ճեմում էին պարսկական հողի վրա, ասաց նրան. «Արշակ թա·ավոր Հայոց, դու ինչու՞ ինձ թշնամի եղար. ես քեզ որդու նման սիրեցի, կամեցա աղջիկս այն տեղն էր հասնում, հայկական հողի վրա ոտք էր դնում՝ սաստիկ ըմբոստանալով, հպարտանալով լեզուն փոխում էր, սկսում էր խոսել և ասել. «Հեռո՛ւ ինձանից, չարա·ործ ծառա, որ տերերիդ վրա տեր ես դարձել, և ես չեմ ների քեզ և քո որդոց իմ նախնիների վրեժը և Ար-



ՀՀ նախա·ահ Ռ. Քոչարյանի այցը Սբ. Հակոբ եկեղեցի. Երուսաղեմ, 2000 թ. հունվար

քեզ կնության տալ, իսկ դու իմ դեմ խռովեցար, ինքդ քեզանից, հակառակ իմ կամքի, ինձ թշնամի դարձար և ահա ամբողջ երեսուն տարի է ինձ հետ պատերազմեցար»:

Արշակ թա·ավորը ասում է. «Մեղանչեցի և հանցավոր եմ քո առաջ, որովհետև ես եկա, քո թշնամիներին հաղթեցի ու կոտորեցի և հույս ունեի քեզանից կյանքի պար·և ստանալու. բայց իմ թշնամիները ինձ մոլորեցրին, քեզանից վախեցրին և փախչել տվին: Եվ երդումս, որով քեզ երդվեցի՝ ինձ քո առաջը բերեց, ես հիմա քո առաջն եմ, քո ծառաղ քո ձեռքի տակ եմ. ինչպես ուզում ես՝ վարվիր ինձ հետ, եթե կամենում ես՝ սպանիր, որովհետև ես, քո ծառադ, շատ հանցավոր եմ քո առաջ, մահապարտ եմ»:

Շապուհ թա·ավորը նրա ձեռքից բռնած շրջում էր ճեմելով և, իբրև միամտաբար, բերում էր հայկական հող շաղ տված հատակի վրա: Իսկ երբ (Արշակը) տավան թա·ավորի մահը: Որովհետև այժմ դուք, ծառաներդ, ձեր տերերի՝ մեր բարձն եք հափշտակել, բայց ես չեմ թույլ տա այդ, մինչև դարձյալ մենք մեր տեղը չ·րավենք»:

(Շապուհը) դարձյալ նրա ձեռքից բռնած տանում էր պարսկական հողի վրա. այն ժամանակ (Արշակը) կղջում էր ասածների վրա, խոնարհվում էր, նրա ոտներն էր ընկնում, սաստիկ ափսոսում, կղջում էր ասածների վրա: Իսկ երբ ձեռքից բռնած տանում էր հայկական հողի վրա՝ առաջինից ավելի խիստ էր խոսում: Նորից հեռացնում էր այդ հողի վրայից՝ սկսում էր խոսքերով ապաշխարել»[1]:

Ըստ այս հատվածի և՛ մեր հավատքի հողը, և՛ ջուրը, առաջին հերթին, խորհրդանշում են այն ուժն ու կորովը, որով

[1] *Փավստոս Բուզանդ*, Հայոց պատմություն (թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի): Ե., 1947, էջ 216—217:

ո·եշնչվում ու քաջություն է ստանում ժողովրդի հավաքական կերպարը մարմնավորող թա·ավորը: Հողի և ժողովրդի միջև իրական կապը ֆիզիկական է և խորհրդանշում է այդ հողին հաստատապես պատկանող ժողովրդի ·ոյությունը: Եվ այդ կապը նաև ուժային է. ժողովուրդը ամուր է վ·ում իրեն, երբ իր հողերը ոռո·ում է իր սեփական ·ետերի ջրերով:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ հայ ժողովրդի ցեղասպանությունից մազապուրծ եղած մասը ցրվեց աշխարհով մեկ, իսկ մյուս մասը հռչակվեց անկախ և հետա·այում կոչվեց Սովետական հանրապետություն, հայկական հայրենասիրությունը կան·նեց երկընտրանքի առջև: Կարելի՞ է արդյոք այդ հանրապետությունը համարել համայն հայության հայրենիքը, որը ամեն մի մեռնող հայի աչքերում արտացոլվող երազանքն էր: Հետևապես, հաշվի առնելով մի Հայաստանի նկատմամբ դժվարությամբ առաջ եկող սերը, ուր կոմունիզմը ճնշում էր բոլոր կար·ի ազատությունները, որոշ մտածողներ հան·եցին «հո·նոր Հայաստան» մտքին և այն պաշտպանելով ստեղծեցին վերացական մի հայրենասիրություն՝ հիմնված անհատականության, ազ·ային ժառան·ության, լեզվի, սովորույթների պահպանման և ամենից կարևորը՝ ազատ և միավորված Հայաստան ունենալու երազանքի վրա: Կասկածից դուրս է, որ հայրենի հողից կտրված ամեն հայ իր սրտում փայփայում էր այդ Հայաստանը: Անցան այդ տարիները՝ իրենց հետ տանելով երազական Հայաստանի հեռանըկարը: Այսօր ներկա իրականություն է Հայաստանի անկախ հանրապետությունը: Ապրում ենք այն օրերը, երբ ամեն մի հայ, ինչպես իր թա·ավորը, ոտքերը նախնյաց հողին դնելիս ամենայն ուժ·նությամբ պիտի վ·ա իր ամբողջական լինելը:

Այս փաստին մի քանի մեկնություններ կարելի է տալ: 5-րդ դարի պատմիչ Մովսես Խորենացին տվեց դրա բիբլիական մեկնաբանությունը: Այսպես, երբ Նոյը հաստատվեց Արարատ լեռան վրա, Աստված հողը բաժանեց նրա Սեմ, Քամ և Հաբեթ որդիների միջև: Սեմը եղավ Աբրահամի նախահայրը, Քամը՝ բաբելացիների (Միջա·ետքի, Ե·իպտոսի և Եթովպիայի ժողովուրդների), իսկ Հաբեթը՝ հայերի: Նույն պատմիչը իշխանական ծա·ումը մեկնելիս նկատում է, որ ամենաազդեցիկ ճյուղերից մեկը սերում է հրեաներից: Դա Բա·րատունիներն են, որոնց նախահայրը՝ «հրեաների առաջնորդներից մեկը, որը ·երության տարվեց Նաբու·ոդոնոսորի կողմից, կոչվում էր Շամբ», խնդրեց հաստատվել Հայաստանում: 9-րդ դարում Բա·րատունիները հայկական թա·ավորությունը նորացրին և արաբական խալիֆների հետ դաշինքով ապահովված կենսակերպը հաստատեցին: Այս թա·ավորությունը ·ոյատևեց մինչև սելջուկյան հարձակումները: Ի՞նչ է փորձում ապացուցել մեր պատմիչը: Այն, որ պու·ահեռ կա Աբրահամի՝ Քանանում, իսկ հայերի՝ Հայաստանում հաստատվելու միջև: Սակայն վերջինի դեպքում ՈՒխտի մեջ այդ ·աղափարը հստակորեն տրված չէ և փոխարինված է մեկ այլ ենթադրությամբ. հողը պաշտպանելու կորովը երկնային է: Հայ առաջնորդների հերոսական ·ործողությունների հիմքում ընկած այս միտքը պաշտպանվում է Խորենացու կողմից նշված հայտնի սկզբունքով. «Սահման քաջաց... »:

Այս ամեն ասվածը ձեզ կարող է հան·եցնել այն մտքին, որ մենք հողի նըկատմամբ ռազմատենչ ենք: Բայց ես կփորձեմ այս միտքը բանաձևել հետևյալ կերպ. եթե Աստված քեզ համար ընտրել է հող, ապա կտա նաև ուժ այն պաշտպանելու: Հայերենում «ընտրյալ» կամ «խոստացված» բառերի համար օ·տա·ործված է «ավետյաց» բառը, և այն դրված է հո·նակի թվով: «Ավետյաց երկիր» նույն բառն օ·տա·ործված է «Ավետման» մեջ և արտահայտում է այն միտքը, որ այն, ինչ անհնարին է մարդու համար, հնարավոր է դառնում Աստծո ուղղակի միջամտությամբ: Հողի նկատմամբ ուժի ու կորովի այս ուղղակի ·աղափարը ծնունդ է տալիս երկրորդ ըսկզբունքին, այն է՝ «ավետյաց» հողը

միակ հիմքն է, որի վրա կայանում ես իբրև ազգ:

Թույլ տվեք նորից անդրադառնալ պատմությանը և կրկին հղում կատարել: 301 թ. հայերին քրիստոնեական հավատքի դարձնելուց հետո սուրբ Գրիգոր Լուսավորիչն ունեցավ հետևյալ տեսիլքը. Քրիստոսն ինքը իջավ երկիր ու իր մուրճով հարվածեց Արարատյան հարթավայրը և լույսի շողերով գծեց Հայաստանյայց Մայր տաճարի պատկերը: Քրիստոսի ձայնն ասաց Գրիգորին. «Ահա այստեղ պետք է կառուցեք իմ եկեղեցին»: Եվ ցայսօր այդ եկեղեցին կոչվում է Էջմիածին՝ «Միածնի իջնելը»: Դա մի հոյակերտ տաճար է: Մեկ հարյուրամյակ անց Մաշտոց վանականը՝ հայկական գրերի ստեղծողը, երկար տարիների դեգերումներից ու փորձություններից հետո մեկ այլ տեսիլք ունեցավ. Աստծո ձեռքն իր սենյակի պատին կրակե տառերով գրեց այբուբենը: Այս երկու սրբերը, մարգարեական երկու տեսիլքներ ունենալով, հայ ժողովրդին պարգևեցին Տաճար և Լեզու՝ ազգային մշակույթի երկու բևեռները: Այսպես երկնային տեսիլքների օգնությամբ կայացան ազգային եկեղեցու երեք տարրերը՝ հող, հավատք և մշակույթ: Հողը պաշտպանվում է երկնային հզորությամբ, հավատքը ներշնչվում է հրաշագործ միջամտությամբ (ինչպես Սինայի Ուխտը), և մշակույթը արարչագործվում է Աստծո ձեռքով:

Ով անմեղ է, լիքը սիրով
Ու հավատքով անսասան,
Ով նայում է վառ հույսերով
Դեպի հայոց ապագան,
Նա կտեսնի էն մըշտավառ
Ջահը՝ կախված երկնքից,
Ասես՝ Աստծո աչքը պայծառ
Հսկում է ցած երկնքից:



Սրտաբաց զրույց հոգևոր-բարոյական հարցերի շուրջ

Ըստ հայտնի ավանդության Արագած լեռան վրա հավերժորեն լուսարձակում է կանթեղը՝ վառելով սուրբ Գրիգորի արցունքները: Սա ազգային եկեղեցու կողմից Նոր Ուխտի մեկնությունն է:

Սիրելի քաջե՛ր հայոց, սուրբ է հայրենի հողը, որովհետև սուրբ է դարավոր ձեր եկեղեցին, Հայաստանյայց առաքելական եկեղեցին: Նրա մկրտության ավազանի մեջ է իջնում Սբ. Հոգին անուշաբույր Սբ. Մյուռոնով: Օրհնյալ այդ ջրի մեջ մաքրվեց մանկական քո հոգին, Սբ. Մյուռոնով դրոշմվեց ճակատդ, և կնքվեցիր իբրև հայ քրիստոնյա:

Հայ զինվո՛ր, քեզ նայելով պիտի երգենք. «Վերինք ընծայեցեն առաջի Տեառն, զի գայ, զի հասեալ է Տէր»: Նմա փառք հավիտյանս. ամեն:

# ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

*Հ. Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ , ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս*

Պատմա·իտության մեջ հան·ամանորեն վերլուծված և ներկայացված են այն քաղաքական պայմանները, որոնք նպաստեցին չորրորդ դարի հենց սկզբին Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուն: Հավաստված է, որ քրիստոնեությունը մուտք էր ·ործել Հայաստան դեռևս առաքյալների ժամանակներում, Հռոմեական կայսրությունից, որի արևելյան մասերում և հատկապես Մեծ Հայքին հարող երկրներում՝ Ասորիքում և Կապադովկիայում, ինչպես և կայսրության մասը կազմող Փոքր Հայքում, երկրորդ-երրորդ դարերում արդեն կային բազմաթիվ քրիստոնեական համայնքներ, քրիստոնեական ազդեցիկ հո·ևորականություն, քրիստոնեական աստվածաբանության նշանավոր կենտրոններ Եդեսիայում, Կեսարիայում, Մալաթիայում, որոնցում ներ·րավված էին նաև տեղի ստվար հայ բնակչությունը և հայազ·ի նշանավոր ·ործիչներ: Եվ ահա երրորդ դարի վերջին տեղի ունեցավ մի վճռորոշ քաղաքական իրադարձություն. հռոմա-պարսկական երկարատև պատերազմներից հետո, 298 թվականին, Հռոմեական կայսրության հովանավորության տակ անցավ ամբողջ Հայաստանը. «Հայաստանում վերական·նվեց թա·ավորական իշխանությունը, և հայկական ·ահ բարձրացավ Արշակունիների շառավիղը՝ Տրդատը, որը հռոմեական զենքի օ·նությամբ նրվաճեց իր իրավունքները... Վերայան երկու մասերի բաժանված *էթնիկական մեկ ամբողջություն կազմող Փոքր և Մեծ Հայքերի հայ բնակչության* սերտ հարաբերությունների քաղաքական անջրպետները, և քրիստոնեությունը Եփրատի աջ ափից հորդաց դեպի ձախ ափը (ընդ·ծումն իմն է:—Հ. Գ.): Այդ քրիստոնեության առաքյալն էլ հենց սուրբ Գրի·որ Լուսավորիչը եղավ»[1]:

ՈՒշադրություն դարձնենք. մինչ այդ ժամանակը, 301 թվականը, Հռոմեական կայսրության կազմում՝ Մեծ Հայքին հարող մասերում, արդեն եղել էին քաղաքներ, քաղաքային իշխանապետություններ, որոնցում քրիստոնեությունը հռչակվել էր «ազատ կրոն» կամ էլ ճանաչվել էր պաշտոնապես, իսկ Հայաստանը ազ·ային պետություն էր և եղավ առաջին անկախ երկիրը, որը քրիստոնեությունը պաշտոնապես ճանաչեց որպես պետական կրոն:

Սակայն քրիստոնեության տարածումը Հայաստանում, իհարկե, շատ ավելի հիմնավոր պատճառներ ուներ, քան այդ պատմական պահին նպաստավոր, բայց միշտ փոփոխական քաղաքական իրադրությունն էր: Հասարակական, քաղաքական, սոցիալական, մշակութային այլևայլ ·ործոնների շարքում, որոնք տևական նշանակություն ունեցան՝ ապահովելով քրիստոնեության հաստատումը Հայաստանում, հայկական ազ·ային եկեղեցու կազմավորումը, հայ հանրային կյանքի կազմակերպվածքի մեջ եկեղեցու՝ որպես հասարակական հաստատության ամրապնդումը, բացառիկ դեր խաղացին հո·ևոր-մշակութային բնույթի մի շարք ·ործոններ:

Նախ՝ այն արժեքների մասին, որ իր հետ բերում էր քրիստոնեությունը ի հակադրություն հեթանոսության և հեթանոսական աստվածությունների, որոնց

[1] *Ն. Ադոնց*, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Ե., 1987, էջ 388—389: Հայաստանում քրիստոնեության տարածման և ազ·ային եկեղեցու կազմակերպվածքի՝ Ադոնցի շարադրանքին մեծ նշանակություն է տալիս Գա·իկ Սար·ըսյանը Ադոնցի աշխատության հայերեն թար·մանության հրատարակության վերջաբանում:

նա եկել էր փոխարինելու: Այս տեսակետից շատ հետաքրքրական է քրիստոնեության ընկալումը ժամանակի հայ պատմա·րության մեջ, մասնավորապես Ա·աթան·եղոսի «Հայոց պատմությունում», որտեղ նա մանրամասնորեն նկարա·րում է, հաճախ էլ ·եղարվեստական պատկերներով ներկայացնում է Տրդատ Գ Արշակունու ·ահակալությունը, Գրի·որ Լուսավորչի ·ործունեությունը, հեթանոսական մեհյանների կործանումն ու քրիստոնեության տարածումը: Այստեղ քրիստոնեության և հեթանոսության հակադրման մեջ առանձնանում են երկու տեսանկյուններ:

Առաջինը *բարոյական* տեսանկյունն է: Քրիստոնեությունը ներկայանում է որպես լուսավոր ուսմունք, որը վեհացնում է մարդուն՝ լուսավորելով նրա միտքն ու հո·ին, ի հակադրություն հեթանոսության, որը մարդուն մղում է վայրենաբարո վարքի՝ սահման չդնելով բարու և չարի, հո·ևոր բերկրանքի և վ·այական վայելքների միջև: Մի հետաքրքրական առասպելական դրվա· կա Ա·աթան·եղոսի երկում. երբ Հռիփսիմե կույսը հրապարակավ անար·վում է, ապա նրա չքնաղ ·եղեկության համբավը լսած խուռներամ բազմությունը ոչ թե խղճում է նրան՝ ի ցույց ամենի մերկացնելու, անար·ելու և չարչարելու համար, այլ մարմնական կրքերի ամբոխային պոռթկում է ապրում՝ թե՛ ավնվական և թե՛ ռամիկ «իրենց վավաշոտ, հիմար, ցոփ բարքերի, այլանդակ մտքերի, կեխ, անառակ հեթանոսական սովորությունների պատճառով»[2]:

Ա·աթան·եղոսը բազմաթիվ ուրիշ առիթներով ևս հեթանոսական բարքերի մասին խոսելիս ·ործածում է նույնպիսի բնութա·րություններ՝ «·արշելի, սատանայակիր, ճիվաղային բարքեր», «·ազանամիտ, վայրենաբարո, անասնաբարո վարք», և քրիստոնեության առաքելությունը տեսնում է այն բանում, որ «կոշտ ու կոպիտ և անտաշ բարքերը շրջում է աստվածուսույց *կ·աստության*», ժողովրդին դարձնում է «*մարդասեր* աստծու պաշտամունքին»[3]: Այս հակադրության խորհրդապաշտական արտահայտություններն են դառնում մարդու կերպարանքով հայտնվող դևերը և արևային ճառա·այթների լույսով հյուսված խաչը: Ա·աթան·եղոսի ենթատեքստում



Հեթանոսական ատրուշանի մնացորդ Էջմիածնի Մայր տաճարում

կարդացվում են այդ հակադրության նաև առարկայական հիմքերը. հեթանոսական տաճարներում կուտակվել էին անհամար ·անձեր, ժամանակի ընթացքում քրմերը դարձել էին մի ներփակ դաս, ունեին թանկարժեք կենք ու կրահով ուժեղ պահակազոր, նրանք հակադրվում էին թա·ավորի իշխանությանը[4],

[2] *Ա·աթան·եղոս*, Հայոց պատմություն: Ե., 1983, էջ 97:

[3] Տես նույն տեղում, էջ 435, 443, 467, 469 և այլն:

[4] Ահա մի տիպական նմուշ. երբ Տրդատ թա·ավորի կորքերը հարձակվեցին Տիր աստծու մեհյանի վրա, «այնտեղ երևային կերպարանափոխված դևեր՝ այրուձիու բազմության ու հետևակորի ·նդի կազմության նմանությամբ, մկնդավորներ ու մուրճավորներ առաջ էին ընթանում մարդկային կերպարանքով, նիզակներով ու վինանշաններով, կենք ու կարդով վինավառ» (նույն տեղում, էջ 437):

մինչդեռ քրիստոնեական եկեղեցին, դառնալով թա·ավորի դաշնակիցը, հանդես էր ·ալիս որպես բարերար, որը հո·էր տանելու աղքատների ու տնանկների մասին: Պատմիչը, նկարա·րելով այս կամ այն մեհյանի կործանումը «դարձի եկած» թա·ավորական վորքերի կողմից և Գրի·որ Լուսավորչի հորդորով, վկայում է, թե «ամբարված ·անձերը աղքատներին, տառապածներին ու չքավորներին բաժանեցին», «ոսկին ու արծաթը ավարի մատնեցին ու աղքատներին բաշխեցին»: Թա·ավորը, հավաքելով իր ամբողջ վորքը և իշխանավորներին, «խորհուրդ արեց, որ փութան, հասնեն բարի ·ործերին ժառան·որդ դառնալու»[5]:

Իհարկե, Ա·աթան·եղոսի պատմության մեջ, հեթանոսական մեհյանների կործանումը նկարա·րելիս կամ էլ հեթանոսական բարքերի մասին խոսելիս, ·ույները խտացված են, և դա պայմանավորված է հեղինակի քրիստոնեական հավատի ջատա·ովի կեցվածքով ու նաև՝ ·եղարվեստական պատկերը տպավորիչ դարձնելու միտումով[6]: Ուստի այդ վկայությունների վերաբերյալ արվել են և կարող են արվել որոշ վերապահումներ: «Անցումը հեթանոսությունից քրիստոնեության, ըստ էության, մեղմ ձևով իրականացավ», նույնիսկ ·տնում է Ա·աթան·եղոսի «Պատմության» աշխարհաբար թար·մանության հեղինակ Արամ Տեր-Ղևոնդյանը և բերում է երեք կորավոր փաստարկներ: Հեթանոսական մեհյանները հիմնովին չեն կործանվել (կարելի էր ասել՝ ոչ միշտ և ոչ բոլոր դեպքերում են հիմնովին կործանվել. դա վկայում են նաև պեղումների տվյալները): «Քանդում էին մեհյանների բա·իները (կոհասեղան, արձան), իսկ շենքերը վերածվում էին եկեղեցիների», այդպես եղավ, որ «Դ—Ե դարերի հայկական ճարտարապետությունը շատ բան ժառան·եց հեթանոսական ճարտարապետությունից և համարվում է նրա անմիջական շարունակությունը»: Նույնիսկ նոր կազմավորվող քրիստոնյա հո·ևորականությունը համալրվում էր քրմերի որդիներով: Վերջապես, «հայ եկեղեցին յուրացրեց նաև հեթանոսական տոները (Ծաղկազարդ, Զատիկ, Տեառնընդառաջ՝ Տերընտես, Վարդավառ և այլն)»[7]:

Բայց նույնպիսի պարզաբանումներ պետք է արվեն նաև հեթանոսական բարքերի մասին: Իհարկե, կասկածից վեր է քրիստոնեական և հեթանոսական հո·ևոր արժեքների ու կողմնորոշումների այն սկզբունքային հակադրությունը, որի մասին խոսվեց վերը, և հեթանոսության առանձին դրսևորումների համար Ա·աթան·եղոսի խիստ բնութա·րությունները արդարացված էին: Հայտնի է նաև, որ «հեթանոսություն» անվան տակ միավորվում են բազմազան, երբեմն տարաբնույթ երևույթներ՝ սկսած տոհմական կուռքերի պաշտամունքից մինչև դասական դարձած անտիկ հելլենական դիցարանը: Հին հայկական աստվածությունների մասին մեզ հայտնի է Խորենացու և այլ պատմիչների միջոցով մեզ հասած ավանդազրույցներից, իսկ հեթանոսական մեհյանների կործանման մասին Ա·աթան·եղոսի պատմածների մեջ հին հայոց դիցարանը մեզ ներկայանում է հելլենական դիցարանին համապատասխանող (կամ հարմարեցված) տեսքով, ինչպես այն ընդունված ու ճանաչված է եղել արքունիքի կողմից (Արամազդ, Անահիտ, Աստղիկ, Տիր, Նանե, Միհր և այլն): Բայց սպասելի է (և այդ մասին բազմաթիվ ակնարկներ կան), որ Մեծ Հայքի տարբեր ·ավառներում, ապ-

[5] Նույն տեղում, էջ 439, 441, 445:

[6] Ընդհանրապես հիպերբոլայի ·եղարվեստական հնարը հատուկ է ժամանակի պատմա·րությանը արշավանքների ու ճակատամարտերի նկարա·րություններում, պատմական դեմքերի ու նրանց ·ործերի բնութա·րություններում և այլն:

[7] Նույն տեղում, ծանոթա·րություններ, էջ 517—518: Ահա, օրինակ, իր իսկ Ա·անթան·եղոսի վկայությունը. «Եվ կար·ադրեց բերված մարտիրոսների հիշատակների համար մեծ տոն սահմանել անտի պաշտամունքի ժամանակներում ամենաբեր նոր պտուղների Ամանորի աստծու՝ Հյուրընկալ Վանատուրի տոնին, որը առաջներում հենց նույն տեղում ուրախությամբ տոնում էին Նավասարդի օրը» (նույն տեղում, էջ 465—467):

·ա·րական տարբեր շրջաններում տարբերություններ կային բարքերի ու սովորույթների, ավանդական հավատալիքների ու ծեսերի մեջ, որոնց թվում եղել են և այնպիսիք, որոնք Ա·աթան·եղոսի ասածի նման «կոշտ ու կոպիտ և անտաշ» կարող էին բնութա·րվել: Ընդ·ծենք. միօրինակությունը հատուկ է քրիստոնեության նման միաստվածական կրոնին, իսկ հեթանոսության համար դրսևորումների ու բարքերի բազմազանությունը միան·ամայն բնական է: Քրիստոնեության ընդունումն էր, որ նպաստեց նաև հայ ժողովրդի ազ·ային (իմա՝ ազ·ա·րական բազմազանությունից վեր բարձրացող) բարոյական ընդհանուր նկարա·րի ձևավորմանը[8]:

Հիմա՝ քրիստոնեության և հեթանոսության հակադրման երկրորդ տեսանկյունը, որ կարելի է անվանել *լուսավորական* կամ *կրթամշակութային:* Մեր առաջին պատմիչների տված բնութա·րություններ ի մեջ հեթանոսությունը մեզ ներկայանում է իբրև ներփակ (էզոտերիկ) կրոն, իսկ քրիստոնեությունը՝ որպես բոլորի համար բաց (էկզոտերիկ) ուսմունք: Մինչ «ժողովուրդն ան·ետ էր», բարքերը՝ «վայրենի», քրմերն ունեին մո·ական ·իտելիքներ՝ մեհենական ·րերով, որոնց կարող էին հաղորդակից դառնալ միայն ընտրյալ անհատները: Այնինչ քրիստոնեությունը իրեն հռչակում էր ճշմարտության հայտնության կրոն, և ամեն ոք, դարձի ·ալով, հաղորդակից էր դառնում այդ ճշմարտությանը ս. Գրքի և մյուս ·րվածքների միջոցով: ՈՒստի քրիստոնեության տարածումը Հայաստանում ուղեկցվում էր դպրոցական կրթության լայն ծավալմամբ և թար·մանական ·ործունեությամբ, որպեսզի բոլորը կարողանային կարդալ այդ ·րվածքները: Դա լուսավորության ժամանակաշրջան էր, որի նվիրյալը՝ Գրի·որ Լուսավորիչը, ինչպես պատմիչն է հայտնում, «նույնպես համոզեց թա·ավորին, որ զանազան ·ավառներից, կողմերից, այլևայլ տեղերից մանկանց բազմություն հավաքեն ուսուցանելու նպատակով», և «Տրդատ թա·ավորը Հայոց երկրի տարբեր կողմերին հրաման տվեց՝ իր իշխանության նահան·ներից, ·ավառներից ուսման համար մատաղ մանուկների բազմություն բերել և նրանց վրա հմուտ ուսուցիչներ կար·ել: Առավելապես քրմերի պղծա·ործ ցեղին և նրանց մանուկներին այնտեղ հավաքել, հարմար տեղերում դաս-դաս խմբել և ապրուստի թոշակ նշանակել: Նրանց երկու մասի բաժանեցին, ոմանց տվեցին ասորի դպրության և ոմանց՝ հելլենականին»[9]:

Քրիստոնեության կրթամշակութային առաքելությանը մեծ տեղ է հատկացնում Մովսես Խորենացին իր «Պատմության» մեջ, մանրամասն նկարա·րում է հայոց ·րերի ·յուտն ու դպրոցների բացումը: «Այս ժամանակները եկավ Մեսրոպը՝ բերելով մեր լեզվի նշանա·րերը: Նա Վռամշապուհի և Մեծ Սահակի հրամանով ընտրությամբ երեխաներ հավաքեց, ուշիմ, առողջակազմ, լավ ձայնով և երկար շնչառությամբ (սա եկեղեցական եր·եցողության համար էր:—Հ. Գ.), բոլոր ·ավառներում դպրոցներ հիմնեց և պարսից բաժնի բոլոր կողմերը սովորեցրեց (մինչ այդ այդտեղ ուսուցանվում էր ասորական ·իրը:—Հ. Գ.), բացի հունական մասից, որոնք ձեռնադրության փոխարեն տուժեցին, որովհետև Կեսարիայի աթոռին ենթարկվելով՝ պետք է հունարեն ·իր և լեզու ·ործածեին և ոչ ասորերեն»[10]:

Խորենացին պատմում է, թե ինչ ջանքեր են ·ործադրվել, որպեսզի Արևմտյան Հայաստանում ևս, որը Բյուզանդիայի կազմում էր, դպրոցական կրթությունը և եկեղեցական արարողությունները կատարվեին հայերեն լեզվով և հայերեն ·րով: Բյուզանդական արքունիքի և պատրիարքության հետ բանակցություն-

---

[8] Հիրավի մեծ էր այս առումով քրիստոնեության բերած նպաստը հայ ժողովրդի պարա·այում: Սակայն որևէ ժողովրդի բարոյական ընդհանուր նկարա·իրը մի շատ բարդ երևույթ է և պատմականորեն ձևավորվում է բազմաթիվ ·ործոնների փոխ·ործողությամբ, այնպես որ սխալ կլիներ որևէ քրիստոնյա ժողովրդի բարոյականությունը նույնացնել «քրիստոնեական բարոյականության» հետ:

[9] Նույն տեղում, էջ 467—469:

[10] *Մովսես Խորենացի*, Պատմություն Հայոց: Ե., 1968, էջ 294:

ներ էր վարում ինքը Մեսրոպ Մաշտոցը, որին ի վերջո հաջողվում է համաձայնության հասնել: Չլիներ դա, ասում է նշանավոր հայա·ետ Ստեփան Մալխասյանցը, ապա «հաստատ կարելի է ասել, որ... հայոց աշխարհի կեսը, հունական մասը, անշուշտ կօտարանար հայությունից և կձուլվեր հույն ազ·աբնակչության հետ՝ զրկված լինելով ազ·ային ·րից ու ·րականությունից, հայերեն լեզվով ժամեր·ությունից և կապմելով թեմ մի հունական մետրոպոլիտության, և իբրև սրա հետևանք, մոտ ապա·այում ընդունելով Քաղկեդոնի դավանությունը»[11]: Ձեռք բերված համաձայնությունը վճռորոշ եղավ հայ ժողովրդի հետա·ա մշակութային կողմնորոշման համար առհասարակ: Համաձայնության պահանջներից «մենք կարող ենք կռահել ·ոնե երկու կետ: Առաջին՝ պահանջ, որ ս. Գրքի հայերեն թար·մանությունը կատարվի հունարենից (կամ ·ոնե ուղղվի ըստ հունարենի), և երկրորդ՝ որ հայ երիտասարդները բարձրա·ույն ուսում առնելու ·նան այնուհետև ոչ թե Ասորիք, այլ Բյուզանդիա, այլ խոսքով՝ ասորական կողմնորոշման փոխարեն հայերն ընդունեն հունականը: Այս երկու կետն էլ, որոնք համապատասխանում էին նաև հայերի մշակութային շահերին, շուտով իրականացան, և Խորենացու հաղորդած մի քանի տեղեկություններից երևում է, որ հայ երիտասարդությունն էլ դժ·ոհ էր ասորական ուսումից և ձ·տում էր Բյուզանդիոն, հունական ուսումն ստանալու, դիմում էր այնտեղ նույնիսկ ինքնա·լուխ, առանց ուսուցիչների կամքի»[12]:

Եվ այսպես՝ քրիստոնեության տարածումը և, մյուս կողմից, լուսավորության՝ կրթության, մշակույթի ծավալումը ժամանակին ընկալվում էին որպես նույնական երևույթներ:

Քրիստոնեության ընկալման երկու տեսանկյուններն էլ, որոնց մասին խոսք



Խոցազրուխ Տրդատ արքային պատկերող հուշասյուն (5-րդ դար)

եղավ վերը՝ բարոյական և լուսավորական, այնքան կարևոր են հայոց պատմության համար, որ, ինչպես կտեսնենք, առանց դրանք նկատի ունենալու անհասկանալի կմնան որոշ փաստեր:

Մշակութային զար·ացման մեջ հելլենական կողմնորոշումը բերեց իր դըժվարությունները: Լուսավորական ·ործունեության ընթացքում հետզհետե ձևավորվեց այն ·իտակցությունը, որ ազ·ային ինքնուրույնությունը կարող է ապահովվել, եթե միայն հայ ժողովուրդը իր մշակութային զար·ացմամբ բարձրանա ժամանակի քաղաքակիրթ ժողո-

[11] Հիշենք այս կոնկրետ պատմական հան·ամանքը՝ ·նահատելու համար հայ ազ·ային ·րի ըստեղծումը և հետա·այում նաև հայ եկեղեցու անկախացումը՝ նրա ինքնորոշումը քրիստոնեական աշխարհում: Սա՝ ի ·իտություն նրանց, ովքեր ·տնում են, թե հատուկ ·իր ունենալը և անկախ եկեղեցին իբր արհեստական անջրպետներ են ստեղծում այլ մշակույթների և համամարդկային արժեքների հետ հաղորդակցվելու ·ործում: Բուն այս մոտեցումը սխալ է ինքնին: Քիչ ստորև կասվի ուրիշ մշակույթների հետ հավասար երկխոսության մեջ մտնելու իրական հնարավորությունների մասին:

[12] Նույն տեղում, Ծանոթա·րություններ, էջ 366:

վուրդների մակարդակին: Մշակվեց և պատմական կարճ ժամանակում իրա·ործվեց մշակութային մի ծրա·իր[13], որի շնորհիվ ստեղծվեց հայերեն մի ամբողջ ·րականություն, և բարձրարվեստ թար·մանություններով ու հայ հեղինակների աշխատություններով ներկայացյավ հելլենական կրթության ամբողջ համակար·ը: Դրանով իսկ հայկական մշակույթը իր ներքին կարողականությունները ծավալեց մշակութային ամբողջ տարածության մեջ: Այսուհետ մշակույթների դիմակայության ու երկխոսության մեջ հայկական մշակույթը հանդես էր ·ալիս որպես հավասար կողմ՝ քաղաքակիրթ աշխարհին ներկայացնելով իր ուրույն աշխատությունները աստվածաբանության և փիլիսոփայության, պատմության և քերականության, տրամաբանության և մաթեմատիկայի, տոմարա·իտության և աշխարհա·րության վերաբերյալ, ակտորեն հաղորդակից դառնալով ուրիշ մշակույթներին և ընկալելով դրանք՝ առանց մշակութային ուծացման երկյուղի: Սա հունաբան դպրոցի ստեղծած մեր ոսկեդարյան մշակույթն է, որը, ինչպես տեսնում ենք, իր արդյունքներով, իր ընդ·րկմամբ շատ ավելին է, քան այդ կարող էին պահանջել քրիստոնեության եկեղեցական ու դավանաբանական խնդիրները:

Այսուհանդերձ Նիկողայոս Ադոնցը հարկ է համարում նշելու հենց այդ խնդիրների նշանակությունը հունաբան դպրոցի սկզբնավորման համար: Ժամանակի ·րական լեզվի մեջ, ասում է նա, հունաբան տարրերը «ներթափանցում էին փիլիսոփայական և առհասարակ հայեցողական ·րականության միջոցով: Կայսրության կյանքի հետ շփվելու անմիջական արդյունքներից մեկը եղան եկեղեցական տարաձայնությունները: Դավանաբանական վեճերն ու երկպառակությունները մեծ ծավալ ստացան: Ե՛վ կայսերական եկեղեցու դավանանքի կողմնակիցներին, և՛ ազ·ային եկեղեցական ավանդության հետևորդներին հավասարապես անհրաժեշտ էր մտքի ճկունություն հայեցողական, վերացական մըտածողության բնա·ավառում, որպեսզի կարողանային հասկանալ և մեկնաբանել Քրիստոսի բնությանը վերաբերող բարդ և մանվածապատ հարցերը: Այդ և այլ պատճառներով առաջ եկավ նոր հոսանք, և ստեղծվեց ·իտական կամ տեսական ո·ով տո·որված ·րականություն»[14]: Եվ ասվածը լուսաբանելու համար Ադոնցը որպես ցայտուն օրինակներ հիշատակում է Դավիթ Անհաղթի փիլիսոփայական, Անանիա Շիրակացու մաթեմատիկական աշխատությունները և Մովսես Խորենացու «Պատմությունը»: Ավելի լայն՝ ազ·ային ինքնության պահպանման և ամրապնդման համատեքստով պայմանավորված այս, նույնպես լայն, մշակութային զար·ացումն ունեցավ մի խիստ կարևոր հետևանք. Հայաստանը դարձավ այն սակավաթիվ երկրներից մեկը, որը պահպանեց անտիկ մշակույթը և իրականացրեց նրա յուրօրինակ համադրումը քրիստոնեության հետ: Այս փաստի պատմական նշանակությունը ·նահատելու համար պետք է հիշել այն տեսական դրույթը, որ եվրոպական քաղաքակրթության՝ որպես ուրույն պատմական երևույթի կազմավորման բնութա·րական առանձնահատկությունը անտիկ հունական ու հելլենիստական մշակույթի և հռոմեական պետաիրավական ավանդույթի համադրումն էր քրիստոնեության հետ, որը Եվրոպայում իրականացավ այսպես կոչված «մութ դարերից» (մոտավորապես 5—10-րդ դդ.) հետո, երբ կայունացան էթնիկական-լեզվական ·ործընթացները, կազմավորվեցին եվրոպական նոր ազ·ությունները, և այդ միջոցին անկում ապրած անտիկ մշակույթի ավանդույթները սկսեցին վերակենդանանալ: Հնուց անտի Հայկական բարձրավանդակում ապրող հայ ժողովուրդը, վերջնականապես որպես մեկ ազ·ություն ձևավորվելով հնա·ույն պետական կազմավորումների շրջանակ-

[13] Այդ ծրա·րի մասին տես *С. С. Аревшатян.* Формирование философской науки в Древней Армении. Е., 1973, гл. II.

[14] *Ն. Ադոնց*, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 136—137:

ներում, հետա·այում, մ. թ. առաջին հազարամյակում, անընդմեջ շարունակել իր պատմական ընթացքը քաղաքակրթությունների հաջորդափոխության ժամանակաշրջանում՝ անտիկ քաղաքակրթությունից դեպի նոր եվրոպական քաղաքակրթությունը: Արդեն ունենալով նույն հիմքը՝ անտիկ մշակույթի հետ քրիստոնեության համադրումը, հայկական մշակույթը իրեն ծավալել եվրոպական քաղաքակրթությանը համահունչ մշակութային ձևերի ամբողջ բազմազանության մեջ (փիլիսոփայություն, ·իտություն, արվեստ, մատենա·րություն և տպա·րություն, դպրոցական ու համալսարանական կրթություն, եկեղեցական և աշխարհիկ ճարտարապետություն ու շինարարական արվեստ և այլն), ինչպես նաև հանրային կյանքի կազմակերպման իրավական ու պետականության ձևերի մեջ (հիշենք թեկուզ, թե ինչ ներդաշնակ կերպով Կիլիկյան Հայաստանը մտավ եվրոպական ազ·երի համաշխարհի մեջ):

Հայաստանում անտիկ մշակութային ժառան·ության պահպանման կապակցությամբ բարձրացող հաջորդ հարցը վերաբերում է նրա հետ քրիստոնեության ունեցած հարաբերությանը: Հետաքրքրական է, որ հայ փիլիսոփայության մեջ հունահելլենիստական ռացիոնալիզմի ավանդույթը ·ոյակցել քրիստոնեական դավանաբանության հետ: Խոսքը վերաբերում է ոչ միայն անտիկ փիլիսոփայության դասական հեղինակների երկերի (այսպես ասած՝ հեթանոս հեղինակների «արտաքին ·րոց») թար·մանություններին, այլև հենց հայ փիլիսոփաների, հատկապես Դավիթ Անհաղթի աշխատություններին. Դավիթը նորապլատոնականության ալեքսանդրիական դպրոցի տիպական ներկայացուցիչն է՝ այդ դպրոցին հատուկ՝ խիստ շեշտված հունահելլենիստական ռացիոնալիզմի կրողը: Մի շարք հան·ուցային հարցերում նրա ըմբռնումները դժվար համատեղելի են քրիստոնեական դավանաբանության հետ: Այդպիսիք են՝ բանականության, որպես բարձրա·ույն հեղինակության, հարաբերությունը հավատին, համապատասխանաբար՝ փիլիսոփայության հարաբերությունը աստվածաբանությանը, մարդու բարոյական կատարելա·ործման իդեալի, բարոյականության բանական հիմնավորման և այլ հարցեր, որոնց վերաբերյալ ըմբռնումների տարբերությունները նկատել են շատ հետազոտողներ: Բերեմ միայն մեկ հեղինակավոր վկայություն[15]: Անվանի հայա·ետ Ռոբերտ Թոմսոնը, վերլուծելով Դավթի ·լխավոր աշխատության՝ «Սահմանք իմաստասիրության» երկի հայերեն տեքստը, հատկապես նկատում է, որ «քիչ ջանք է ·ործադրվել տեքստի մեջ քրիստոնեական ·աղափարներ մտցնելու համար», և առհասարակ համարում է, որ «վաղ շրջանի հայ քրիստոնյա հեղինակների... հետաքրքրությունները դուրս էին ·ալիս այսպես ասած քրիստոնեական տեքստերի շրջանակներից, որովհետև այստեղ (այսինքն՝ Հայաստանում:—Հ. Գ.) կարդում և թար·մանում էին որոշ հեթանոս անտիկ ·րողների», և որ հայ հեղինակները «հայ ·իտական ·րականության կազմավորման շրջանում նրա մեջ ընդ·րկեցին ·իտությունների մի լայն շրջանակ, մի բան, որ չէր մտնում Մաշտոցի և նրա անմիջական աշակերտների խիստ եկեղեցական շահերի մեջ»[16]: Եթե նկատի ունենալու լինենք Հայաստանում քրիստոնեության ընդունման լայն, ազ·ային համատեքստը և նրա հետ կապված՝ լուսավորական, կրթամշակութային առաքելությունը, ապա այս բոլոր հան·ամանքները հասկանալի կդառնան: Ասենք, որ հունահելլենիստական ռացիոնալիզմի կրող Դավթի օրինակը եզակի չէ. քրիստոնեական աշխարհի արևմուտքում մենք ու-

[15] Կարելի էր վկայակոչել Վ. Չալոյանի մանրամասն փաստարկված կարծիքը, սակայն նա այդ տարբերությունը հասցնում է մատերիալիզմի և իդեալիզմի հակադրության (տես *Վ. Չալոյան*, Հայոց փիլիսոփայության պատմություն: Ե., 1975, էջ 95—219):

[16] *R. W. Thomson*. The Armenian version of David’s «Definitions». In: «David Anhakht, the Invincible Philosopher». Ed. by A. Sanjian. Atlanta: Scholars Press, 1986, pp. 43, 49.

նենք դրա պու·ահեռը ի դեմս Բռեյխուսի[17]: Հիշեցնենք, որ այս ամենով հանդերձ հայ փիլիսոփայության մեջ Դավիթ Անհաղթը մնաց, անտիկ և հելլենիստական շրջանի դասականների հետ միասին, ամենից շատ մեկնվող ու վկայակոչվող հեղինակությունը: Ավելին՝ եկեղեցին նրան դասել է հայոց սրբերի շարքում:

Մի առանձին կարևորություն ներկայացնող խնդիր է հայ հանրային կյանքի կազմակերպվածքի մեջ եկեղեցու՝ որպես հասարակական հաստատության ·րաված տեղը և այն դերը, որ նա, որպես այդպիսին, կատարեց հայ ժողովրդի ամբողջ պատմության ընթացքում: Հայաստանում քրիստոնեության ընդունման հենց սկզբից արվեցին այն քայլերը, որոնք էլ ապահովեցին հայ եկեղեցու՝ որպես հասարակական հաստատության ձևավորումը և նրա հաստատուն տեղն ու ·ործառույթը հայ ազ·ային կյանքի ամբողջ կազմակերպվածքի մեջ: Եկեղեցին հենց սկզբից դարձավ ավատատիրական համակար·ի՝ միջնադարին հատուկ պետաիրավական այդ կառուցվածքի մի բաղկացուցիչ մասը: Շատ խորհրդանշական է, որ, ինչպես Ա·աթան·եղոսն է հաղորդում, Գրի·որ Լուսավորչին Հայաստանի քահանայապետ ձեռնադրելու համար Տրդատ թա·ավորը հավաքում է Հայաստան աշխարհի տասնըվեց նախարարական տների իշխաններին[18] և նրանցից է կազմում մի պատվիրակություն Կեսարիա (աթոռանիստ քաղաքը) մեկնելու համար: Ուրեմն և բոլորովին պատահական չէ, որ այսուհետև հայ եկեղեցու կար·ացման մեջ տեղի է ունենում մի երևույթ, որը Ն. Ադոնցն անվանում է եկեղեցական կազմակերպվածքի նախարարականացում: Նա նկատի ունի «եկեղեցական կազմակերպվածքի համապատասխանեցումը նախարարական վարչակար·ին. եկեղեցական իշխանությունը բաշխվում է առավել ազդեցիկ իշխանական տոհմերի միջև՝ նըրանցից յուրաքանչյուրի համար առանձին եպիսկոպոսություն հաստատելու միջոցով: *Այստեղ մենք չենք հանդիպում միտրոպոլիտական կազմակերպության, չենք տեսնում եկեղեցական թեմերի բաժանման տերիտորիալ սկզբունք* (ինչպես որ Բյուզանդիայում էր:—*Հ. Գ.*)*: Եկեղեցական-վարչական միավորը համապատասխանում է նախարարական տիրույթներին՝ տվյալ նախարարական տոհմի տիրապետության տակ ·տնվող կալվածքներին*՝ բոլորովին անկախ նրանց



«Մեսրոպ Մաշտոց».
հատված Գ. Խանջյանի «Հայոց այբուբեն»
գոբելենից (1980 թ.)

[17] Այս հարցերի մեծ մասը հեղինակը քննության է առել մի այլ աշխատության մեջ՝ *Г. А. Геворкян.* Национальная культура с точки зрения философии истории. Е., 1992:

[18] Ա·աթան·եղոսը մեկ առ մեկ թվարկում է բոլորի տիրույթներն ու անունները և ասում՝ «սրանք են Հայաստան աշխարհի, Թոր·ոմի տան ընտիր իշխանները, կուսակալները, կողմնակալները, հազարապետները, բյուրավորները, որոնց հավաքեց Տրդատ թա·ավորը և ուղարկեց Կապուտկոց կողմերը, Կեսարիա քաղաքը, որ հայերեն Մաժաք են կոչում, որպեսզի տանելով Գրի·որին՝ իրենց երկրի քահանայապետ դարձնեն...» (*Ա·աթան·եղոս*, Հայոց պատմություն, էջ 447):

ծավալից (ընդ·ծումն իմն է:—Հ. Գ.): Հիշյալ ժամանակաշրջանում, մինչև Արշակունիների անկումը, եկեղեցական հիերարխիան այնքան աճեց, որ 451 թվականին արդեն ուներ 18 եպիսկոպոս, որոնք նախարարական կարևոր տոհմերի ներկայացուցիչներ էին»: Եվ հետո՝ եպիսկոպոսները համարվում էին կանական նախարարությունների եկեղեցական ներկայացուցիչները, իսկ կաթողիկոսը, որպես արքունի եպիսկոպոս, ենթարկվում էր թա·ավորին[19]: Եկեղեցական նվիրապետության համապատասխանությունը ավատական-նախարարական իշխանության կառուցվածքին և նամանավանդ հո·ևոր պետերի՝ նախարարությունների եկեղեցական ներկայացուցիչները լինելու պարա·ան եկեղեցուն օժտում էին իշխանական իրավունքներով, և ժամանակի ընթացքում եկեղեցին պատրաստ եղավ (նաև օբյեկտիվորեն, իր ձեռք բերած փաստական կար·ավիճակով և հասարակական-քաղաքական առումով), որպեսզի պետականության չ·ոյության պայմաններում լրացնի նրա բացակայությունը՝ թե՛ ներքին կյանքում՝ ճանաչված լինելով հայ հասարակության բոլոր խավերի կողմից, և թե՛ արտաքին հարաբերությունների մեջ՝ միշտ ճանաչվելով որպես հայ բնակչության իրավապոր ներկայացուցիչ:

Այսուհանդերձ հայ հասարակական կյանքը կրոնիշխանական (թեոկրատական) չդարձավ: Հայ ժողովրդի պատմության առանձնահատկություններից մեկն այն է, որ յուրաքանչյուր պատմական դարաշրջանում նա ձ·տել է ունենալու ազ·ային կյանք՝ ոչ միայն ·ոյատևելու, վերարտադրելով իր մշակույթի ավանդական ազ·ա·րական շերտը, այլև պահպանելու և միշտ արդիական դարձնելու մշակույթի բարձր՝ քաղաքակրթական ձևերը՝ ·իր, ·րականություն և դպրոց, ·րատպություն և մամուլ, ·իտություն և ·եղարվեստ, ճարտարապետություն և շինարարական արվեստ, ինչպես և հանրային կյանքի իրավաքաղաքական կազմակերպում, որոնք ծառայել են ազ·ային կյանքի միասնականացմանը: Եկեղեցին էապես մասնակցել է այդ ամենի ստեղծմանը, բայց իրենով չի փոխարինել և չէր էլ կարող փոխարինել ազ·ային կյանքի կազմակերպման ու կար·ավորման ամբողջ համակար·ը (ինչպես այդ լինում է կրոնիշխանական քաղաքական կար·երում), այլ ինքն է եղել այդ համակար·ի բաղկացուցիչ մասը, նրա հաստատություններից մեկը: Եկեղեցով փոխարինել ազ·ային կյանքի ամբողջ կազմակերպվածքը կնշանակեր մեռցնել ազ·ային կյանքն իր բազմազան՝ տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական, ինչպես և իրավաքաղաքական ու վարչական ինքնուրույն ձևերի մեջ, բայց դա կնշանակեր նաև հայոց եկեղեցու կողմից սեփական ոտքի տակի հողը կորցնել. չէ՞ որ հայոց եկեղեցին իր կոչումով ազ·ային հաստատություն էր:

Արդեն «Կանոնա·իրք Հայոց»-ում, որը օրինակար·ված (կոդիֆիկացված) իրավունքի վաղ միջնադարյան մի եզակի հուշարձան է, աչքի է զարնում մի կարևոր առանձնահատկություն: «Կանոնա·իրքը» կազմվել է ութերորդ դարի առաջին քառորդում, եկեղեցու ·ործունեության համար, բայց, ինչպես նշում է Վազ·են Հակոբյանը «Կանոնա·րքի» հրատարակության նախաբանում, այն ընդ·րկել է հայ հանրային կյանքը՝ դրա դավանական, ծիսական կտրվածքով: Նրանում տեղ ·տած կանոնական որոշումների մի մասը եկեղեցական ժողովների սահմանումներ են, իսկ եկեղեցական ժողովներին մասնակցել են աշխարհիկ շերտերի ներկայացուցիչներ, ավելին՝ հասարակական-քաղաքական կարևոր իրավիճակներում «եկեղեցական ժողովներում քննվում էին հասարակության առաջ ծառացած այնպիսի հարցեր, որոնք վերաբերում էին ժողովրդի ներքին կյանքին, հասարակության տարբեր շերտերի սոցիալական և իրավական ·ոյավիճակին, առօրյա համակեցությանը»[20]: Հայ

[19] *Ն. Ադոնց*, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 407, 409:

[20] «Կանոնա·իրք Հայոց» (աշխատասիրությամբ Վազ·են Հակոբյանի), հատոր Ա.: Ե., 1964, էջ XVI:

եկեղեցու բարեկարգման մեջ, ուրեմն, ի սկզբանե գործել է աշխարհականների լայն մասնակցության սկզբունքը, որով հայ եկեղեցին «էապես ժողովրդային» է հորջորջվել և տարբերվել այլ եկեղեցիներից: «Հայեր իրենց կղերը իբրև եկեղեցվո բացարձակ տերն ու տիրողը չեն նկատեր,— գրում է Մաղաքիա Օրմանյանը:— Եկեղեցին իբրև հաստատություն առնըված ատեն, նույնչափ եկեղեցվո հավատացյալներուն կը պատկանի, որչափ եկեղեցվո պաշտոնյաներուն: Այդ սկզբունքին զորությամբ, հավատո պահանջներեն և խորհրդոց մատակարարություննեն դուրս, որոնց համար ձեռնադրություն և աստիճան անհրաժեշտ է, եկեղեցվո վարչության և մատակարարության վերաբերյալ գործերը աշխարհական տարրին մասնակցությամբ կամ գործակցությամբ կը կառավարվին»[21]: Իսկ մյուս կողմից՝ եկեղեցին ինքը եղել է հայ ազգային կյանքի աշխարհիկ մարմինների մասնակիցն ու անդամը. որպես օրինակ Օրմանյանը վկայակոչում է 1860 թ. տաճկահայոց սահմանադրությամբ նախատեսված մարմինները:

Նկատի ունենալով աշխարհական և հոգևորական տարրերի այսպիսի գործակցությունը՝ Բերտրան Բարեյլը, Օրմանյանի գրքի առաջին՝ ֆրանսերեն, հրատարակության առաջաբանի հեղինակը, գրում է, որ «երկու տարրերը այնպես իրարու խառնված և իրարու մեջ թափանցած են, որ կարծես թե հայ ազգին համար կազմված է *Ազգային եկեղեցի* բացատրությունը»[22]:

ՈՒրեմն, նորից նշենք, պատմական-հասարակական հանգամանքների բերումով և հայ ազգային կյանքի առանձնահատկություններով պայմանավորված՝ որքան էլ մեծ եղած լինի եկեղեցու դերը ազգային կյանքում, այնուամենայնիվ ոչ թե եկեղեցին է որոշել ու ձևավորել հայ հանրային կյանքի կարգավորման ու կազմակերպման եղանակը (ինչպես որ լինում է կրոնիշխանական հասարակությունում), այլ ինքն է եղել նրա հաստատություններից մեկը՝ իրեն ի սպաս դնելով ազգային շահերին ու նպատակներին: Եվ հատկանշական է, որ հայ հանրային կյանքի կազմակերպման համակարգի մեջ եկեղեցուն հատկացված դերն ընդունել են և ազգային շահերի համար օգտագործել են հայ հասարակության ամենատարբեր հայացքների տեր գործիչներ, այդ թվում՝ նաև կրոնական ազատախոհության ներկայացուցիչները:

Հետաքրքրական է նկատել նաև, որ հայ կյանքում տեղ գտած ուրիշ քրիստոնեական եկեղեցիները, հատկապես կաթոլիկ եկեղեցին, իրենց բնույթով ոչ մասնավոր-ազգային և այդ իմաստով տիեզերական լինելով, հայ հանրային կյանքում և մշակույթի ասպարեզում որդեգրել են նույնպիսի ազգային գործելակերպ և անուրանալի նպաստ են բերել հայոց պատմությանն ու մշակույթին: ՈՒստի «հայ կաթոլիկ եկեղեցի» անվանումը միանգամայն որոշակի մասնավորեցնող բովանդակային իմաստ է ստացել (այնինչ ուրիշ դեպքերում՝ «իսպանական կաթոլիկ եկեղեցի», «լեհական կաթոլիկ եկեղեցի», «իռլանդական կաթոլիկ եկեղեցի», «մեքսիկական կաթոլիկ եկեղեցի» և այլ անվանումներն իսկ ինչ-որ տեղ խորթ են հնչում):

Մի դիտարկում ևս: Հայ ժողովրդի մի ստվար հատվածը հայ եկեղեցին ընկալում է հենց որպես հասարակական հաստատություն՝ հանրային կյանքի համակարգի մի բաղադրիչ: Որքան էլ ժողովուրդը զարգանա՝ իր կարողականությունները ծավալելով կյանքի ժամանակակից ոլորտներում, հատկապես՝ մշակույթի քաղաքակրթական արդի ձևերի մեջ, այսուհանդերձ նրա անհատականության, ինքնության, սեփական եսի գիտակցության էական բաղադրիչը մնում է *պատմական հիշողությունը,* այն է՝ իր պատմության և մշակույթի շարունակականության, անընդհատականության, պատմական ամբողջականության գիտակցումը: Եկեղեցին անվերապահորեն ընկալվում է որ-

[21] *Մաղաքիա արք. Օրմանյան*, Հայոց եկեղեցին: Կ.Պոլիս, 1911: Վերատպություն՝ Ե., 1993, էջ 180—181:

[22] Նույն տեղում, էջ 10:

պես ազ·ային հաստատություններից մեկը, որը մեծ նպաստ է բերել հայ ժողովըրդի պատմության և մշակույթի շարունակականության ապահովմանը՝ պահպանելով ազ·ային արժեքները և դրանք փոխանցելով հաջորդ սերունդներին: Եկեղեցական տոները, ծիսական արարողությունները, հանդիսությունները, որոնցից շատերը դուրս են ·ալիս եկեղեցու պատերից այն կողմ, դարձել են ազ·ային կենցաղի, ավանդույթների, սովորույթների համակար·ի բաղադրիչները: Շատ դեպքերում նույնիսկ դժվար կանապանելի են դառնում եկեղեցով սրբա·ործվածն ու իմաստավորվածը և ազ·ային կենցաղի մեջ ավանդույթով ամրա·րվածը, այս կամ այն սովորույթի ու արարողության քրիստոնեական մեկնաբանությունը և ժողովրդի նախաքրիստոնեական հեթանոսական անցյալից եկող ու սերնդեսերունդ փոխանցվող ավանդույթը: Մի խոսքով՝ ազ·ային մշակույթի այս ենթաշերտը ներառում է այն ամենը, ինչ ժողովուրդների մշակույթների խճանկարի մեջ անհատականացնում է հայ ազ·ային մշակույթը նաև այս, կարելի էր ասել՝ ազ·աբանական (էթնոլո·իական) առումով: Ո՛րևէ որևէ անձի, ընտանիքի, սոցիալական խմբի կողմից ազ·ային կենցաղի, ավանդույթների, սովորույթների պահպանումը առաջ է բերում այն ·իտակցությունը, կամ էլ ‧ազ·ացողությունը, որ ինքը պատկանում է տվյալ ազ·ային հանրությանը: Այստեղ է, որ եկեղեցին նշանակալից դեր է կատարում՝ իրականացնելով ավանդաբար իրեն վերապահված ·ործառույթները՝ պսակի արարողությամբ ընտանիքին պարտադրելով ազ·ային բարոյական սկզբունքների համակար·ը, մկրտության ծիսական արարողությամբ սրբա·ործելով մանկան պատկանելությունը հայ ազ·ային հանրությանը և այլն: Մարդ արարածին առհասարակ հատուկ է կյանքի առանձին պահերը խորհրդանշական, և այդ կերպ՝ հիշարժան, իր համար նվիրական և կամ էլ հանրայնորեն ճանաչված, սրբա·ործված դարձնելու հո·եբանությունը, և եկեղեցին որպես հաստատություն լավա·ույնս կատարում է այդ բանը՝ դրանով իսկ իր շուրջը հավաքելով մարդկանց և նպաստ բերելով ազ·ային ինքնության և ազ·ային միասնության ·իտակցության պահպանմանը:

Հայաստանը ·տնվում է մի տարա-



«Սահակ Պարթև».
հատված Գ. Խանջյանի «Հայոց այբուբեն»
գոբելենից (1980 թ.)

ծաշրջանում, որը հին քաղաքակրթությունների օրրանն է եղել և որտեղով, դար դարի հետևից, անցել են վաչկատուն ցեղերի հորդաները՝ իրենց ձիերի սմբակների տակ տրորելով մշակված դաշտերն ու ա·իները, ավերելով ոստաններն ու շեները, կործանելով բերդերն ու տաճարները, մեհյաններն ու եկեղեցիները՝ հրո ճարակ դարձնելով ու ավարի մատնելով մա·աղաթներն ու ձեռա·իր մատյանները, և հաճախ էլ պատմության թատերաբեմից հանելով շատ ու շատ ժողովուրդների: Ինչպես բանաստեղծն է ասում՝ «Տանում ենք հընուց մեր ·անձերն ան·ին, Մեր ·անձերը ծով, Ինչ որ դարերով Երկնել է, ծընել մեր խորունկ ho·ին

Հայոց լեռներում, Բարձըր լեռներում: Բայց քանի ան·ամ շեկ անապատի Օրդուները սև Իրարու ետև Եկա՜ն վարկեցին մեր քարվանն ավնիվ Հայոց լեռներում, Արնոտ լեռներում»: Եվ այդպես շարունակ. հայ մարդու բակկի կորովով և մտքի վորությամբ, պայծառ ապա·այի կարոտով ու հավատով կրկին շենացել է երկիրը, նորից ծաղկել են այ·իները, ավերակների վրա դարձյալ բարձրացել են ճարտարապետական կոթողները, որպեսվի դիմակայեն մի նոր թշնամու...

Եվ ահա այս տարածաշրջանում, մահաբեր հորդաների ճանապարհների այս խաչմերուկում, հայ ժողովուրդն ընդունում է քրիստոնեություն, որն այն ժամանակ ·ալիս էր «բարի ·ործերին ծառայելու» քարոզով, որպես կողմնորոշում դեպի հո·նոր-մշակութային արժեքներ, դեպի մարդու բարոյական կատարելա·ործում: Ինչպե՞ս կազդեր արժեքային կողմնորոշման այս փոփոխությունը ժողովրդի մարտական ո·ու վրա: Գուցե հարկավոր էր ոչ թե ճշմարիտի, բարու և ·եղեցիկի, ոչ թե հո·նոր կորովի քարոզ, այլ մարմնական կոպիտ ուժի պաշտամո՞ւնք: Գրականության մեջ, պատմության վըճռական պահերին, երբեմն այսպես էլ է դրվել հարցը: Այսպիսի հարցադրման ճիշտ պատասխանը կարող է ·տնվել ոչ թե վերացական տեսական կշռադատություններով ու վ·այցմունքային վեճերով, այլ կոնկրետ պատմական մոտեցմամբ: Ահավասիկ:

Նախ, նորից հիշենք, որ քրիստոնեության ընդունմամբ ինչպես որ չընդհատվեց հայկական նյութական ու հո·եվոր մշակույթի զար·ացման շարունակական ընթացքը, այնպես էլ չխզվեց հայ ժողովրդի պատմական հիշողության անընդհատականությունը: Նա միշտ պահպանեց հուշը իր նախահայրերի մասին, նախաքրիստոնեական հեռավոր անցյալի մասին, սերնդեսերունդ ավանդվող զրույցները հին աստվածների ու հերոսների մասին՝ Հայկի, Վահա·նի, Տորքի... Ինկապես զարմանալի, հրաշք մի բան է, որ Այրարատյան թա·ավորությունից հազար տարի անց հայ ·ուսանները իրենց եր·երում պատմում էին այդ ժամանակվա անց ու դարձի մասին և փառաբանում հայոց թա·ավորների սխրանքները, ինչպես և ·եղեցիկ պատմություններ էին պատմում Արտաշես արքայի, նրա որդի Արտավազդի, Տի··րան Մեծի մասին, և Խորենացին ·րի էր առնում այդ ավանդազրույցները որպես աղբյուր իր «Պատմության» համար: Այդ կերպ է, ժողովրդի պատմական հիշողության անընդհատականության շնորհիվ է, որ դեռևս մ. թ. ա. երկրորդ հազարամյակի վիմական արձանա·րություններում վկայված Հայասա-Նաիրի երկրի պատմությունը Այրարատյան թա·ավորության միջոցով կամրջվում է Հայկազյանների, Երվանդունիների, Արտաշեսյանների, Արշակունիների Հայաստան աշխարհի պատմության հետ: Ժողովրդի պատմական անցյալը մերված է Հայաստան աշխարհի ամբողջ բնապատկերի մեջ՝ Ազատն Մասիս, Հայոց ձոր, Արայի լեռ և Շամիրամի ջրանցք, Տոսպ, Վան, Միհերի դուռ, Նախճավան, Աշտիշատ, Բա·ավան, Բա·արան, Արտաշատ, Տի··րանակերտ... Եվ յուրաքանչյուրի հետ կապված է մի պատմական եղելություն և մի առասպել, մի ավանդություն, մի զրույց: Սա այն իրողությունն է, որը պայմանավորում է հայ ժողովրդի հո·եկերտվածքն ու մարտական ո·ին, և քրիստոնեությունը, ·ալով Հայաստան, ընդունեց այդ իրողությունը:

Հայ ·րավոր պատմությունը ևս հայ ժողովրդի պատմական հիշողության անընդհատականության պահպանողը եղավ: Ժամանակի պատմա·րության ավանդույթի համաձայն, հայ պատմա·րությունը, Խորենացուց հետո, տիեզերական պատմությունն սկսելով ըստ Աստվածաշնչի՝ Ադամից, իսկ հայոց պատմությունը՝ Հայկից, որը Նոյ նահապետից սերող Հաբեթյան տոհմից էր, այնուհետև ընդ·րկում է Այրարատյան թա·ավորությունը՝ Հայկազյան նահապետներով ու նրանց պայազատներով (հաջորդներով), Երվանդունիների, Արտաշեսյանների, Արշակունիների հարստությունների պատմությունը՝ սփռով հիշա-

տակելով ու մեջբերելով առասպելները հեթանոսական աստվածությունների ու դյուցազուն հերոսների մասին... Եվ այդպես՝ ընդհուպ մինչև Միքայել Չամչյան, 19-րդ դար, մինչև քննական պատմության ձևավորումը: Եթե բնութագրելու լինենք մեր գրավոր պատմության առաջին դասականների՝ Ագաթանգեղոսի, Բուզանդի, Խորենացու, Եղիշեի պատմափիլիսոփայական ըմբռնումները, ապա կարող ենք ասել, որ դա կենսահաստատ դիրքորոշում էր. խիպառ բացակայում էր պատմության ընթացքի անդառնալիության, նրա հանդեպ մարդու կրավորականության ճակատագրապաշտական ըմբռնումը, և, ընդհակառակը, ընդգծվում էր լուսավորյալ ստեղծագործ անհատի, ռազմական ու քաղաքական խիզախ ու խելացի գործչի և ժողովրդի հավաքական ուժի վճռորոշ դերը ժողովրդի պատմական ապագայի տնօրինման գործում: Տեսեք, թե ի՜նչ անթաքույց հիացմունքով են Ագաթանգեղոսը և Խորենացին նկարագրում Տրդատ Մեծի խելքը, ուժը և պատերազմական քաջագործությունները բյուզանդական բանակում՝ ընդդեմ գոթերի, հաղթական պատերազմը պարսից դեմ և հայրենի երկրի ազատագրումը, անօրինակ սխրանքները կովկասյան ցեղերի դեմ մղած կռիվներում: Նույն կերպ Փավստոս Բուզանդն է նկարագրում հայոց Արշակ թագավորի և Վասակ սպարապետի հաղթանակները պարսից Շապուհ արքայի զորավարների դեմ մղած կռիվներում, որոնցում արյան հեղեղներ են հոսում: Այդպիսին էր ժամանակը, և այդպիսին էր նաև ժամանակի պատմագրությունը՝ իր խտացված, զգայայունից պատկերներով[23]:

Եվ այս ամեն մարտական սխրանքների գովքի հետ միասին Խորենացու «Պատմության» հենց սկզբում մենք գտնում ենք լուսավորյալ պետական գործչին մեծարող և նրա սխրանքը առավել բարձր դասող մի ներբող՝ ուղղված Սահակ Բագրատունի իշխանին, որը Խորենացուն պատվիրել էր գրել հայոց պատմությունը սկզբից ի վեր: Սա «գեղեցիկ խնդիր» անվանելով՝ Խորենացին ասում է՝ մեր շատ իշխաններ ու թագավորներ մեծ սխրանքներ են գործել, բայց «անիմաստասեր են եղել», քանի որ չեն մտածել «իրենց ժամանակները գրով և պատմությամբ հաստատել», իսկ դու առաջինըն ես, որ մտածել ես նախնիների պատմությունը գրել տալու մասին, և ուրեմն «դու պետք է ճանաչվես բոլոր քեզանից առաջ եղածներից վեհագույն և բարձրագույն, արժանանաս գովեստների և պատմական այսպիսի հիշատակարանի մեջ դրվելու արժանի»[24]: Ահա այսպիսի մեծ տեղ է տալիս նա հայ ժողովրդի պատմությանը՝ ով ենք մենք, որտեղից ենք գալիս, ինչ հիշարժան գործեր են կատարել մեր նախնիները:

Խնդրին նոր, կարևոր երանգներ է ավելացնում Եղիշեն «Վարդանի և հայոց պատերազմի մասին» երկի մեջ, որը պատմում է պարսից իշխանության դեմ հայերի ապստամբության և 451 թվականի մայիսի 26-ին տեղի ունեցած Ավարայրի ճակատամարտի մասին: Հայ ժողովրդի համար դա կենաց և մահու կռիվ էր, և գիտակցելով այս բանը՝ Եղիշեն բացորոշ կերպով ձևակերպում և քննության է առնում մի կարևոր խնդիր, այն է՝ ինչպե՞ս կարելի է համատեղել պատերազմ մղելն ու պատերազմում թշնամուն սպանելը քրիստոնեական դավանանքի և բարոյականության հետ (չէ՞ որ քրիստոնեության տասը պատվիրաններից մեկն ասում է՝ «Մի՛ սպանիր»): Պատերազմին նախորդող գիշերը, պատմում է Եղիշեն, զորագնդերի հրամանատարների և հոգևորականների հանձնարարությամբ («հրամանով», ասում է Եղիշեն), հայոց զորքին դիմում է Ղևոնդ երեցը: Ասելով, որ առավոտյան սկսվելիք ճակատամարտը սովորական կռիվ չի լինելու, այլ՝ մի դաժան կռիվ, և շատ զոհեր է պահանջելու, նա զինվորներին հորդորում է չերկնչել, քաջաբար կռվել՝ իմանալով, որ դա կռիվ

[23] Տես *Ագաթանգեղոս*, Հայոց պատմություն, էջ 35—39, *Մովսես Խորենացի*, Հայոց պատմություն, էջ 217—218, 221—222, *Փավստոս Բուզանդ*, Հայոց պատմություն: Ե., 1987, էջ 225—235, և այլն:

[24] *Մովսես Խորենացի*, Հայոց պատմություն, էջ 67—68, 70—71:

է հայ ժողովրդի համար, նրա քրիստոնեական հավատի համար: Եվ նա բերում է օրինակներ աստվածաշնչյան պատմություններից՝ ցույց տալու համար, որ արդարա·ործ են համարվել, ժողովրդի կողմից մեծարվել են և եկեղեցու կողմից



«Դավիթ Անհաղթ» (13-րդ դար).
Մատենադարան, ձեռագիր հմ. 1746

սրբա·ործվել են նրանք, ովքեր թշնամուն սպանելով և արյուն հեղելով՝ փրկել են ժողովրդին, պաշտպանել են հավատը, պատժել են թշնամուն, դավաճանին, անօրենին[25]: «Այս ·իտենալով, եղբայրնե՛ր,—ասում է Ղևոնդ երեցը,—չըթուլանաք ու չվհատվեք, այլ պինդ սըրտով և հաստատուն հավատով հոժարակամ հարձակվենք այն թշնամիների վրա, որ վեր են կացել ·ալիս են մեզ վրա: Մեր հույսը կրկնակի է երևում մեզ. եթե մեռնենք՝ կապրենք և եթե մեռցնենք՝ միևնույն կյանքն է կան·նած մեր առաջ»[26]: Եվ քրիստոնյա քահանան ոչ միայն քաջալերում է պինվորներին ու մարտադաշտ ուղարկում նրանց, այլև այս ան·ամ, այս անօրինակ կռվում ինքն էլ, մյուս հո·ևորականներն էլ մտնում են մարտադաշտ. «Իսկ այսօր եպիսկոպոսները և երեցներն ու սարկավա·ները, սաղմոսեր·ուներն ու ·րակարդացները, ամեն մեկը սահմանված կանոնով իբրև սպառազինված ու պատերազմի պատրաստված՝ կամենում են ձեզ հետ միասին հարձակվել ու ջարդել ճշմարտության թշնամիներին»[27]: Եվ շատ կարևոր է փաստարկումը՝ «որովհետև նրանք էլ ամենևին չվախեցան պատերազմի ·ալ նրանց (կորա·նդերի) հետ, քանի որ *ո՛չ թե մարմնական էին համարում այս կռիվը, այլ հո·ևոր առաքինության կռիվ.* ցանկանում էին իրենք էլ քաջ պինվորներին մահակից լինել (ընդ·ծումն իմն է:—Հ. Գ.)»[28]: Սրանից վորեղ կռվան չի կարող լինել: ՈՒրեմն նորից կարող ենք ասել՝ քրիստոնեությունը, մուտք ·ործելով Հայաստան, ընդունեց, ընկալեց հայ ժողովրդի՝ դարերով կազմավորված հո·եկերտվածքն ու մարտական ո·ին, ու նաև դրանով էր, որ հայ եկեղեցին ապ·այի՛ն անվանվելու իրավունքը նվաճեց:

Հիմա դառնանք զորավարների կեցվածքին, ինչպես որ այդ մասին պատմում է Եղիշեն: Պարսից բանակի հրամանատար Մուշկան Նյուսալավուրտը, դիմելով կորա·նդերի հրամանատարներին, կոչ է անում. «Ամեն մեկդ հիշեցեք մեծ թա·ավորի պատվերը և նպատակ դրեք քաջության անուն հանել. մահը ·երադասեցեք, քան թե վախկոտ կյանքը»: Եվ այս դեպքում էլ շատ կարևոր է փաստարկումը. դուք ամեն մեկդ ·ավառների տեր եք, ասում է նա, հիշեցեք նաև ձեր կանանց ու որդիներին. հիշեցեք, որ

[25] Հիշեցե՛ք, ասում է Եղիշեն, մեծն Մովսեսին, հրեաների առաջնորդին, հրեաներին ·երությունից վերադարձնողին, որը հանուն իր ժողովրդի «արյուն թափելով արդարացավ և բոլոր մար·արեներից ավելի մեծ կոչվեց»: Հիշեցե՛ք էլի նույն Հին Կտակարանից Դավիթին, որը մանուկ ժամանակ քարով կործանեց հսկա Գողիաթին, «չվախեցավ հսկայի ահա·ին սրից, ցրեց այլազ·իների ·նդերը և զորքը փրկեց մահվանից ու ժողովրդին՝ ·երությունից, և եղավ Իսրայելի թա·ավորների անդրանիկն ու աստվածորդու հայր կոչվեց» (*Եղիշե,* Վարդանի և հայոց պատերազմի մասին: Ե., 1989, էջ 219—221):

[26] Նույն տեղում, էջ 223:

[27] Նույն տեղում, էջ 229:

[28] Նույն տեղում, էջ 203:

նախկին պատերազմների ժամանակ մարտադաշտից փախած ձեր ընկերակիցները «թեև պատերազմից փրկվեցին, բայց սրով ստացան իրենց մահվան պատիժը, նրանց տղաներն ու աղջիկները և ամբողջ ընտանիքը տուն ու տեղից վըրկվեցին, և հայրենական բոլոր ·ավառները խլվեցին նրանցից»[29]: Վախ իրենց կյանքի համար, իրենց հարազատների համար, իրենց ունեցվածքի համար՝ ահա՛ թե ինչ էր ներշնչում իր պինվորներին պարսից հրամանատարը: Իսկ հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանը ոչինչ չուներ խոստանալու և ոչինչ չէր կարող խլել իր զորա·նդերի հրամանատարներից. չէ՞ որ կռվի դաշտ էին եկել հայոց նախարարները ոչ թե հրամանով, այլ իրենց կամքով: Եվ ահա թե ինչ է ասում Վարդանը: Քաջին վայել վեհանձնությամբ նա անար·անքի խոսքեր չի ասում թշնամիների մասին, հիշում է նախկին կռիվները, հաղթանակներն ու նաև պարտությունները: Շատ վերքեր ու սպիներ ունենք ձեր մարմինների վրա, ասում է նա, շատ պար·ևների եք արժանացել պատերազմում ·ործած քաջությունների համար: Բայց դրանք անցնելու, ·նալու են ձեր մարմնավոր կյանքի հետ միասին: Իսկ այս կռիվն ուրիշ է, սա հավատի կռիվ է, և սրա վարձատրությունն ուրիշ է՝ ո·եկան, աստվածային, հավիտենական: Եվ իրավացի էր Մեծն Վարդանը. հազար երեսունվեց մարդ «այն օրը մեծ պատերազմում իրենց անունները ·րեցին կյանքի մատյանի մեջ», և հազար հին· հարյուր տարուց ավելի է, որ հայ ժողովուրդը ամեն տարի նշում է Վարդանանց օրը՝ մեծարելով բոլոր նրանց, ովքեր հերոսացան Ավարայրի դաշտում, և խնկարկելով մարտադաշտում ընկած նահատակների հիշատակը, որոնք անուն առ անուն հայտնի են և հայտնի կմնան, քանի դեռ կա Եղիշեի պատմությունը:

ՈՒրեմն, ո՞րն էր Ավարայրի հերոսների մարտական ո·ու ·աղափարախոսությունը: Նրանք ·իտեին, թե հանուն ինչի են մարտադաշտ մտնելու, արյուն հեղելու և ան·ամ կյանքը փոխելու, և ·իտեին, որ դա անձնական, նյութական շահը չէ, այլ՝ ապ·ային շահը, մի անանցական վեհ նպատակ ու ·ործ, որ խոսվելու է դարեդար: Այս պատճառով է Եղիշեն ընտրել մի հին իմաստասերի խոսքերը՝ «Մահ ոչ իմացյալ՝ մահ է, մահ իմացյալ՝ անմահություն է»[30]: Իսկ մյուս հիմնական ·աղափարն այն է, որ պինվորը մարտի դաշտ է մտնում աներկյուղ կռվելու և «ջարդելու ճշմարտության թշնամիներին», իսկ պատերազմում փոխվելու մասին, մահվան մասին Եղիշեն «եթե»-ով է խոսում: Նրան խորթ է երդվյալ մահապարտի մոլեռանդ ֆանատիկոսությունը, որն ընտրում ու փնտրում է մահը, որպեսզի երկնային արքայության արժանանա: Եղիշեի հերոսները՝ Ղևոնդ երեցը և Վարդան Մամիկոնյանը, քարոզում են կենսահաստատ փիլիսոփայություն՝ պատերազմում քաջաբար կռվելու, հաղթելու, ապրելու և իր ժողովրդին ապրեցնելու փիլիսոփայություն:

[29] Նույն տեղում, էջ 233: Ավելորդ չի լինի հիշեցնել, որ ժամանակի պատմա·րության մեջ ընդունված էր, ելնելով նկարա·րվող դեպքերի ո·ուց, վերարտադրել պատմական ·ործող անձանց խոսքերը (ճառերը, նամակները և այլն) այնպես, «ինչպես դա կարող էր եղած լինել իրականում»:

[30] Նույն տեղում, էջ 29: Սա համապատասխանում է ռացիոնալիզմի (մտքի, բանականության ուժին ապավինելու) այն ո·ուն, որը Դավիթ Անհաղթից հետո բնորոշ էր դարձել հայ փիլիսոփայական մտածելակերպի համար (այս մասին խոսվեց վերը): Եղիշեն ևս ասում է. «Ամբողջ մարմնի կենդանությունը հո·ին է, իսկ մարմինն ու հո·ին կառավարողը միտքն է» (նույն տեղում, էջ 31): Իսկ ·ործնականում սա նշանակում է, որ մարդ պետք է իմանա, հասկանա, ·իտակցի իր արարքները:

# ПРИНЯТИЕ ХРИСТИАНСТВА В АРМЕНИИ С ТОЧКИ ЗРЕНИЯ ФИЛОСОФИИ ИСТОРИИ

*Г. А. ГЕВОРКЯН, академик НАН РА*

РЕЗЮМЕ

В утверждении христианства в Армении, в образовании армянской национальной церкви и в определении ее места как общественного института в публичной жизни армянского народа значительную роль сыграл ряд культурных и духовных факторов, которые нашли отражение в исторической литературе того времени. В оценке христианства, которая дается в ней в противопоставлении язычеству, превалирующими являются два аспекта. Первый аспект—нравственный. Язычество не отграничивает четко духовную радость от чувственного наслаждения, и потому оно, как говорит Агатангелос, допускает «грубые нравы», «дикое поведение»; христианство же выступает как «светлое учение», возвышающее человека и направляющее его на «свершение добрых дел». Даже с учетом того, что при описании языческих нравов христианские авторы заведомо сгущали краски, все же не вызывает сомнений само изменение нравственных ценностных ориентаций при обращении в христианство. Язычество объединяет разнородные явления—от почитания семейно-родовых реликвий и местных культов до классического греко-римского пантеона, между тем монотеистическим религиям, каковой является христианство, присуще единообразие. Принятие христианства способствовало формированию общенационального (а именно, возвышающегося над этнографическим разнообразием) нравственного облика армянского народа. Второй момент—просветительский, или культурно-образовательный. Язычество выступало как замкнутое, эзотерическое учение; каста жрецов обладала магическими знаниями, содержащимися в храмовых книгах, в иератических письменах, доступных только посвященным, христианство же выступало как открытое, экзотерическое учение, и всякий, обращающийся в христианство, приобщался к его тайнам через святые писания. Не случайно поэтому, что распространение христианства сопровождалось широким распространением школьного образования.

Распространение христианства в Армении происходило в широком контексте национальных задач. Было осознано, что национальная самостоятельность может быть обеспечена не только самоопределением армянской церкви внутри христианского мира, но и при условии, если армянская культура развернет свои внутренние потенции и традиции во всем культурном пространстве современной цивилизации. Была разработана и осуществлена культурная программа, благодаря которой в переводных и оригинальных трудах было представлено все богатство греческой образованности. Отныне армянская культура вступала в равноправный диалог и культурный обмен с другими культурами, не опасаясь их ассимилирующего влияния и представляя цивилизованному миру свои оригинальные труды по теологии и философии, истории и грамматике, логике и математике, космографии, географии и теории календаря, свои манускрипты и миниатюры, архитектурные памятники и строительное искусство. Армения стала одной из немногих стран, сохранивших традиции античной культуры и осуществивших тот своеобразный синтез греческой образованности с христианством, который позднее, после «темных веков», произошел в Ев-

ропе и стал характерен для европейского средневековья как особого типа культуры.

Другим замечательным обстоятельством является сосуществование в армянской духовной культуре греко-эллинистической традиции рационализма с христианской догматикой. Это утверждение относится не только к переводам и широкому использованию классических трудов античных авторов («внешних писаний языческих авторов», как их называли), но и к оригинальным трудам армянских авторов, особенно Давида Анахта (Непобедимого), типичного представителя Александрийского неоплатонизма, который оказал глубокое влияние на всю средневековую армянскую мысль. Этот факт терпимости по отношению к рационалистическому течению в философии и идеологии может быть полностью объяснен, если иметь в виду широкий, национальный, контекст принятия христианства и ее просветительской миссии в Армении.

Особая проблема—место и роль армянской церкви как общественного института в публичной жизни армянского народа. Церковь стала составной частью феодального устройства, однако, в отличие от византийской церкви, в которой митрополитства организованы по территориальному принципу, в организации армянской церкви епархии совпадали с княжескими владениями, епископы являлись клерикальными представителями князей и населения княжеских владений. Соответствие церковной иерархии княжеско-нахарарскому устройству наделяло церковь властными функциями. Таким образом церковь объективно была подготовлена к тому, чтобы во времена потери государственной самостоятельности взять на себя функции организации и представительства публичной власти, признанной как армянским обществом, так и иноземными властелинами. И вместе с тем армянское общество не стало теократическим: характерной чертой армянской церкви как общественного института является широкое участие в ее организации светских властей и представителей различных слоев населения, закрепленное также юридически, в правовых нормах, в сводах законов церкви еще с VIII века. Так что армянская церковь является национальной не только вследствие доктринальных различий, но и как общественный институт—вследствие особенностей своей организации и своего места в публичной жизни армянского народа.

Принятие христианства в Армении не прервало континуальности армянской культуры. Дохристианская история народа с ее языческими богами, патриархами и героями оставалась в исторической памяти народа и в традициях армянской историографии. Так что нравственная ориентация на ценности добра и человеколюбия вовсе не стала помехой тому, чтобы христианство адаптировалось к традициям поведения армянского воинства на ратном поле, но оно придало им черты духовности.

# THE ADOPTION OF CHRISTIANITY IN ARMENIA: A PHILOSOPHY OF HISTORY APPROACH

*H. A. GEVORKIAN, Academician of the National Academy of Sciences*

SUMMARY

The adoption of Christianity in Armenia, the establishment of the Armenian national church and the determination of its place as a public institution in the social life of the Armenian nation were conditioned by a number of social, political, historical circumstances, and among them some factors of cultural and spiritual character played an important role. The historical literature of that time reflected them in a specific way. In characterization of the Christian value system, given in it in opposition to heathenism, two aspects prevail. Firstly, it is the opposition of moral values and behaviour. In heathenism the sensual, carnal pleasure is not delimited definitely from the spiritual enjoyment, and that is why it makes possible «rude behaviour», «brutal and savage customs», as Agathangelos, an author of the 5$^{th}$ century, says. Meanwhile the Christianity is displayed as a «luminous teaching» which elevates and elates men and directs them to «virtuous deeds». Of course, Christian authors were giving exaggerated descriptions of heathen customs and moral behaviour, none the less this does not change the fact that the adoption of Christianity indeed lead to a change of moral value orientation. «Heathenism» comprises very different kinds of phenomena—from the worship of kin relics and local cults up to classical Graeco-Roman pantheon; and contrariwise, for monotheistic religions, such as the Christianity is, uniformity is characteristic. Due to this characteristic, the adoption of Christianity furthered the shaping of the all-national (i. e. rising above the ethnographical plurality) moral self and individuality of the Armenian people.

The second aspect of Christian value system, given in opposition to heathenism, was the cultural-and-educational. Heathenism was described as a closed, *esoteric* teaching and system; the caste of temple priests owned magical knowledge contained in manuscripts, written in hieratic symbols and accessible for eligibles, and Christianity was presented as an open, *ecsoteric* teaching, and everyone, adopting it, gained the possibility to acquire the knowledge of its mysteries through Holy Bible and other writings. So it was not accidental that together with the spreading of Christian religion in Armenia a wide educational program was fulfilled and schools for children were opened.

The establishment of Christianity in Armenia responded to a wide scale of national goals. The consciousness came that national independence can be secured not only through self-determination of the Armenian church in the Christian world but also in the case that the Armenian culture expands its potentialities and traditions in the whole cultural space of contemporary civilization. A cultural program was worked out and realized, and due to it all the plenitude of the Greek education was presented in translations and original works. Henceforward the Armenian culture entered into equal dialogue and cultural change with other cultures, presenting to the civilized world its original works in theology and philosophy, history and grammar, logic and mathematics, cosmography, geography and theory of calendar, its manuscripts and painting, architecture and construction art, not in the least fearing to be assimilated culturally. Armenia became one of the few countries which preserved the tra-

ditions of antique culture and realized the synthesis of Graeco-Hellenistic education with Christianity,which later on, after the «dark ages», was realized in Europe and became the characteristic trait of the European Middle Ages as a specific type of culture.

Another prominent circumstance is the fact that in the Armenian spiritual culture the Graeco-Hellenistic tradition of rationalism co-existed with Christian doctrine. This statement concerns not only the translations and wide use of classical works of antique authors («outer writings of heathen authors», as they were called), but also the original writings of the Armenian authors, especially David Anhakht (the Invincible), a typical representative of the Alexandrian neo-Platonism, which had a deep impact on the Armenian thought all over the Middle Ages. The fact of this tolerance toward the rationalistic trend in philosophy and ideology, which in some cases diverged with Christian doctrine and modes of argumentation, can be fully explained, if we have in view the broader, national context of adoption of Christianity and its enlightenment mission in Armenia.

The next problem of special interest is the place and the role of the Armenian church as a social institution in the public life of the Armenian people. After Christianity entered Armenia, the church became a constituent of the feudal system. But, unlike the Byzandium church, the Metropolits of which were organized according to territorial principle, in the organization of the Armenian church episcopacies corresponded to principalities, the domains of feudals («nakhararars»), and the bishops were considered as the clerical representatives of domains. Such rapport of church hierarchy with feudal system of power and rule endowed the church with authority. Thus the church had an objective basis to prepare itself for the future when Armenia lost its independence, and the Armenian church undertook the task to organize the public life of the nation and to be its representative. The church was acknowledged as the authority both by the Armenian society and by foreign rulers, as the representative of the population of the Armenian territories. But in spite of this, the Armenian society did not become theocratical: the characteristic trait of the Armenian church is the wide participation of the parish civilians in the church organization. This right of them has a long tradition and is secured juridically, in legal regulations of the church since the $8^{th}$ century. So the Armenian church is a national church not only for its doctrinal differences but also as a public institution—for the peculiarities of its organization and its place in the public life of the Armenian people.

The adoption of Christianity in Armenia did not interrupt the continuity of the Armenian culture and the historical memory of the Armenian people. Pre-Christian history of the people with its heathen divinities, patriarchs and heroes remained in the historical memory of the people and in traditions of the Armenian historiography, and the Armenian church adapted them through new interpretations. Adopting the orientation to Christian values, virtues, and humanism, the Armenian people, thanks to the continuity of its culture and historical memory, none the less preserved the martial spirit of its predecessors.

# ՀԱՅՐԵՆԻՔ—ՊԵՏՈՒԹՅՈՒՆ—ԵԿԵՂԵՑԻ ԵՌԱՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ

*Է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ, պատմական ·իտությունների դոկտոր*

Հայոց ավելի քան հին·հավարամյա պատմության ընթացքում ձեռք բերված փառապանծ հաղթանակները՝ Հայկի ճակատամարտից մինչև Արցախի ազատամարտը, ձեռք են բերվել հայ ժողովրդի ընտրյալ զավակների՝ հանուն Հայրենիքի, Հավատքի և Ազատության սեփական կյանքը զոհաբերելու ·իտակցված առաքելությամբ: Աշխարհիկ և հո·ևոր ուժերը հայոց պատմության ընթացքում փոխլրացրել են մեկը մյուսին:

Հայոց ·ահակալությունը ծա·ել է հավարամյակներ առաջ բնիկ նախնիներից. Հայկի սերունդները, Մովսես Խորենացու բնութա·րմամբ, «թա·ավորության աստիճանի են հասնում»[1]: Հայոց պետականությունը հնա·ույն ժամանակներից կրել է աստվածապետական ·աղափարներ, և ամբողջ կառավարումը խարսխված է եղել տոհմ—նախարարություն—հայրենիք համակար·ային ·աղափարի վրա՝ ո·եշնչված նախնիների պաշտամունքով, և դրանից է, որ նախաքրիստոնեական ժամանակների հայոց հեթանոսական (ազ·ային-քրմական) դասը քրիստոնեական դարաշրջանում Սբ. Գրի·որ Լուսավորչի նախաձեռնությամբ զ·ալի թվով համալրեց Հայ առաքելական եկեղեցու քահանայական սպասավորությունը[2], իսկ տաճարային համակար·ը վերաճեց թեմական նվիրապետության[3]: Եթե նախկինում երկրի ·երա·ույն քուրմը հիմնականում կա՛մ ինքը թա·ավորն էր, կա՛մ էլ թա·ավորական ընտանիքից էր, ապա այդ ավանդույթը շարունակվեց հետա·այում. հայ եկեղեցու նվիրապետության հաստատմամբ Արշակունիներին զու·ահեռ ճյուղից (Սուրենյան Պահլավ) սերվեց առաջին կաթողիկոսական՝ Լուսավորչի տոհմը[4]:

Հին հայոց հավատքը լուսապաշտության բազում վկայություններ է ունեցել, անցումը հին հեթանոսությունից[5] քրիստոնեությանը բնական երևույթ էր և սնվում էր լուսապաշտության հո·ևոր ակունքներից[6]:

Հայկի հաղթանակը Բելի նկատմամբ Հայոց Ձորի ճակատամարտում Պատմահայրը ներկայացրել է որպես լուսավոր ուժերի մղած առաջին ազատա·րական պատերազմը Հայոց աշխարհում: Ըստ Խորենացու Հայկը ·եղապատշաճ, թիկնավետ, ·եղա·ան·ուր, խայտակն և հաստաբազուկ անձնավորություն էր: Բելը ձ·տում էր պարտադրելու իր պաշտամունքը[7], ինչը նույնպես կասեցվեց Հայկի հաղթանակով: Հայոց ազատատենչ ո·ու մարմնավորումն էր Հայկի խոսքը՝ ուղղված իր զորքին. «Երբ մենք դուրս կ·անք Բելի ամբոխի դեմ, պետք է

---

[1] *Մովսես Խորենացի*, Պատմություն Հայոց (թար·մանությունը, ներածությունը և ծանոթա·րությունները՝ Ստ. Մալխասյանի): Ե., 1961, էջ 121:

[2] Տես *Ագաթանգեղոս*, Պատմություն Հայոց (աշխարհաբար թար·մանությունը ներածականով ու ծանոթա·րություններով՝ Ա. Տեր-Ղևոնդյանի): Ե., 1977, էջ 140:

[3] Պատմա·իտության մեջ սկզբնաղբյուրների հաղորդումների այսպիսի մեկնությունը բխում է Մովսես Խորենացու ·աղափարական հիմնադրույթներից, որոնց առանցքում Հայոց պատմության քաղաքական, ռազմական, տնտեսական և հո·ևոր բնա·ավառներն ամբողջության մեջ դիտարկելն է, ինչի անտեսումը հետազոտողներին կարող է փակուղի տանել:

[4] Տես *Մովսես Խորենացի*, նշ. աշխ., էջ 182:

[5] Չշփոթել միջնադարում օ·տա·ործված, իմաստային փոփոխության ենթարկված «հեթանոսություն» բառի հետ, որը նշանակում էր «ոչ-քրիստոնյա», «անհավատ»:

[6] Այս հարցերի մասին ավելի մանրամասնորեն տես *Է. Լ. Դանիելյան*, Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու հո·ևոր ակունքները և պատմական նշանակությունը: Ե., 1997:

[7] Տես «Պատմութիւն Սեբէոսի» (աշխատասիրությամբ Գ. Վ. Աբ·արյանի): Ե., 1979, էջ 49:

աշխատենք այն տեղին պատահել, որտեղկան·նած կլինի Բելը քաջերի խուռն բազմության մեջ, որպեսզի կա՛մ մեռնենք և մեր աղխը Բելի ծառայության տակ ընկնի, կա՛մ մեր մատների հաջողությունը նրա վրա ցույց տանք, նրա ամբոխը ցրվի և մենք հաղթություն տա-



«Սբ. Թադևոս առաքյալ» (18-րդ դ.).
գործ՝ Հովնաթան Հովնաթանյանի

նենք»[8]: Հայկը «շտապով հավաքում է իր որդիներին ու թոռներին՝ թվով շատ նվազ, քաջ և աղեղնավոր մարդկանց, և ուրիշ մարդկանց, որ իրեն էին ենթարկվում», այսինքն՝ Հայկի քիչ թվով վորքը կռվի ելավ Բելի մեծաքանակ վորքի դեմ[9]: Հայոց պատմության մեջ ոչ թե քանակով, այլ հմտությամբ ·ործելը եղել է բազմիցս: Խորենացին ·րել է. «Թեպետ մենք փոքր ածու ենք և թվով շատ սահմանափակ..., բայց և այնպես մեր երկրումն էլ ·րելու և հիշատակելու արժանի շատ սխրա·ործություններ են կատարվել»[10]: Հայոց աշխարհում վկայված ճշմարիտ աստվածապաշտությունից սնվող արդարության ·իտակցման հո·ևոր խորհրդանիշներն արտացոլվել են հայկական և շումերական դյուցազներ·ությունններում, Աստվածաշնչում, Պատմահոր և մյուս հայ պատմիչների երկերում:

Հայոց աշխարհիկ և հո·ևոր կենտրոնները Արատտայի, Արմանումի (մ. թ. ա. 3-րդ հազ.), Հայասա-Հայքի (մ. թ. ա. 2-րդ հազ.) և Վան-Արարատյան (մ. թ. ա. 1-ին հազ. առաջին կես) թա·ավորությունների ժամանակներում սկզբնաղբյուրներում հիշատակվում են Այրարատում, Աղձնիքում, Բարձր Հայքում, Գու·արքում, Վասպուրականում:

Հայոց Արարատյան թա·ավորության մղած դարավոր պայքարը Ասորեստանի դեմ հաղթական ավարտ ունեցավ, երբ Մարաստանի և Բաբելոնի հետ դաշնակցած հայոց ուժերը Հայկազունի Սկայորդու որդի Պարույրի ·լխավորությամբ մ. թ. ա. 612 թ. պաշարեցին Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն և ·րավեցին այն: Հայոց թա·ավոր Պարույրը չմասնակցեց նրանց հետա·ա նվաճումներին: Մերձավոր Արևելքում Բաբելոնը մրցակցության մեջ մտավ Ե·իպտոսի հետ, ·րավեց փյունիկյան քաղաքները, ոչնչացրեց Հուդայական թա·ավորությունը և կավթեց Երուսաղեմը (մ. թ. ա. 586 թ.): Բաբելոնյան ·երության մեջ հայտնված իրեա ·երիների փրկության համար, ըստ Աստվածաշնչի, կոչ արվեց. «Դրոշ բարձրացրեք երկրի վրա, փող փչեցեք բոլոր ազ·երի մեջ, զորա·նդեր կանչեցեք նրա դեմ: Իմ կողմից հրաման տվեք Արարատյան թա·ավորություններին և ասքանազյան ·նդին, նրա շուրջը նետաձի· սարքեր կան·նեցրեք, հարձակվեցեք նրանց վրա... Նրա վրա հրավիրեցեք ազ·երին և մարերի թա·ավորին»[11]: Մարաստանն այդ ժամանակ հին Արևելքի ռազմաքաղաքական ուժերից մեկն էր, սակայն այստեղ առաջինը հիշատակված է Հայոց պետությունը՝ *Արա-*

[8] *Մովսես Խորենացի*, նշ. աշխ., էջ 101:
[9] Տես նույն տեղում, էջ 100—101:
[10] Նույն տեղում, էջ 82—83:
[11] *Երեմիա*, 51, 27—28:

*բաստյան թա·ավորություններ* անունով: Դա վկայում է հնա·ույն ժամանակներից Հայաստանի ունեցած հո·ևոր նշանակության մասին. Խորենացին Հայոց աշխարհը համարում է «բոլոր հյուսիսային ազ·երի մեջ վեհա·ույնը»[12]:

Հայոց թա·ավոր Երվանդի որդի Տի·րանն աջակից եղավ Կյուրոսին Մարաց թա·ավորության կործանման ·ործում: Կյուրոս 2-րդը մ. թ. ա. 6-րդ դարի կեսին հիմնեց Իրանում Աքեմենյան պետությունը: Բաբելոնի թա·ավորությունը կործանեցին պարսկական ուժերը (մ. թ. ա. 539 թ.), որոնց հետ դաշնակցած հայկական հեծելազորը ·լխավորում էր Հայոց թա·ավոր Տի·րան Երվանդյանը, իսկ հետևակը՝ Էմբաս զորավարը: Հայոց թա·ավորությունը, ըստ Քսենոփոնի «Կյուրոպեդիայի», ուներ 40 000-անոց հետևազոր և 8 000-անոց հեծելազոր[13]: Հետա·ա դարերում հայոց արքունական զորքի թիվը 100 000 և նույնիսկ ավելի զինվոր էր:

Դարեհ 1-ինի ·ահակալությամբ Իրանում և հարևան երկրներում բռնկեցին ապստամբություններ և ճակատամարտեր: Հայաստանում նվաճողները մի քանի ան·ամ պարտություն կրեցին հայկական զորքերից (մ. թ. ա. 521 թ.) և մեծ դժվարությամբ կարողացան ·րավել երկրի արևմտյան մասի միայն մի հատվածը, որն այդ վիճակում էլ o·տվեց ինքնավարությունից՝ Հայկազունի-Երվանդյանների մի ճյուղի կառավարմամբ: Հայաստանի մեծա·ույն մասը պահպանեց իր անկախությունը Հայկազունի-Երվանդյան թա·ավորող հարստության ·լխավորությամբ: Հայաստանի կենտրոններ շարունակում էին մնալ Վանը, Արմավիրը, Էրեբունին:

Հայկազունի-Երվանդյան թա·ավորությունը մինչև Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակները և դրանից հետո էլ պահպանեց բնիկ՝ Մեծ և Փոքր Հայքերի տարածքները: Նրանց հո·ևոր առաջնորդության առանձնաշնորհությունը ևս պահպանվեց և տրվեց Հայկազունի Վահա·նի սերունդներից Վահունյաց նախարարական տանը, այնուհետև քըրմապետությունը, ըստ Խորենացու, անցավ Երվանդ թա·ավորի եղբայր Երվազի տոհմին[14]:

Հայկազունի-Արտաշեսյան հարստության օրոք Հայոց պետությունը հասավ իր փառքի ·ա·աթնակետին շնորհիվ Արտաշես 1-ին Մեծի (մ. թ. ա. 189—160 թթ.) և հատկապես Տի·րան 2-րդ Մեծի (մ. թ. ա. 95—55 թթ.) ազ·ապահպան ·ործունեության:

Մովսես Խորենացին, հո·ևոր և ռազմական առումով բարձր ·նահատելով Հայկազունների ժամանակները, ·րել է. «Մեր թա·ավորների մեջ ինձ այս մարդիկ են սիրելի, իբրև բնիկներ, արյունակիցներ և իսկական հարազատներ: Ես շատ կփափա·եի, որ այն ժամանակ Փըրկիչը եկած և ինձ ·նած լիներ, որ նրանց ժամանակ ես աշխարհ եկած լինեի, նըրանց տերությամբ զվարճանայի և այժըմյան վտան·ներից խուսափած լինեի»[15]:

Ըստ Խորենացու Հայոց Աբ·ար թա·ավորը (1-ին դ. առաջին կես), հզոր զորավար լինելով, պարթևական Իրանում ·ահակալական վեճերը կար·ավորելուց հետո, Քրիստոսին ·րած իր նամակով խնդրեց ·ալ և իրեն բուժել[16]: Քրիստոսի համբառնալուց հետո Սբ. Թադևոս առաքյալը ·ալիս է ՈՒռհա-Եդեսիա, որտեղ քարոզում է Ավետարանը, այնուհետև իր առաքելական քարոզչությունը շարունակում է Հայաստանի շրջաններում, որտեղ հո·ևոր հողը պարարտ էր աստվածապաշտությամբ: Այսպես հիմնվում է Հայ առաքելական եկեղեցին:

Հայ ժողովուրդը, Տրդատ 3-րդ Մեծի և Սբ. Գրի·որ Լուսավորչի առաջնորդությամբ քրիստոնեական հավատքը պետականորեն հռչակելով (301 թ.), ապավինեց Հայ առաքելական եկեղեցու հո·ևոր հովանուն: Փավստոս Բուզանդը նշել է, որ Հայոց սպարապետ Վաչե Մա-

[12] *Մովսես Խորենացի*, նշ. աշխ., էջ 350:

[13] Տես *Հ. Մանանդյան*, Երկեր, h. Ա: Ե., 1977, էջ 44:

[14] Տես *Մովսես Խորենացի*, նշ. աշխ., էջ 197:

[15] Նույն տեղում, էջ 122:

[16] Տես նույն տեղում, էջ 184:

միկոնյանը և նրա վինակիցները իրենց կյանքը փոխարերեցին՝ կռվելով երկիր ներխուժած թշնամու դեմ (338 թ.): Վրթանես կաթողիկոսը կանոն սահմանեց, որ Հայրենիքի ապատության համար զոհված զորականները սուրբ նահատակներ



«Սբ. Բարդուղիմեոս առաքյալ» (18-րդ դ.).
գործ՝ Հովնաթան Հովնաթանյանի

հռչակվեն[17]: Այսպիսով սրբա·ործվում էր հայրենիք—պետություն—եկեղեցի միասնության ·աղափարը:

Հայաստանում ևս, ինչպես այլ քրիստոնեական երկրներում, սովորություն է եղել ·ահ բարձրացող նոր թա·ավորին օծել եկեղեցական արարողությամբ: Այդպես էր Մեծ Հայքի (Արշակունիներ, Բա·րատունիներ) և Կիլիկիայի հայկական արքայական հարստությունների ժամանակ: Կաթողիկոսները վճռական ճակատամարտերից առաջ օրհնել են

[17] Տես *Փավստոս Բուզանդ*, Հայոց պատմություն (թար·մանությունը և ծանոթա·րություններ՝ Ստ. Մալխասյանցի): Ե., 1987, էջ 46—47:

նաև հայոց զորքերը[18]: Իսկ որոշ կաթողիկոսներ նույնիսկ ներկա են եղել և մասնակցել ապատա·րական կռիվներին (Ներսես Ա Մեծ, Հովսեփ Ա Հողոցմեցի, Հովհան Մանդակունի[19]): Մեր օրերում Արցախի ազատամարտի ո·եշնչողն ու մասնակիցն է եղել Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի ներկայիս առաջնորդ Պար·և արքեպիսկոպոս Մարտիրոսյանը:

Հայոց կաթողիկոսները և բարձր հո·ևորականությունը, նաև նորակառույց եկեղեցիները և քաղաքները օծելով, խաղաղություն և մխիթարության հույս են ներշնչել բնակչությանը: ՈՒստի, եթե Խադ եպիսկոպոսն օծեր Արշակավանում կան·նեցված նոր եկեղեցին և օրհնանքի խոսք ասեր քաղաքի բնակչությանը, թե՛ Արշակը և թե՛ Հայոց թա·ավորությունը կփրկվեին վրա հասած շատ արհավիրքներից: Չէ՞ որ եկեղեցին արդեն կան·-նեցված էր...

4-րդ դարում հայոց արքաներից Արշակը և Պապը իրենց կյանքը նվիրաբերեցին հայրենիքի ապատությանը: Աը·ային ինքնության պահպանմամբ օտար նվաճողներին մշակույթով և վենքով դիմակայման վառ արտահայտությունն էին ոսկեդարյան հայ մշակույթը և Վարդանանց պատերազմը, որոնց նշանաբաններն էին. «Լավ է կույր աչոք, քան կույր մտոք», «Մահ չիմացյալ՝ մահ է, մահ իմացյալ՝ անմահություն»[20] ·աղափարները: Հավարամյակների պատմական ուղի անցած հայոց պետականությունը 428 թ. Արշակունիների անկումից հետո պահպանվեց ի դեմս նախարարական համակար·ի և հայ եկեղեցու հո·ևոր վահանով

[18] Հայ եկեղեցին մեծ դեր է խաղացել հայ ժողովրդական ուժը բարձր հո·եբարոյական մակարդակի վրա պահպանելու ·ործում (տես *Ա. Մ. Այվազյան*, Հայ զինվորականության պատմի վարքականոնը (4—5-րդ դարեր): «ՀԲ», 2000, հմ. 3):

[19] Տես *Փավստոս Բուզանդ*, նշ. աշխ., էջ 296—297, նաև՝ *Ղազար Փարպեցի*, Հայոց պատմություն, Թուղթ Վահան Մամիկոնյանին (աշխարհաբար թար·մանությունը և ծանոթա·րությունները՝ Բ. Ուլուբաբյանի): Ե., 1982, էջ 312—313:

[20] *Եղիշե*, Վարդանի և Հայոց պատերազմի մասին (թար·մանությունը և ծանոթա·րություն-ները՝ Ե. Տեր-Մինասյանի): Ե., 1989, էջ 28—29:

պաշտպանեց հայ ժողովրդին: «Այս պատճառով էլ աստվածապաշտությունը բաց ճակատով ու ինքնիշխան փայլում էր Հայոց աշխարհում»[21]:

Սասանյաններն իրենց նվաճողական քաղաքականությունն իրականացնելիս տնտեսական և քաղաքական ճնշմանն ավելացրին կրոնական հալածանքը՝ հայերին պարտադրելով հրաժարվել քրիստոնեությունից և ընդունել մազդեզականություն, ինչը լցրեց հայ ժողովրդի համբերության բաժակը:

Հայոց ապստամբ զորքն սպարապետ Վարդան Մամիկոնյանի ·լխավորությամբ ·նաց հայոց Վասպուրական աշխարհի Արտազ ·ավառը: Հայոց զորա·նդերի հետ էին Հովսեփ կաթողիկոսը, Ղևոնդ երեցն ու քահանաներ: Հայկական զորքի ընդհանուր թիվը 66 հազար էր՝ ձիավոր և հետևակ: Սպարապետ Վարդան Մամիկոնյանը հայրենաշունչ կոչով դիմեց հայոց զորքին. «Երկու և երեք կռիվների մեջ ինքը Տերը մեծ զորությամբ օ·նեց մեզ, այնպես որ քաջության անուն ժառան·եցինք», իսկ Հազկերտը, «որ ամպերի վրայից էր որոտում, ընկճված՝ իր սովորական բնույթից էլ ցած իջավ՝ մեզ հետ խոսելով: Նա, որ խոսքով ու հրամանով էր ուզում կատարել իր չարությունը սուրբ եկեղեցու վերաբերմամբ, այժմ աղեղով և նիզակով ու սրով է կռվում: Նա, որ կարծում էր, թե մենք քրիստոնեությունն իբրև զ·եստ ունենք հա·ած, այժմ չի կարողանում մեզ փոխել, ինչպես մարմնի ·ույնը (չի կարելի փոխել), ·ույե այլևս չկարողանա էլ մինչև վերջը: Որովհետև սրա հիմքերը հաստատ կերպով դրված են անշարժ վեմի վրա, ո՛չ թե երկրի վրա, այլ վերևում՝ երկնքում... Եվ մենք էլ, թեպետև մարմնով երկրի վրա ենք, բայց հավատով երկնքում ենք հաստատված, որտեղ ոչ ոք չի կարող հասնել Քրիստոսի անձեռա·ործ շինվածքին»[22]:

451 թ. մայիսի 26-ի լուսաբացին Վարդան զորավարը, խորհրդակցելով հայոց ավա·անու հետ, զորա·ունդներ կար·եց Ավարայրի դաշտում, Տղմուտ ·ետի ափին՝ պարսից զորքի դիմաց, որը թվով երեք ան·ամ ավելի էր: Հայոց հեծելա·ունդը քաջ Վարդանի ·լխավորությամբ անցավ Տղմուտ ·ետը և հուժկու հարվածեց թշնամուն: Սակայն հայոց զորքի մի զ·ալի մասը չէր կարողացել անցնել ·ետը: Պարսիկները պատերազմի դաշտ մտցրին փղերի երամակներ, որոնց հետևից ·ալիս էին բազմահազար սպառազեններ: Վարդան Մամիկոնյանն իր զինակիցներով հայտնվեցին շրջապատման մեջ: Եղիշեն ·րել է. «Կորովի Վարդանն իր քաջ նիզակակիցներով մեծ կոտորած արեց այնտեղ, ուր և հենց ինքն էլ արժանի եղավ ստանալու կատարյալ նահատակության պսակը»[23]: Հայոց զորքից զոհվեցին 1036 մարդ, իսկ պարսիկներից՝ 3544, ավելի քան երեք ան·ամ շատ[24]:

Հայ առաքելական եկեղեցին Ավարայրի ճակատամարտում հերոսաբար զոհվածներին դասեց սուրբ նահատակների շարքը՝ նրանց հիշատակի օրը դարձնելով եկեղեցական տոն՝ Սբ. Վարդանանց անունով: Ավարայրի բոցը չէր մարել: Հայոց աշխարհի նախարարական տոհմերից շատերը ամրացել էին Միջնաշխարհի, Խաղտիքի, Տմորիքի, Արցախի բերդերում ու ամրոցներում և այնտեղից հակահարված էին հասցնում համալրում ստացած թշնամուն, որը պարտվեց այդ վայրերում:

Հետա·այում հայրենասիրական ուժերը համախմբվեցին Վարդանի եղբայր Համազասպի որդու՝ Վահանի շուրջ, որը ·լխավորեց Արևելյան Հայաստանում Սասանյանների դեմ բռնկած հաջորդ ապստամբությունը (481—484 թթ.): Իշխանությունն անցավ ապստամբ նախարարներին: Հայոց կառավարիչ դարձավ Սահակ Բա·րատունին, իսկ սպարապետ՝ Վահան Մամիկոնյանը: Հայոց ուժերը հաղթեցին Ակոռիի, Ներսեհապատի և Ջրվեժի մոտ տեղի ունեցած ճակատամարտերում: Նվարսակում կնքված պայմանա·րով (484 թ.) Պարսկաստանն ստիպված էր ճանաչել հայ նախարար-

[21] Նույն տեղում, էջ 12—13:

[22] Նույն տեղում, էջ 202—203:

[23] Նույն տեղում, էջ 238—239:

[24] Տես նույն տեղում, էջ 242—243:

ների ժառանգական իրավունքները և հայ եկեղեցու ապատությունը:

Արևմտյան Հայաստանում տնտեսական և քաղաքական վիճակը ծանրացավ հատկապես Հուստինիանոս 1-ին կայսեր (527—565 թթ.) օրոք. 539 թ. մի



«Սբ. Գրիգոր Լուսավորիչ» (17—18-րդ դդ.). գործ՝ անհայտ հայ նկարչի

ապստամբություն բռնկեց, որի ղեկավարն էր Արտավան Արշակունին:

Հայոց թագավորական իշխանության և երկրի պարսկա-բյուզանդական բաժանվածության պայմաններում խիստ կարևորվում էին հայ եկեղեցու ընդունած և համազգային նշանակություն ունեցող որոշումները: Այսպես՝ 506 և 554 թթ. Դվինի եկեղեցական ժողովներն ամրագրեցին հայոց դավանական ինքնորոշումը և ստեղծված պայմաններում ազգային միաբանությունը:

Արևելյան Հայաստանում հայերի հաջորդ ապստամբությունը (572 թ.) գլխավորեց Վասակ Մամիկոնյանի որդին՝ Վարդանը: Պարսիկների կողմից Դվինում մազդեզական կրատուն կառուցելու փորձը ձախողվեց, պարսից մարզպանի զորքը ջախջախվեց, իսկ ապստամբական շարժումը վերածվեց պարսկա-բյուզանդական պատերազմի, որը տևեց մոտ 20 տարի և հանգեցրեց Հայաստանի երկրորդ բաժանմանը (591 թ.), որով երկրի մեծ մասն անցավ Բյուզանդիայի տիրապետության տակ[25]:

Մավրիկիոս (Մորիկ) կայսրը ռազմավարչական վերափոխումներից հետո փորձեց պառակտել Հայ եկեղեցին: 591 թ. նա Դվինում գտնվող Հայ առաքելական եկեղեցու կաթողիկոսական աթոռին հակառակ քաղկեդոնական աթոռ հիմնեց Ավանում, որը, սակայն, գոյատևեց միայն մինչև 609 թ.: Կայսեր նպատակն էր հայերին ենթարկել բյուզանդական պաշտոնական եկեղեցուն և թուլացնել Հայաստանի ռազմական ուժը:

Ընդհանրապես նվաճողներին անհանգստացնում էր հայոց ռազմական հզորությունը: Մավրիկիոսի նամակը Պարսից արքա Խոսրով Փարվեզին (591–627 թթ.) փաստում է այդ իրողությունը. «Խոտոր և անհնազանդ ազգ կա մեր միջև և պղտորում է: Բայց ես իմը (բյուզանդական մասի հայ կորականներին) պիտի ժողովեմ և Թրակիո մեջ հավաքեմ, դու էլ քոնոնց ժողովի և հրամայի, որ Արևելք տանեն: Եթե նրանք մեռնեն, ուրեմն պիտի մեռնեն մեր թշնամիները, և եթե նրանք սպանվեն՝ մեր թշնամիները սպանված կլինեն, և մենք խաղաղությամբ կապրենք. որովհետև եթե նրանք իրենց երկիրը մնան, մենք հանգիստ չենք լինի»[26]:

Հայ զորավարներն ու զորքերը, որոնք ուղարկվում էին Բյուզանդիայի հեռավոր երկրամասեր, ապստամբում էին: Այդ զորավարներից էր Սմբատ Բագրատունին: Պարսկաբյուզանդական ուժերը, մի կողմ թողնելով իրենց հակամարտությունը, հայ ապստամբ զորավարների դեմ գործում էին միացյալ ճակատով:

7-րդ դ. առաջին տասնամյակներում,

[25] Տես *Սեբեոս*, նշ. աշխ., էջ 84:

[26] Նույն տեղում, էջ 86—87:

պարսկա-բյուզանդական պատերազմների ընթացքում, Ասորիքում, Փոքր Ասիայում, Ե·իպտոսում և Պաղեստինում տարածքներ ·րավելուց հետո պարսից արքան Տիզբոնում ժողով ·ումարեց (615/6 թ.), որին մասնակցում էին պարսից տիրապետության տակ ·տնվող քրիստոնյա եկեղեցիների ներկայացուցիչներ: Խոսրովը հրամայեց, որ իր իշխանության տակ ·տնվող բոլոր քրիստոնյաները հետևեն միայն հայոց հավատքին[27]: Հայ եկեղեցին հակադրվում էր բյուզանդական պաշտոնականացված քաղկեդոնական դավանանքին, ուստի Խոսրովը հանդես եկավ ի պաշտպանություն հայ եկեղեցու: Ժողովից հետո Կոմիտաս Մամիկոնյանը կաթողիկոս օծվեց: Նա կառուցեց Սբ. Հռիփսիմե եկեղեցին (618 թ.):

Հերակլ կայսեր (610—641 թթ.) հարվածներից Սասանյանները ուշքի չեկան և 7-րդ դարի կեսերին տապալվեցին Արաբական խալիֆայության կորքերի հարվածներից: Բյուզանդիան նույնպես խոշոր պարտություն կրեց արաբներից: Իսկ Հայաստանը, չնայած մի քանի ան·ամ ասպատակությունների ենթարկվեց, այնուամենայնիվ, շնորհիվ հայոց զորավար Թեոդորոս Ռշտունու ճկուն քաղաքականության, կարողացավ ոչ միայն դիմակայել, այլև մի քանի տասնամյակի ընթացքում վերական·նել իր տարածքային ամբողջականությունը և անկախությունը[28]:

Հայ եկեղեցին շարունակեց իր ազ·ապահպան ·ործունեությունը ժողովրդի թե՛ սոցիալ-կենցաղային կյանքում[29] և թե՛ հո·ևոր կյանքում՝ ազ·ային մտավորականության ստեղծա·ործական ուժերին հովանավորելով: Ներսես Գ Տայեցի (որին ժողովուրդը սիրով Շինարար անվանեց) և Անաստաս Ա Ակոռեցի կաթողիկոսների օրոք է աշխատել Անանիա Շիրակացին, որը, շարունակելով Խորենացուն, «Աշխարհացույցի» մեջ ներկայացրեց Հայաստանի ամբողջական տարածքի վերական·նված պատկերը[30]:

Հայ եկեղեցին պաշտպանեց հայ ժողովրդի հո·ևոր կյանքն աղանդավորությունից (մծղնեականություն, բորբորիտոն և այլն) և «արվա·իտության» աղտից՝ դրանց դեմ մշակելով հատուկ կանոններ, որոնք մտան «Կանոնա·իրք Հայոց»-ի մեջ:

Արաբական խալիֆայության դեմ մղված պայքարի մասին խոսելիս Ղևոնդ պատմիչը նշում է, որ հայ ·երիները մերժում են հավատափոխության ·նով իրենց կյանքը փրկելու՝ արաբների կողմից արված առաջարկությունը. «Իսկ քաջ նախատակները, հա·նելով հավատքի զրահը և իրենց ·լուխներն ամրացնելով փրկության սաղավարտով, ասում էին նրան (արաբ Քուբեդային.—*Է. Դ.* ). «Քավ լիցի՛, թե Աստուծո ճշմարտությունը փոխանակենք ստության հետ, կամ հավիտենական կյանքը՝ վայրկենականի հետ, կամ մշտնջենավոր կյանքը՝ անցավորի հետ, կամ բոլորի հույսը Քրիստոսի ընկատմամբ՝ մեր անարժեք արյան հետ»... Այսպես միմյանց քաջալերելով բանտի վշտերի ժամանակ աղոթքով Աստծուն միավորված՝ հայցում էին հանդերձյալ հույսի ակնկալությունը ժառան·ել»[31]:

Հայ եկեղեցին հետա·ա դարերում՝ թե՛ Հայոց թա·ավորության վերական·-նման (Բա·րատունյաց և Ռուբինյան թա·ավորություններ) և թե՛ արևելյան քոչվոր ցեղերի ասպատակությունների հետևանքով հայ ժողովրդի համար ստեղծված ծանր իրավիճակներում, շարունակեց իր հո·ևոր ազ·ապահպան

[27] Տես նույն տեղում, էջ 151:

[28] Տես *Է. Լ. Դանիելյան*, Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ առաքելական եկեղեցին (VI—VII դդ.): Ե., 2000, էջ 207—235:

[29] Պատերազմների ընթացքում Հայաստանի ժողովրդա·րական վիճակը վտան·վել էր, ուստի Դվինի 645 թ. եկեղեցական ժողովը մի քանի որոշումով (·երեվարությունների հետևանքով խաթարված ընտանիքների վիճակը կար·ավորելու նպատակով) ձ·տում էր կար·ավորելու ընտանեկան և ամուսնական հարաբերություններում եղած վիճակը (տես «Կանոնա·իրք Հայոց», հ. Բ: Աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի: Ե., 1971, էջ 205—206):

[30] Տես *Ս. Երեմյան*, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի: Ե., 1963:

[31] *Ղևոնդ*, Պատմություն (աշխարհաբար թար·մանությունը, ներածությունը և ծանոթա·րությունները՝ Ա. Տեր-Ղևոնդյանի): Ե., 1982, էջ 129:

·ործունեությունը: Հայ հո·ևորականության ներկայացուցիչները Արևմտյան Հայաստանում 19-րդ դ. երկրորդ կեսից Օսմանյան Թուրքիայի լծի սաստկացման բերումով կան·նեցին հայ ազատա·րական պայքարի նշանավոր



«Տրդատ թագավոր» (18-րդ դ.).
գործ՝ Հովնաթան Հովնաթանյանի

·ործիչների կողքին: Վաղարշակերտի Սբ. Հովհաննես, Դերիկի Սբ. Աստվածածին, Մշո Սբ. Կարապետ, Սբ. Առաքելոց վանքերը դարձան ազատա·րական պայքարի կարևոր հենակետեր, իսկ առաջին աշխարհամարտի տարիներին հայ հո·ևորականները դարձան կազմավորված հայ ազ·ային կորամասերի հո·ևոր հովիվներ[32]:

Չնայած Հայաստանը հին դարերում և վաղ միջնադարում, լինելով Առաջավոր Ասիայի հզոր տերություններից մեկը, ժամանակի ընթացքում տարածքային մեծ կորուստներ կրեց, սակայն հայ ժողովուրդը պահպանվեց և պատմական հիշողությունից սնվող ազ·ային հո·եբանությամբ, անկախ բոլոր տեսակի խոչընդոտներից, ներկայումս Հայաստանի Հանրապետություն—Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն—Սփյուռք ազ·ապետական մի ամբողջություն է կազմում: Հայ եկեղեցուն հսկայական դեր է վերապահված այդ ամբողջությունը կենդանի և անարատ պահելու ·ործում: Հայոց պետություն—հայ եկեղեցի կապը ար·ասաբեր դարձնելու համար խիստ կարևոր է ղեկավարվել ոչ թե ներմուծվող կամ պարտադրվող այլընտրանքային մոդելներով, այլ սեփական պատմական անցյալով[33], որը հայրենյաց ·ործին հայ եկեղեցու և նրա հո·ևորականության մեծ նվիրումի բազում օրինակներ է տվել:

Հավատքի խորհուրդը հո·ևոր իմաստության հավասարակշռությամբ է օժտում հայի հո·ին, իսկ հայի համար այսօր ·երա·ույն հո·ևոր խնդիր է Արցախի հարցը: Շուշին ազատա·րող ազատամարտիկը հավատքի խաչն էր կրում իր սրտում:

Դարերի իմաստության խորհուրդն է կրում պետական հզոր մտածողությամբ օժտված հայոց ռազմական ·ործիչ և հայրենյաց ·ործին իր կյանքը պատարա·ած Գարե·ին Նժդեհի մար·արեաբար պատ·ամված խոսքը. «Ո·ու մարդը—ահա սխրա·ործելու կարող ղեկավարը: Այսպիսին էր նա, ով... Տղմուտի ափերում դարերին և սերունդներին իմայյալ մահով անմահանալու ճամփան մատնանշեց՝ հրաշունչ Մամիկոնյանը, որն իր արյունով հաստատեց, որ չի կարելի մարել այն, որ իր էությամբ անմա-

[32] Տես *Ստեփան Կերտող*, Հայ հո·ևորականության մասնակցությունը XX դարի պատերազմներին և հայ ժողովրդի ազ·ային-ազատա·րական շարժումներին: Ե., 1999, էջ 5, 7:

[33] Տես *Է. Լ. Դանիելյան*, Հայ եկեղեցու հակաաղանդավորական կանոնական սկզբունքների պատմական հենքը: «Էջմիածին», Ը, 2000, էջ 14—24:

[34] *Գարեգին Նժդեh*, Բանտային ·րառումներ: Ե., 1993, էջ 68:

## ТРИЕДИНСТВО РОДИНА—ГОСУДАРСТВО—ЦЕРКОВЬ

*Э. Л. ДАНИЕЛЯН, доктор исторических наук*

РЕЗЮМЕ

Все победы армянского народа, одержанные за его более чем 5-тысячелетнюю историю—от победы Гайка над Белом до победы в национально-освободительной борьбе Арцаха—были достигнуты благодаря осознанному самопожертвованию его избранных сыновей и дочерей во имя Отчизны, Веры и Свободы. Этому способствовало то обстоятельство, что система управления армянским государством издревле опиралась на системную идею род—княжество—родина, наполненную поклонением памяти предков.

По свидетельству армянского историка V в. Мовсеса Хоренаци армянский царь Абгар обратился с письмом к Иисусу Христу с просьбой излечить его от недуга. После вознесения Христа его ученики апостол Фаддей и апостол Варфоломей проповедовали христианство в провинциях Великой Армении, где существовала плодотворная почва для богопочитания. Так возникла Армянская Апостольская церковь, которая в 301 г. была провозглашена единственной культовой организацией Армянского царства Аршакидов.

Начиная с этого времени, армянская церковь заняла главенствующее положение в духовной жизни армянского народа. Она не только принимала самое активное участие в жизни государства, но и несла бремя государственного правления в те периоды, когда под давлением внешних врагов армянский народ терял свою государственность. В частности, церковь последовательно проводила направленную на сохранение национальной самости армян политику в области организации как духовной, так и социальной жизни народа.

Несмотря на то, что Армения, в древние века и в раннем средневековье занимавшая одно из ведущих мест на политической и культурной аренах Ближнего Востока, в дальнейшем понесла большие территориальные потери, армянский народ не только выжил, но и в силу своей психологии, опирающейся на историческую память, в настоящее время составляет национально-государственное триединство в лице Армянской Республики, Нагорно-Карабахской Республики и Армянской Диаспоры.

## THE TRIUNITY MOTHERLAND—STATE—CHURCH

*E. L. DANIELIAN, Doctor of Historical Sciences*

SUMMARY

All the victories of the Armenian people during their more than 5 thousand years' history—from Hayk's victory over Bel to the victory in national-liberation struggle of Artsakh—were achieved due to conscious self-sacrifice of their best sons and daughters in the name of Motherland, Faith and Freedom.

It was assisted by the circumstance that the system of ruling the Armenian state was long since based on the system idea clan-princedom-motherland full of worship of the ancestors' memory.

As the Armenian historian of the 5$^{th}$ century Movses Khorenatsi witnessed the Armenian king Abgar addressed a letter to Jesus Christ with a request to

cure him of his illness. After Christ's ascension his pupils—the apostle Thaddeus and the apostle Bartholomeu—were preaching christianity in the provinces of Greater Armenia, where there was a fruitful ground for God's worship. So appeared the Armenian Apostolic church which was declared the only cult organization of the Armenian Kingdom of Arsakids in 301.

Since that time the Armenian church has taken the dominating position in the spiritual life of the Armenian people. It took not only the most active part in the state's life, but also was carrying the burden of the state governing in those periods when the Armenian people were losing their State system under the pressure of the outward enemies. In particular, the church was successively pursuing the policy directed to the preservation of the national peculiarity of the Armenians in the sphere of organization of both the spiritual and the social life of the people.

In spite of the fact that in ancient centuries and in early Middle Ages Armenia, taking one of the leading positions in political and cultural fields of the Near East, further had great territorial losses, the Armenian people survived and at present make up a national state triunity of Armenian Republic, Republic of Nagorno Karabakh and Armenian Diaspora due to their psychology, based on historical memory.

# ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ԶՈՐՈՒՅԹ

*Ս. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ÷ÇÉÇëá÷ ³Û³Ï³Ý ·ÇïáõÃÛáõÝÝ»ñÇ Ã»ÏÝ³Íáõ, ¹áó»Ýï*

Հայաստանի Հանրապետությունը ոտք դրեց 21-րդ դար՝ իր թիկունքում ունենալով քրիստոնեության՝ որպես պետական կրոնի 1700 տարվա փորձառությունը: Եվ բնականաբար հարց է առաջանում, թե որն է քրիստոնեության խորհուրդը մեր ազ·ի դիմա·ծի ձևավորման մեջ: Այդ բարդ խնդիրը փոքր-ինչ դյուրըմբռնելի դարձնելու համար նախ փորձենք տալ այն հարցի պատասխանը, թե ինչու էր անտիկ աշխարհի մշակույթը դատապարտված անկման:

Ատոմային ռումբի «հայր» Ռ. Օպենհայմերը, խորհրդածելով անտիկ հասարակության ·իտատեխնիկական մեծ նըվաճումների մասին, այն հարցն է բարձրացնում, թե «ինչու ·իտական հեղափոխությունը տեղի չունեցավ հենց այդ ժամանակ»: Վերջիվերջո նա հան·ում է այն եզրակացության, որ «·իտական հեղափոխություն իրականացնելու համար անհրաժեշտ էր մի բան, որը պակասում էր չինական քաղաքակրթությանը և լրիվ բացակայում էր հնդկական, ինչպես նաև հունահռոմեական քաղաքակրթություններում: Անհրաժեշտ էր առաջադիմության այնպիսի ·աղափար, որը չսահմանափակվեր հին հույների (նույնիսկ ճըշմարտությանն ամենամոտիկ) պատկերացումներով: Անհրաժեշտ էր առաջադիմության՝ մարդկային բնույթին ավելի համապատասխանող ·աղափար, որը լավա·ույնս արտահայտված է քրիստոնեության հանրահայտ դրույթի, այն է՝ Հավատ և Գործ, երկրորդ մասով»[1]: Ըստ հեղինակի, խոսքը տվյալ դեպքում մարդու կատարելա·ործման, մարդկության ու քաղաքակրթության առջև իր պարտքի ու պատասխանատվության և ընդհանրապես մարդու քաղաքացիական դեմքի ձևավորման ·աղափարի մասին է:

Միջնադարը հենվում էր ինչպես անտիկ, այնպես էլ արևելյան (նաև հին հրեական) ավանդույթի վրա: Այն շեշտում էր մարդկային ·ործունեության մեջ բարոյակամային կորույթի դերը (ի տարբերություն անտիկ աշխարհից, որտեղ առաջնություն ուներ իմացականը): Մասնավորապես հին հրեական կրոնում աստված մի անձ է, որը աշխարհին արարում է կամքի դրսևորումով՝ որևէ նախակերպարով չկաշկանդված: Մի փոքր առաջ անցնելով՝ նշենք, որ վաղ միջնադարի խոշոր մտածող Օ·ոստինոս Երանելին ևս, որդե·րելով այս տեսակետը, ստեղծա·ործական ·ործընթացում առաջնությունը տալիս է բարոյակամային ·ործոնին, ընդհուպ մինչև նրա հակադրումը բանական-իմացականին: Այստեղ կարևորը վճիռ կայացնելու կամքն է: Ասել է թե կամքի ·ործողությունները և ճանաչողության արդյունքները պարտադիր չէ, որ համընկնեն[2]: Հետա·այում դոկտոր Հայկ Ասատրյանը պետք է նշի, որ «տարոնականությունը հին բարոյականի ո·եկոչումը չէ միայն, այլ նաև նախապաշարումների ցանցից *ելքի կամք*, ճակատա·րի առեղծվածները Աստուծո խորհուրդով լուծելու կամեցողություն»[3] (ընդ·ծումն իմն է): Եթե բանականությունը ·ործ ունի իրողության հետ, ապա կամքն իրականացնում է դեռևս ·ոյություն չունեցողը: Սա միան·ամայն նոր

[1] *Р. Оппенгеймер.* Наука и культура. Ежегодник «Наука и человечество». М., 1964, с. 54.

[2] Անցման շրջանում ·իտակցության կառուցվածքի մասին ավելի հան·ամանորեն տես *Ս. Հ. Հարությունյան,* Ստեղծա·ործական մտածողություն, անձնավորություն: Ե., 1987:

[3] Տես «Հանրապետական», 1995, հմ. 7:

մոտեցում էր անտիկ կողմնորոշման համեմատությամբ. երկրամերձ կենսակերպի պայմաններում նոր միտումը մարդուն ապատա·րում էր առօրեականից կախվածության ·երիշխանությունից՝ նրան հնարավորություն ընձեռելով հո·նոր ինքնաբավ աշխարհ կերտելու: Ըստ այդ պատկերացման մարդուն ա-բարչին մերձեցնողը ոչ այնքան բանականությունն է (իմացությունը), որքան կամքը, ավելի ստույ·՝ կամքն առ հավատ, և ընդհանրապես՝ անձի վարքը: Այս պարա·այում ·երակայություն են ստանում բարոյական և կրոնական շերտերը: Սույն կողմնորոշումը լավա·ույնս դրսևորվեց քրիստոնեության մեջ:

Անտիկ աշխարհը հո·նոր փակուղում էր հայտնվել՝ չ·տնելով բարոյական կատարելա·ործման լավա·ույն ուղին: Ստոյիկների բարոյական ուսմունքը, որն անտիկ բարոյա·իտության բարձրակետն է, անձի ինքնակատարելա·ործումը համարում էր ինքնանպատակ մի բան, որին կառչելով՝ անձն այնուհետև դատապարտվում էր հասարակությունից մեկուսացման: Այդպիսի կողմնորոշումը չէր կարող ճ·նաժամի չհան·եցնել, և ստոյիկները, կորցնելով կյանքն իմաստավորելու իրական հնարավորությունը, հակված էին արդարացնելու ինքնասպանությունը (նրանցից երեքից մեկը ինքնասպան է եղել): Հատկանշական է, որ հայ մեծ փիլիսոփա Դավիթ Անհաղթը (5—6-րդ դդ.), ընդվզելով ստոյիկների մահվան փիլիսոփայության դեմ, ·տնում է, որ ընդհանրապես պատճառ չկա իրավայի համարելու ինքն իրեն վերացնողին. «Ոչ ոք չպետք է վերջ տա իր կյանքին՝ ո՛չ նա, ով այդ անում է իրավայիորեն, ո՛չ էլ նա, ով այդ անում է անիրավայի կերպով: Որովհետև նա, ով այդպիսի ցանկություն կամ միտք ունի, դեմ է ·նում Արարչին՝ կամենալով բռնությամբ կտրել այն հան·ույցը, որ նա է կապել»[4]:

Անհաղթը, փիլիսոփայությունը սահմանելիս, այն նախ համարում է խորհրդածություն մահվան մասին և ապա՝ աստծուն նմանվելու ձ·տում-վարքա·իծ: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ այսպիսի հաջորդականությամբ: Ահա Դավթի փաստարկը. «Մահվան մասին մտահո·ությունը նախորդում է աստծուն նմանվելուն, որովհետև, եթե նախ չմտածել մահվան մասին և չմահացնել կրքերը, անհնարին կլինի նմանվել աստծուն»[5]:

Ըստ Անհաղթի մարդկային կրքերն սպանելը հո·ին մաքրելու, մտածողության մեջ տեսական մակարդակի բարձրանալու, հետևապես աստծուն մերձենալու միակ ճանապարհն է: Այստեղ խտացված ձևով ներկայացված է քրիստոնեության էությունը: Հայ մեծ մտածողը, հակադրվելով ինչպես ստոյիկների, այնպես էլ սկեպտիկների (Պիրհոն) հոռետեսությանն ու կասկածամտությանը, ջանում է հային հույս ու հավատ ներշնչել ապա·այի նկատմամբ: Ընդհանրապես մահվան հարցը քրիստոնեության առանցքային թեմաներից է: Հեթանոսական աստվածներն ըստ էության չեն մահանում և ուղեկցում են բոլոր սերունդներին, ահա թե ինչու անտիկ աշխարհում իշխողը շրջապտույտի պատկերացումն է, մինչդեռ Քրիստոսը մահանում է և հարություն առնում (այլևս չմեռնելու պայմանով), այլ կերպ ասած՝ կյանքի է կոչվում *ժամանակի նոր ըմբռնում*: Այսպիսով հիմք է դրվում ժամանակի մեջ հասարակության կար·ացման *պատմական* ըմբռնմանը:

Անտիկ աշխարհը ապրում էր բանաստեղծական (·եղարվեստական) բանավոր ավանդույթից ·րավոր խոսքի վրա խարսխվող հասկացութային մշակույթին անցման շրջան[6]: Գրավոր խոսքն ա·ի ինքնա·իտակցության ձևավորման ու կար·ացման կարևոր պայմանն է, իսկ պատմա·րությունը՝ ինքնահաստատման, վստահության և հասունացման ·իտակցման առհավատչյան, այն, ինչ ստեղծեց մեր քերթողահայր Մովսես Խորենացին՝ օ·տա·ործելով Մաշտոցի կողմից ·րերի («հրաշալի») ·յուտը: Հատկանշական է, որ ժամանակա·րության նը-

[4] *Դավիթ Անհաղթ*, Երկեր: Ե., 1988, էջ 79:

[5] Նույն տեղում, էջ 69:

[6] Տես *Хинтикка*. Логико-эпистемологические исследования. М., 1980, сс. 424—427:

կատմամբ հույների պակաս ուշադիր վերաբերմունքը հատուկ է եղել նաև հայերին մինչև Խորենացին: Իրադարձությունները ներկայացվել են ժամանակաշարից անջատված՝ հղվելով ոչ թե բացարձակ ժամանակա·րության ողնաշարին, այլ առանձին վերցված պատմական իրադարձությունների միջև եղած կապին:

Մաշտոցի կողմից հայոց ·բերի ·յուտը և թար·մանչական ·րծունեության ձևավորումը ոչ միայն համաշխարհային մշակույթին հաղորդակցվելու, այլև հայոց մտածողությունը նրբացնելու և հարստացնելու հնարավորություն էր ընձեռում, որն այնուհետև ավելի բարձր մակարդակի մշակույթ ստեղծելու հիմքն էր հանդիսանալու: Այս հան·ամանքի ·իտակցումով Մաշտոցի ·րծունեությանը սատար էին կան·նում ինչպես Սահակ կաթողիկոսը, այնպես էլ հայոց արքա Վռամշապուհը: Մի հան·ամանք ևս բնորոշում է ժամանակաշրջանի էական միտումը. Մաշտոցը ոչ միայն արքունական բարձր պաշտոնյա էր, այլև հայարապետ, որին, ինչպես վկայում է Կորյունը, հար·անքով ու պատկառանքով էին վերաբերվում կորականները, այլ կերպ ասած, մի մարդու մեջ միավորվում էին պետական ·րծչի, կորականի և մշակույթի կար·այմանը հետամուտ մեծ անձնավորության ·ծերը:

Քրիստոնեությունը տիեզերական այլ կրոններից տարբերվում է նրանով, որ այստեղ աստվածաբանության կենտրոնական ·աղափարը՝ Բացարձակի անձնային ընկալումը, հասցվում է ծայրա·ույն սահմանին: Սուրբ երրորդության դեմքերը (հիպոստաս) պահպանում են իրենց անձնային ինքնա·ոյությունը և չեն մերվում: Միաժամանակ, միմյանց նկատմամբ բացարձակ թափանցիկ, ինչպես նաև սիրո առջև «խոցելի» լինելով, միասնական են: Խնդրո առարկայի տեսակետից խիստ կարևոր է քրիստոնեության մեջ սիրո դերը, որի կրողը Սուրբ Հո·ին է: Սերը աստծու էությունն է ընդհանրապես («Աստված սեր է»), այն ինքնանվիրման արտահայտություն է՝ կողմերից յուրաքանչյուրի միմյանց ձը·տման և դրա մեջ ինքնավոհողության կամքի արտահայտություն:

Նոր արժեքային կողմնորոշման մեջ սիրո դերի կարևորությունը երևում է, մասնավորապես, Պողոս Առաքյալի հետևյալ պատկերավոր խոսքից. «Եթե խոսեմ մարդկանց լեզուները և հրեշտակներինը, բայց սեր չունենամ, կնմանվեմ մի պղնձի, որ հնչում է, կամ՝ ծնծղաների, որ ղողանջում են: Եվ եթե մար·արեություն անելու շնորհ ունենամ և հասկանամ բոլոր խորհուրդներն ու ամբողջ ·իտությունը, և եթե ունենամ ամբողջ հավատը՝ մինչև իսկ լեռները տեղափոխելու չափ, բայց սեր չունենամ՝ ոչինչ եմ»[7]: Հիսուս Քրիստոսը, մարդ արարածի նկատմամբ անսահման սեր տածելով, նրա մեղքերի քավության համար կամովին ընդունում է խաչելություն: Նա, վեր կան·նելով աստվածային կորությունից, իջնում է մինչև հասարակ մահկանացուի մակարդակը, ասել է թե իրեն հավասար է դասում բոլոր անձանց, ընդունում ամբոխի հալածանքն ու վիրավորանքը: Աստվածային բարձրությունից այդ էջքը (կենոսիս) խոնարհ վարքի դրսևորում է, ·ոռոկամտության («հպարտության»), եսամոլության մերժման արտահայտություն և ոչ թե անկորություն. դա մարդու նկատմամբ սիրուց դրդված կամքի ապատ դրրսևորում է: Այս ամենը հետա·այում բարոյական նորմերի հիմնասյուներ են դառնում: Խաչելության պահին Աստծու Որդին իրեն պահում է որպես անպաշտպան մի էակ՝ ի ցույց դնելով իր անձը ընչափուրկներին, ընդ·ծելով իր հո·եհարակատությունը նրանց հետ, ինչպես և արդարության կորավի· լինելու իր կամքը:

Աստվածատուր սերը նոր ըմբռնում էր. այն իր հիմքով երկրային չէ, այլ՝ հո·նոր ապրում: *Քրիստոնեությունը ·ալիս էր հաստատելու արժեքային նոր կողմնորոշում, որով առաջնորդվելու էին հանուն հայրենիքի և հավատքի սրբազան պատերազմի ելած նվիրյալները:*

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ Ավարայրի ճակատամարտից առաջ Ղևոնդ Երեցը, դիմելով հայ քաջորդինե-

[7] «Նոր կտակարան»: Էջմիածին, 1975, էջ 471:

րին, նրանց հիշեցնում է, որ նախկինում էլ սովորություն կար պատերազմի ·նալիս քահանաներին միշտ բանակում պահել, բայց ճակատամարտի ժամանակ նրանց ապահով տեղում էին թողնում: Իսկ ահա Ավարայրի ճակատամարտի նախօրեին ոչ միայն քահանաները, այլև սարկավա·ից մինչև եպիսկոպոս «ամեն մեկը սահմանված կանոնով իբրև սպառազինված և պատերազմի պատրաստված՝ կամենում է ձեզ (իմա՝ զինվորների) հետ միասին հարձակվել ու ջարդել ճշմարտության թշնամիներին»[8]:

Տվյալ դեպքում հո·ևոր սպասավորները, չվախենալով մահից, ըստ Եղիշեի, եթե *հավատի աչքով* իրենք իրենց տեսնում են մար·արեների դերում (որոնք քարկոծվել են), ապա *մարմնի աչքերով* տեսնում են զինվորների սխրա·ործությունը, ասել է թե իրենք իրենց զ·ում են նրանց կողքին: Ղևոնդը, իր խոսքն ավարտելով մարտիրոսների հիշատակությամբ, հաստատում է, որ «արդ նույն քաջա·ործությունն է կատարվում»: Հետեվապես, մարտիրոսությանը ամենևին էլ հակացուցված չէր հայրենասիրությունը: Այս ամենը հարկ է հաշվի առնել հատկապես միջնադարյան հայոց ·իտակցության կառուցվածքի հետ ·ործ ունենալիս. ոչ այլ ոք, քան մարտադաշտի հերոս Գարե·ին Նժդեհն է ասել, թե «սկզբից ի վեր հայությունն ու իր քրիստոնեությունը ձուլված են ի մի բնություն»[9], և ըստ այդմ՝ հայության ·աղափարախոսությունը, հայրենի երկրի պաշտպանությունը ունեցել են որոշ կրոնական ·ունավորում, ուղղվածություն առ աստված: Եղիշեն իր ·րքի պատվիրատու Դավիթ Մամիկոնյանին հղած խոսքում ընդ·ծում է այն միտքը, որ իր երկասիրությունը ծառայելու է «ոչ թե երկրավոր առատ ·իտության պակասը լրացնելու, այլ… *տեսանելի բաներով անտեսանելին* հայտնի դարձնելու»[10] (ընդ·ծումն իմն է): Միջնադարում սա էր ·լխավորը, ահա թե ինչու դարաշրջանին հո·եհարազատ էր «լավ է կույր աչոք, քան կույր մտոք» ասույթը: Խորհրդանշական է, որ հենց 5-րդ դարում հայոց հո·ևոր կյանքում իր ուրույն տեղը ·րավեց փիլիսոփայությունը՝ մեծապես նպաստելով պատմության մեջ պատմաստեղծ եսի ·ործոնի, ասել է թե ներկան պայմանավորող անցյալի ուժականության արժևորմանը:

Եղիշեն իր պատմությունն առաջին հերթին հասցեա·րում է փիլիսոփայությամբ պարապած մարդկանց, իսկ այդ ·ործին իր հանձնառությունը համարում է երկնավոր սիրո նշան: Այն պետք է լինի սիրելիների համար մխիթարություն, հուսացողների համար՝ հույս, քաջերի համար՝ քաջալերություն, որոնք հոժարակամ հարձակվում են մահվան վրա[11]: Աստծո սերն աներկյուղ է դարձնում մարդկանց, և նրա սիրով, ինչպես զենքով, սպառազինված մարդիկ ամենևին չեն վախենում մահից, քանի որ «մահ ոչ իմացյալ՝ մահ է, մահ իմացյալ՝ անմահություն»: Վարդան Մամիկոնյանը մարտից առաջ քաջալերում է 66000 ձիավոր և հետևակ զորքին, որի հետ էին հո·ևորականներ Հովսեփը և Ղևոնդը, ինչպես նաև բազմաթիվ քահանաներ ու հո·ևոր այլ պաշտոնյաներ: Նրանք բոլորն էլ այդ պատերազմը համարում էին ոչ թե մարմնական կռիվ, այլ՝ հո·ևոր առաքինության կռիվ՝ ցանկանալով քաջ զինվորներին թեկուզև մահակից լինել: Սպարապետը ևս բոլորին հիշեցնում է, որ կռիվը հանուն ճշմարտության է, և այդ ·իտակցումով ոչ ոք չի երկնչում հեթանոսների բազմությունից, իսկ եթե հասել է ժամանակը «մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության և քաջության մեջ վախկոտություն չխառնենք»[12]: ՈՒշա·րավն այն է, որ Վարդան սպարապետը, ըստ ավանդության, պատերազմական կար·ի համաձայն զորքի առջև հիշատակում է անցյալի քաջ այրերի արժանավոր ·ործերը:

[8] *Եղիշե*, Վարդանանց պատմությունը: Ե., 1959, էջ 103—104:

[9] *Գ. Նժդեհ*, Ցեղը և իր տականքը: Սոֆիա, 1935, էջ 46:

[10] *Եղիշե*, նշ. աշխ., էջ 9:

[11] Տես նույն տեղում, էջ 10:

[12] Նույն տեղում, էջ 93:

Նա միաժամանակ «տեղն ու տեղը դաշտում տեղավորում է պորքը և... կար·ավորում այրուձին»[13]: Սա նշանակում է, որ հիշատակված պատմությունը շատ հեռու էր ճակատային բարոյախոսության երան·ից և ընկալվում էր որպես ինքնին հասկանալի արարողություն:

Ինչպես հայտնի է, մինչ մայրամուտ տևած արյունալի մարտը, ըստ Եղիշեի, կողմերից ոչ մեկին հաղթանակ չբերեց: Ճակատամարտում քաջի մահով ընկավ սպարապետը՝ նախարարական ինը ցեղերից 295 մեծամեծ անձանց հետ, և էլի 740 հո·ի: Պարսից շուրջ 200000-անոց բանակը տվել էր ավելի քան 3540 սպանված՝ եռապատիկ ավելի, քան հայերը:

Ավարայրի ճակատամարտը խոր հիասթափություն պատճառեց պարսից պորքի հրամանատարությանը, որին նախապես թվում էր, թե եռապատիկ ·երակշռող ուժերով հաղթանակն ապահովված է: Չստացվեց՝ հայերի անկոտրում կամքի ու անձնազոհության պատճառով: Ավարայրով սկիզբ դրվեց հայոց բարոյական հաղթանակին: Պարսից պորքի հրամանատարությունը այլևս չհանդ··նեց հաջորդ օրն նեթ շարունակել ճակատամարտը, այլ փորձեց ·ործը ·լուխ բերել սուտ խոստումներով ու խորամանկությամբ՝ այս դեպքում օ·տվելով Վասակ Սյունու ծառայություններից: Միաժամանակ հաջողությունները պարսիկների կողմն էին: Հայերն ունեցան բազմաթիվ նահատակներ և ·երեվարված սուրբ անձինք: Իսկ շատերն էլ, ինչպես ·րում է Եղիշեն, լքեցին իրենց բնակավայրերը՝ նախընտրելով անմարդաբնակ վայրերի ամրոցներն ու բազմաթիվ լեռների ապահով տեղերը: Նրանք նախընտրեցին «·ետնանկողինները ներկարազարդ պատշ·ամբներից»: Ականատես պատմիչը վկայում է, թե ինչպես հայերը մեծ առաքինությամբ տանում էին այդ անդուլ զրկանքները: Ի վերջո Պարսկաստանն ընկրկեց հայոց դիմադրության առջև՝ հարկերը ներելով, յուրաքանչյուրին արտոնելով իր ունեցածին տեր կան·նելու իրավունք: Ավելին. «Եթե որևէ մեկը բռնությամբ էր մո·ությունն ընդունել», արքունիքից «հրովարտակներ ուղարկվեցին նորից քրիստոնյա դառնալու»: Նաև ստեղծվեց հարցափորձի բարձր ատյան, որը ճանաչեց հայ ուրացողների հանցավորությունը, իսկ Վասակը հրապարակավ մեղադրվեց, խայտառակվեց և



Մանրանկար Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմի» ձեռագրից (1539 թ.). Մատենադարան

մեռավ «ինչպես շուն և քարշ տրվեց ինչպես էշ»[14]:

Հայի ·իտակցության մեջ քրիստոնեության ազդեցությամբ հայրենի հողն ընկալվում է որպես *սրբազան երկիր*[15] ամենից առաջ այն պատճառով, որ երկրում էին ամփոփված նախնյաց աճյունները: Հայ ժողովուրդը մշակել է նախնյաց հիշատակը հար·ելու որոշակի համակար·, որը կանոնավորված է եկեղեցական օրացույցով: Այդ հենքին էական է դառնում մահու և կենաց հարաբերության իմաստավորումը, և եկեղեցին դրան

[13] Նույն տեղում, էջ 96:

[14] Նույն տեղում, էջ 126:

[15] Այս մասին Նժդեհի հայացքների վերլուծությունը տես *Ս. Հ. Հարությունյան,* Գ. Նժդեհ. Հայաստանը Արևելք—Արևմուտք խաչմերուկում: «Հայաստան Երևանից», 2000, հմ. 7:

տալիս է այնպիսի մեկնություն, որ պինվորը չսարսափի մահից: Իմայյալ մահվան, ասել է թե անմահության գաղափարը ռազմիկի գիտակցության սեփականությունն էր դարձել դարավոր կենսափորձի փոխանցման միջոցով, որի մեջ շատ կարևոր դեր ուներ եկեղեցին: Վարդան Մամիկոնյանը սրբացվել է, և նրա հետ կապված պատմությունը դարերի միջով ավանդվել է սերունդներին: Եկեղեցին, ամեն տարի նշելով Վարդանանց տոնը, առիթն օգտագործել է հայրենասիրական մթնոլորտ ստեղծելու համար: Ավանդույթն առանձնացրել է ոչ միայն քաջըն Վարդանի, այլև Ղևոնդ Երեցի, նաև այն փափկասուն տիկնանց հավաքական կերպարները, որոնք իրենց հոգում մինչև մահ պահում էին մարտնչող այրերի պատկերն ու ոգին: Մշակվել էր յուրօրինակ ավանդական համակարգ, որը դարեր շարունակ գործում էր անխափան՝ նույնիսկ ազգային պետականության բացակայության պայմաններում[16]:

Այդ ավանդույթն իր խոր արմատներն ուներ: Խորենացին, խոսելով Արամ թագավորի՝ որպես ռազմիկի անձնական առաքինությունների մասին, շեշտում է, որ իբրև հայրենասեր անձնավորություն նա գերադասում է «հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպես օտարացեղ ազգերը ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները և օտարները տիրում են իր արյունակից հարազատների վրա»[17]: Հայտնի է նաև սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի (մահացել է 376 թ.) հայրենանվիրական անձնական առաքինությունների բնութագիրը, որ մեզ է հասել Փավստոս Բուզանդի միջոցով:

Հիմք ունենալով այդ տվյալները՝ Ա. Այվազյանը հետևյալ կերպ է ներկայացնում 4—5-րդ դարերի հայ պինվորականության պատվո վարքականոնի մոտավոր ընդհանուր պատկերը:

**1. Հավատարմություն և անձնուրաց ծառայություն անկախ և հզոր Հայաստան աշխարհին, երկրին և թագավորությանը:**

**2. Ասպետական պատվի և համարումի (քաջի անվան) անբիծ պահպանում, հարկ եղած դեպքում՝ նաև կյանքի գնով:**

**3. Հավատարմություն և անձնուրաց ծառայություն Հայաստանի պետական համակարգի ամենակարևոր նվիրագործված հաստատությանը՝ Հայաստանի թագավորին (Արշակունի «բնիկ տերերին»):**

**4. Հավատարմություն և անձնուրաց ծառայություն Հայաստանի ժողովրդին, բոլոր բնակիչներին անխտիր՝ անկախ նրանց սոցիալական ծագումից և դիրքից:**

**5. Քրիստոնեական հավատի և ազգային եկեղեցու նկատմամբ բարեպաշտ վերաբերմունք և դրանց անձնուրաց պաշտպանություն:**

**6. Նվիրվածություն ընտանիքին:**

**7. Նվիրվածություն տոհմակիցներին:**

**8. Հավատարմություն զինակիցներին[18]:**

Սերնդեսերունդ Մամիկոնյանների տոհմում փոխանցվել է այս հայրենասիրության ջիղը. ուշադրության արժանի է սպարապետ Մանվել Մամիկոնյանի (մահացել է 384 թ.) պատգամը որդուն՝ սպարապետությունը նրան հանձնելու առթիվ. «Ոիրախությամբ հանձն առ մահ աշխարհի համար, ինչպես և քո քաջ նախնիքը, որովհետև... դա արդար և աստծուն ընդունելի գործ է, և երբ այդպես վարվեք՝ աստված ձեզ անտես չի անի: Երկրի վրա քաջության անուն թողեք և ձեր արդարությունը երկնքին նվիրեցեք»[19]: Իսկ ինքը մահամերձ վիճակում, անկողնուն գամված, իր շուրջը հավաքվածներին՝ թագավորին և նախարարներին, ի ցույց է դնում նույնիսկ դրամի մեծությամբ ողջ տեղ չունեցող մարմինը՝ պատերազմներում թշնամու հարվածներից ստացած վերքերի սպիներով ամբողջապես պատված (մոտ 50 սպի): Այդ քաջ պինվորակա-

[16] Տես *Ս. Հարությունյան,* Պետության և եկեղեցու համագործակցությունը երկրի պաշտպանության գործում: ««Հայոց եկեղեցի և պետություն» միջազգային գիտաժողովի նյութեր»: Ե., 2000:

[17] *Մովսես Խորենացի*, Հայոց պատմություն (թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ՝ Ս. Մալխասյանի): Ե., 1961, էջ 237:

[18] Տես *Ա. Այվազյան,* Հայ պինվորականության պատվո վարքականոնը (4—5-րդ դարեր): «ՀԲ», 2000, հմ. 2:

[19] *Փավստոս Բուզանդ*, Հայոց պատմություն (թարգմանություն, ներածություն և ծանոթություններ՝ Ստ. Մալխասյանցի): Ե., 1947, էջ 291:

նը դառնորեն արտասվում է, որ ճակատա·րի հե·նանքով դատապարտված է մահվան անկողնում պառկած. «Որքան լավ կլիներ, եթե պատերազմի մեջ մեռնեի աշխարհի համար, *որպեսզի եկեղեցիները և աստծու պաշտոնյաների ուխտը ոտնատակ չլինեին»*[20] (ընդ·ծումն իմն է):

Սրբազան երկրի ·աղափարը, քրիստոնեության ·ործուն ապդեցությամբ, հաստատուն տեղ է ·րավում հայոց ազ·ային ·իտակցության մեջ, և այնուհետև նրա պաշտպանությունը դառնում է պինվորականության կյանքի ·ործը:

Այդ է վկայված նաև Ղևոնդի «Պատմության» մեջ՝ 775 թ. Արձնի ·յուղի մոտ արաբների դեմ հայոց վորքի մղած հերոսական ճակատամարտի առթիվ: Պատմիչը ·րում է, որ ռազմիկները «իրար քաջալերում էին հետևյալ խոսքերով՝ «Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի և մեր ազ·ի համար և մեր աչքերը թող չտեսնեն մեր սրբարանների և մեր Աստուծո փառավորման վայրերի ոտից կոխան լինելն ու պղծվելը, այլ թշնամիների սուրը թող նախ և առաջ մեր դեմ ուղղվի, ապա թող անեն այն, ինչ կկամենան»»[21]:

Վարդանանց պատերազմի օրերին վառ դրսևորվեց հո·ևոր և աշխարհիկ իշխանությունների համա·ործակցությունը ի շահ հայրենի երկրի պաշտպանության: Եկեղեցու և պետության հարաբերությունները մշակվել ու որոշակիություն էին ստացել տակավին Խոսրով Կոտակ արքայի (330—338 թթ.) և Վրթանես կաթողիկոսի օրոք[22]: Վրթանեսը ոչ այնքան որպես զուտ կրոնական սպասավոր էր հանդես ·ալիս, որքան՝ քաղաքական ·ործիչ, ըստ որում՝ որոշակի ծրա·րով ու կազմակերպական խելամիտ ·ործունեությամբ: Սակայն ·ործչի անձը չէ, որ կարևոր էր: Ահա թե ինչու Լեոն նշում է, որ երկրի բախտը տնօրինելու իրավունքի մեջ կաթողիկոսարանի եթե ոչ առաջնությունը, ապա արքունիքին համահավասարությունը ուրվա·ծվում էր արդեն 4-րդ դարի սկզբից՝ Լուսավորչից սկսած: Բանն այն է, որ հեթանոսության վերադարձի միտումը դեռևս անթեղված կրակ էր հիշեցնում, և ան·ետ ժողովուրդը վերադառնում էր երկրի հին պաշտամունքին, եր·ում հայ աստվածների ու հերոսների մասին եր·եր: Հարկ է աչքաթող չանել նաև այն պարզ ճշմարտությունը, որ պատմական անցումային շրջանում բարոյական արատները ջրի երես են դուրս ·ալիս:

Որքան էլ եկեղեցին փորձեց ժողովրդի հիշողությունից դուրս մղել հեթանոսական աշխարհի հիշատակարանները, դա նրան լիովին չհաջողվեց, քանի որ Հայաստանի անտիկ շրջանի պատմությունը մշակութային առումով ուներ փառավոր էջեր: Հայաստանը, Մակեդոնացու արշավանքի օրերից անմիջականորեն հաղորդակցվելով անտիկ քաղաքակրթությանը, այնուհետև մեկընդմիշտ մնաց հելլենիստական մշակույթի ծիրում: Անտիկ քաղաքակրթության ազդեցությունը հայ մարդու ·իտակցության վրա այնքան զորեղ էր, որ մեր որոշ հին աստվածներ դրանից հետո կրում էին կրկնակի՝ հայ-հունական, անուններ. Արամազդ—Զևս, Աստղիկ—Աֆրոդիտե և այլն:

Գրի·որ Լուսավորչի և Տրդատ արքայի համատեղ առաջին երթուղին անցնում էր ·լխավորապես այն 15 ·ավառներով, որտեղ կային հեթանոսական պաշտամունքի հայտնի վայրեր[23]: Ի տարբերություն առաքելական եկեղեցուց հեթանոսական տաճարներն աչքի էին ընկնում ոսկե և արծաթե պաշտամունքային իրերի ճոխությամբ, ինչը երկրում կիրառական արվեստի բարձր մակարդակի առհավատչյան է: Այն հան·ամանքը, որ այդ շրջանում Արտաշատում, Տի·-րանակերտում և այլ վայրերում ·ործել

[20] *Փ. Բուզանդ*, նշ. աշխ., էջ 292: Մահվանից առաջ ափսոսանքի խոսքեր է մրմնջացել նաև Մուշեղ Մամիկոնյանը. «Բայց այս մահը երանի թե ձիու վրա ինձ հասներ» (նույն տեղում, էջ 275):

[21] *Ղևոնդ*, Պատմություն (թար·մանությունը, ներածությունը և ծանոթա·րությունները՝ Ա. Տեր-Ղևոնդյանի): Ե., 1982, էջ 119:

[22] Տես *Լեո*, Երկերի ժողովածու, հ. 1: Ե., 1966, էջ 431:

[23] Տես *Ա·աթան·եղոս*, Հայոց պատմություն (աշխարհաբար թար·մանությունը և ծանոթա·րությունները՝ Ա. Տեր-Ղևոնդյանի): Ե., 1983, էջ 437—445:

են թատրոններ, վկայում է այն մասին, որ Հայաստանում համաչափորեն զարգացած են եղել նաև արվեստի մյուս տեսակները, քանի որ թատրոնը սինթետիկ արվեստ է: Եվ քանի որ թատրոններում հայկական ողբերգություններից բացի բեմադրվում էին նաև հունական դասական գործեր, որոնց մեջ երգչախումբը շատ որոշակի դեր ուներ, ուստի երաժշտության ազդեցությամբ անտիկ մըշակույթը խոր հետք էր թողնում հանդիսատեսի վրա ենթագիտակցական մակարդակով: Ահա թե ինչու քրիստոնեության ընդունումից հետո առաջին տասնամյակներում հայի գիտակցությունից անտիկ աշխարհի պատկերացումների դուրսմղումը կապված էր շատ մեծ հոգեբանական բարդությունների հետ:

Այս պայմաններում, բնականաբար, հոգևոր սպասավորն էր պաշտպան կանգնելու բարոյական մաքրությանը: Եվ Հուսիկ կաթողիկոսը բացահայտ պայքարի է դուրս գալիս Տիրան թագավորի և հանցավոր նախարարների դեմ: Նա նույնիսկ հանդգնում է ոչ միայն այդ նախարարներին, այլ նաև թագավորին արգելել եկեղեցի մտնել՝ նրանց անարժան համարելով այդ շեմը ոտք դնելուն:

Մոտ 100 տարի էր պետք, որպեսզի այդ բարքերը քիչ թե շատ մաքրվեին և հաստատվեին քրիստոնեության այն նորմերը, որոնք ապահովվելու էին Ավարայրի դաշտում հայոց բարոյական հաղթանակը: Խոսքն առաջին հերթին երկրի պաշտպանության գործում միաբանության անհրաժեշտության գիտակցման մասին է: Հայի դիմագիծը ձևավորվում էր եկեղեցու կորեղ ազդեցությամբ, ազգային գիտակցության մեջ ամրագրվում էր հայրենիքի նոր կերպար: Ն. Ադոնցն իրավացիորեն նշում է, որ հողը բարձրացվում դառնում է երկիր, կազմավորվում են նոր ավանդույթներ, բարքեր, տարազ և մշակույթ, կարճ ասած՝ այն, ինչ կազմում է երկրի և ժողովրդի հոգեկան կերպարը, որի հայելին մշակույթն էր իր տարբեր դրսևորումներով[24]:

[24] Տես *Ն. Ադոնց*, Հայկական հարցի լուծման շուրջ: Ե., 1989, էջ 14:

**Շուրջ 600 տարի պետականության բացակայության պայմաններում** հայոց եկեղեցին իր վրա էր վերցրել պետության այնպիսի մի կարևոր գործառույթ, ինչպիսին է հայրենիքի պաշտպանությունը: Դա միայն ռազմադաշտում չէ, որ իրականացվում էր: Խոսքը նաև հայրենիքի պաշտպանության կոչված ապագա զինվորի դաստիարակության մասին է: Մեր օրերում ղարաբաղյան շարժման ալիքի մարումից հետո հայտնվել են այնպիսի անձինք, որոնք քրիստոնեությունը համարում են հայոց ռազմական կորովի թուլացման հիմնական պատճառ՝ մոռանալով այն ճշմարտությունը, որ ոգու այն ամրոցը, որը կերտվում է քրիստոնեության շնորհիվ, նույնքան կարևոր է, որքան աշխարհիկ բերդերը: Այդպիսի «մոլորյալներին» պատասխանելով՝ արքեպիսկոպոս Օրմանյանը նշում է, որ թեթև պատմական քննությունն էլ բավական է ցույց տալու համար, որ «հայոց քաղաքական անկման նախասկիզբները 4-րդ դարեն էլ առաջ են և իրենց ծագումը կառնեն հռոմեացվոց և պարթևաց մեջ մղված պատերազմներեն..., հետևաբար պետք է ընդունել, թե Հայաստանի քրիստոնեություն ընդունիլը ոչ միայն անոր անկման պատճառ չեղավ, այլ ընդհակառակն, այդ վտանգը մեկուկես դար հետաձգելու արդյունքը առաջ բերավ»[25]: Դրան ավելացնենք, որ պատերազմական օրերին, հատկապես օրհասական պահին ժողովուրդը որպես կանոն շտապում է եկեղեցի: Պատճառը միայն այն չէ, որ ամրակուռ շենքը պատսպարվողներին անխոցելի է դարձնում թշնամու գնդակից: «Լինում են դեպքեր, որ կատարվում են տարերայնորեն՝ առանց նախօրոք պայմանավորվելու,—գրում է ականատեսը,—բոլորը նույն կերպ են մտածում ու միակերպ գործում, թե ինչ նպատակ էր հետապնդում տները թողնելը և եկեղեցում հավաքվելը, որ նույն պահին կատարեցին բոլորը..., այսօր էլ դժվարանում եմ կռահել»[26]: Պետք

[25] *Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան*, Հայոց եկեղեցին: Ե., 1993, էջ 243:

[26] *Ե. Սիմոնյան*, Ախալցխան կրակե օղակում: Ե., 2000, էջ 27:

է ենթադրել, որ դարերի փորձով ինքնապաշտպանական բնազդ է մշակվել, և շատերին պարզապես թվում է, թե աստծո տունն իր վորությամբ պաշտպանում ու փրկում է ժողովրդին կամ էլ «օրհասի ժամին մեղմացնում է մահվան սարսափը»: Եկեղեցում իրար ·լխի հավաքված մարդիկ, վրույցից ջերմանալով, հո·եկան թեթևություն են վ·ում, և նույնիսկ սկրսվում է նրանց աշխույժ խոսքն ու կատակը:

Պետականության բացակայության պայմաններում *հաճախ տվյալ տարածքի հո·ևոր առաջնորդն իր մեջ ուժ էր ·տնում աշխարհիկ իշխանություն իրականացնելու,* հատկապես երկիրը օտար ասպատակություններից պաշտպանելու նպատակով: Որպես օրինակ կարելի է հիշատակել Կարապետ արքեպիսկոպոս Բա·-րատունու ·ործունեությունը: Այդ հո·ևորականը իր ·ործիմացությամբ և խիզախությամբ աչքի էր ընկել դեռևս 1828 թ. ռուսական զորքերի կողմից Էրզրումի պաշարման և ·րավման ժամանակ, որի համար արժանացել էր 1-ին աստիճանի Սբ. Աննայի շքանշանի: Այնուհետև, ռուսական զորքերի հետքաշվելու պատճառով, օրհասական վիճակում հայտնված հայության ·լուխն անցած սրբազանը 1830 թ. մայիսին իրա·ործում է շուրջ 90000 հայության տեղահանումը և ·աղթեցումը Ախալցխայի, Ախալքալաքի, Ծալկայի ու Շիրակի ·ավառներ: Պատմաբան Լեոն իրավացիորեն նշում է, որ ·աղթեցման օրերին «եթե Քրիստոսի տեղ Կարապետ արքեպիսկոպոսը դուրս ·ար բազմության առաջ և ասեր՝ ժողովու՛րդ, ե՛տ դարձիր, ամենքն էլ հլու-հնազանդությամբ կկատարեին այդ հրամանը... Բայց ·նում էր ժողովուրդը, որովհետև ·նում էր Կարապետ արքեպիսկոպոսը, որը, մանավանդ այժմ, դարձել էր այդ ժողովրդական հոծ զան·վածների հո·ու և մտքի տերը»[27]:

Ժողովուրդն իր հետ տանում էր հո·ևոր և մշակութային արժեք ներկայացնող շուրջ 500 նմուշ (13 սայլ բեռ), որոնք նոր բնակավայրին հաղորդելու էին հայրենի երկրի բույրն ու իմաստը: Նոր հան·րվանում Կարապետ սրբազանը հիմնադրում է 60-ից ավելի եկեղեցիներ, հիմնադրում կամ վերական·նում է 100-ից ավելի ·յուղեր, կառուցում մի նոր քաղաք՝ հին Ախալցխայի միջով անցնող ·ետի աջափնյակում, հիմնադրում դպրոցներ



Սուրբ Նշան, կամ Վարդանանց, եկեղեցին (1862 թ.), Ախալցխա

ու ·րադարան: Այս ամենը երկրորդ շնչառություն է հաղորդում տեղական հայ համայնքներին՝ վերստին բարձրացնելով սուրբ ·ավառի դերը տարածաշրջանում:

Կարապետ արքեպիսկոպոսի հո·ևոր և աշխարհիկ հեղինակության մասին է վկայում այն փաստը, որ Նիկոլայ 1-ին կայսրը, Կովկաս ժամանելով, 1837 թ. հոկտեմբերի 1-ին իջևանում է նրա հարկի տակ: Հատկանշական է, որ ի պատասխան կայսեր կողմից նոր պար·ևի առաջարկության սրբազանը նախընտրում է օ·նություն հայցել իր ժողովրդի համար՝ ասելով. «Ես իբրև քրիստոնյա եպիսկոպոս երկար ժամանակ պահպանեցի քրիստոնեությունը Տաճկաստանի մեջ, այժմ այդ քրիստոնյաները հանձնում եմ քրիստոնյա թա·ավորական հայրական խնամքին»[28]: Կայսրը, ·նա-

[27] *Լեո*, Հայոց պատմություն, նորա·ույն շըրջան, մաս 2-րդ: Ե., 1927, էջ 242—243:

[28] Տես *Հ. Գեղամյանց*, Կարապետ արքեպիսկոպոս: Ե., 1999, էջ 103:

հատելով սրբազանի նվիրվածությունը իր ժողովրդին, ևս մեկ տարով հայությանն ազատում է պետական հարկից:

Կարապետ սրբազանը ժամանակին իրավացիորեն համարվել է Տայքի և Ջավախքի «անթա·ակիր թա·ավոր», որին ժողովուրդը ենթարկվում էր անվերապահորեն և նրան ապավինում դատական և այլ օրախնդիր հարցերում: 1837 թ. նա ընտրվում է Վրաստանի և Իմերեթի հայության հո·ևոր առաջնորդ:

1853—1856 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերին նա նախաձեռնում է երկրի պաշտպանության ·ործը: Ախալցխայում, բացի պահնորդ ռուսական փոքրաթիվ զորամասից, ուրիշ զորք չըկար: ՈՒստի սրբազանը կազմակերպում է հայկական ·ումարտակ՝ ռուսական ռազմական պահեստներից ստանալով զենք ու զինամթերք: Թուրքական ·լխավոր բանակն ընդհուպ մոտեցել էր քաղաքին և հարավային բարձունքներից ·ընդակոծում էր քաղաքը և բերդը՝ մասնավորապես թիրախ ընտրելով «Էրզրումի Ղարաբաշի»՝ սրբազանի տունը: Քաղաքի մեծահարուստները, տա·նապահար, պատսպարվել էին բերդում: Սրբազանին ևս առաջարկվում է տեղափոխվել ապահով վայր, սակայն նա մերժում է այդ առաջարկը՝ ·երադասելով մնալ ժողովրդի մեջ ու հո· տանել նրա մարտական ո·ու պահպանման համար: Հայկական ·ումարտակը առաջնորդում էր Կարապետ արքեպիսկոպոսի երբեմնի սպասավոր ավա· քահանա Հակոբ Սուրենյանցը՝ խաչը ձեռքին[29]:

Վասիլ և Գրի·որ իշխան Բեյբությանյանները Թիֆլիսից և Ալեքսանդրապոլից հատուկ նամակներով իրենց հիացմունքն էին հայտնում սրբազանին մարտիկների ու ժողովրդի ո·ին բարձր պահելու առթիվ, ասել կուզի ոչ միայն հասարակ ժողովուրդը, այլև բարձր խավը երևույթ էր համարում սրբազանի ցուցաբերած քաղաքացիական վարքը: Կարապետ արքեպիսկոպոսի անձնազոհ վարքը մեծ արձա·անք էր ·տել համայն հայության մեջ:

[29] Տես նույն տեղում, էջ 86:

1918 թ. մայիսյան տա·նապալից օրերին նույնպիսի հերոսական վարք դրսևորեց վերոհիշյալ Հակոբ Սուրենյանցի որդին՝ Ամենայն հայոց կաթողիկոս Գևոր· Ե-ն: Երբ թուրքական զորքը սպառնում էր Արարատյան դաշտավայրը ոտնատակ տալով մտնել Երևան, և հայ ժողովրդի լինել-չլինելն էր օրվա հարց դարձել, մեր ժողովրդի բոլոր խավերը, այդ թվում նաև քաղաքական այրերն ու եկեղեցու սպասավորները միակամ ·տնվեցին հայրենի երկիրն ամեն ·նով պաշտպանելու հարցում: Դրությունն այն աստիճան լուրջ էր, որ կաթողիկոսին առաջարկվում է մեկնել ապահով վայր՝ Բյուրական: Գևոր· Ե-ն, մերժելով այդ առաջարկը, հրամայում է հնչեցնել բոլոր եկեղեցիների զան·երը և ապա, տա·նապահար ժողովրդի ներկայությամբ, աղոթքն ավարտելով, ի լուր ամենքի հայտարարում է, որ ինքը սուրբ վայրից հեռացողը չէ, և եթե հայ զինվորն ի զորու չէ պաշտպանելու Մայր աթոռը, ապա ինքը կմնա այն պաշտպանելու, թեկուզ և իր կյանքի ·նով:

Վեհափառի խոսքն անմիջապես բազմացվում է տպարանում զինվորներին հասցնելու նպատակով: Գարե·ին և Զավեն եպիսկոպոսները, կաթողիկոսի օրհնանքն առնելով, մեկնում են մարտի դաշտ՝ Ավարայրի մասնակից Ղևոնդ Երեցի օրինակով առաջնորդելու ռազմիկներին: Այս ամենը ո·ևշնչում է ոչ միայն զինվորներին, այլև պահի ազդեցությամբ ընկճվածություն ցուցաբերած զորավարներին[30]:

Եվս մի հան·ամանք, որ անմիջական առնչություն ունի քրիստոնեական հավատքի հետ: Սարդարապատի ճակատամարտը բնութա·րելիս հեղինակները հաճախ դիմում են «հրաշք» բառի օ·-նությանը: Խոսքը դատողականության սովորական չափանիշներով անըմբռնելի երևույթի մեկնաբանման մասին է. տվյալ օրհասական կացության սթափ ըմբռնումն ու ·նահատումը որևէ լավատեսության հիմք չէին թողնում: Աչ·ա-

[30] Տես *Ս. Աֆանասյան*, Սարդարապատի ճակատամարտը: Ե., 1991, էջ 40:

յին խորհրդի նախա·ահ Արամի համախոհն ու ի պաշտոնե փինակիցը՝ Ա. Աստվածատրյանը, ·տնում է, որ ավելի տրամաբանական կլիներ, եթե Սարդարապատի տակ հայությունը պարտություն կրեր, բայց տեղի ունեցավ հակառակը, ուստի այդ հաղթանակը պետք է պարզապես կոչել ոչ թե հերոսական դրվա·, այլ հրաշք: Ներկայումս հետադարձ հայացքով հաստատ կարելի է պնդել, որ այդ հրաշա·ործության սկիզբը դրվեց մո·ական խոսքով և, իհարկե, Վեհափառի զորավոր ինքնապոռթկումով: «Կռվի դաշտը ·ուցեն միակ տեղն է, ուր ամեն բանից ավելի և ամեն բանից սուր է ըզ·ացվում բարոյապես ազդելու՝ մտքերի, սրտերի ու կամքերի վրա իշխելու կարիքը,—·րում է Նժդեհը և ապա հետևյալ ընդհանրացումն անում,—առանց զորավոր խոսքի բութ են սրերը, թույլ՝ բազուկները, անվճռական՝ կամքերը»[31]:

Սարդարապատի ճակատամարտում դրսևորվեց ազ·ի կենսաբանական ուժականությունը: Մեկուկես տասնամյակ անց Հայկ Ասատրյանը ·րում էր՝ ասես այդ պահը ի նկատի ունենալով. «Ո՞Նենք կենսական ու հո·եկան բարձր կարողություններով օժտված մի ժողովուրդ՝ կենսաբանական ուժականության մի անըսպառ շտեմարան. ուսումնասիրե՞լ ենք նրա մարդահո·եբանական յուրահատուկ ·ծերը, փորձե՞լ ենք ·իտական լույսի տակ դնել նրա առաքինություններն ու մոլորությունները, սրբա·րել նրա թերիները, մշակել նրա դրական կողմերը»[32]: Նախատինքի այս խոսքերը վերաբերում են նաև մեր ժամանակակիցներին:

Արցախյան ·ոյամարտը մեկ ան·ամ ևս ապացուցեց, որ կամաստեղծ ո·ին ի զորու է այն աստիճան ար·ասավորել հայրենյաց նվիրյալների հո·ին, որ նըրանք դառնան նույնիսկ մահապարտներ (շեշտենք, որ խոսքը ոչ թե միջնադարի, այլ մեր օրերի իրատես մարդկանց մասին է): Երջանկահիշատակ սպարապետ Վազ·են Սար·սյանի կոչը ոտքի հանեց 500 այնպիսի անձնազոհ անձանց, որոնք միահամուռ ուժերով բեկում մտցրին դեպքերի ընթացքի մեջ: Ազ·ի համար այդպիսի բախտորոշ պահերին են ծնվում իսկական հերոսները, և ամենևին էլ պատահական չէ, որ փինադադարից հետո Սպարապետը անհրաժեշտ համարեց բանակում ունենալ հո·ևորական սպասավոր՝ հրամանատարի հո·ևոր խորհրդատուի պաշտոնով: Փույթ չէ, որ այդ հաստատությունը դժվարությամբ է կայանում, ·լխավորն այն ըմբռնումն է, որ փինվորի կյանքում հո·ևոր արժեքները մնայուն և կարևոր դեր ունեն, որ հայի համար կարևոր է Ավարայր—Սարդարապատ—Շուշի ավանդույթի ·ոյատևման խորհուրդը: Մարտի դաշտում, ինչպես հայտնի է, շատ բան կյանքի է կոչվում ան·իտակցականի հրամայականով, այլ կերպ ասած՝ հո·ևոր վարժանքը ·ործողության անսխալականության կարևոր պայման է:

Պատմության մեջ հայն իրեն դրսևորել է որպես ո·ու ժողովուրդ և առաջինն է նետվել քրիստոնեության ·իրկը՝ անհաղորդ մնալով դիմացուրկ աշխարհաքաղաքացիությանը: Հայ ազ·ը, մշտապես վ·ալով իր ·լխին կախված օտար սրի վտան·ը, ազ·ային իմաստ է հաղորդել համամարդկային ·աղափարներին, այդ թվում նաև քրիստոնեության վարդապետությանը: Եվ միան·ամայն իրավացի է Բերտրան Բարեյլը, երբ նշում է, որ «կարծես հայ ազ·ին համար կազմված է ազ·ային եկեղեցի բացատրությունը... ազ·ին բախտը եկեղեցվո բախտին հետ միացած ըլլալե երբեք չդադրեցավ»[33]: Նա ·տնում է, որ հայ եկեղեցին ազ·ի համար եղել է փրկության տապան, որով փրկվել են ոչ միայն ժողովուրդը, այլև նրա ավանդույթները, սովորույթները, լեզուն և ·րականությունը:

Մանչեստրի եպիսկոպոս Ո՞Ւելթոնը Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի «Հայոց եկեղեցին» ·րքի ան·լերեն հրատարակության առաջաբանը:

[31] Տես *Վ. Գևոր·յան,* Լեռնահայաստանի հերոսամարտը: Ե., 1995, էջ 139:

[32] *Հ. Ասատրյան,* Հոդվածների ժողովածու: Ե., 1995, էջ 11:

[33] Տես *Մ. Օրմանյան,* նշ. աշխ., ֆրանսերեն հրատարակության առաջաբանը:

տարակության առաջաբանում առանձնացնում է հայոց եկեղեցու անկախ և ժողովրդավարական բնույթը՝ դավանաբանական վեճերին նվազա·ույն տեղ հատկացնելու հան·ամանքը, քույր եկեղեցիների հանդեպ հար·անքն ու հանդուրժողականությունը:

Օտարների ·նահատմամբ հայ եկեղեցու համեմատաբար ժողովրդավարական բնույթը և իր պաշտոնյաների ընտրության մեջ աշխարհիկ տարրերի մասնակցության ապահովումը հնարավորություն են ընձեռել ազ·ի օրհասական պահերին լինելու ժողովրդական կան··վածների հետ և լավա·ույնս ապահովելու երկրի պաշտպանության ·ործը:

## ХРИСТИАНСТВО КАК ДУХОВНО-МОРАЛЬНЫЙ ФАКТОР В ДЕЛЕ ЗАЩИТЫ РОДИНЫ

*С. Г. АРУТЮНЯН, кандидат философских наук, доцент*

РЕЗЮМЕ

В противовес античному мировоззрению, отдававшему приоритет в человеческой деятельности познанию, пришедшее ему на смену в средние века христианство делало акцент на морально-волевом факторе. Один из видных теологов христианства Августин Блаженный в творческой деятельности человечества главенство отдавал именно этому фактору, вплоть до его противопоставления разумно-познавательному. Если разум имеет дело с реальностью, то воля реализует доселе не существовавшее. Таким образом, христианство освобождает человека от власти обыденного, тем самым предоставляя ему возможность для построения самостийного мира.

В Армении, в силу сложившихся в средние века обстоятельств, борьба за веру тесно переплелась с национально-освободительной борьбой. Этому в немалой мере способствовало и развитие историографии, являющейся залогом формирования у народа чувства самосознания, самоутверждения. Здесь решающим фактором стало создание армянской письменности в начале V века Месропом Маштоцом, человеком, в одном лице воплотившем черты военного, ученого и священнослужителя.

Одним из основных понятий христианства является любовь, объединяющая в единое целое три ипостаси: Бог-Отец, Бог-Сын и Святой Дух. Именно олицетворением всеобъемлющей любви к человеку является факт кеносиса Христа, т. е. его схождения с высоты божественного на уровень смертного. В Армении христианская любовь (лишенная половых признаков, свойственных античной, в том числе и платонической любви) получила форму патриотизма. Именно любовь к родине не только заставляла тысячи и тысячи воинов и других мирян самоотверженно сражаться с превосходящими силами противника, но и, как пишет историк V в. Егише, побуждала священнослужителей выходить на поле брани и «духовным зрением видеть себя в роли пророков (закиданных камнями), а глазами плоти—героизм ратников». В средние века понятия «защиты Отечества» и «защиты веры» слились воедино. Церковь всячески поощряла это, освятив имена спарапета (военачальника) Вардана Мамиконяна, иерея Гевонда и других героев Аварайрской битвы (451 г.), когда весь армянский народ от князя до крепостного, от епископа до диакона в едином порыве встал на защиту своей веры, на которую посягала маздеистская Персия, и тем самым защищал свою самость.

Под влиянием христианских догматов еще в IV в. в Армении сложился кодекс чести воинства, многие положения которого предвосхитили понятия, сложившиеся позднее у европейского рыцарства и японских самураев.

В течение 600 лет, когда армянский народ был лишен государственности, Армянская апостольская церковь выполняла функции государственной властной структуры, в том числе, действуя в направлении защиты родины и народа. Она взяла на себя не только функции военных структур, но и национально-патриотического воспитания населения. В числе христианских пастырей, исполнявших и функции светских правителей, был архиепископ Карапет Багратуни (1779—1856 гг.), который в 1830 г. организовал массовое переселение армян из Эрзерумского вилайета в основном в район Ахалцихе и тем самым спас от гибели не только тысячи армян, но и множество ценных духовных реликвий. Обосновавшись на новом месте, он здесь восстановил древние армянские церкви, построил новые, организовал культурную жизнь старой и новой армянских общин. В годы Крымской войны (1853—1856 гг.) он организовал успешную самооборону Ахалцихе от турок.

В трагическом для армян 1918 г., когда в результате вероломного нападения турецких войск на Восточную Армению угроза арменоцида нависла практически над всем армянским народом, во многом благодаря самоотверженности и патриотизму тогдашнего католикоса всех армян Геворга V Суренянца, народ поднялся на борьбу с захватчиками. Героические сражения под Сардарапатом, Баш-Апараном и Караклисом не только позволили армянскому народу выжить, но и создали предпосылки для возрождения армянской государственности.

И в конце прошлого века армянская церковь приняла деятельное участие в национально-освободительном движении арцахского армянства, искусственно отторгнутого большевиками от основной части армян и ценой жизней сотен своих сыновей и дочерей обретшего легитимную независимость и суверенитет своего национального государства.

## CHRISTIANITY AS A SPIRITUAL AND MORAL FACTOR IN THE CASE OF THE NATIVE LAND'S DEFENCE

*S. H. HAROUTUNIAN, Candidate of Philosophical Sciences, Docent*

SUMMARY

In counterbalance to the antique world outlook, giving priority to cognition in human activity, the Christianity, which followed it, made an accent on moral and volitional factor. One of the prominent theologists of Christianity, August the Blissed, gave domination exactly to this factor in human activity of the mankind, up to its opposition against the sensible and cognitive factor. If the reason deals with reality, then the will realizes anything that did not exist before. Thus, Christianity releases the man from the power of ordinary things, giving him the opportunity for building the peculiar world.

In Armenia, on account of the circumstances that were formed in the Middle Ages, the struggle for religion was closely associated with the national-liberation struggle. It was also assisted not to a small extent by development of historiography, which was a pledge for formation of the people's sense of self-consciousness, self-assertion. Here the decisive factor was the creation of the Armenian written

language at the beginning of the fifth century by Mesrob Mashtots, the man, who embodied the features of the soldier, scientist and priest.

One of the main notions of Christianity is love, uniting three roles: God-the Father, God-the Son and the Holy Spirit. The fact of Jesus's kenosis, that is his descending from the height of the divine level to the mortal level, is exactly the embodiment of universal love (deprived of sexual signs, natural of the antique love and also the Platonic love) got a shape of patriotism. Exactly the love for native land made thousands of fighting men and other laymen fight selflessly against the outnumbering forces of the enemy. As the historian of the 5$^{th}$ century Eghishe wrote, it also impelled the priests to enter the battlefield and to «see themselves with their spiritual eyesight as prophets (thrown at with stones) and with the eyes of the flesh—the heroism of the soldiers». In the Middle Ages the notions of «the Motherland's defence» and «the defence of the religion» merged all together. The church encouraged it in every way possible, making sacred the names of the sparapet (the military leader) Vardan Mamikonian, the priest Ghevond and other heroes of the Avarayr battle (of 451), when all the Armenian people from the prince to the serf, from the bishop to the deacon in common impulse began to defend their religion which was encroached on by the Mazdeistic Persia, and thus they were defending their peculiarity. Under the influence of christian doctrines still in the 4$^{th}$ century the code of honour of the army was formed, many theses of which anticipated the notions that were formed later among the European Knighthood and Japanese Samurais.

For 600 years when the Armenian people were deprived of the State system, the Armenian Apostolic Church was fulfiling the functions of the state power structure, also acting in the direction of the defence of the native land and people. It undertook snot only the functions of the military structures, but also national and patriotic education of the population. Among the christian pastors fulfiling the functions of the temporal rulers was the archbishop Karapet Bagratuni (1779—1856), who organized mass migration of the Armenians from the Erzerum vilajet to the Akhaltskha region in 1830 and so saved from death not only thousands of Armenians, but also many valuable spiritual relics.

Having settled down on a new place, he restored here ancient Armenian churches, built the new ones, organized cultural life of the old and new Armenian communities. In the years of the Krim war (1853—1856) he organized a successful self-defence of Akhaltskha from the Turks.

In 1918, the year, tragic for Armenians, when as a result of perfidious attack of the Turkish troops against the Eastern Armenia, Armenocide threatened practically all Armenians, people began fighting against the enslavers. Thanks to self-sacrifice and patriotism of the Catholicos of all Armenians of those times Gevorg V Sureniants the heroic battles under Sardarapat, Bash-Aparan and Karaklis allowed the Armenian people not only to survive, but also created prerequisites for the regeneration of the Armenian State system.

At the end of the last century the Armenian church took an active part in national-liberation movement of Artsakh-Armenianhood, artificially torn away from the main part of Armenians by Bolsheviks and gained legitimate independence and sovereignty of its national state at the cost of the lives of hundreds of its sons and daughters.

# ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ԱՇԽԱՐՀԻԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ

*Ս. Մ. ՍՏԵՓԱՆՅԱՆՑ, å ³ ïÙ³Ï³Ý ·ÇïáõÃÛáõÝÝ»ñÇ Ã»ÏÝ³Íáõ*

Հայ առաքելական եկեղեցին հիմնըվել է 301 թվականին՝ դառնալով հայկական պետության սյուներից մեկը: Չնայած հայոց արքա Տրդատ 3-րդը (298—330 թթ.) սկզբում դաժանորեն հետապնդում էր քրիստոնյաներին, այնուամենայնիվ, հասկանալով քրիստոնեության նշանակությունը, այն, որ այդ նորահայտ հավատքը կարելի է օ·տա·գործել պետության ուժեղացման և կենտրոնացման համար, արքան լիովին հրաժարվեց հեթանոսությունից, ար·ելեց այն, ընդունեց քրիստոնեություն և այն հռչակեց որպես պետության միակ պետական կրոն:

Տրդատը հեթանոսական աստվածների մեհյանները քանդելուց հետո դրանց փոխարեն կառուցեց եկեղեցիներ և վանքեր: Եկեղեցու ·լուխ կան·նեց Գրի·որ Լուսավորիչը (302—325 թթ.), որը որոշիչ դեր էր խաղացել քրիստոնեական հավատքի ընդունման ·ործում: Նա, Տարոնի եպիսկոպոս Զենոբ Գլակը և նրանց հետնորդները հայոց արքայի հետ մեծ դժվարությամբ արմատախիլ էին անում հեթանոսությունը ինչպես ժողովրդի մեջ, այնպես էլ նախարարների շրջանում և արքունիքում:

Այդ դժվարին պայքարում եկեղեցին հզորացավ՝ դառնալով տիրապետող ·աղափարախոսական ուժ: Դրա հետ մեկտեղ եկեղեցին հզորացավ նաև տնտեսապես: Եկեղեցու տիրապետության տակ անցան նախկին հեթանոսական տաճարների հողատարածքները՝ այնտեղ ապրող բնակչությամբ հանդերձ: Տրդատ 3-րդը ·յուղական եկեղեցականներին ամեն ·յուղից շնորհեց յոթ հողակտոր, այսպես կոչված ծխական հողամասեր, ինչպես նաև չորս հողակտոր ամեն ա·արակում: Եկեղեցուն շնորհվեցին նաև այլ հարստություններ:

Այսպիսով եկեղեցին վերածվեց մի մեծ հողատեր-ավատատիրոջ և այդ դերում մրցակցում էր ոչ միայն հարուստ նախարարական տների, այլև ան·ամ արքունիքի հետ: Այս հան·ամանքով էր պայմանավորված 4-րդ դարում արքայի և նախարարների միջև մղվող պայքարում եկեղեցու քաղաքականության երկդիմությունը. եկեղեցին, մի կողմից, լինելով պետության միասնության և կենտրոնացման ջատա·ով, պետք է աջակցեր և աջակցում էր հայոց արքային, մյուս կողմից՝ որպես խոշոր ավատատեր, հարում էր նախարարական դասին:

Հայ եկեղեցու հիմնադրման օրվանից այն ղեկավարվում էր Գրի·որ Լուսավորչի տոհմի ներկայացուցիչների կողմից: Եկեղեցու տնտեսական, քաղաքական և ·աղափարական աճումը, ինչպես նաև եկեղեցու կողմից նախարարական տոհմերին հաճախակի դարձող աջակցությունն անհան·ստացնում էին հայոց արքաներին: Տիրան արքայի (338—350 թթ.) օրոք նրա և Հուսիկ կաթողիկոսի (341—347 թթ.) միջև տեղի ունեցավ ընդհարում, որն ավարտվեց Հուսիկի սպանությամբ: Կաթողիկոսական աթոռը խըլվեց Լուսավորչի տոհմից: Սակայն շուտով Տիրան արքայի որդին՝ Արշակ 2-րդը (350—368 թթ.), որը ցանկանում էր եկեղեցու և նախարարների հարաբերություններում հաստատել միաբանություն և համաձայնություն, կաթողիկոսական աթոռը վերադարձրեց Լուսավորչի տոհմին՝ Հուսիկ կաթողիկոսի թոռանը՝ Ներսես Մեծին (353—373 թթ.): Արշակը լայնորեն օ·տա·ործում էր Ներսես Մեծի դիվանա·իտական ունակությունները և նույնիսկ նրա ·լխավորությամբ Հռոմ ուղարկեց մի դեսպանություն, որը

պետք է կար·ավորեր Հայաստանի հարաբերությունները Հռոմի հետ: Արշակի և Ներսեսի օրոք Աշտիշատում հրավիրվեց եկեղեցական ժողով, որն ընդունեց ինչպես կրոնական, այնպես էլ աշխարհիկ բնույթի կանոններ:

Սակայն շուտով ·ահ բարձրացավ Պապ արքան, որը փորձեց թուլացնել եկեղեցու դիրքերը. նա եկեղեցուց խլեց կալվածքները, նրան զրկեց որոշ արտոնություններից: Սպանվեց արքային դիմադրող Ներսես կաթողիկոսը: Խոսրով 4-րդ արքայի (385—390 թթ.) օրոք կաթողիկոս դարձավ Ներսեսի որդին՝ Սահակ Պարթևը (387—439 թթ.): Նրա օրոք եկեղեցին ·րավեց իր նախկին պատվավոր տեղը:

Սահակ կաթողիկոսի օրոք հայ եկեղեցին ձեռնարկեց հայոց ·րերի ստեղծման ·ործը՝ իր հովանավորության տակ առնելով Տարոնի Հացեկաց ·յուղում ծնված Մեսրոպ Մաշտոցին: Ընդունելով վարդապետի աստիճան՝ Մաշտոցն իր աշակերտների հետ քրիստոնեական հավատք քարոզեց Գողթան ·ավառում, որտեղ դեռևս շատ ուժեղ էին հեթանոսական տարրերը: Գողթանից վերադառնալով մայրաքաղաք՝ Մաշտոցն այստեղ ձեռք բերեց հայոց ·րերի ստեղծման մտքի մի ջերմեռանդ կողմնակցի ի դեմս կաթողիկոս Սահակ Պարթևի: 406 թ. ամենայն հայոց վարդապետ Մաշտոցն ստեղծեց հայոց ·րերը: Դրանից անմիջապես հետո Հայաստանում բացվեցին բազմաթիվ դպրոցներ, որտեղ ուսուցումը կատարվում էր հայոց լեզվով: Այդ դպրոցների սաները դառնում էին պատմաբաններ, թար·մանիչներ, հո·ևոր ·ործիչներ, որոնք մեծ դեր խաղացին հայ ժողովրդի մշակույթի կար·ացման ·ործում և նրա մղած ազատա·րական պայքարում: Ձեվավորվում էր հայ ·րավոր մշակույթը, ինչը մեծապես նպաստում էր հայոց աշխարհի ինքնության ամրապնդմանը:

449—451 թվականներին Վարդանանց պատերազմում պարսկական լծից ազատա·րվելու համար ապստամբած հայ ժողովրդի հետ հանդես եկավ նաև հո·ևոր դասը՝ Մաշտոցի աշակերտ Հովսեփ Ա Հողոցմեցի կաթողիկոսի (440—452 թթ.) ·լխավորությամբ:

451 թ. Ավարայրի ճակատամարտում հայ ապստամբների շարքերում էր նաև Ղևոնդ Երեցը, որն իր բոցաշունչ ճառերով ո·ևորում էր հայերին: Ավարայրի ճակատամարտից հետո Հովսեփ կաթողիկոսը և Ղևոնդ Երեցը այլ հո·ևորականների հետ ·երվեցին պարսիկների կողմից և աքսորվեցին Ապար (այժմ՝ Խորասան) աշխարհի Նյուշապուհ քաղաքը, որտեղ էլ նահատակվեցին:

Մարզպանական շրջանում Ներսես Գ Տայեցի կաթողիկոսը (641—661 թթ.) իր քսանամյա աթոռակալության օրոք զբաղվեց եկեղեցական շինարարությամբ, ինչի համար ստացավ Շինող մականունը: Նա նորո·եց Դվինի Սբ. Սար·իս, Վաղարշապատի Սբ. Աստվածածին եկեղեցիները, Վասպուրականի Ձորո վանքը, Լուսավորչի տանջանքի վայրում հիմնեց Խոր Վիրապ վանքը, Վաղարշապատի մոտ կառուցեց հոյակապ Զվարթնոց տաճարը: Ցանկանալով կայուն քաղաքական վիճակ ստեղծել՝ Ներսես Տայեցին դիմեց Բյուզանդիայի Կոստանդ կայսրին և խնդրեց ճանաչել Հայաստանում Համազասպ Մամիկոնյանի իշխանությունը: Կայսրը նրան հաստատեց Հայոց իշխան, նվիրեց արծաթե ·ահ և տվեց կուրապաղատի տիտղոս:

Սակայն իր կյանքի վերջում Վեհափառը երես դարձրեց հույներից և, ժողով հրավիրելով, ընդունեց արաբների ·երիշխանությունը Հայաստանի վրա: Նրա առաջարկությամբ արաբական խալիֆը Հայոց իշխան կար·եց Գրի·որ Մամիկոնյանին: Սակայն Հայաստանի փաստացի ղեկավարը Ներսես կաթողիկոսն էր: Պետք է նշել, որ նրա օրոք Հայաստանում հո·ևոր իշխանությունն ավելի բարձր էր, քան աշխարհիկը:

Միջնադարում հայ ժողովրդի մեջ մեծ հեղինակություն և հար·անք էր վայելում Սահակ Գ Ձորափորեցի կաթողիկոսը (677—703 թթ.): 8-րդ դարի սկզբում հայ ժողովուրդն ապստամբեց արաբ կալվթիչների դեմ: Խալիֆը զորավար Մահմեդի ·լխավորությամբ մեծաքա-

նակ վորք ուղարկեց ապստամբների դեմ: Հասկանալով, որ հայերը չեն կարողանա դիմադրել հզոր արաբական զորքին, և բոլորը սրի կքաշվեն, Վեհափառը մեծ խմբով մեկնեց արաբներին ընդառաջ: Հասնելով Խատրան՝ կաթողիկոսը հիվանդացավ և, ·ալով, որ շուտով մահանալու է, Մահմեդին ·րեց մի նամակ, որում աղաչում էր չոչնչացնել հայ ազ·ը: Մահմեդը, ·ալով Խատրան և կարդալով արդեն վախճանված կաթողիկոսի նամակը, կատարեց Վեհափառի վերջին խնդրանքը և զորքը հետ քաշեց:

7—10-րդ դարերում Հայաստանի տարածքում տարածվեցին պավլիկյան և թոնդրակյան կրոնական աղանդները, որոնք մերժում էին եկեղեցին՝ իր ծիսակատարություններով հանդերձ, հանդես էին ·ալիս ավատական հողատիրության դեմ և այլն: Արևելյան Հայաստանում պավլիկյան աղանդը մեծ թափ ըստացավ, ինչը վնաս հասցրեց հայ ժողովրդի և եկեղեցու միասնությանը: Այդ պատճառով Հովհաննես Գ Օձնեցի կաթողիկոսը (717—728 թթ.) կատաղի պայքար ծավալեց այդ աղանդի դեմ:

Հայոց պետականության երկարատև բացակայությունից հետո, 875 թ., կաթողիկոս Զաքարիա Ա Ձա·եցու (855—876 թթ.) կողմից հրավիրվեց մարզպետ իշխանների ժողով, որը հռչակեց Հայաստանի անկախությունը և, դիմելով արաբական խալիֆին, նրան խնդրեց Աշոտ Բա·րատունի իշխանին ճանաչել հայոց թա·ավոր: Իր «Պատմություն հայոց» աշխատության մեջ Կիրակոս Գանձակեցին Աշոտ թա·ավորի (885—890 թթ.) մասին ·րում է. «Ի ՅԼԴ թուականին հայոց թա·աւորեաց Աշոտ, այր երկիւղած յաստուծոյ և բարեպաշտօն, և վարդարիչ եկեղեցւոյ, և սիրող պաշտօնէից աստուծոյ, որ վարդարեաց զեկեղեցիս հայոց մեծաւ վարդուք և պայծառութեամբ, երեսուն երկու ամ իշխանաց իշխան կացեալ և հին· ամ թա·աւորեալ Հայոց և փոխեցաւ ի Քրիստոս բարւոք մահուամբ և ճշմարիտ դաւանութեամբ»[1]:

[1] *Կիրակոս Գանձակեցի*, Պատմություն Հայոց: Ե., 1961, էջ 80—81:

Աշոտ թա·ավորի օրոք Հայաստանում հո·ևոր և աշխարհիկ իշխանությունների միջև հաստատվեցին լիակատար միասնություն և համաձայնություն:

Կիլիկյան Հայաստանում եկեղեցին ձեռք բերեց մեծ տիրույթներ, կաթողիկոսների սեփականություն դարձավ կի-



Զորայ եկեղեցի (13-րդ դ.), Ալայազ

սանկախ Հռոմկլա ամրոցը շրջակա ողջ տարածքով: Հո·ևորականները, հատկապես կաթողիկոսը և Սսի արքեպիսկոպոսը մեծ դեր էին խաղում պետական ·ործերում: Լևոն Բ թա·ավորը (1187—1219 թթ.) սիրով էր վերաբերվում եկեղեցուն և աստծու ծառաներին: Պետության տարբեր մասերում նա հիմնեց նոր վանքեր, որոնցից ամենահռչակավորն է Ակների վանքը: Մահանալուց առաջ նա իր թա·աժառան· դուստր Զաբելի անչափահասության պատճառով պետության ղեկավարման համար ստեղծեց մի խնամակալական խորհուրդ, որի ·լուխ կար·եց Հովհաննես Զ Սսեցի կաթողիկոսին (1203—1221 թթ.):

Կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրբերդցին (1221—1267 թթ.), որը որդե·րեց երկրի ամրապնդման և հզորացման քաղաքականությունը, 1242 թ. վարեց հայ-մոնղոլական, իսկ 1254 թ.՝ հայ-հունական բանակցություններ:

ՈՒշ միջնադարում հայ առաքելական եկեղեցին ջանքեր ·ործադրեց Հայաստանի ապատա·րման համար: Այսպես՝ պարսկական տիրապետությունից Արևելյան Հայաստանի ապատա·րման հարցի քննարկման նպատակով 1547 թ. Ստեփանոս Ե Սալմաստեցի կաթողիկոսը (1545—1567 թթ.) Սբ. Էջմիածնում ·աղտնի խորհրդաժողով հրավիրեց: Նույն թվականին իրեն աթոռակից վերցնելով Միքայել Ա Սեբաստացուն (1567—1576 թթ.)՝ Ստեփանոս կաթողիկոսը ·լխավորեց Արևելյան Հայաստանի մելիքների հանձնարարական նամակներով Եվրոպա մեկնող պատվիրակությունը: Եվրոպական տերություններից աջակցություն ստանալու ակնկալիքով Վեհափառը ապարդյուն բանակցություններ վարեց Վենետիկի հանրապետության դոժի (1548 թ.), Հռոմի Պողոս Գ և Հուլիոս Գ պապերի (1549—1550 թթ.), Հռոմեական սրբապան կայսրության կայսր Կարլոս 5-րդի (1550 թ.), Լեհաստանի թա·ավոր Սի·իպմունդ 2-րդ Օ·ոստոսի (1551 թ.) հետ: Հիասթափվելով արևմտաեվրոպական տերությունների երկդիմի դիրքորոշումից՝ նա վերադարձավ Հայաստան:

1677 թ. Սբ. Էջմիածնում Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի (1655—1680 թթ.) ·լխավորությամբ հրավիրվեց աշխարհիկ և հո·ևոր ·ործիչների խորհրդակցություն՝ Հայաստանի ապատա·րման հարցով: Այստեղ որոշվեց Հայաստանի ապատա·րման համար կաթողիկոսի ·լխավորությամբ պատվիրակություն ուղարկել Եվրոպա: Հասնելով Կոստանդնուպոլիս՝ Հակոբ Դ կաթողիկոսը Լեհաստանի թա·ավոր Յան Սոբեսկուն հղեց նամակներ, որոնցում խնդրում էր աջակցել Հայաստանի ապատա·րմանը, բայց չհասավ իր նպատակին և հենց Կոստանդնուպոլսում էլ կնքեց իր մահկանացուն:

18-րդ դարի սկզբին Արևելյան Հայաստանում մեծ հեղինակություն էր վայելում Աբրահամ Կրետացի կաթողիկոսը (1734—1736): Արևելյան Հայաստանում իշխող պարսիկները պատերազմում էին թուրքերի դեմ: Ինչպես կաթողիկոսը, այնպես էլ Արևելյան Հայաստանի և Ղարաբաղի մելիքներն ամեն կերպ աջակցեցին պարսիկներին: Պարսկական բանակի Նադիր կորավարը (հետա·այում՝ Նադիր-Շահ) մեծ հո·ատարությամբ էր վերաբերվում Աբրահամ կաթողիկոսին: Նա անձամբ այցելեց Սբ. Էջմիածնի վանքը, մասնակցեց պատարա·ին և նոր հրովարտակներով հաստատեց կաթողիկոսի և հո·ևորականության հնուց սահմանված իրավունքները: Զորավարը Մայրավանքի վերանորո·ումը հանձնարարեց հմուտ վարպետների՝ հատկացնելով հապար թուման, տաճարը պարդարեց 15 կ·քաշով ոսկե ջահով և կար·ադրեց ընտիր ·որ·երով պարդարել Սբ. Էջմիածինը:

Նադիր-Շահը լավ էր հասկանում Արևելյան Հայաստանում ռապմական ·ործողությունների ընթացքում Վեհափառ Հայրապետի դերը՝ պարսկական բանակին տեղական բնակչության աջակցման ·ործում: Այդ նույն ժամանակ Արցախում ապատա·րական պայքարը ղեկավարում էր Գանձասարի Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսը:

19-րդ դարի սկզբում պարսկական լծից Արևելյան Հայաստանի ապատա·րման ուղղությամբ կ·ալի աշխատանք կատարեց Ռուսաստանի կողմից Հայաստանի ապատա·րման ·աղափարի կողմնակից Ներսես Ե Աշտարակեցին (1843—1857 թթ.): Սակայն Ռուսաստանի միապետական իշխանությունը, Արևելյան Հայաստանը միացնելով ռուսական կայսրությանը, 1836 թ. սահմանափակեց հայ եկեղեցու իրավունքները՝ նրան պարտադրելով այդ ռ·ով կապմված Հայ եկեղեցու կանոնադրությունը, որը հայտնի է «Պոլոժենիե» անունով: Այս կանոնադրությանը դեմ են արտահայտվել բոլոր հայոց Վեհափառ Հայրապետները Ներսես Աշտարակեցուց մինչև Գևոր· Ե Սուրենյանցը: Մկրտիչ Ա Վանեցի (Խրիմյան Հայրիկ) կաթողիկոսի (1892—1907 թթ.) օրոք Սբ. Էջմիածնի միաբանության կողմից կապմվեց հայ եկեղեցու նոր կանոնադրության նախա·իծ, որը, սակայն, կյանքի չկոչվեց:

Առաջին աշխարհամարտի նախօրե-

ին բարելավվեցին կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի կողմից ղեկավարվող Կովկասի փոխարքայության և Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի փոխհարաբերությունները: Դրանց հաստատման ուղղությամբ մեծ ջանքեր ·ործադրեց հայ անվանի ·իտնական, հո·նորական, վիրահայության առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը (Մեսրոպ Մա·իստրոս): Այդ կապերի արդյունք դարձան կամավորական շարժումը և արևմտահայ փախստականներին օ·նող Եղբայրական օ·նության հանձնաժողովի ստեղծումը:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո Սբ. Էջմիածնում տեղի ունեցավ մի եկեղեցական ժողով, որը «Պոլոժենիեն» անվավեր հայտարարեց և այդ որոշման մասին տեղյակ պահեց Ռուսաստանի Ժամանակավոր կառավարությանը:

1917—1918 թթ., մինչև Թիֆլիսից Երևան հայկական կառավարության ժամանումն ընկած ժամանակահատվածում, Արևելյան Հայաստանը և Կարսի մարզը կառավարում էր Երևանի Ազ·ային խորհուրդը, որը փաստորեն ղեկավարում էր Ազ·ային խորհրդի պատվավոր նախա·ահ, Երևանի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանը:

1918 թ. մայիսին Արևելյան Հայաստանում թուրքերի դեմ մղվող բոլոր մարտերին իրենց մասնակցությունը բերեցին հայ հո·նորականության բազմաթիվ ներկայացուցիչներ: Հայկական անկախ հանրապետության օրոք աշխարհիկ և հո·նոր իշխանությունների փոխհարաբերություններում հաստատվեցին լիակատար համաձայնություն և փոխըմբռնում: Հանրապետության վարչապետները և այլ պաշտոնյաներ ամենատարբեր հարցերով դիմում էին Ամենայն հայոց կաթողիկոսին: Դիվանա·իտական և եկեղեցական հարցեր լուծելու և հանրապետության կարիքները հո·ալու համար 1919 թ. Եվրոպա և Ամերիկա ուղարկվեց Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանը:

1920 թ. մայիսյան բոլշևիկյան ապստամբության ժամանակ Գևոր· Ե Սուրենյանց կաթողիկոսը (1911—1930 թթ.) հանդես եկավ ի պաշտպանություն երիտասարդ պետության: Վեհափառ Հայրապետն իր կոնդակում մասնավորապես ·րում էր. «Մենք, որ ապրել և ապրում ենք Հայրենիքի միության և ապատության հույսով, այսօր, հայ կյանքի վերածնության ·արնան արշալույսի առկայծման օրերին, վշտով տեսնում ենք, թե ինչպես մոռացել ենք մեր ընդհանուր լեզուն և նպատակը, հայ կյանքի շարժող արյունի տակ տեսնում ենք, թե ինչպես անհայտ, անորոշ, մշուշապատ ·աղափարներով տարված մարդիկ փոսեր են փորում միացյալ և անկախ Հայրենիքին ծանր վտան·ներ սպառնացող անկախ օրերում, փոխանակ մի ընդհանուր ·ործի շուրջը համախմբվելու անհատական և ջլատիչ ·ործողությունների են դիմում հայրենի նավը անխարդախ նավահան·իստ հասցնելու ծանր աշխատանքների այս դառն օրերում:

...Հայ ժողովու՛րդ, հայ մտավորակա՛ն, հայ մշա՛կ և ·յուղացի՛, հայ արհեստավո՛ր և քաղաքացի՛, զ·աստացիր, միությունն ու համա·ործակցությունը քեզ ճամփա ընտրիր, համախմբվիր օրինասահման քո կառավարության, Հայաստանի Հանրապետության շուրջը: Զ·աստ եղիր քո ·իտակցությամբ և քո քայլերից հաստատության մեջ, չափավոր եղիր քո պահանջների հանդեպ և կառավարության հետ քո միությամբ ձ·տիր հասնել այն օրին, երբ դու քո ջանքերով տեր կդառնաս քո հայրենի հողին ու ջրին, քո ամբողջական Հայրենիքին: Ոչ թե միայն հույսով ապրիր, այլև աշխատանքով հասիր այդ օրին՝ քո ձեռքով քո բախտն ու վիճակը տնօրինելու օրին:

...Մենք, ինչպես և մեր երջանկահիշատակ նախնիները, որ աշխատանք ենք թափել տաճկահայ դատի համար, լավ օրերի հույսի ակնկալությամբ, չենք կարող անտարբեր մնալ այս նեղ րոպեներին, և երբ վտան·ված ենք տեսնում հայրենիքի միության ·ործը, բայց նամանավանդ, հայ ազ·ի ֆիզիկական ·ոյության ճ·նաժամային ·ործը, իբր ընդհանրական Հայրապետ, մեր սրբազան պարտքն ենք

համարում այս ծանր, կասենք օրհասական րոպեներին հայրական խրատով դիմել բոլորին և կ · աստության կոչ անել՝ հա՛յ ժողովուրդ, համախմբվիր քո հայրենի հանրապետության պահպանության ·ործի շուրջը: Դա է քո Հայրենիքի փրկության միակ ճանապարհը:

հապետական իշխանությունը, իսկ Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է Մայր Աթոռի և Նորին Վեհափառության, Ամենայն հայոց կաթողիկոսի նախամեծար ու · երիշխան իրավունքները ապ · ային-եկեղեցական և կրոնաբարոյական խնդիրներում:



Սուրբ Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդը, 1927 թ.

Ձախից աջ. **Ա շարք**՝ *Մատթեոս արք. Մատթեոսյան* (Բաքվի և Թուրքեստանի թեմերի առաջնորդ), *Խորեն արք. Մուրադբեկյան* (կթղ. տեղապահ), *Գևորգ Ե կաթողիկոս*, *Բագրատ արք. Վարդազարյան*, *Գարեգին արք. Հովսեփյան:* **Բ շարք**՝ *Արտակ եպս. Սմբատյան* (Սյունյաց թեմի առաջնորդ), *Անդրեաս Սալթիկյան*, *Գևորգ արք. Չորեքչյան* (Վրաստանի թեմի առաջնորդ), հայագետ *Ստ. Մալխասյան*, *Գյուտ եպս. Տեր-Ղազարյան*, *Իսահակ Ամիրյան:* **Գ շարք**՝ *Պողոս Ա քհն. Բեղլյան*, *Գրիգորիս վրդ. Յարամիշյան*, *Ռուբեն ծ. վրդ. Մանասյան* (Իրաքի կթղ. պատվիրակ), *Վռամ Ղարադույումչյան*, *Իսահակ ծ. վրդ. Տեր-Միքայելյան* (Շիրակի թեմի առաջնորդ), *Հակոբ Ա քհն.* (Այրարատյան թեմի առաջն. տեղապահ), *Վրթանես ծ. վրդ. Հակոբյան* (Արցախի թեմի առաջնորդ)

...Մենք հավատում ենք հայ ժողովրդի իմաստությանն և առողջ բնազդին»[2]:

Երբ 1920 թ. Հայաստանին խորհրդային Ադրբեջանի կողմից իրական վտան · սպառնաց, մշակվեց կաթողիկոսության և հանրապետության կառավարության միջև դաշնա · րի հետևյալ նախա · իծը:

«1. Հայաստանյայց Առաքելական Մայր եկեղեցին սրբա ·ործում է միացյալ և անկախ Հայաստանի Հանրապետությունը և օրհնում նրա օրինական ու վե-

2. Հայաստանյայց Առաքելական Մայր եկեղեցին հայտարարվում է Հայաստանի Հանրապետության · երիշխանությունից անկախ, իսկ Սբ. Էջմիածնի վանքն՝ իր միաբանությամբ, այլև սահմանա · ծված հողամասով, շենքերով և հիմնարկություններով և շարժական ու անշարժ · ույքով՝ ենթակա միայն Մայր Աթոռին և Ամենայն հայոց կաթողիկոսի իրավասության:

3. Մայր Աթոռը և Հայաստանի Հանրապետության իշխանությունը ի դեպ հարկի՝ ապատակամ համաձայնությամբ օ · նության են հասնում իրար՝ առանց ինքնակամ միջամտության փո-

[2] Տես *Մ. Ստեփանյանց*, Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք: Ե., 1994, էջ 1—2:

խաղարձ իրավասությանց շրջանակը:

4. Մայր Աթոռը ս. Էջմիածնում՝ որպես իր անսահման իշխանության վայրում, բաց է անում ամեն տիպի դպրոցներ, հասարակական ու կրոնաբարոյական հիմնարկություններ առանց որևէ սահմանափակումների, իսկ Հայաստանի Հանրապետության սահմաններում՝ համաձայն ·ոյություն ունեցող ընդհանուր դրության:

5. Մինչև Հայաստանի Հանրապետության Հիմնադիր ժողովի վերջնական որոշումը՝ Մայր Աթոռի իրավասության ենթակա վանքերի, եկեղեցիների և այլ աստվածահաճո հաստատությունների բոլոր կալվածները, շարժական ու անշարժ ·ույքերը մնում են անձեռնմըխելի սեփականություն Հայաստանյայց Առաքելական Մայր եկեղեցվո:

6. Մայր Աթոռը ի դեմս Նորին Վեհափառության՝ իրավակոր է ուղարկել օտար պետություններին ու եկեղեցիներին առընթեր և փոխադարձաբար ընդունել լիազոր նվիրակներ:

7. Մայր Աթոռը Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր ունի իր լիազոր նվիրակը և փոխադարձաբար Հայաստանի Հանրապետությունը Մայր Աթոռին առընթեր ունի իր դեսպանը:

8. Մայր Աթոռը իրավակոր է ունենալ ս. Էջմիածնի Վանքի սահմաններում իր սեպուհական վարչական միլիցական կազմակերպությունը՝ ամբողջովին ենթակա Մայր Աթոռի իրավասության, իսկ Հայաստանի Հանրապետության իշխանությունը ի դեմս պատշաճ հարկի ու միջնորդության՝ իր վարչական-զինվորական ուժն է տրամադրում Մայր Աթոռի և Նորին Վեհափառության պաշտպանության համար:

9. Ամենայն հայոց կաթողիկոսի Անձը սուրբ է և, որպես Վեհապետի, անձեռնմխելի: Հայաստանի Հանրապետության իշխանությունը Նորին Վեհափառության Անձի ձեռնմխելիության դեպքում և կոչման ու պատվի դեմ կատարվող ոճիրների համար սահմանում է այն բոլոր պատիժները, ինչ որ ·երիշխան բարեկամ պետության Վեհապետի անձի, կոչման ու պատվի պաշտպանության համար:

10. Հայաստանի Հանրապետության կառավարությունը, որպես Հայաստանի Առաքելական Մայր եկեղցվո կողմից սըրբա·ործված մի իշխանություն, օրհնությամբ է հիշատակվում եկեղեցիներում պատարա·ի և մաղթանքի ժամանակ:

11. Հանդիսավոր օրերին, ընդունելության ու այցելության, այլև ընթացիկ փոխհարաբերությունների ժամանակ Հայաստանի Հանրապետության իշխանությունը առ Նորին Վեհափառությունը արտահայտում է նախամեծարություն, Մայր Աթոռի և Նորին Վեհափառության կողմից ևս արժանանալով փոխադարձ մեծարանաց:

12. Վեհափառ կաթողիկոսն ունի իր անձնական պահակն ու շքախումբը, որ վայելում են Վեհապետների՝ միջազ·ային իրավունքով նախատեսված՝ պահակների ու շքախմբերի արտոնությունները: Անձնական պահակն ու շքախումբը ուղեկցում են Նորին Վեհափառության թե՛ իր երկրային ·երիշխանության՝ ս. Էջմիածնի և թե՛ Հայաստանի Հանրապետության սահմաններում:

13. Կաթողիկոսական ·ահի թափուր ժամանակը Տեղապահը վայելում է Նորին Վեհափառության՝ սույն դաշինքով սահմանված բոլոր իրավունքները:

14. Մայր Աթոռի լիազորը, նվիրակները և Մայր Աթոռին առընթեր նշանակված բոլոր պետական և եկեղեցական դեսպաններն ու լիազորները Հայաստանի Հանրապետության սահմաններում, այլև Մայր Աթոռում o·տվում են միջազ·ային իրավունքով՝ ·երիշխան պետությունների դիվանա·իտական ներկայացուցիչներին վերապահված իրավունքներով:

15. Մայր Աթոռի լիազորները, Սինոդի անդամները, առաջնորդները, կաթողիկոսական ընտրության ու ազ·ային-եկեղեցական ժողովների պատ·ամավորները իրանց լիազորությունների շրջանում o·տվում են անձի անձեռնմխելիության և վարչական ու քրեական հետապնդման վերաբերմամբ Հայաս-

տանի Հանրապետության պառլամենտի անդամների վայելած արտոնություններով:

*Ծանոթա·րություն*: Դատաստանական հետապնդման համար պահանջվում է Նորին Վեհափառության կամ Տեր Տեղապահի համաձայնությունը:

16. Մայր Աթոռի բոլոր պաշտոնական հրատարակությունները, պարբերական թե ոչ պարբերական, միան·ամայն ազատ են կառավարչական որևէ միջամտությունից և ամբողջովին ենթակա են Մայր Աթոռի իրավասության:

17. Մայր Աթոռից ելած և Մայր Աթոռը մտած պոստ-հեռա·րական ամբողջ հաղորդա·րությունը, փոխադրությունները, սուրհանդակները և այլն ունեն միջազ·ային իրավունքով նախատեսված արտոնությունները: Սույն արտոնությունը վայելում են նաև Մայր Աթոռի լիազոր նվիրակները և Մայր Աթոռին առընթեր նշանակված օտար պետությունների և եկեղեցիների դեսպաններն ու լիազորները:

18. Ս. Էջմիածնի Վանքի սահմաններում ·տնվող բոլոր կալվածքները, շարժական ու անշարժ ·ույքերը, հիմնարկություններն ու ձեռնարկությունները՝ որպես Մայր Աթոռի երկրային ·երիշխանության ենթակա արժեքներ, միան·ամայն ազատ են պետական, տեղական և այլ որևէ ուղղակի հարկից: Իսկ սույն դաշնա·րի հոդ. 5-ում հիշատակված այլ շարժական ու անշարժ ·ույքերը ենթարկվում են ընդհանուր իրավական դրության:

19. Հայաստանյայց Առաքելական Մայր եկեղեցվո և Հայաստանի Հանրապետության միջև կնքված ներկա դաշնա·իրը իր ուժը պահպանում է մինչև Հայաստանի Հանրապետության Համազ·ային Հիմնադիր և Ազ·ային-եկեղեցական ժողովների վերջնական որոշումը:

Սույն Դաշնա·իրը կազմված է երկու օրինակով»[3]:

Սակայն 1920 թ. Հայաստանի խորհրդայնացումը կասեցրեց այս դաշնա·րի կնքումը: Հայաստանում խորհրդային կար·երի հաստատումն իր հետ բերեց բոլշևիկների բռնություններ Հայ առաքելական եկեղեցու և նրա սպասավորների նկատմամբ: Ձերբակալվեցին մի քանի անվանի հո·ևորականներ, իսկ 1921 թ. ձմռանը Սևանի վանքի փոխվանահայր Եզնիկ վարդապետ Վարդանյանը խեղդամահ արվեց Սևանի սառույցների մեջ:

Բոլշևիկները հայ եկեղեցին տեսնում էին որպես մի հզոր ուժ, որը կարող է միշտ լինել ընդդիմադիր, և եկեղեցու դիրքերը թուլացնելու համար բռնա·րավեցին Մայրավանքի ·րեթե բոլոր շենքերը, ունեցվածքի մեծ մասը, պետականացրին Մատենադարանը, իսկ եկեղեցիները և վանքերը պահեստների և ախոռների վերածեցին:

Այս ամենով չբավարարվելով՝ 1930-ական թթ. նրանք բացեիբաց սկսեցին ոչընչացնել հայ հո·ևորականությանը: Միայն 1937—1938 թթ. նրանք բռնադատեցին 90 հո·ևորականի, իսկ ընդհանրապես 1920—1950 թթ.՝ մոտ 700 հո·ու:

1938 թ. ապրիլի 5-ի լույս 6-ի ·իշերը պետանվտան·ության ·աղտնի աշխատակիցների կողմից Վեհարանի իր ննջասենյակում սպանվեց Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանը (1932—1938 թթ.), և թալանվեց հին վեհարանում ·տնվող ·անձարանը:

1938 թ. օ·ոստոսի 8-ին կոմկուսի ղեկավար Գ. Հարությունյանը Ստալինին հղված նամակում մասնավորապես ·րում էր. «Հայաստանում, շրջկենտրոն Վաղարշապատում, որը ·տնվում է սահմանից 10—12 կմ հեռավորության վրա, մինչև այժմ ·ոյություն ունի Էջմիածնի վանքը: Այստեղ տեղավորված է Հայոց կաթողիկոսի նստավայրը, որը ·ոյատևում է արտասահմանի հայ հո·ևորականության կողմից ուղարկվող միջոցների հաշվին: ՀԿ(բ)Կ Կենտկոմի տրամադրության տակ եղած Հայաստանի նախկին ղեկավարության դավաճանական ·ործի վերաբերյալ նյութերը մերկացնում են կաթողիկոսության հակախորհրդային ·որ-

[3] Հայաստանի Հանրապետության պատմության կենտրոնական պետական արխիվ, ֆ. 409, ց. 1, ·. 85, թ. 2:

ծունեությունը և նրա աշխատանքը Հայաստանում դաշնակցական կազմակերպությունների ստեղծման վերաբերյալ:

...ՀԿ(բ)Կ կենտկոմը, քննարկելով Էջմիածնի վանքի և կաթողիկոսարանի մասին հարցը, որոշեց. քանի որ ունեցած նյութերը մերկացնում են Էջմիածնի կաթողիկոսությանը Խորհրդային իշխանության և հայ ժողովրդի դեմ ակտիվ պայքարի ·ործում, փակել Էջմիածնի վանքը՝ վերածելով այն թան·արանի, նոր կաթողիկոսի ընտրություններ չանցկացնել և վերացնել հո·ևորականության կենտրոն Էջմիածնի կաթողիկոսությունը: Խնդրում ենք ՀամԿ(բ)Կ կենտկոմին հաստատել»[4]:

Սակայն Մայր Աթոռ Սբ. Էջմիածինը չփակվեց և չվերածվեց թան·արանի: Ստալինը քաջ ·իտակցում էր, որ եթե փակվի Մայրավանքը, ապա արտասահմանյան հայերը Սփյուռքում կհիմնեն նոր Մայր Աթոռ կամ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության կաթ·ավիճակը կդառնա Ամենայն հայոց կաթողիկոսության կաթ·ավիճակ: Դա եղավ ·լխավոր պատճառը, որ Ստալինը ոչ միայն թույլ չտվեց Սբ. Էջմիածնի վերացումը, այլև 1945 թ. ապրիլին, հանդիպելով կաթողիկոսական տեղապահ արքեպիսկոպոս Չորեքչյանին, թույլատրեց 1945 թ. հունիսին ազ·ային-եկեղեցական ժողովի անցկացումը և Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրությունը:

1945—1947 թթ. հայոց եկեղեցին մեծ դեր խաղաց հայրենադարձության կազմակերպման ·ործում:

Վազ·են Ա-ն կաթողիկոս ընտրվելու պահից իր առջև նպատակ էր դրել վերական·նելու հայ եկեղեցու անցյալ փառքը, ինչպես նաև շարունակելու Գևոր· Զ Չորեքչյան կաթողիկոսի (1945—1954 թթ.) հայրենանպաստ ·ործը:

1956 թ. մայիսի 12-ին Վազ·են Ա կաթողիկոսը (1955—1997 թթ.) ԽՍՀՄ վարչապետ Բուլ·անինի հետ հանդիպման ժամանակ պահանջեց վերաբացել ԽՍՀՄ տարածքում 20—30-ական թթ. փակված 59 հայկական եկեղեցիներ: Այս պահանջը կատարվեց միայն Հայաստանի տարածքում, ինչպես նաև Մայր Աթոռին վերադարձվեց Նոր Վեհարանի շենքը:

Տեսնելով, որ իր պահանջները չեն



Վազգեն Ա կաթողիկոս

կատարվում, կաթողիկոսը 1958 թ. ապրիլի 28-ին դիմում է երկրի ղեկավար Խրուշչովին: Այդ նամակում բարձրացված հարցերից առավել կարևորներն էին եկեղեցիների վերաբացման, ինչպես նաև Հայաստանի հետ Արևմտյան Հայաստանի, Ղարաբաղի, Նախիջևանի և Ջավախքի վերամիավորման հարցերը: Սակայն այդ պահանջները նույնպես մերժվեցին[5]:

Վազ·են Ա-ն իր քառասունամյա հովվապետության ընթացքում խոր հետք թողեց հայ ժողովրդի հո·ևոր կյանքում:

[4] Հայաստանի Հանրապետության հասարակական և քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ, ֆ. 1, ց. 026, ·. 34, թ. 41—42:

[5] Հայաստանի Հանրապետության նորա·ույն պատմության կենտրոնական պետական արխիվ, ֆ. 823, ց. 3, ·. 150, թ. 7:

Նրա օրոք վերակառուցվեցին Սբ. Հռիփսիմե տաճարը, Սբ. Գայանե եկեղեցին, կանգնեցվեց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանը և այլն: Դարավոր կառուցումներից և վերակառուցումներից հետո վերջապես ամբողջացվեց Էջմիածնի վանքի համալիրը:

Ղարաբաղյան շարժման ընթացքում Վազգեն Ա կաթողիկոսը ներկայացավ իբրև հեռատես դիվանագետ և քաղաքագետ, իմաստուն հոգևորական: Նա մեծ ճիգեր գործադրեց ղարաբաղյան հակամարտությունը քաղաքակիրթ ձեվով լուծելու համար:

Հայաստանի անկախության հռչակումից հետո հայ առաքելական եկեղեցին վերջիվերջո գտավ իր տեղը: Պետական կառույցները նրան վերադարձրին խորհրդային իշխանության տարիներին բռնագրավված եկեղեցիների և վանքերի մի զգալի մասը: Հայաստանի Հանրապետության խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին օրենքի մեջ գրված է, որ պետությունը չի խոչընդոտում ազգային եկեղեցու մենաշնորհի հանդիսացող հետևյալ առաքելությունների իրագործմանը՝ ունենալ մշտական հոգևոր ներկայացուցիչներ հիվանդանոցներում, զառամյալների և հաշմանդամների տներում, զորամասերում, ազատազրկման վայրերում՝ ներառյալ քննչական մեկուսարանները:

Հայկական բանակում ստեղծվել է զինվորական քահանաների ծառայություն, բացվել են հայորդաց տներ, որոշ դպրոցներում դասավանդվում է կրոնի պատմություն:

Այսօր եկեղեցին և պետությունը գործում են ներդաշնակ ի շահ հայ ժողովրդի:

## ВЗАИМООТНОШЕНИЯ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ И СВЕТСКИХ СТРУКТУР В ИСТОРИЧЕСКОМ АСПЕКТЕ

*С. М. СТЕПАНЯНЦ, кандидат исторических наук*

РЕЗЮМЕ

Армянская апостольская церковь была основана в 301 г., став одним из столпов армянского государства. С самых первых дней своего существования церковь стала одним из крупнейших землевладельцев-феодалов. Этим определялась двойственность ее политики: с одной стороны, она была апологетом идеи централизации государства, с другой, являясь крупным феодалом, выступала против усиления царской власти.

После падения династии Аршакидов и раздела Армении между Персией и Византией (428 г.), церковь взяла на себя и функции светской государственной структуры, последовательно выступая в защиту страны и национальной самости народа как методами дипломатии и вооруженной борьбы, так и культурологическими средствами (создание армянской письменности в 406 г., развитие национальной историографии, архитектуры, живописи, науки). Духовные пастыри Армении вели в средние века переговоры с европейскими светскими и духовными лидерами (в сферу их дипломатических контактов были вовлечены Византийские императоры, императоры Священной Римской империи, короли Польши, венецианские дожи, Российские государи, Римские папы), а также главами восточных государств (арабские халифы, шахи Персии), стремясь не только облегчить участь армянского народа, но и по возможности добиться независимости страны.

В 1920 г. была сделана попытка юридически упорядочить взаимоотношения между церковью и Армянской Республикой, однако проект соглаше-

ния не получил законной силы в результате установления в Армении советской власти.

В советскую эпоху церковь на первых порах не только была лишена всех прав, но и подвергалась жестоким гонениям. Однако после Великой Отечественной войны, в которой она оказала существенную моральную и материальную помощь Красной армии, церковь была частично восстановлена в правах. Это позволило ей развить бурную деятельность по установлению контактов с армянской диаспорой, восстановлению материальных памятников многовековой культуры.

В настоящее время церковь тесно сотрудничает с государством на благо нации.

## THE RELATIONS OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND TEMPORAL STRUCTURES IN THE HISTORICAL ASPECT

*S. M. STEPANIANTS, Candidate of Historical Sciences*

SUMMARY

The Armenian Apostolic church was founded in 301 and became one of the pillars of the Armenian state. From the very first days of its being the church became one of the biggest land and feudal lords. By this fact the duality of its policy was defined: on one hand, it was an apologist of the idea of the state's centralization, on the other hand, being a great feudal lord, it was against the strengthening of the tsar's power.

After the downfall of Arsakid dynasty and the allotment of Armenia between Persia and Byzandium (428) the church undertook the functions of the temporal state structure, successively speaking for the defence of the country and national peculiarity of the people both with the methods of diplomacy and armed struggle, and with cultural means (the creation of the Armenian written language in 406, the development of national historiography, architecture, painting, science). In Middle Ages the spiritual pastors of Armenia were holding negotiations with the European temporal and spiritual leaders (Byzandium emperors, emperors of the Sacred Roman Empire, kings of Poland, Venetian doges, Russian sovereigns, the Popes were involved in the sphere of their diplomatic contacts), and also with the heads of the Eastern states (Arabian caliphs, shahs of Persia). They aspired not only to relieve the lot of the Armenian people, but also to achieve the independence of the country, if possible.

In 1920 an attempt was made to regulate juridically the relations between the church and the Armenian Republic, however the project of the agreement didn't get the legal force as a result of establishing the Soviet power in Armenia.

In the Soviet times the church for the first time was deprived not only of its rights, but also was cruelly persecuted. However, after The Great Patriotic War, in which it gave significant moral and material help to the Red Army, the church was partially restored in its rights. It allowed the church to develop rapid activity on establishing contacts with the Armenian diaspora, on restoring the material monuments of centuries—old culture.

For the time being the church closely collaborates with the state for the nation's welfare.

# Ð²Ú ²è²ø»È²Î²Ü »Î»Ô»òàô ¸»ðÀ Ð²Ú²êî²ÜÆ ²è²æÆÜ Ð²Üð²ä»îàôÂÚ²Ü ²¼¶²ÚÆÜ ´²Ü²ÎÆ Î²¼Ø² ìàðØ²Ü » ì ²Øð²äÜ¸Ø²Ü ¶àðÌàôØ

*Ø. È. Î²ð²ä»îÚ²Ü, å³ïÙ³Ï³Ý ·Ç ïáõÃÛáõÝÝ»ñÇ Ã»ÏÝ³Íáõ*

1918 թ. հայկական պետության վերական·նման հետ սկսեցին կազմավորվել նաև նրա զինված ուժերը, որոնց վիճակված էր ներքին և արտաքին չափականց ծանր պայմաններում պաշտպանել հայ ժողովրդին և պետությունը: 1915 թ. Մեծ եղեռնից մազապուրծ եղած հայ ժողովուրդը, որը կենաց ու մահու պայքար էր մղում իր ·ոյությունը փոքրիկ տարածքում պահպանելու համար, բնականաբար, առաջին հերթին իր ողջ ուժերը պետք է նպատակաուղղեր կանոնավոր բանակ ստեղծելու ·ործին՝ լավ ·իտակցելով, որ իր նվաճումների պաշտպանության և հայոց պետականության ամրապնդման այլ ուղի չկա: Այս ո·ով էին տո·որված թե՛ Հայաստանի առաջին հանրապետության ղեկի մոտ կան·նած քաղաքական ու ռազմական ·ործիչները, թե՛ 1918 թ. մայիսյան հերոսամարտերում մաքառած հայ սպաներն ու զինվորները և թե՛ Երևանում, ինչպես նաև Արարատյան դաշտավայրում, Շիրակում ու Լոռիում կուտակված արևմտահայ ·աղթականությունն ու տեղի բնակչությունը:

Հայկական ազ·ային բանակի ձևավորման ու ամրապնդման, ասել է թե հայրենիքի պաշտպանության ·ործին հանրապետության կառավարությանը առաջին իսկ օրից իր ակտիվ աջակցությունն է բերում Հայ առաքելական եկեղեցին: Հայ հո·ևորականության աջակցությունն ազ·ային բանակին հայրենիքի պաշտպանության ·ործում լավա·ույնս դրսևորվել էր դեռևս 1918 թ. մայիսյան կռիվներում: Այդ հերոսամարտերի օրհասական օրերին հայկական բանակային կորպուսի մարտիկներին ու սպաներին խանդավառելու և ժողովրդին ինքնապաշտպանական կռվի ոտքի հանելու ·ործում մեծ հայրենասիրական նախաձեռնություն հանդես բերեցին հատկապես Ամենայն հայոց կաթողիկոս Գարե·ին Ե Սուրենյանցը, Էջմիածնի հո·ևոր ճեմարանի տեսուչ Գարե·ին եպիսկոպոս Հովսեփյանը (հետա·այում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս), Էրզրումի թեմի առաջնորդ Զավեն եպիսկոպոս Մահտեսի-Բաբայանը, Եզնիկ, Թադևոս, Դանիել վարդապետները և շատ ուրիշներ:

Մայիսի 19-ին թուրքական 36-րդ դիվիզիան ներխուժում է Արարատյան դաշտ և հաջորդ օրը ·րավում Սարդարապատից 10 կմ հեռու ·տնվող Արաքս կայարանը, որով անցնում էր Ալեքսանդրապոլ—Երևան երկաթ·իծը: Այդ ողբեր·ական օրերին հայկական զորքերի Երևանյան զորախմբի հրամանատար ·եներալ Սիլիկյանը Երևանի ապա·ա պարետ Շահխաթունու ուղեկցությամբ այցելում է Էջմիածին՝ Ամենայն հայոց կաթողիկոս Գևոր· Ե-ին, և նրան առաջարկում է անվտան·ության համար տեղափոխվել Սևանա լճի շրջան: Կաթողիկոսի պատասխանը լինում է կտրուկ մերժողական և հույժ արժանապատիվ. «Եթե հայկական ուժերն ի վիճակի չեն պաշտպանելու այս սրբազան վայրը, ապա ես ինքս կանեմ դա, հո· չէ, թե կզոհվեմ հազարամյա Մայր տաճարի շեմին»[1]:

Սարդարապատի ճակատամարտի օրը՝ մայիսի 22-ին, վաղ առավոտյան, Գարե·ին և Զավեն եպիսկոպոսները միասին ·նում են Էջմիածնի մոտ ·տնվող Հայի Զեյվա և Քյորփալու (Արշալույս) ·յուղերը: Այստեղ Գարե·ին եպիսկոպոսը ո·եշունչ խոսքով դիմում է հայոց բա-

[1] *Ս. Աֆանասյան*, Սարդարապատի հաղթանակը. Հայաստան, մայիս, 1918: Ե., 1985, էջ 41:

նակի զինվորներին, բացատրում է թըշնամու անողոքությունը, վտան·ի մեծությունը, օ·նական ուժի և նահանջի ուղիների լիակատար բացակայությունը, հաղթելու կամ հայրենի սրբազան հողի վրա մեռնելու միակ պատվաբեր հնարավորությունը: Այդ օրը Գարե·ին եպիսկոպոսը 5-րդ հայկական ·ունդն օծում է որպես մահապարտների ·ունդ և նրան երդվեցնում կռվի դուրս ·ալ անվախ ու աննահանջ: Երկու հո·ևորականները՝ խաչը ձեռքներին բարձր պահած, անցնում են կորքի ·լուխ և ·նդի հրամանատար ·նդապետ Պավել Բեկ-Փիրումյանի հետ հայ զինվորներին առաջնորդում ի մարտ[2]:

Մայիսի 22-ից 28-ը տեղի ունեցած Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերը փառքով պսակեցին Հայկական կորպուսի զորամասերի հերոսական ջանքերը և ունեցան հիրավի պատմական նշանակություն: Այդ հերոսամարտերի շնորհիվ արևելահայությունը փրկվեց ֆիզիկական բնաջնջման սպառնալիքից և թուրքերին հարկադրեց հաշվի նստելու պետականություն ստեղծելու հայ ժողովրդի կամքի հետ: Թուրքական զորքերի դեմ մըղված մայիսյան այդ կռիվներում աչքի ընկան հատկապես Հայկական կորպուսի 2րդ հրաձ·ային դիվիզիան, նրա հրամանատար ·եներալ Մովսես Սիլիկյանը, զորաջոկատի հրամանատար ·նդապետ Դանիել Բեկ-Փիրումյանը, 5-րդ հրաձ·ային ·ունդը, նրա հրամանատար ·նդապետ Պավել Բեկ-Փիրումյանը, հեծելազորային ·ունդը, որի հրամանատարն էր ·նդապետ Նիկոլայ Ղորղանյանը, Ղարաբաղյան հատուկ զորաջոկատը ·ընդապետ Պավել Մելիք-Շահնազարյանի հրամանատարությամբ և շատ ուրիշներ: Նրանք բոլորն էլ հետա·այում կարևոր դեր կատարեցին Հայաստանի առաջին հանրապետության բանակի կազմավորման ·ործում: «Ինքնուրույն ապրելու իր իրավունքը ռազմի դաշտում ապացուցած հայ զինվորը այժմ պետք է ապացուցի նաև, որ ինքը կարող է ապրել ինքնուրույն կյանքով և, ինչպես ժամապահ, զենքը ձեռքին կկան·նի օրինականության ու կար·ուկանոնի պահպանմանը», ասաց Հայաստանի առաջին հանրապետության զորքերի ·լխավոր հրամանատար նշանակված ·եներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբեկյանը հայկական բանակին ուղղված իր ողջույնի խոսքում: Դիմելով ազգությանը՝ զորավարը նրան կոչ արեց մոտ կան·նելու զինվորներին. «Հմուտ առաջնորդեք հայ զինվորին, և նա չի մերժի,—ասում էր Նազարբեկյանը:—Ես տեսել եմ այդ զինվորին անցած պատերազմի ծանր օրերին. նա համեստ է, դիմացկուն, լուռ և չպահանջող, նա ամենուրեք կ·նա ազգի հետևից՝ կատարելով նրա պահանջները: Թող օրհնի՛ մեզ Տեր Աստված կատարելու այդ դժվարին խնդիրը՝ հանուն վերածնվող Հայաստանի ծաղկման ու հզորության»[3]:

1918—1920 թթ. հայ հո·ևորականությունը իր հայրենասիրական պարտքն էր համարում զորամասեր և ստորաբաժանումներ այցելելը, տեղում իրավիճակին ծանոթանալը, հայ զինվորներին և սպաներին ո·ևորելը, նրանց հույս և հավատ ներշնչելը: Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարության համար Սուրբ Էջմիածնի տպարանում հայկական բանակի համար տպա·րվում էին մի շարք զինվորական կանոնա·րքեր, զենքի և զինամթերքի հետ վարվելու կանոնների մասին ուսումնական ձեռնարկներ և այլն: Հայ առաքելական եկեղեցու նվիրյալները համաժողովըրդական տոնակատարությունների ժամանակ կազմակերպում էին հան·անակություններ, որոնց նպատակը բանակի կարիքները հո·ալու համար օ·նության կազմակերպումն էր: Այդպիսի հան·անակություններ տեղի ունեցան նաև հայկական ·աղթօջախներում, մասնավորապես ԱՄՆ-ում: Այսպես՝ 1920 թ. մայիսի 23-ին Նյու Յորքի նշանավոր

---

[2] Տես Հ. *Թուրշյան*, Սարդարապատի հերոսամարտը: Ե., 1965, էջ 129—130:

[3] ՀՀ պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 204, ց. 1, ·. 129, թ. 1:


Բ Ա Ն Ա Կ Ի Օ Ր
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄԵԾ ԺՈՂՈՎ.
1920 ՄԱՅԻՍ 23
ԿԻՐԱԿԻ, ԿԷՍՕՐԷ ԵՏՔ ԺԱՄԸ ՃԻՇԴ 2ԻՆ
CARNEGIE HALL
57th STREET & 7th AVENUE, NEW YORK, N. Y.
ԱՅՍ ԺՈՂՈՎԻՆ ՊԻՏԻ ՆԱԽԱԳԱՀԷ
Տ. Տ. Խորէն Արքեպիսկոպոս Մուրատպէկեան
(Կաթողիկոսական Պատուիրակ Հայաստանէն նոր Ամերիկա ժամանած)
Պիտի խօսին
ԶՕՐԱՎԱՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
(Միացեալ Պատուիրակութեանց Զին. Առաքելութեան Պետ)
ՏՔԹ. Գ. ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆ
(Հայաստանի Հանրապետութեան Ամերիկայի Դեսպան)
ՔԷՓԹԸՆ ՀԻՊԸՆ
(Ամերիկացի Բարձրաստիճան Զինուորական Հայաստանէն նոր վերադարձած)
ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼԻ
(Գործիչ՝ Հայաստանէն նոր վերադարձած)
ՊԻՏԻ ԵՐԳԵՆ
ՏԻԿ. Զ. ՓԱՆՈՍԵԱՆ ԵՒ ՏԻԿ. Ա. ՊԵՏԻԿԵԱՆ
ՊԻՏԻ ԱՐՏԱՍԱՆԵՆ
Պրն. Շահէն, Օր. Սահակեան եւ Օր. Կիւլպենկեան
ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ
ԱՏՐՊԷՅՃԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ՅԱՅՏԱՐԱՐԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԷՄ
ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԿԻԼԻԿԻԱ ՎՏԱՆԳԻ ՄԷՋ ԵՆ
ՕԳՆԵՆՔ ՔԱՋԱՐԻ ԿՌՈՒՈՂՆԵՐՈՒՆ

«Բանակին համար» թերթի 1920 թ. մայիսի 23-ի համարից

«Կառնե·ի հոլ» հանդիսությունների դահլիճում հրավիրվեց հրապարակային ժողով, որտեղ հավաքվեց մեծ ·ումար: Այդ ժողովին մասնակցում էր Հայաստանի Հանրապետության՝ ·եներալ Հակոբ Բա·րատունու ·լխավորած միացյալ պատվիրակությունը, որի կազմում էին Ամենայն հայոց կաթողիկոսի պատվիրակ սրբազան Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը, Ամերիկայում Հայաստանի Հանրապետության դեսպան դոկտոր Գարե·ին Բաստրմաջյանը և ազ·ային ·ործիչ Շահան Նաթալին[4]: Նյու Յորքի հան·անակության հանձնախմբի կողմից հրատարակվում էր «Բանակին համար» թերթը, որտեղ տեղեկություններ էին հաղորդվում Հայաստանի ռազմաքաղաքական կյանքից և հայկական բանակին նյութական օ·նություն ցուցաբերելու կոչեր էին հրապարակվում: Ամերիկահայությանն ուղղված այդ կոչերից մեկում ասված էր. «Օ·նենք մեր քաջարի բանակին, և թող ազատության երկրորդ տարեդարձին թնդա մեր բանակի հաղթական ուռան մեր բարձրաբերձ սարերում, և թող թշնամին սարսափած դառնա ընտանի և քաղաքակիրթ: Մեր նյութական աջակցության հետ

[4] Տես նույն տեղում, ֆ. 290, ց. 1, ·. 28, թթ. 1—2:

միասին նաև թող հնչե մեր ·աղութի սրտա·ին կոչը.

Կեցցե՛ Հայկական բանակը...

Կեցցե՛ Ազատ Հայաստանը...»[5]:

Հարկ է նշել, որ հայկական բանակի յուրաքանչյուր ·ունդ ուներ իր ·նդային քահանան: Գնդային քահանաների մասին 1918 թ. նոյեմբերի 11-ին կազմված հրահան·ի համաձայն հայկական բանակի յուրաքանչյուր ·նդային քահանա պարտավոր էր ունենալ մատյան, որի մեջ պետք է ցուցակա·րեր ·նդի զինվորներին՝ նշելով նրանց անունները, տեղը, ով լինելը, ընտանիքի անդամների թիվը և բնակության վայրը: Գնդի անձնակազմի բոլոր անդամները համարվում էին զինվորական քահանայի ծխականներ, ուստի քահանան պարտավոր էր ունենալ չափաբերական մատյան՝ արձանա·րելու կատարված պսակները, ծնունդներն ու թաղումները: Գրնդային քահանան ամեն օր որոշակի ժամերի պարտավոր էր լինել իր ·նդի զինվորների հետ, իսկ եթե ·ունդը մաս-մաս տեղակայված էր տարբեր վայրերում, պարտավոր էր շարունակ այցելել նրանց: Գնդային քահանան պարտավոր էր իր ·նդի հրամանատարի որոշած հատուկ ժամերին դասախոսել զինվորների համար Սուրբ ·րքից և ազ·ային եկեղեցու պատմությունից՝ նպատակ ունենալով վառ պահելու նրանց ազ·ային պարտքի ·իտակցությունը, սերը դեպի ազ·ը և ազ·ային սրբությունները: Գնդային քահանան պարտավոր էր զինվորներին սովորեցնել «Հայր մեր» աղոթքը և եր·ել տալ առավոտյան արթնանալուց հետո, ճաշին և քնելուց առաջ, իսկ կիրակի և տոն օրերին նրանց տանել այն եկեղեցին, որն ինքը հաճախում էր: Սուրբ պատարա· մատուցելը թույլատրվում էր միայն եկեղեցիներում: Գնդային քահանաներն ամեն տեղ՝ թե՛ քաղաքներում և թե՛ ·յուղերում, որտեղ տեղակայվում էր ·ունդը, ինչպես նաև ճանապարհին, երբ զորքը շարժվում էր, և թե՛ պատերազմի դաշտում, պարտավոր էին լինել հո·ևորականի սքեմով և առանց զենքի: Յուրաքանչյուր ամիս ·նդային քահանան պարտավոր էր թեմական առաջնորդարան ·րավոր զեկուցում ներկայացնել իր ·ործունեության մասին[6]:

Հայկական բանակում հանդիսավորությամբ նշվում էին քրիստոնեական տոներն ըստ բանակի զինվորական ըշտաբի պետ ·եներալ Դոլուխանյանի կողմից հաստատված ցուցակի: Այդ տոներից էին Թար·մանչաց, Հայտնության, Սբ. Գևոր·ի, Սբ. Թադևոսի, Սբ. Բարդուղիմեոսի տոները, Սբ. Աննայի Հղիության օրը և այլն[7]:

Հայաստանի առաջին հանրապետության զինված ուժերը Հայաստանի կառավարության և Հայ առաքելական եկեղեցու անմիջական աջակցության շնորհիվ մինչև 1920 թ. հայ-թուրքական պատերազմը կարողացան պատվով կատարել պետության և ժողովրդի պաշտպանության իրենց վրա դրված ·ործը: Արտաքին և ներքին թշնամիների դեմ կռիվներում նրանց բազմիցս հաջողվեց ոչ միայն կասեցնել թշնամու հարձակումները, այլև շատ մարտերում նրան պարտության մատնել:

Չնայած այս հաջողություններին՝ ներքին ու արտաքին կռիվներից թուլացած հայկական բանակը, չստանալով ոչ մի օ·նություն մեծ տերություններից, դժբախտաբար, պարտություն կրեց 1920 թ. հայ-թուրքական պատերազմում: Ռուսական բանակում կոփված սպայական կազմը, որի ճնշող մասը մասնակցել էր Արևմտյան Հայաստանի ազատա·րմանը, հնարավորություն չունեցավ լրիվ դրսևորելու իր ունակությունները: Սակայն ստեղծվեց սպայական առողջ միջուկ, որը հետա·այում իրեն փայլուն դրսևորեց Լոռու ազատա·րման մարտերում և Հայրենական մեծ պատերազմի տարիներին:

[5] «Բանակին համար», Նյու-Յորք, 1920 թ., մայիսի 23:

[6] Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, ·. 513, թ. 18:

[7] Տես նույն տեղում, ֆ. 204, ց. 1, ·. 166, թ. 65:

## РОЛЬ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ФОРМИРОВАНИИ И УКРЕПЛЕНИИ НАЦИОНАЛЬНОЙ АРМИИ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

*М. Л. КАРАПЕТЯН, кандидат исторических наук*

РЕЗЮМЕ

В 1918 г. в Армении параллельно с восстановлением государственности начался процесс формирования вооруженных сил республики. С первых дней в этот процесс включилась и армянская церковь, имевшая богатый опыт сотрудничества с армией в области защиты Родины. Представители церкви особо отличились во время судьбоносных для армянского народа майских сражений 1918 г. Духовенство не только проповедовало идею защиты родины, но и приняло непосредственное участие в боевых действиях.

В период первой Республики Армения Армянская апостольская церковь не только организовывала сбор пожертвований в пользу армии среди зарубежных армян, но через созданный в ноябре 1918 г. институт армейских капелланов всемерно способствовала укреплению морального духа военнослужащих, их воспитанию в лучших традициях армянского воинства. И армия с честью выполняла поставленные перед ней задачи по защите государства.

## THE ROLE OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH IN THE FORMATION AND STRENGTHENING OF THE NATIONAL ARMY OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA

*M. L. KARAPETIAN, Candidate of Historical Sciences*

SUMMARY

In 1918 in Armenia together with the restoration of the State system the process of the formation of the Republic's Armed Forces began. Since the first days the Armenian church was involved in that process as well, and it had a rich experience of collaboration with the army in the sphere of the Motherland's defence. The representatives of the church distinguished themselves especially during the May's battles of 1918, that were decisive for the Armenian people. The clergy not only preached the idea of the Motherland's defence, but also took a direct part in the combat activities.

At the period of the first Republic of Armenia the Armenian Apostolic church not only organized the collection of the donations for the benefit of the army among the foreign Armenians, but through the established in November of 1918 institute of the army's chaplains, created, assisted to the strengthening of the moral spirit of the servicemen, to their education in the best traditions of the Armenian army in every way possible. And the army was fulfiling its tasks on the state's defence with honour.

# Ð²Ú ²è²øºÈ²Î²Ü ºÎºÔºòàô ú¶ÜàôÂÚàôÜÀ Î²ðØÆð ´²Ü²ÎÆÜ Ð²ÚðºÜ²Î²Ü Øº Ì ä²îºð²¼ØàôØ

*Î. ². Ð²ðàôÂÚàôÜÚ²Ü, å³ïÙ³Ï³Ý ·Çï áõÃÛáõÝÝ»ñÇ ¹áÏ ïáñ,*
*². ê. î ºðâ²ÜÚ²Ü*

Հայրենական մեծ պատերազմում տարած պատմական հաղթանակում իր արժանի ավանդն է ներդրել նաև հայ ժողովուրդը, որի ավելի քան 600000 զավակներ մարտնչել են ռազմաճակատում, պարտիզանական շարժման շարքերում, իսկ նրանցից ավելի քան 200000-ն իրենց երիտասարդ կյանքն են զոհել առաջադեմ մարդկության ոխերիմ թշնամու՝ ֆաշիզմի ջախջախման համար մղված մարտերում: Գերմանական զավթիչների դեմ տարած հաղթանակի ·ործում իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև Հայաստանի թիկունքի աշխատավորները, որոնք հանրապետությունը վերածել էին իսկական ռազմական ճամբարի, Կարմիր բանակի մարտական զինանոցի. «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով ամեն օր տասնյակ ·նացքներով ռազմաճակատ էին ուղարկվում զենք, զինամթերք, հանդերձանք, սննունդ, մարդկային համալրումներ և այլն: Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում իր ծանրակշիռ ավանդը ներդրեց նաև սփյուռքահայությունը, որը ոչ միայն բարոյական, այլև նյութական վ·ալի օ·նություն ցույց տվեց մայր հայրենիքին. սփյուռքահայերից ավելի քան 50000 հո·ի մարտնչեցին դաշնակիցների բանակների շարքերում, աչքի ընկան իրենց հերոսությամբ[1]:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Կարմիր բանակին վ·ալի օ·նություն ցույց տվեց նաև Հայ առաքելական եկեղեցին: 1941 թ. հուլիսի 5-ին հայոց եկեղեցու Գերա·ույն հո·ևոր խորհուրդը կոչով դիմեց հայ ժողովրդին՝ պաշտպան կան·նել հայրենիքին և օ·նել դիմակայելու թշնամուն: «Ս. Էջմիածինը հորդոր է կարդում նաև արտասահմանի հայության ըստ ամենայնի օժանդակել Հայրենիքի մեծ և արդար ·ործին,—նշված էր կոչում:—Առաջադրում ենք բոլոր թեմական իշխանությանց ամենուրեք Հայ եկեղեցիներում տնօրինել ու պատարա· մատուցանել. հետ Պատարա·ի մաղթանք կատարել քաջամարտիկ Կարմիր բանակի հաղթության համար»[2]: Կոչի տակ ստորա·րել էին հայոց եկեղեցու Գերա·ույն հո·ևոր խորհրդի նախա·ահ, Ամենայն հայոց հայրապետի (կաթողիկոսի) տեղապահ Գևոր· արքեպիսկոպոս Չորեքչյանը, Արսեն արքեպիսկոպոս Ղլտչյանը և ուրիշներ: 1941 թ. հուլիսի 30-ին հայ ժողովրդին ուղղված իր երկրորդ կոչում հայոց եկեղեցու Գերա·ույն հո·ևոր խորհուրդը նշում էր. «Հայը, բացի Խորհրդային Հայաստանից՝ չունի այլ հայրենիք: Հայը՝ Հայաստանից դուրս՝ չունի հաստատուն կռվան, բացի Հայ եկեղեցին և նրան ·լխավորող Ամենայն հայոց հայրապետությունը Ս. Էջմիածնի հայրապետական աթոռով... Աջակցել Խորհրդային Միությանը նշանակում է աջակցել հայրենիքին: Խորհրդային Միության հաղթանակը հաղթանակն է նաև հայ ժողովրդի: Ամեն հայ մարդ, որ նախանձախնդիր է իր հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի բար·ա-

[1] Այս մասին ավելի հան·ամանորեն տես *Կ. Ա. Հարությունյան, Հ. Հ. Մանուկյան*, Հայ ժողովրդի ավանդը Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում (1941—1945 թթ.): Ե., 2001, էջ 119, 126:

[2] Տես Հայաստանի Հանրապետության պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 409, ց. 1, ·. 270, թ. 1:

վաճման, նա կաջակցի, անշուշտ, և կըպաշտպանե Խորհրդային Միությանը»[3]: Արդեն պատերազմի առաջին վեց ամիսների ընթացքում հայ եկեղեցին զ·ալի նյութական օ·նություն ցույց տվեց Կարմիր բանակին՝ պաշտպանության ֆոնդ մուծելով դրամական զ·ալի միջոցներ, ռազմաճակատ ուղարկելով տաք հա·ուստներ և պանական նվերներ[4]: 1942 թ. հունվարի 7-ի տվյալներով պաշտպանության ֆոնդ էր մուծվել ընդամենը 13480000 ռուբլի, որի մեջ իր մասնաբաժինն ուներ նաև հայ եկեղեցին[5]: 1942 թ. վերջերին ինչպես ամբողջ Խորհրդային Միությունում, այնպես էլ Հայաստանում համաժողովրդական շարժում սկսվեց տանկային շարասյուների, ինքնաթիռների էսկադրիլիաների, սրահա·նայքների, ավտոշարասյունների կառուցման համար դրամական հան·անակություններ կազմակերպելու ուղղությամբ: Այսպես, օրինակ, ռուս ուղղափառ եկեղեցին 1942 թ. դեկտեմբերի դրությամբ հան·անակություն էր սկսել Դիմիտրի Դոնսկոյի անվան տանկային շարասյուն կառուցելու նպատակով: Կարճ ժամանակամիջոցում Չելյաբինսկ քաղաքի տանկաշինական ·րծարանում պատրաստվեց «Տ-34» մակնիշի 40 տանկ, որոնց աշտարակների վրա ·րված էր «Դիմիտրի Դոնսկոյ»: 1943 թ. հունվար—մարտ ամիսներին «Դիմիտրի Դոնսկոյ» տանկային շարասյունը 38-րդ և 516-րդ առանձին տանկային ·նդերի կազմում ակտիվորեն մասնակցեց Վելիկիե Լուկի, Ռժև, Վյազմա քաղաքների և տասնյակ ավանների ազատա·րման մարտերին[6]:

Ռուսական ուղղափառ եկեղեցու օրինակով Հայ առաքելական եկեղեցին ևս ձեռնամուխ եղավ տանկային շարասյուն կառուցելու նպատակով դրամական հան·անակություն կազմակերպելու ·րծին: Կաթողիկոսի տեղապահ Գևոր· արքեպիսկոպոս Չորեքչյանը և Էջմիածնի կաթողիկոսարանը որոշեցին հավատացյալ հայերի նվիրատվությունների հաշվին կառուցել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն և այն հանձնել Կարմիր բանակին: Այդ որոշման մասին տեղյակ պահվեց Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղար Գրի·որ Հարությունյանը, որի խորհրդով կաթողիկոսի տեղապահը 1943 թ. հունվարի 20-ին հեռա·իր ուղարկեց Ի. Վ. Ստալինին, որում ասված էր. «Էջմիածնի կաթողիկոսարանը «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն կառուցելու ֆոնդին հատկացնում է ադամանդներով զարդարված մի թանկարժեք պնակ և այլ թանկարժեք իրեր՝ պլատինից և ադամանդներից՝ ավելի քան 850000 ռուբլի արժողությամբ, 1000 ֆունտ ստեռլին· և 50000 ռուբլի: Խնդրում եմ Ձեր կար·ադրությունը ԽՍՀՄ Պետբանկում հատուկ հաշիվ բացելու մասին: Միաժամանակ հատուկ կոնդակով դիմում եմ աշխարհիս բոլոր հավատացյալ հայերին, որ իրենց խնայողություններով մասնակցեն «Սասունցի Դավիթ» անունը կրող տանկային շարասյան կառուցմանը»[7]:

Ի. Վ. Ստալինը, որը ժամանակին հավանություն էր տվել Ռուսական ուղղափառ եկեղեցու համանման նախաձեռնությանը, Ամենայն հայոց կաթողիկոսի տեղապահին ուղարկած պատասխան հեռա·րում նշում է. «Խնդրում եմ իմ ողջույնը և Կարմիր բանակի շնորհակալությունը հայտնել հավատացյալ հայերին ու Էջմիածնի կաթողիկոսարանի հո·ևորականությանը, որ միջոցներ է մուծել «Սասունցի Դավիթ» անունը կրող տանկային շարասյուն կառուցելու համար: ԽՍՀՄ Պետբանկում հատուկ հաշիվ բանալու համար ցուցում է տրված: Ի. Ստալին»[8]:

Դրանից հետո՝ 1943 թվականի փետրվարի 2-ին, Գևոր· արքեպիսկոպոս

[3] «Էջմիածին», 1944, հմ. 1, էջ 5:

[4] Տես «Սովետական Հայաստան», 1941 թ. դեկտեմբերի 9:

[5] Տես «Սովետական Հայաստան», 1942 թ. հունվարի 7:

[6] Տես Центральный архив МО РФ (այսուհետև՝ ЦАМО РФ), ф. 364-го гвардейского танкового полка, оп. 104301, д. 1, л. 13; *О. Ю. Васильева.* Русская православная церковь в политике Советского государства в 1943—1948 гг. М., 1999, сс. 69—79.

[7] "Коммунист", 26 января 1943 г.

[8] Նույն տեղում:

Չորեքչյանը դիմեց հայ հավատացյալ ժողովրդին՝ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն կառուցելու համար նվիրատվություններ կատարելու հատուկ կոչով. «Մեկ ու կես տարի է, որ ·երմանական վորաբանակները ներխուժել են մեր տարածքը՝ միութենական ժողովուրդներին ստրկացնելու և նույս երկիրն իրենց նպատակներին շահա·ործելու համար: Մեկ ու կես տարի է, որ ռուս ժողովուրդն էլ, միութենական մյուս ազ·երի հետ, ամեն կոհաբերություն հանձն առնելով, համառ դիմադրություն է ցույց տալիս՝ պաշտպանելու համար իր պատիվը, իր Հայրենիքն ու իր ազատությունը: Պարծանքով պիտի շեշտեմ, որ հայ ժողովուրդն էլ, հավատարիմ իր անցյալ պայքարող ո·ուն, իր բոլոր հո·վով նվիրվեց հայրենական ահավոր պատերազմին, քաջաբար և անձնվիրաբար կռվեց նացիստների աշխարհակալության և բռնակալության դեմ, պատերազմի ընթացքում բազմաթիվ հերոսներ տվեց հանուն մեծ Միության պատվին ու հաղթանակին, հանուն ընդհանուր Հայրենիքի ազատության և անկախության, հանուն մարդկության լավա·ույն ապա·այի: Շատ օրեր ապրեց մեր Հայրենիքը, ծանր դառնություններ ճաշակեց մեր ժողովուրդը, բայց այդ բոլորը տարավ համբերությամբ, դժվարությունների դեմ մաքառելով, իր բոլոր ուժերը լարելով և տրամադրելով Հայրենիքի ազատության ·ործին, հուսալով և հավատալով Հայրենական պատերազմի հաղթական վախճանին: Եվ չսխալվեց: Այսօր բախտի անիվը դարձել է դեպի մեզ. ·երմանական վորքերի ռազմաճակատները ամենուրեք ճեղքվել են կարևոր ուղղություններով, և նախաձեռնությունը անցել է Կարմիր բանակի ձեռքը[9]: Ամբողջ երկիրը, հայրենասիրական ո·ևորությամբ լցված, ջերմա·ին ողջունում է Հայրենիքի պաշտպանության վերին ղեկավարությանն ու հերոս մարտիկներին: Սակայն մեր առաջ դեռ դժվարին պայքար կա, որ պահանջում է մեկնից մեծ վոհաբերություն՝ և՛ մարդու, և՛ դրամի: Մենք մեծ կարիք ունենք տանկերի և ինքնաթիռների, և ամբողջ երկիրը զբաղված է այսօր ճակատին զենքեր մատակարարելու հո·սով: Խորհրդային Միության բոլոր ժողովուրդները, հայրենասիրական մեծ ո·ևորությամբ տո·որված, և՛ թիկունքում, և՛ ճակատում, խոշոր թափով ու լարված, անձնվիրաբար աշխատում են և կռվում Հայրենական պատերազմի հաղթական վախճանն արագացնելու համար: Խորհրդային Միության կրոնական համայնքների ներկայացուցիչները՝ և՛ քրիստոնյա, և՛ ոչ քրիստոնյա, իրենց հոտով առատ նվիրաբերությամբ նպաստում են թիկունքի կոփման և ճակատի հաջողության: Էջմիածինն էլ, տեսնելով հայ ժողովրդի ո·ևորությունը և անձնվեր աշխատանքն ու պայքարը հանուն Հայրենիքի ազատության, իբրև իր ժողովրդի կամքի արտահայտություն, իրավունք համարեց առատ նվիրատվությամբ աջակցել Հայրենական պատերազմի հաջողության և պատասխանատու մեծ դեր է ստանձնել՝ խնդրելով բանալ պետական բանկում հատուկ հաշիվ ի նպաստ պատերազմի:



Գևորգ Զ կաթողիկոս

[9] Հիշեցնենք, որ Գևոր· արքեպիսկոպոս Չորեքչյանի կոչը հրապարակվել է 1943 թ. փետրվարի 2-ին՝ Ստալին·րադյան ճակատամարտի հաղթական ավարտի օրը:

Իմ սիրելի ժողովո՛ւրդ, դո՛ւ, որ պատերազմի սկզբից նվիրված ես Հայրենիքիդ պաշտպանության և ցանկացել ես տեսնել Հայրենական պատերազմի հաղթական վախճանը, դու՛, որ միշտ հետևել ես Ս. Էջմիածնին, դու այսօր էլ անշուշտ




«Սասունցի Դավիթ» շարասյան տանկերից

առատորեն կբերես քո խնայողություններդ՝ մասնակցելով Սասունցի Դավթի անվան տանկային շարասյան կառուցմանը: Առավել ևս Դուք, արտասահմանի հայություն, նամանավանդ ամերիկահայություն, որ ապատ եք մնացել ահեղ պատերազմի արհավիրքներից և Մայր երկրի ձեր հարազատ եղբայրների ապրումներով եք տառապել ու նորա փառած ազատա·րական պատերազմի հաջողության համար մինչև այժմ չեք խնայել ձեր նյութական ու բարոյական աջակցությունը Կարմիր բանակին և Մայր երկրի որբացյալ ընտանիքներին, վստահ եմ, թե այժմ էլ ձեր առատ նվերներով կնպաստեք թշնամու շուտափույթ ջախջախման ու վտարման մեր երկրից»[10]:

Ամենայն հայոց կաթողիկոսի տեղապահի կոչը մեծ խանդավառություն առաջ բերեց աշխարհի բոլոր մասերում ապրող հայության շրջանում: 1943 թ. ընթացքում «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան հաշվին ԱՄՆ-ում բնակվող հայերը փոխանցեցին 105600 դոլար (այդ թվում Ֆրեզնոյի հայերը՝ 10000 դոլար), Թավրիզի հայերը՝ 120000 ռիալ, Սպահանի հայերը՝ 30000 թուման, Բեյրութի հայերը՝ 100 ֆունտ ստեռլին·, Կիպրոսի հայերը՝ 3000 ֆունտ ստեռլին·, Կահիրեի հայերը՝ 10000 ֆունտ ստեռլին·, Հարավային Ամերիկայի հայերը՝ 5800 դոլար և այլն[11]: Բացի այդ, ամերիկահայերը Կարմիր բանակի համար հավաքեցին 87000 դոլարի դեղորայք և 50000 դոլար այլ կարիքների համար, որոնք Ռուսաստանին օ·նության ամերիկյան կոմիտեի միջոցով ուղարկվեցին Մոսկվա[12]: «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան համար միջոցների հավաքման ·ործում կարևոր դեր կատարեց պատմական ·իտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Աբրահամյանը, որն Ամենայն հայոց կաթողիկոսի տեղապահի հատուկ հանձնարարականով մեկնեց Մերձավոր Արևելքի հայաշատ երկրներ և նպաստեց հան·անակության հաջողությանը: Ամերիկայում «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան համար միջոցներ հավաքելու ·ործն իրականացնում էր հատուկ կոմիտեն, որի մեջ մտնում էին բանաստեղծ Կարապետ Սիտալը, պրոֆեսորներ Հարությունյանը, Դադուրյանը, Կարիկյանը և ուրիշներ: Նրանց ան·նահատելի օ·նություն ցույց տվեց Ամերիկայի հայ թեմի առաջնորդ Գարե·ին արքեպիսկոպոս Հովսեփյանը[13]:

1943 թ. սեպտեմբերի 15-ին Գևոր· արքեպիսկոպոս Չորեքչյանը նամակ է ուղարկում ԽՍՀՄ տանկաշինության ժողկոմին՝ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան համար ժողովված դրամա·լխի վերաբերյալ. «Հայոց եկեղեցու Գերա·ույն Հո·ևոր խորհրդի որոշման համաձայն Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսարանին առընթեր սկսվել և շարունակվում է սփյուռքահայերի և տեղի հայության շրջանում միջոցների հավաքումը՝ Սասունցի Դավթի անվան տանկային շարասյան ստեղծման հա-

[10] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 409, ց. 1, ·. 281, թթ. 1—3, նաև՝ «Էջմիածին», 1944, հմ. 1, էջ 9—10:

[11] Տես «Էջմիածին», 1944, հմ. 2—3, էջ 11—13:

[12] Տես նույն տեղում, էջ 11:

[13] Տես «Էջմիածին», 1944, հմ. 1, էջ 10:

մար: ԽՍՀՄ Պետբանկի Երևանյան բաժանմունքում, մեր ընթացիկ հաշվին առկա են հետևյալ թանկարժեք իրերն ու դրամական միջոցները՝ հիշյալ նպատակին ծառայեցնելու համար. 1. ոսկյա մեծ պնակ, պարդարուն ադամանդներով և երկու ադամանդակուռ խաչ՝ 800000 ռուբլի ընդհանուր արժողությամբ, 2. հազար (1000) ան·լիական ֆունտ ստեռլին·, 3. քառասուն հազար (40000) դոլար, 4. հարյուր քսան հազար (120000) ռիալ, 5. յոթանասունհին· հազար (75000) խորհրդային ռուբլի: Հայտնելով սույնի մասին, խնդրում եմ նշված իրերն ու ·ումարները ստանալ ԽՍՀՄ Պետբանկի Երևանյան մասնաճյուղից և ներդնել Սասունցի Դավթի անվան տանկային շարասյան պատրաստման ·ործում: «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան պատրաստումն ավարտելուց հետո, կոբամասին հանձնելու ժամանակ, կխընդրեի չմերժել և ինձ տեղյակ պահել այդ մասին»[14]:

1943 թ. հոկտեմբերի 27-ին ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմատից ստացվում է տանկային վորքերի ·եներալ-լեյտենանտ Բիրյուկովի հեռա·իրը Գևոր· Չորեքչյանին. «Հայտնում ենք, որ Ձեր հան·անակած միջոցներով կառուցված է «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը: Այն նախատեսված է հանձնել N պինվորական մասին այս տարվա վերջին»[15]:

1944 թ. փետրվարի 29-ին հավատացյալ հայերի հան·անակած ·ումարներով կառուցված «Սասունցի Դավիթ» տանկային առաջին շարասյունը, որը բաղկացած էր «Տ-34» 21 տանկից, հանդիսավոր պայմաններում հանձնվեց փոխ·նդապետ Վոյնովսկու 119-րդ առանձին տանկային ·նդին: Բոլոր տանկերի աշտարակների վրա հայերեն ·լխատառերով ·րված էր «Սասունցի Դավիթ»: Գունդը շուրջ 3 ամիս հաջողությամբ մարտնչեց 2-րդ ՈՒկրաինական ռազմաճակատում: Գնդի հրամանատարի վկայությամբ «հայ ժողովրդի առասպելական հերոս Սասունցի Դավթի անվան տանկերը ·արնանային ուղեխափանքի դըժվարին պայմաններում 10 օրվա ընթացքում մարտերով անցել են մոտ 200 կմ՝ ազատա·րելով հազարավոր սովետական մարդկանց... 10 օրվա ընթացքում «Սասունցի Դավիթ» տանկերը ոչնչացրել են հակառակորդի 16 տանկ և ինքնա·ընաց հրանոթ, 60 ·նդացիր, 210 ավտոմեքենա՝ վորքերով և բեռներով, ոչնչացրել են ·երմանական ավելի քան 2700 պինվոր ու սպա»[16]: 1944 թ. մայիսի 26-ին 119-րդ առանձին տանկային ·ունդը տեղափոխվեց 1-ին Մերձբալթյան ռազմաճակատ, որի հրամանատարն էր բանակի ·եներալ Հովհաննես Բաղրամյանը: Գունդը այստեղ համալրվեց Հայ առաքելական եկեղեցու նոր հան·անակությամբ կառուցված «Սասունցի Դավիթ» տանկային երկրորդ շարասյան «Տ-34» մակնիշի 22 տանկերով: Տանկերից մի քանիսը սարքավորված էին ականավերծման համար: Կարմիր բանակի զրահատանկային և մեքենայացված վորքերի հրամանատար տանկային վորքերի մարշալ Յ. Ֆեդորենկոյի կողմից Գևոր· արքեպիսկոպոս Չորեքչյանին ուղարկված հեռա·րից պարզվում է, որ «Սասունցի Դավիթ» տանկային նոր շարասյան մեքենաները դարձյալ համալրել են փոխ·նդապետ Վոյնովսկու 119-րդ առանձին տանկային ·ունդը[17]: Տանկային նոր շարասյան կառուցման առթիվ Ի. Վ. Ստալինը 1944 թ. հունիսի 7-ին հեռա·րում է Ամենայն հայոց կաթողիկոսի տեղապահին. «Խնդրում եմ հաղորդել իմ ողջույնը և Կարմիր բանակի շնորհակալությունը արտասահմանի հավատացյալ հայերին, որոնք դրամական միջոցներ են ներմուծել Սասունցի Դավթի անվան տանկային երկրորդ շարասյան կառուցման համար»[18]:

1944 թ. հունիսի 23-ից մինչև օ·ոստոսի 29-ը «Սասունցի Դավիթ» տանկա-

[14] «Վավերա·իր «Հայ եկեղեցու պատմություն»», ·իրք Ձ: Ե., 1999, էջ 189:

[15] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 409, ց. 1, ·. 1726, թ. 3:

[16] «Էջմիածին», 1944, հմ. 4, էջ 13—14, «Коммунист», 31 марта 1944 г.

[17] Տես «Էջմիածին», 1944, հմ. 6, էջ 11:

[18] «Коммунист», 28 июня 1944 г.

յին շարասյունը 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի 6-րդ գվարդիական բանակի կազմում ակտիվորեն մասնակցեց Բելոռուսական մարտական օպերացիային և իր արժանի ավանդը ներդրեց Բելոռուսիայի, հատկապես հինավուրց Պոլոցկ քաղաքի ազատագրման գործում: Միայն Արևմտյան Դվինան գետանցելու և բուն Պոլոցկի համար մղված եռօրյա մարտերում «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան տանկերն իրենց թրթուրների տակ ճմլեցին ու պայթեցրին թշնամու 70 հակատանկային ական, ոչնչացրին տարբեր տրամաչափերի 19 հրանոթ, 29 գնդացիր, 13 ականանետ, 2 նռնականետ, 14 ԵԱԿԿ (դզոտ), հակառակորդի ավելի քան 450 զինվոր ու սպա: Պոլոցկի ազատագրման ժամանակ աչքի ընկնելու համար 119-րդ առանձին տանկային գունդը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թ. հուլիսի 23-ի հրամանագրով պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[19]:

Բելոռուսական օպերացիայի հաղթական ավարտից հետո «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունն ակտիվորեն մասնակցում է Լիտվայի և Լատվիայի ազատագրմանը և 1945 թ. մայիսի 9-ին Հաղթանակը դիմավորում է Բալթիկ ծովի ափին: Հիշատակության է արժանի այն փաստը, որ ինչպես Բելոռուսիայի, այնպես էլ Մերձբալթիկայի համար մղված մարտերում Հայ առաքելական եկեղեցու նվիրատվություններով կառուցված տանկային շարասյունը սերտորեն համագործակցել է 51-րդ գվարդիական հրաձգային (նախկին Հայկական 76-րդ լեռնահրաձգային) դիվիզիայի կորամասերի հետ[20]: Մերձբալթիկայի համար մղված մարտերում «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան տանկիստները ոչնչացրին հակառակորդի ավելի քան 3000 զինվոր ու սպա, 22 տանկ ու ինքնագնաց հրանոթ, 105 հրանոթ, 72 ականանետ, 188 գնդացիր, 74 ԵԱԿԿ, 16 ավտոմեքենա, 3 պահեստ, պայթեցրին 250 ական, գրավեցին 3 տանկ, 47 հրանոթ ու ականանետ, 30 գնդացիր, գերի վերցրին 120 հիտլերական և այլն[21]:

Հայ առաքելական եկեղեցին պատերազմի տարիներին չսահմանափակվեց միայն «Սասունցի Դավիթ» տանկային 2 շարասյունների համար հանգանակություն կազմակերպելով: Նրա նախաձեռնությամբ իրանահայերը 1944 թ. ամռանը միայն Թեհրանում հավաքեցին 2 միլիոն ռիալ՝ «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյուն կառուցելու նպատակով: Շուտով նվիրատվություններ սկսվեցին Նյու Յորքում, Լոնդոնում, Կահիրեում, Բեյրութում, Անթիլիասում, Երուսաղեմում, Բաղդադում, Եթովպիայում, Հնդկաստանում, հայաշատ այլ վայրերում: 1944 թ. նոյեմբերին կենտրոնական ֆոնդում կուտակված միջոցները հասան 3,5 միլիոն ռիալի: Բացի այդ, ի նշան սիրո ու երախտագիտության, իրանահայերը Թեհրանում ԽՍՀՄ դեսպանության միջոցով բանակի գեներալ Բաղրամյանին ուղարկեցին որպես նվեր մի թանկարժեք սուր[22]: Միաժամանակ Հայ առաքելական եկեղեցու հանգանակությամբ 1944 թ. վերջերին կառուցվեց գեներալ Բաղրամյանի անվան գրոհային ինքնաթիռների մի ավիաէսկադրիլիա, որը մարտի մեջ մտավ 1945 թ. գարնան սկզբներին[23]:

Բացի վերոհիշյալ տանկային շարասյուններից և ավիաէսկադրիլիայից, Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայ ժողովրդի հանգանակած գումարներով կառուցվեցին և Կարմիր բանակին հանձնվեցին՝ «Սովետական Հայաստան», «Զանգեզուրի լեռնագործ», «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ», «Հայաստանի կոմերիտական», «Հայաստանի պիոներիա», «Հայաստանի կոլտնտեսական», «Սովետական ուսուցիչ», «Անդրկովկասի երկաթու-

[19] Տես ЦАМО РФ, ф. 119-го гвардейского танкового полка, оп. 535808, д. 1, л. 9—10.

[20] Տես *Վ. Ա. Հարությունյան*, Հայ ժողովրդի մասնակցությունը երկրորդ համաշխարհային պատերազմին (1939—1945 թթ.): Ե., 2001, էջ 27:

[21] Տես ЦАМО РФ, ф. 119-го гвардейского танкового полка, оп. 535808, д. 1, л. 9—10.

[22] Տես «Известия», 29 августа 1944 г.

[23] Տես «Սովետական Հայաստան», 1945 թ. մարտի 23:

դային» (վերջինս՝ Անդրկովկասի 3 հանրապետությունների աշխատավորության համատեղ ուժերով) տանկային շարասյունները, «Սովետական Հայաստան», «Երիտասարդ գվարդիա», «Հայաստանի պիոներիա», «Սովետական արտիստ», «Հայաստանի արհեստակցական կոոպերացիա» ավիաէսկադրիլիաները, «Հայաստանի ճանապարհաշինարար» ավտոշարասյունը, «Սովետական Հայաստան» զրահագնացքը և այլն: Վերոհիշյալ բոլոր շարասյունների կառուցմանն ակտիվ մասնակցություն էր ունեցել նաև Հայաստանյայց առաքելական եկեղեցին՝ Ամենայն հայոց կաթողիկոսի տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի գլխավորությամբ: Խորհրդային կառավարությունն ըստ արժանվույն գնահատեց ազգընտիր տեղապահի ծառայությունները հայրենիքին՝ նրան պարգևատրելով «Կովկասի պաշտպանության համար» մեդալով: Հաշվի առնելով պատերազմի տարիներին Գևորգ Չորեքչյանի կատարած հայրենանվեր գործունեությունը՝ Ի. Վ. Ստալինը 1945 թ. ապրիլի 19-ին Կրեմլում ընդունեց Ամենայն հայոց կաթողիկոսի տեղապահին, զրուցեց հայ եկեղեցու գործերի մասին և բավարարեց 14 կետից բաղկացած նրա դիմումը, որով վգալի նյութական և իրավական արտոնություններ էր տրվում Սբ. Էջմիածնին[24]: Բացի այդ, խորհրդային կառավարությունը թույլատրեց 1945 թ. հունիսի 16—22-ը Սբ. Էջմիածնում հրավիրել Հայաստանյայց առաքելական Սբ. եկեղեցու Ազգային եկեղեցական ժողով, որտեղ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանն ընտրվեց Ամենայն հայոց կաթողիկոս (Գևորգ Զ)[25]:

[24] Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 409, ց. 1, գ. 739, թթ. 17—19:

[25] Տես «Սովետական Հայաստան», 1945 թ. հունիսի 24:

## ПОМОЩЬ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ КРАСНОЙ АРМИИ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ

*К. А. АРУТЮНЯН, доктор исторических наук, А. С. ТЕРЧАНЯН*

РЕЗЮМЕ

В историческую победу над фашизмом свою лепту внес и армянский народ, делегировавший 600000 своих сыновей и дочерей в Красную армию и еще более 50000 человек—в армии союзных стран. Более 200000 из них погибли на полях сражений.

Существенный вклад в победу внесли и трудящиеся Армении, под лозунгом «Все для фронта, все для победы» ежедневно отправлявшие на фронт эшелоны с оружием, боеприпасами, обмундированием, продовольствием. Армянская диаспора также оказала большую моральную и материальную поддержку как Красной армии, так и вооруженным силам союзных держав.

В объединении усилий населения Советской Армении и диаспоры большую роль сыграла Армянская апостольская церковь. Уже 5 июля 1941 г. Верховный Духовный Совет (синод) армянской церкви обратился ко всем армянам как республики, так и зарубежья с воззванием, в котором говорилось о необходимости оказания всемерной поддержки всем борцам за справедливое дело.

Когда в конце 1942 г. в СССР, в том числе и в Советской Армении, развернулось мощное движение по сбору средств для постройки танковых колонн, авиаэскадрилий, бронепоездов, автоколонн, армянская церковь также приступила к сбору пожертвований на постройку танковой колонны, вовлекая в это дело и широкие слои зарубежных армян.

По совету первого секретаря ЦК КП Армении местоблюститель патриаршего престола в Св. Эчмиадзине, Председатель Верховного Духовного Совета армянской церкви архиепископ Геворг Чорекчян (в дальнейшем—Католикос всех армян Геворг VI) обратился к Председателю Комитета Государственной Обороны И. Сталину с телеграммой, в которой сообщал, что в фонд постройки танковой колонны «Давид Сасунский» Эчмиадзинский католикосат выделяет драгоценностей на сумму более 850000 рублей, а также 1000 фунтов стерлингов и более 50000 рублей деньгами, и просил дать распоряжение открыть в Госбанке специальный счет. В ответной телеграмме Сталин от имени руководства страны и Красной армии благодарил армянскую церковь за благие намерения и сообщал, что счет открыт.

В ответ на призыв своего духовного пастыря армяне в США в течение 1943 г. собрали и передали в фонд 105600 долларов (в том числе во Фрезно—10000 долларов), в Тавризе—120000 риалов, в Исфагане—30000 туманов, в Каире—10000 фунтов стерлингов, в Бейруте—100 фунтов, на Кипре—3000 фунтов, в Южной Америке—5800 долларов. Кроме того, армяне США собрали для нужд Красной армии 50000 долларов и еще 87000—на лекарства и медикаменты.

29 февраля 1944 г. первая танковая колонна «Давид Сасунский» в составе 21 танка «Т-34» была передана 119-му гвардейскому танковому полку, которым командовал подполковник Войновский. В течение 10 дней полк, действуя в составе 2-го Украинского фронта, в тяжелых условиях весенней распутицы преодолел более 200 км боевого пути, уничтожив 16 танков и САУ противника, 60 пулеметов, 210 автомашин, более 2700 гитлеровцев.

С 26 мая 1944 г. полк был передан в состав 1-го Прибалтийского фронта, которым командовал генерал армии (в дальнейшем—Маршал Советского Союза, дважды Герой Советского Союза) И. Х. Баграмян. Полк пополнился еще 22 танками «Т-34», также построенными на пожертвования армянской церкви. По указу Президиума Верховного Совета СССР от 23 июля 1944 г. полк был награжден орденом Боевого Красного знамени. В ходе боев танковая колонна «Давид Сасунский» тесно взаимодействовала с 51-ой гвардейской стрелковой (бывшей 76-ой Армянской горнострелковой) дивизией.

Летом 1944 г. начался сбор пожертвований на строительство танковой колонны «Генерал Баграмян», в котором приняли участие армяне из Ирана, Нью-Йорка, Лондона, Каира, Индии, Бейрута и других мест. В ноябре того же года капитал центрального фонда достиг 3,5 млн. риалов, из которых 2 млн. составляли пожертвования армян Тегерана.

В начале 1945 г. в небо поднялась созданная на предоставленные армянской церковью средства авиаэскадрилья «Генерал Баграмян». На пожертвования населения Советской Армении в годы войны были также построены и переданы Красной армии танковые колонны «Советская Армения», «Горняк Зангезура», «Физкультурник Армении», «Комсомолец Армении», «Пионерия Армении», «Колхозник Армении», «Советский учитель», авиаэскадрильи «Советская Армения», «Молодая гвардия», «Пионерия Армении», «Советский артист», «Профессиональная кооперация Армении», автоколонна «Дорожник Армении», бронепоезд «Советская Армения», в строительстве которых самое деятельное участие приняла и Армянская апостольская церковь.

# THE HELP OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH TO THE RED ARMY IN THE GREAT PATRIOTIC WAR

*K. A. HAROUTUNIAN, Doctor of Historical Sciences, A. S. TERCHANIAN*

SUMMARY

The Armenian people also contributed to the historical victory over fascism. They forwarded 600000 of their sons and daughters to the Red Army and more than 50000 people—to the armies of the Union countries. More than 200000 of them perished on battlefields.

Essential contribution to the victory was made also by the working people of Armenia, under the slogan «Everything for the front, everything for the victory» every day they sent to the front echelons with weapon, ammunition, uniform and provision. The Armenian diaspora also rendered great moral and material support both to the Red Army and the Armed Forces of the Union power.

The Armenian apostolic church played a great role in uniting the efforts of the population of the Soviet Armenia and diaspora. Already on the 5$^{th}$ of July 1941 the Supreme Spiritual Council (synod) of the Armenian church turned to all the Armenians both of the republic and of the abroad with the appeal. It was about the necessity of giving every kind of support to all the fighters for justice.

When at the end of 1942 all over the USSR and The Soviet Armenia, there spread widely a powerful movement on collecting funds for building the tank columns, air squadrons, armoured trains, autocades, the Armenian church also began to collect donations for building the tank column, involving wide strata of the foreign Armenians in this business

According to the advice of the first secretary of the Central Committee of Communist Party of Armenia the placekeeper of the patriarch throne in Saint Etchmiadzin, the Chairman of Supreme Spiritual Council of the Armenian church archbishop Gevorg Chorekchian (further—Catholicos of all the Armenians Gevorg VI) turned to the Chairman of the Committee of the State Defence I. Stalin with a telegram in which he informed that Etchmiadzin Catholicos contributed jewels making up more than 850000 roubles to the fund of building the tank column «Sasuntsi David», as well as 1000 pound sterlings and more than 50000 roubles in banknotes and asked to give order to open a special account in the state bank. In the reciprocal telegram Stalin on behalf of the leadership of the country and the Red Army thanked the Armenian church for the good intentions and informed that the account was open.

In reply to the appeal of their spiritual pastor the Armenians in the USA during 1943 collected and contributed to the fund 105600 dollars (also in Fresno—10000 dollars), in Tavriz—120000 rials, in Isfagen—30000 tumans, in Kair—10000 pound sterlings, in Beirut—100 pounds, on Cypros—3000 pounds, in the Southern America —5800 dollars. Besides, the Armenians of the USA saved 50000 dollars for the needs of the Red Army and also 87000 for medicines and medicaments.

On the 29$^{th}$ of 1944 the first tank column «Sasuntsi David» as a part of the 21$^{st}$ tank «T-34» was given to the 119$^{th}$ guard tank regiment, commanded by the lieutenant-colonel Voinovski. Within 10 days the regiment, acting as a part of the 2$^{nd}$ Ukraine front, in hard conditions of the spring slush overcame more than 200 km of military way, having annihilated 16 tanks and self-propelled artillery installations of the enemy, 60 machine guns, 210 motor cars, more than 2700 Hitlerites.

Since 26 of May of 1944 the regiment was given to the first Baltic front commanded by the general of the Army (further-marshal of the Soviet Union, twice hero of the Soviet Union) H. Kh. Bagramian. The regiment was filled with 22 more tanks «T-34», also built with the donations of the Armenian church. According to the edict of the Presidium of the Supreme Council of the USSR from the 23 of July of 1944, the regiment was rewarded with the order of the War Red banner. During the battles the tank column «Sasuntsi David» closely interacted with the 51$^{st}$ guard's infantry (the former 76 Armenian mountain shooting) division.

In summer of 1945 air squadron «General Bagramian» created on the funds given by the Armenian church rose into the sky. On the donations of the population of the Soviet Armenia during war years the tank columns «The Soviet Armenia», «The miner of Zangezur», «The sportsman of Armenia», «The Young Pioneers of Armenia», «The Collective Farmer of Armenia», «The Soviet Armenia», «The Young Guard», «The Young Pioneers of Armenia», «The Soviet Artist», «The Professional Cooperation of Armenia», autocade «The Rode Builder of Armenia», the armoured train «The Soviet Armenia» were built and sent to the Red Army. The Armenian Apostolic church took the most active part in it.

# ²ðò²ÊÆ ÂºØÀ º ì ² ¸ð´ºæ²Ü – Ô²ð²´²Ô Ð²Î²Ø²ðîàôÂÚàôÜÀ

*ä²ð¶º ì ³ñù»åÇëÏáåáë Ø²ðîÆðàêÚ²Ü, ³ëï í³Í³µ³Ý³Ï³Ý ·Çï áõÃÛáõÝÝ»ñÇ Ã»ÏÝ³Íáõ, Ø. ². Ð²ðàôÂÚàôÜÚ²Ü, Ï³åÇï³Ý*

Պատմությունը պահպանել է հայրենիքի պաշտպանության ·ործին ու ապ·ային-ազատա·րական պայքարին Հայ առաքելական եկեղեցու մասնակցության բազմաթիվ օրինակներ: Հնուց ի վեր հայ եկեղեցականը, մի ձեռքում խաչ, մյուսում սուր, ո·եշնչել է հայրենյաց զինվորին: Հայրենասիրության ու անձնվիրության դասեր է տալիս Եղիշեի «Վարդանանց պատմությունը»: Ղևոնդ Երեցի և մյուսների վառ կերպարներով հո·ևորականների բազում սերունդներ են կրթվել ու դաստիարակվել: Դրանք «քաջ զինվորներին մահակից լինելու» (Եղիշե) պատ·ամով իդեալ են դարձել նաև արցախյան պատերազմի մասնակից հո·ևոր այրերի համար: Ո·եշնչման անսպառ աղբյուր էին Զիրավի ճակատամարտում անընդմեջ աղոթած Ներսես Մեծը, Վահան Մամիկոնյանի «աշխատակից ու աջակից» (Լեռ) Հովհան կաթողիկոս Մանդակունին, Գանձասարի եկեղեցին ազատա·րական պայքարի ղեկավար կենտրոնի վերածած Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսը, Դավիթ-Բեկի զինակից Տեր-Ավետիսը, Հայաստանի ազատա·րման ջատա·ովներ Ներսես Աշտարակեցին ու Խրիմյան Հայրիկը, Սարդարապատի հերոսամարտում աչքի ընկած Գարե·ին Հովսեփյանը և ուրիշներ:

Դժվարին պահին պետությանը սատար կան·նելու, թշնամուն երկրից դուրս քշելու ·ործին բարոյապես ու նյութապես օժանդակելու լավա·ույն ավանդույթներ ձևավորվեցին Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմի տարիներին Գևոր· արքեպիսկոպոս Չորեքչյանի եռանդուն ·ործունեության շնորհիվ[1]:

Սկսած 1989 թվականից, երբ Վարա·ա Խաչի տոնին վերաբացվեց Գանձասարի Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, ինչը Արցախի թեմի երկրորդ մկրտության հիմքը դարձավ, հայ հո·ևորականները ·ործուն մասնակցություն ունեցան ապ·ային-ազատա·րական պայքարի նոր փուլին[2]: Քանի որ Ադրբեջանի ա·րեսիային դիմա·րավելու նպատակով ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի (ԻՊՈՒ), ապա և Պաշտպանության բանակի ստեղծումից առաջ Արցախի թեմը հայ զինվորականությանը բարոյահո·եբանական աջակցություն ցույց տալու խնդիր դեռ չուներ, ուստի այդ մասնակցությունը դրսևորվում էր բարե·ործական ու մարդասիրական օ·նության ձևով: Մասնավորապես «Գթություն» բարե·ործական միության հետ համա·ործակցությամբ 18 օր տևողությամբ վարձվեցին մի քանի 20-տոննանոց ուղղաթիռներ, որոնց հասցրած բեռներն ասես երկնային մանանա էին շրջափակման ենթարկված արցախահայության համար: Հիմնադրվեց 600 մահճակալով երկու հոսպիտալ՝ բոլոր հարմարություններով, ամբողջովին հանդերձավորված: Թեմի առաջնորդի անմիջական նախաձեռնությամբ ձեռք բերվեց ճապոնական արտադրության 25 շարժական էլեկտրակայան, որոնք տրամադրվեցին բանակին ու հոսպիտալներին:

1992—1994 թթ. ընթացքում ծանր պաշտպանական ու ազատա·րական մարտեր մղող հայկական զինված ուժերը համազ·ային վերաբերմունքի ու ա-

---

[1] Տես *Ա. Տերչյան*, Հայ եկեղեցու դերը ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում (1941—1945): «Էջմիածին», 2000 թ., մայիս, էջ 90—93:

[2] Այդ մասին ավելի հան·ամանորեն տես «Մարտիկ», Պաշտպանության բանակի պաշտոնաթերթ, 1999, հմ. 39:

ջակցության կարիք էին վ·ում: Ոմանք ֆիզիկապես, մյուսները նյութապես ու բարոյապես մասնակցեցին արցախյան պատերազմին: Պատմական հիշողության թելադրանքով իր մասնակցությունը բերեց նաև Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը՝ դառնալով «Արցախ» ջոկատի (հրամանատար՝ Սամվել Վարդանյան, զոհվել է Շահումյանի շրջանում) կնքահայրը և հովանավորը:

Արցախի թեմից զինվոր է եղել Ռաֆայել սարկավա· Խաչատրյանը, որը, որպես Վլադիմիր Բալայանի ջոկատի նըռնակաձի·, մասնակցել է բազում մարտերի և զոհվել Ծամձորի ազատա·րման ժամանակ: Պատերազմի վերջում սահմանա·ծին զոհվեց Արմեն դպիր Թովմասյանը: Կիչանի մոտ առաջադրանք կատարելիս զոհվեց թեմի վարորդ Գուր·են Արզումանյանը: Գանձասարի պաշտպանության ժամանակ վիրավորվեց եկեղեցու պահակ Բենիկ Հակոբյանը: Ճակատամարտերին մասնակցել են թեմի վարորդ Գրիշա Հակոբյանը, Մահապարտների ·նդի կազմում՝ Տեր Հովհաննես քահանա Հովհաննիսյանը, որը հետա·այում արժանացավ երկրորդ աստիճանի «Մարտական խաչ» շքանշանի, Շահումյանի և «26-ի» դիրքում շատ ակտիվ ու երկար ժամանակ ·ործել է Տեր Գրի·որ քահանա Մարկոսյանը, «26-ի» ամրակետում որպես բուժակ ծառայել է Կարեն սարկավա· Ապրեսյանը, Շահումյանի ու Գանձասարի պաշտպանությանը մասնակցել են Տեր Կորյուն քահանա Կարապետյանը, Սրբազանի վարորդ Կարեն Ղազարյանը, Կրկժանի և Խոջալուի ազատա·րման մարտերին մասնակցել է Տեր Ստեփանոս Հակոբյանը, Ամարասի և Գանձասարի պաշտպանության դիրքերում անընկուն էին հայր Վրթանես Աբրահամյանը, Վիլեն սարկավա· Գրի·որյանը և Տեր Անդրեաս քահանա Թավադյանը:

Բուզլուխ, Մանաշիդ և Էրքեջ ·յուղերի ազատա·րման ժամանակներից (1991 թ. սեպտեմբերի 14—18) սկսած՝ Գանձասարում մկրտվում, օրհնություն էին ստանում բազմաթիվ ազատամարտիկներ և ո·եշնչված մեկնում ռազմաճակատ՝ անպայման հաղթելու վճռականությամբ: Շուշիի ազատա·րման նախօրյակին էլ «26-ի» ամրակետում ազատամարտիկներն օրհնություն ստացան, մի ամբողջ օր վայելեցին հո·նոր այրերի ո·եպնդող ներկայությունը, որից հետո ·րոհի ելան՝ հնազանդեցնելու անհաս



Արցախի թեմի առաջնորդ
Պարգև արքեպիսկոպոսը
Գանձասարում պատարագ մատուցելիս

թվացող բարձունքները... Օրհնանք ստացան նաև ԻՊՈՒ-ի շտաբը և ամբողջ հրամանատարական կազմը[3]:

Ի դեպ, խորհրդանշական է, որ Շուշիի ազատա·րման ռազմական օպերացիան, երկար ձ·ձ·վելուց հետո, սկսվեց հենց մայիսի 7-ին: Բացի նրանից, որ 7-ը Աստծո խորհրդակիր թիվն է, հաջորդ աստվածային խորհուրդն իրականացրին արդեն հայ ազատամարտիկները: Ինչպես Սասունցի Դավիթը՝ Խաչ Պատերազմին, հայ մարտիկները ճակատ ·ընացին խաչ կրելով: Հայտնի է, որ 357 թվականին, Կյուրեղ Երուսաղեմցու օրոք, Երուսաղեմ քաղաքում մայիսի 7-ին երկնքում երևացել է Խաչի նշանը[4]: Հարձակումից առաջ բոլոր զինվորները, ա-

---

[3] Տես *Վ. Բաղրյան*, Ֆենոմեն: Ստեփանակերտ, 1998, էջ 66:

[4] Տես «Ավան·արդ», հատուկ թողարկում, 2001 թ.:

սես նախախնամության կամոք, մոտենում էին հո·նորականներին և խաչ էին խնդրում, որ մարտի մեջ մտնեն այն կրելով: ՈՒմ խաչ չհասավ, ինքը պատրաստեց այն: Խաչի նշաններ դրվեցին նաև տանկերի ու վրահամեքենաների վրա: Թեև հայերիս Խաչի Երևման տոնը շարժական է, բայց և այնպես բուն Խաչի Երևման օրը կորություն հաղորդեց Շուշիի ազատարարների բազկին: Որպես արդյունք՝ «Արցախի ինքնապաշտպանության ուժերի հրամանատարությունն ու սպայակույտը, առաջնորդ Սրբազան հոր օրհնությունն ստացած և առ Աստված հավատով լցված, հաջողության հասան: Քանի որ բոլոր հայ զինվորներն իրենց համազ·եստների թևքերին և ան·ամ զրահամեքենաներն իրենց վրա կրում էին Սբ. Խաչի նշանը, աստվածային զորությունն ակնհայտորեն նրանց հետ էր: Սակավաթիվ զորքը նվազա·ույն զոհերով մեծ հաղթանակ տարավ: Շուշիի աներևակայելի հաղթանակը դարձավ հայոց ռազմական պատմության լավա·ույն էջերից մեկը, ցույց տվեց հայորդիների արիությունն ու հավատը»[5]:

Պատմական նշանակություն ունեցող Շուշի քաղաքի ազատա·րումը արցախահայությանը տվեց ո·ու այնպիսի մի լիցք, առանց որի հնարավոր չէին լինի հետա·ա հաղթանակները: Պատահական չէ, որ Շուշին դարձել է Արցախի հո·նոր կենտրոնը՝ նորո·յալ Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցու շուրջ համախմբելով հավատացյալ ժողովրդին: Շուշին սկսեց վերստանալ իր հայեցի շունչն ու դեմքը: Ներկա ու ·ալիք սերունդները պարտավորված են այն այլևս չկորցնել, պահել անառիկ: Բոլոր առումներով էլ՝ թե՛ պատմական, թե՛ ռազմաքաղաքական, թե՛ տնտեսական և թե՛ մշակութային-հո·նոր, առանց հայոց Շուշիի ապա·ա չկա:

Հո·նոր հոր ներկայությունը մարտադաշտում զ·աստացնող ու ո·եշնչող էր: Պատերազմի դաշտում շատերը հավատքի ·ալու ներքին պահանջ էին զգ·ում, ոմանք խնդրում էին անպայման իրենց մկրտել, որ զոհվելու դեպքում ·ոնե մկրտված լինեն: Մարտադաշտում, երբ զինվորի մշտական ուղեկիցն են ծանր պահերը, ուղղակի ան·նահատելի են դառնում հո·նոր հոր հուսատու ներկայությունն ու ծառայությունը: Ահա թե ինչու, նույնիսկ երբ թշնամին Գանձասարի վանքի պարիսպների տակ էր և թիրախ էր դարձրել մեր հո·նոր սրբավայրը, այդ օրհասական պահին, ան·ամ անդադար հրետակոծությունների ժամանակ, չլռեցին եկեղեցական զան·երը, աստվածառաք աղոթքները, պատարա·ն ու ժամեր·ությունները: Գանձասարում վաշտ առ վաշտ մկրտվելով, հո·նորականների օրհնությունն ստանալով՝ հայ ազատամարտիկները մտնում էին մարտի դաշտ՝ սուրբ մեռոնը ճակատներին, իրենց սրտերում ունենալով անպայման հաղթելու վճռականությունը: «Ահա այդ զորավոր հավատն էր, որ բերեց Մարտակերտի շրջանի մի շարք ·յուղերի ազատա·րմանը՝ ճեղքելով թշնամու մահասփյուռ օղակը, որը տարածվել էր Արցախ աշխարհի վրա: Այս հավատն էր, որ առաջնորդեց հայ ազատամարտիկին դեպի նորանոր փառավոր հաղթանակներ»[6]:

Արցախի ԻՊՈՒ-ի հրամանատարությունը լավ էր հասկանում Գանձասարի հո·նոր և հո·եբանական մեծ նշանակությունը, մանավանդ նահանջի ծանր օրերին: ՈՒստի պատահական չէր, որ ան·ամ վառելանյութի սուր պակասի պայմաններում Ինքնապաշտպանության կոմիտեի նախա·ահ Սերժ Սար·սյանը հրամայեց մի ·րամ իսկ չխնայել Գանձասարում պատարա·ները չընդհատվելու համար: Զ·ալով Գանձասարի տաք շունչը թիկունքին, ունկերում զան·երի ղողանջը՝ հայ զինվորն աննկուն կան·նեց առանց մի քայլ ան·ամ նահանջելու: Հո·նոր այրերը պատվով կատարեցին իրենց պարտքը՝ ո·նորելով, լիցք հաղորդելով մարտնչող զինվորներին:

Գրեթե նույն նշանակությունն ուներ Ամարասը Մարտունու շրջանի հա-

[5] *Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյան,* Երկնային օ·նություն քրիստոնյա զինվորին: Ե., 1995, էջ 5—6:

[6] Նույն տեղում, էջ 19:

մար, թեև այն ենթարկվեց ավելի ծանր փորձությունների, ընդհուպ մինչև ավերածություններ: Դադիվանքի ազատա·րումից անմիջապես հետո Արցախի թեմի սպասավորներն սկսեցին աղոթել նրա հնամենի կամարների տակ, որտեղ հարյուրավոր զինվորներ էին հավաքվել նվիրական դարձած հողակտոր, որտեղ խրամատ ու մարտական հերթապահություն ընդունելն ավելի շատ ուխտա·նացություն էր, նահատակ ընկերոջ նկատմամբ պարտք ու նրա ·ործը շարունակելու պարտավորություն:

Մարտական ·ործողությունները



Արցախում պատերազմի ժամանակ ազատամարտիկների կառուցած մատուռը

օրհնություն ստանալու համար: Այդպես էր նաև 1992 թ. մայիսի 9-ին, երբ ամեն մի զինվոր սպասում էր Շուշիի Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցին մտնելու իր հերթին, և հազիվ թե լիներ ճակատամարտին մասնակցած մեկը, որ այցելած ու մտած չլիներ խորանը: Ի դեպ, Շուշիի ադրբեջանական կայազորի կողմից եկեղեցին վերածվել էր ռեակտիվ հրթիռների զինապահեստի, և այդ մահաբեր բեռից այն ազատելու ·ործին առաջինը ձեռնամուխ եղավ արցախահայության հո·ևոր առաջնորդը:

Պատերազմի վերջում և հետպատերազմյան առաջին երկու տարիներին պաշտպանական բնա·ծերում նահատակ զինվորների մարտընկերները խաչքարեր էին կան·նեցնում՝ առաջին ·իծը վերածելով մի յուրօրինակ սրբավայրի: Դըրանից հետո զինվորը ոչ միայն խրամատ ու բնա·իծ էր պաշտպանում, այլ նաև իր մարտական ընկերոջ թափած արյունով դադարեցվել են, սակայն խաղաղությունը պահպանելու համար հայ զինվորը ·իշեր ու տիվ հսկում է սահմանը, զորքերը մշտապես կատարելա·ործում են իրենց մարտական պատրաստությունն ու մարտունակությունը, իսկ Հայ առաքելական եկեղեցին և նրա Արցախի թեմը պայքարը շարունակում են հո·ևոր ճակատում: Թեմի առաջ այսօր ծառացած են մի շարք հրատապ խնդիրներ:

ա) Զորացնել հավատը ժողովրդի մեջ, բարելավել նրա բարոյական նկարա·իրը, բարձրացնել ո·ին. հայը մարտունակ պիտի լինի ոչ միայն ռազմադաշտում, այլև խաղաղ պայմաններում, կյանքի բոլոր ասպարեզներում:

բ) Հատուկ աշխատանք տանել նաև բանակում. դա մի յուրատեսակ և կարևորա·ույն ծառայություն է:

·) Ժողովրդին զերծ պահել աղանդներից, որոնք սպառնալիք են ոչ միայն ազ·ային մտածելակերպի և մշակույթի

համար, այլև՝ պետականության համար, ճշմարիտ հավատքի բերել նրանց[7]:

դ) Պատրաստել հո·ևոր կադրեր, եկեղեցու արժանի սպասավորներ:

ե) Զբաղվել հրատարակչական ·ործով, ինչը կուժեղայնի քարոզչությունը:

զ) Հզորացնել եկեղեցու սոցիալական ծառայությունը ժողովրդի մեջ, ակտիվ աշխատանք տանել հիվանդանոցներում, մանկապարտեզներում, դպրոցներում և այլուր:

[7] Հայաստանում տարածված աղանդների և պետության նկատմամբ դրանց ունեցած վերաբերմունքի մասին հան·ամանորեն տես *Ս. Մայիլյան*, Ժամանակակից աղանդներն ու հայոց պետականությունը: ««Հայոց եկեղեցի և պետություն» միջազ·ային ·իտաժողովի նյութեր», Ե., 2000:

է) Աստիճանաբար ստեղծել կանական կրոնական կազմակերպություններ, որոնցում ընդ·րկված մարդիկ հաղորդակից լինեն եկեղեցուն և հավատքին:

Այս և հարակից այլ խնդիրների լուծումը թույլ կտա ամրապնդել հայոց պետականությունը, որը հո·ևոր և ազ·ային պարթոնքի երաշխիքն է:

Ռազմի դաշտում ուս ուսի մարտընչած հայ զինվորն ու հո·ևորականը նվաճված հաղթանակը միասնաբար պաշտպանելու և ամրապնդելու պարտավորություն ունեն, որն ավելի է իմաստավորվում 1700-ամյա հոբելյանի խորհրդով:

## АРЦАХСКАЯ ЕПАРХИЯ И КОНФЛИКТ АЗЕРБАЙДЖАН—КАРАБАХ

*Архиепископ ПАРГЕВ МАРТИРОСЯН, кандидат богословских наук,*
*М. А. АРУТЮНЯН, капитан*

РЕЗЮМЕ

Начиная с 1989 г., армянские священнослужители активно включились в национально-освободительную борьбу. Поскольку до создания в целях противостояния азербайджанской агрессии сил самообороны НКР, а затем Армии Обороны перед Арцахской епархией не стояла задача оказания бойцам морально-психологической поддержки, то участие церкви ограничилось лишь оказанием благотворительной и гуманитарной помощи населению республики, оказавшейся в блокаде.

При посредничестве Арцахской епархии и по инициативе ее духовного предводителя собирались крупные денежные суммы в виде пожертвований, на которые приобретались и доставлялись воздушным транспортом необходимые для населения питание, одежда и лекарственные препараты, горючее.

Но начиная с 1992 г., когда вследствие агрессии Азербайджана развернулась оборона НКР, церковь приняла деятельное участие не только в обеспечении армии продовольствием, обмундированием, горючим, но и в оказании бойцам морально-психологической поддержки. О значении церкви в этот период говорит тот факт, что многие бойцы перед решающими боями принимали крещение, дабы в случае смерти принять ее в христианской вере. Многие священнослужители сами с оружием в руках встали на защиту родной земли, принося в жертву светлому будущему народа свою жизнь.

Но и сейчас, после заключения перемирия, когда Армия Обороны НКР несет вахту на рубежах республики, церковь продолжает свою активную деятельность по поддержанию высокого морально-боевого духа воинов, по укреплению в них чувства национального самосознания, патриотизма, приверженности славным традициям армянского народа и его карабахской ветви.

# THE ARTSAKH DIOCESE AND THE CONFLICT AZERBAIJAN—KARABAKH

*Archbishop PARGEV MARTIROSIAN, Candidate of Theological Sciences,*
*M. A. HAROUTUNIAN, Captain*

SUMMARY

Since 1989 the Armenian priests have been actively involved in the national-liberation struggle. Till the creation of the forces of NKR's self-defence and then the Army of Defence having the purpose of opposing to the Azerbaijan aggression, the Artsakh diocese had no task of giving the fighters moral and psychological support, therefore the participation of the church was limited only to giving a charitable and human help to the republic's population, which was in blockade.

Trough the mediation of the Artsakh diocese and on the initiative of its spiritual leader huge sums of money in the form of donations were collected, by means of which the food, clothes and medicinal preparations, fuel necessary for the population were acquired and delivered by the air transport.

But since 1992, when as a result of the aggression of Azerbaijan the defence of NKR spread widely, the church took an active part not only in providing the army with rations, uniform, fuel, but also in giving the fighters moral and psychological support. At that period the church had a great importance, about which witnesses the fact, that many fighters were getting christening before the decisive combats in order, in case of death, to accept it in Christian faith. Many priests with the weapon in their hands stood up for the defence of their native land by themselves, sacrificing their life to the bright future of the people.

Even now, after concluding the peace, when the army of NKR's defence keeps the watch on the borders of the republic, the church continues its active actions in supporting the high moral and fighting spirit of the soldiers, strengthening the feeling of national self-consciousness, patriotism, devotion to the lovely traditions of the Armenian people and their Karabakh branch.

# ØÆæÜ² ¸ ²ðÚ²Ü Ê²â² ¸ ðàÞÜºðÀ Ð²ÚÎ²Î²Ü øðÆêîàÜº²Î²Ü ØÞ²ÎàôÚÂàôØ

*². ². ¸ ²´ ²ÔÚ²Ü*

Հայոց միջնադարյան հերալդիկ առարկաների՝ դրոշների և դրանց պատկերա·րության վրա վճռական ազդեցություն ունեցավ 4-րդ դարի սկզբին Հայաստանում քրիստոնեության ընդունման հան·ամանքը: Որպես այս իրադարձության արդյունք ի հայտ եկան նոր տիպի՝ խաչի նշանով, դրոշներ, որոնց ուսումնասիրությունը հետապնդում է մի քանի խնդիրներ. ինչպես էր խաչադրոշը կապված ժամանակա·րորեն իրեն նախորդած, բայց ·ոյատևող կենդանակերպ դրոշներին, ինչ նշանակություն ուներ այն միջնադարի հայկական մշակույթի համար, մասնավորապես հայերի մղած ազատա·րական և կրոնական պատերազմներում: Խաչադրոշներն ի հայտ են ·ալիս միան·ամայն աշխարհիկ տարբերանշանային ·ործառությամբ, ինչը մասամբ բացատրում է 7-րդ դարից հետո եղած աղբյուրներում կենդանակերպ, կամ կենդանապատկեր, դրոշների մասին ուղղակի հիշատակությունններ չլինելու հան·ամանքը:

Դրոշա·իտության մեջ առաջին խաչադրոշի ծա·ումը կապվում է Բյուզանդիայի կայսր Կոստանդին Մեծի անվան հետ: Ըստ նրա դարձը ներկայացնող պատումի 312 թ. հոկտեմբերի 27-ին Հռոմի մերձակա Միլվիանի կամրջի մոտ տեղի ունեցած ճակատամարտից առաջ Կոստանդինին երևացել է մի տեսիլք Քրիստոսի անվան հունարեն ·րության առաջին երկու տառերի տեսքով՝ *X* («խի») և *P* («ռո»), և տրվել է հաղթանակի խոստում՝ *In hoc vinces* («Սրանով կհաղթես»): Կայսրը, որին ուղղված էր այդ խոսքը, իր վեքսիլիումի (հատուկ դրոշատեսակ) արծվապատկերը փոխարինում է Քրիստոսի անվան սկզբնատառերով, և հետա·այում այն հայտնի է դառնում «Կոստանդնի խաչ» անունով: Կոստանդինն իսկապես հիշյալ ճակատամարտում հաղթել է իր հակառակորդ կայսր Մաքսենտիոսին և 313 թ. ստորա·րված հայտնի Միլանի էդիկտով կայսրության տարածքում հռչակել է Քրիստոսի պաշտամունքի ազատություն[1]:

Դրոշի վրա խաչի կիրառության այս դեպքին՝ Կոստանդին Մեծի տեսիլքի պատմությանը, հայ պատմիչներից առաջինը ծանոթ են եղել Ղազար Փարպեցին և Մովսես Խորենացին, որոնք մանրամասնորեն վերապատմում են այդ իրադարձությունը[2]: Սա վկայում է 5-րդ դարի երկրորդ կեսին հայերի ծանոթությունը հիշյալ նախադեպին, բայց հայկական աղբյուրներում չկա որևէ վկայություն «Կոստանդնի խաչի» փոխառման մասին: Այնինչ 5-րդ դարից ավելի վաղ շրջանի պատմիչ, հայոց դարձի պատմությունը ·րած Ա·աթան·եղոսը և Վարդանանց պատերազմի պատմիչ Եղիշեն վկայում են Հայաստանում խաչանշանի դրոշային կիրառությունը 4—5-րդ դարերում: Հաջորդ դարերի հայ պատմիչները նույնպես հաճախակի ·րում են խաչադրոշների կիրառության մասին:

Որպես Հայաստանում խաչադրոշի ·ոյության առաջին օրինակ կարելի է դիտել Տարոնի Վահևունյաց մեհյանի «հրաշալի» կործանման մասին Ա·աթան·եղոսի պատմության մեջ հանդես եկող

---

[1] Տես *В. Бауер, И. Дюмоц, С. Головин.* Энциклопедия символов. М. 1995, сс. 170—175.

[2] Տես *Մովսէս Խորենացի*, Պատմութիւն Հայոց (աշխատութեամբ Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի): Տփխիս, 1913 (այսուհետև՝ Մովսես Խորենացի), II—ՁԳ, *Ղազար Փարպեցի*, Պատմութիւն Հայոց (քննական բնա·իրը՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, աշխարհաբար թար·մանությունը և ծանոթա·րությունները՝ Բա·րատ Ուլուբաբյանի): Ե., 1982, էջ 10:

խաչանշանը Գրի·որ Լուսավորչի ձեռքում[3]: Պատմիչն այն անվանում է երկու եղանակով՝ «նշան տերունական խաչին» և «խաչանիշ փայտ», որից «հողմ ուժ·ին բղխեալ.... և չո·աւ հարթեալ, տապալեալ, ընկեց կամենայն շինուածսն բա·-նայն»: Նույն պատմիչը ·րում է Գրի·որ Լուսավորչի կողմից Եփրատի ափին հայոց արքայի և ժողովրդի մկրտության պահին տերունական խաչի տեսքով լուսավոր սյան հայտնվելու մասին[4]: Կորյունի վկայությամբ նույնպիսի «լուսավոր խաչանշան» է հայտնվել Սբ. Մեսրոպ Մաշտոցի հուղարկավորման թափորի առջև և ուղեկցել է մինչև սրբի թաղման վայր[5]:

Այս առաջին հաղորդումները, կարծես թե, անիրական, երևակայական դրոշների մասին են, քանի որ դրանք հիշատակվում են հայոց մկրտության նկարա·րությունում կամ սրբերի վարքա·րությունում որպես երկնային հովանավորության և մասնակցության խորհրդանշան: Բայց արդեն 5-րդ դարի և հետա·ա այլ պատմիչների՝ Եղիշեի, Մովսես Կաղանկատվացու և Հովհան Մամիկոնյանի ·րծերում խաչադրոշը վկայված է տարբեր աշխարհիկ իրադրություններում: Եղիշեն հայոց կորքի առջևում խաչանշանի առկայությունն ակնարկում է 450 թ. Խաղխաղի ճակատամարտում[6]: Խաչանշան դրոշների ռազմական կիրառության մասին ·րում է նաև Հովհան Մամիկոնյանը 6-րդ դարի հայ-պարսկական պատերազմները նկարա·րելիս[7]: Այս փաստերը թույլ են տալիս որպես խաչադրոշների կիրառության ստորին սահման դիտել բյուզանդական հերալդիկայում դրանց տարածման շրջանին համապատասխանող դարաշրջանը, այսինքն՝ 4—7-րդ դարերը:

Տարբեր աղբյուրների, առաջին հերթին՝ մատենա·րական նկարա·րությունների օ·նությամբ պարզվում է նաև խաչադրոշների տեսակների բազմազանությունը միջնադարյան Հայաստանում: Դրոշն ինքնին խիստ պահպանողական առարկա է, և խաչադրոշներն աստիճանաբար ձևավորվել են իրենց նախորդած այլ դրոշների հիմքի վրա: Թեև 4—5-րդ դարերը, այսինքն՝ Հայաստանում և քրիստոնյա Արևելքում խաչադրոշների կիրառության սկզբնական շրջանը, այն ժամանակահատվածն էին, երբ դրոշների կառուցվածքում պետք է որ լայնորեն կիրառված լիներ պաստառը, Վ. Հացունին ենթադրում է, որ այդ հաղորդումներում ներկայացված խաչադրոշների մի մասը եղել է «խաչ փոխան վառին», այսինքն՝ առանց պաստառի, պինդ նյութից սարքված խաչ՝ ամրացված ձողի վրա: Սակայն հեղինակը ·րքի մի այլ մասում «քանդակյալ» և պաստառով դրոշների փոխատեղման շրջան է համարում մ. թ. ա. 2-րդ—մ. թ. 5-րդ դարերը[8]: Համապատասխան մատենա·րական հաղորդումները լրացնում են միմյանց և թույլ են տալիս ենթադրել, որ արձանակերպ և պաստառով դրոշները զու·ահեռաբար կիրառվել են՝ սկսած ուրարտական դարաշրջանից[9] մինչև ուշ միջնադար:

Ստորև ներկայացնում ենք խաչադրոշների հիմնական տեսակների ուրվա·ծերը, որոնք վերական·նված են պատկերա·րական և մատենա·րական տարբեր աղբյուրների հիման վրա: Կարելի է ենթադրել, որ մինչև 7-րդ դար ընկած ժամանակահատվածում արձանակերպ խաչադրոշներն ունեցել են ո-րոշ ·երակշռություն պաստառով դրոշների նկատմամբ:

[3] Տես «Ա·աթան·եղայ Պատմութիւն Հայոց»: Թիֆլիս, 1914, էջ 411—412, կամ ·լ. ՃԺԴ:

[4] Տես նույն տեղում, էջ 420—421, կամ ·լ. ՃԺԸ:

[5] *Կորյուն*, Վարք Մաշտոցի (բնա·իրը, թար·-մանությունն առաջաբանով և ծանոթա·րությունները՝ Մ. Աբեղյանի): Ե., 1941, ·լ. ԻՁ:

[6] Տես *Եղիշե*, Վարդանի և հայոց պատերազմի մասին (աշխարհաբար թար·մանությունը և ծանոթա·րությունները՝ Ե. Տեր-Մինասյանի): Ե., 1989, էջ 152:

[7] Տես *Յովհան Մամիկոնեան*, Պատմութիւն Տարօնոյ (աշխատությամբ և առաջաբանով Ա. Աբրահամյանի): Ե., 1941, էջ 270:

[8] Տես *Վ. Հացունի*, Հայ դրօշները պատմութեան մէջ: Վենետիկ, 1919, էջ 19—20, հմմտ. էջ 66—68:

[9] Տես *Б. Б. Пиотровский*. Искусство Урарту. Л., 1962, նաև՝ *Ս. Գ. Հմայակյան*, Վանի թա·ավորության պետական կրոնը: Ե., 1990, աղ. 13:

ՈՒղղահայաց ձողին պաստառի ամրացմամբ դրոշներից առաջինը հայոց մշակույթում հայտնի է միայն 13-րդ դարից՝ Կիլիկիայում Սար·իս Պիծակի կողմից պարդարված Դրապարկի Ավետարանի մանրանկարներից մեկից: Այս դրոշը չենք ներառել հայկական հիմնական



Խաչադրոշների նմուշներ

խաչադրոշների ցանկում, քանի որ կասկածելի են թվում ինչպես պաստառի ամրացման եղանակը, այնպես էլ դրոշակի պատկերա·րությունը, որը ներկայացնում է հին· խաչերի պատկեր՝ մեկը կենտրոնական և չորսը թևային: Մեկ կենտրոնական և չորս թևային խաչերի պատկերը Արևելքի քրիստոնյաներին հայտնի է առնվազն 5-րդ դարից և խորհրդանշում է Քրիստոսին և նրա հավատն աշխարհի չորս կողմը տարածող ավետարանիչներին: Բայց դասական հերալդիկայում այս պատկերն ամրա·րվել է «խաչակիրների խաչ» անունով և ունի որոշ նախապատմություն: Այն 1099 թ. խաչակիր բարոնների ժողովի կողմից շնորհվել է Գոթֆրիդ Բուլոնցուն (Երուսաղեմի առաջին թա·ավորը՝ 1099—1100 թթ.) որպես հատուկ պատվո նշան և պատկերում է ոսկե խաչեր արծաթե դաշտի վրա[10]: Չբացառելով հին· խաչերի տեղական ավանդույթի ·ոյությունը՝ պետք է միայն նշել Սար·իս Պիծակի նկարած դրոշի և 14—15-րդ դարերում եվրոպացի ճանապարհորդների կազմած երեք տարբեր քարտեզներում պատկերված պինանշանների վրա այս «բացառիկ պինանշանի» (armes a enquerre) ազդեցության հավանականությունը:

9—12-րդ դարերի մատենա·րությունում խաչակիր դրոշների մասին հիշատակություններն ավելի հաճախակի են, քան մյուս՝ անորոշ պատկերա·րությամբ, դրոշների մասին: Հայկական աղբյուրներում դրոշների կենդանակերպ, կամ կենդանապատկեր, լինելու մասին ուղղակի հաղորդումներն ավարտվում են 7-րդ դարում: Խաչադրոշներն արդեն լայն կիրառություն ունեին ոչ միայն եկեղեցական, այլև աշխարհիկ կյանքի ոլորտներում, ընդ որում՝ նաև ·յուղական համայնքների մակարդակով: Թովմա Արծրունու և Մատթեոս ՈՒռհայեցու կողմից հիշատակվող «խաչերը» վերաբերում են՝ առաջինը՝ «·աղթականների մեծաթիվ բազմությանը», իսկ երկրորդը՝ Քեսուն քաղաքի բնակիչներին[11]:

Ոչ քրիստոնյա հարևանների՝ զրադաշտական Իրանի և հետա·այում՝ արաբների և այլ մահմեդական ժողովուրդների հետ անմիջական շփման ·ոտում հայերի ·տնվելու հան·ամանքը չէր կարող չանդրադառնալ նրանց հետ փոխհարաբերությունների «առաջին ·ըծում» ·տնվող դրոշների համակար·ի վրա: 7-րդ դարում Հայաստանի և հարևան երկրների նվաճումն արաբների կողմից հարուցեց ոչ միայն ընդհանուր մշակութային անկում, այլև էականորեն ազդեց դրոշների համակար·ի վրա՝ պատկերա·րության փոփոխության և ·ործառության նվազման առումներով: Հայոց միջնադարյան արվեստի հետազոտողները նշել են իսլամական տիրապետության այս ազդեցությունը պատկերա·րության տարբեր ճյուղերում[12]:

[10] Տես *А. Б. Лакиер*. Русская геральдика. М., 1990, сс. 33—34.

[11] Տես «Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց»: Ս. Պետերբուր·, 1887, III, նաև՝ *Մատթեոս ՈՒռհայեցի*, Ժամանակա·րութիւն (աշխարհաբար թար·մանությունը և ծանոթա·րությունները՝ Հ. Բարթիկյանի): Ե., 1991, էջ 402:

[12] Տես *Բ. Ն. Առաքելյան*, Հայկական պատկերաքանդակները IV—VII դդ.: Ե., 1949, էջ 109—111, նաև՝ *Ս. Խ. Մնացականյան*, Պահպանիչ խորհրդանշանները միջնադարյան հայ քանդակա·րծության մեջ: «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1970, հմ. 3:

Մխիթար Այրիվանեցու հաղորդումներից մեկում նշվում է ար·ելքների խըստացման հերթական փուլերից մեկը. «Դաւութ՝ որդի Ապուսահլայ տաճիկ եդ օրէնս քրիստոնէի ոչ բառնալ կմեռեալս և ոչ *խաչ վարել* (ընդ·ծումն իմն է.—*Ա. Դ.*), կամ ժամ հարկանել, և ոչ խոզ պահել»[13]: Բացի արաբ տիրապետողների՝ խաչի պատկերումն ար·ելելու քաղաքականությունից, սահմանափակող մյուս ·ործոնը 7—9-րդ դարերում Բյուզանդական կայսրության և նրա ազդեցության ոլորտում հայտնված հայկական տարածքներում պատկերամարտության ուժեղացումն էր:

Ակ·ային-ազատա·րական պայքարի հաջողությունների և Հայաստանում խալիֆաթի իշխանության թուլացման համեմատ վերանում են պատկերա·րության նկատմամբ դավանական սահմանափակումները, և 9-րդ դարի վերջին ըսկըսվում է միջնադարյան արվեստի զար·ացման հերթական փուլը: Այս փոփոխությունը նույնպես ազդում է դրոշների պատկերա·րության և ·ործառության վրա, ինչը նկատելի է Վարդան պատմիչի հաղորդման լույսով. «Տէր Զաքարիա երթայ տեսանէ զՅիսէ որդի Շեխայ և յոյժ մեծարի 'ի նմանէ՝ տուեալ սմա շատ ինչ պար·ևս և դրօշս բառնալ խաչ 'ի վերայ նորա և մտանել առաջի նորա միշտ»[14]: Առադրելով տարբեր հաղորդումներ՝ կարելի է հան·ել այն եզրակացության, որ մահմեդական տիրակալի կողմից քրիստոնյա հպատակին դրոշ շնորհելը և դրոշով ներկայությունը նրան թույլատրելը միմյանց համարժեք էին:

Միջդավանական և միջազ·ային հարաբերություններում դրոշի առաջապահ դիրքը դրսևորվել է միջնադարում քրիստոնյա և մահմեդական ազ·երի հարաբերություններում: Հիշենք, որ Տիրոջ ·երեզմանի փրկությունը նախաձեռնած արևմտաեվրոպական ժողովուրդների «ոչ խոսքային նշանաբանը» խաչի պատկերն էր, ինչը պայմանավորեց նըրանց «խաչակիրներ» անվանումը:

Արևմտաեվրոպական հերալդիկայում խաչը հետա·այում պահպանվեց որպես հատուկ խորհրդանշան, որի առկայությունը որևէ տոհմի զինանշանում վկայում էր տվյալ տոհմի նախնիներից որևէ մեկի մասնակցությունը խաչակըրաց արշավանքներին[15]: Խաչադրոշի այս կարևոր հատկությունը պատճառ դարձավ արևելյան քրիստոնեական երկըրներում տեղական խաչադրոշների մեծ բազմազանության, քանի որ, բացի կրոնական նշանակությունից, դրոշը պետք է քրիստոնեական զորքերում կատարեր նաև տարբերանշանի դեր: Թեև մեզ չի հասել բյուզանդական բանդոնների՝ թեմերի ներքին տարածքների ռազմական դրոշների նկարա·րությունը, կարելի է վստահորեն ասել, որ դրանք մեծ մասամբ խաչադրոշներ էին: Բյուզանդական պատմիչներից մեկի հաղորդման համաձայն 14-րդ դարում Կոստանդնուպոլսում Նոր տարվա զորահավաքներին արքունիք էին բերվում զինվորական դրոշներ, որոնց թվում՝ Սբ. Գևոր· Հեծյալի և Սբ. Գևոր· Վիշապամարտիկի պատկերներով խաչադրոշներ[16]:

Հայունին նկարա·րում է Վատիկանի թան·արանում պահվող 10—11-րդ դարերի եկեղեցական լաբարիումները, որոնք, իր կարծիքով, կարող էին ծառայած լինել որպես հայկական հնա·ույն խաչվառների նախօրինակ, թեև դրանց պաստառներին պատկերված է միայն աստղազարդ երկինք[17]: Այսինքն՝ այս կար·ի խաչվառների վրա հնարավոր էին ոչ միայն խաչի, այլև քրիստոնեական այլ տեսարանների պատկերներ, նույնիսկ բնապատկերներ: Խաչակիրների բազմազ· ուժերը նույնպես միմյանց միջև տարբերակում էին կատարում բացառապես խաչադրոշների միջոցով:

[13] *Մխիթար Այրիվանեցի*, Պատմութիւն Հայոց: Մ., 1860, էջ 54:

[14] *Վարդան Բարձրաբերդցի*, Պատմութիւն տիեզերական: Մ., 1861, էջ 116:

[15] Նույնպիսի իմաստ ուներ կռունկի պատկերը: Տես *Ա. Բ. Լակիեր*, նշ. աշխ., էջ 34—37:

[16] Տես *В. П. Даркевич*. Светское искусство Византии. М., 1975, с. 237.

[17] Տես *Վ. Հայունի*, նշ. աշխ., էջ 87—88:

Հայտնի են «խաչերի պատերազմ» անունն ստացած խաչակրաց 7-րդ արշավանքի (1270—1272 թթ.) մասնակից պետությունների և ասպետական ուխտերի (օրդենների) դրոշներ, որոնց միջև տարբերակումը կատարվում էր խաչի ձևավորման և պաստառի ·ունային փոփոխությունների միջոցով: Կան բազմաթիվ փաստեր, որոնք վկայում են, որ հայոց մեջ խաչադրոշների կառուցվածքային և խաչվառների պատկերա·րական հնարավորությունները միան·ամայն բավարար էին տարբերանշանային ·ործառույթ իրականացնելու համար: Մասնավորապես՝ հավանական է թվում, որ հայոց արքայատոհմերից մեկի՝ Բա·րատունիների տոհմական և պետական փինանշան եղած լինի խաչանշանը:

Միջնադարյան հայ մատենա·րությունը վկայում է խաչակերպ դրոշների լայն կիրառությունը հասարակական կյանքի տարբեր իրավիճակներում: Խաչադրոշի ծիսական կիրառություններում արտահայտվում էին ոչ միայն հայոց քրիստոնեական հավատքի, այլև նախորդ հեթանոսական հավատալիքների և պաշտամունքի առանձնահատկությունները: «Դրոշ» բառն ինքը նշանակում է նաև «կուռք»[18]: Խաչադրոշները, կամ խաչակերպ դրոշները, պատմիչների ·րվածքներում ներկայացվում են տարբեր կերպ՝ «խաչ», «խաչվառ», «նշան»: Վերջինս ամենահաճախ կիրառվող տերմինն է և իր բազմիմաստությամբ առընչվում է հայոց քրիստոնեական մշակույթի տարբեր ոլորտներին:

Միջնադարյան «նշան» բառն ուներ իմաստների ընդարձակ շարք, որը Աճառյանը, հետևելով ՆՀԲ հեղինակներին, ներկայացնում է մեկ տասնյակի չափ իմաստներով. «1. նշան, 2. դրոշմ, փինանշան, հայտանիշ, 3. նետի նպատակ, նշան, 4. դրոշակ, 5. խաչ, խաչանիշ, 6. հրաշք, 7. նշանադրություն, 8. կետ, միջակետ, 9. կենտրոն, 10. նշանա·իր, նշանախեց»[19]: «Նշան»-ի ամենաէական իմաստը մարդկանց և աստծու միջև հաղորդակցության միջոցի կամ այդ հաղորդակցության արդյունքի նշանակությունն է, որն ավելի պարզորոշ արտահայտված է այս բառի սեմական զու·ահեռներում՝ ասոր. *nisa* («նշան»), եբր. *nes* («նշան, իբրև նշան տնկված ձող»), արամ. *nissa* («նշան, հրաշք») բառերը հան·ում են հին ասոր. *nesa*-ին՝ «կան·նեցնել, բարձրացնել (ձեռք, աչք՝ յաղօթս, յերկինս)»:

Հայ պատմիչների կողմից ռազմական իրադարձությունների նկարա·րություններում հաճախակի կիրառվող «կազմ», «ռազմ», «կար·», «·ումար», «վանդակ», «ճակատ», «հանդես» և այլ բառերն իրենց համապատասխան բայական ձևերով արտահայտում են կորքի հավաքման, միատեղման, կազմակերպման ·աղափարը և ·ործողությունը պատերազմի տարբեր փուլերում: Հո··նակիով ·րվող «դրոշք»-ի կամ «նշանք»-ի հետ առադրությամբ դրանք ներկայացնում են դրոշներից յուրաքանչյուրի ներքո միավորված առանձին «·ընդերի» կար·ավորված համատեղումը, միավորների ·ումարումը մեկ վայրում, որտեղից արդեն սկսվում է երթը դեպի ճակատամարտ կամ բուն ճակատամարտը:

Բայց կան նաև ճակատամարտում եկանի դրոշների մասին հաղորդումներ, որոնցում դրոշը պատկանում է՝

1. կորավարին՝ Մուշեղ Մամիկոնյանին, 371 թ. Ձիրավի ճակատամարտում[20],

2. հայկական կորքին՝ որպես քրիստոնեական համայնքի, 450 թ. Խաղխաղի ճակատամարտում[21],

3. Վասպուրականի հայոց կորքին և ժողովրդին՝ որպես քրիստոնեական համայնքի, 850 թ. Սմբատաբերդի ճակատամարտում[22],

4. հայոց թա·ավոր Աշոտ 2-րդ Բա··րատունու՝ 915—916 թթ. Գարդմանի

[18] Տես Հ. *Աճառյան*, Հայերեն արմատական բառարան: Ե., 1971—1979, հ. 1, «դրօշ», հ. 4, «տեռ»:

[19] Տես նույն տեղում, հ. 3, «նիշ», «նշան»:

[20] Տես *Փավստոս Բուզանդ*, Հայոց պատմություն (բնա·իրը՝ Ք. Պատկանյանի, թար·մանությունը և ծանոթա·րությունները՝ Ստ. Մալխասյանի): Ե., 1987, V—Դ:

[21] Տես *Եղիշե*, նշ. աշխ., էջ 152:

[22] Տես *Թովմա Արծրունի*, նշ. աշխ., III—Դ:

ապստամբ իշխան Սահակ Սևադայի դեմ ճակատամարտում[23]:

Բացի առաջին դեպքից, որում հավանական է, որ պատմիչի կողմից Մուշեղ Մամիկոնյանի չնկարա·րված նշանն արծվապատկեր լիներ, մյուս դեպքերում դրանք խաչակերպ, կամ խաչապատկեր, դրոշներ էին: Նույնակար· եկակի դրոշ է դիտվում նաև խաչապատկեր վահանով դրոշը Ավարայրի ճակատամարտի մանրանկարում՝ կետեղված 1482 թ. Շարակնոցում:

Այս կար·ի հաղորդումներում դրսևորվում է ·լխավոր դրոշների տարածական դիրքը ճակատամարտի դաշտի և մասնակիցների նկատմամբ, որը կարելի է բնութա·րել «վեր» և «առաջ», ինչպես ·րում է, օրինակ, Մատթեոս ՈՒռհայեցին[24]: Միաժամանակ ակնհայտ են նախ՝ «վեր» և «առաջ» դիրքերի ամուր փոխկապվածությունը, երկրորդ՝ այս կույ·ի կապը ճակատամարտի հավանական երկու ելքերից մեկի՝ հաղթանակի հետ: Մատենա·րական հաղորդումների ընդհանուր բովանդակությունը վկայում է, որ դրոշին ապավինող կողմը վերջիվերջո հասնում էր հաղթանակի: Իսկ այն ճակատամարտերում, որոնցում հայերը պարտվում են, նրանց դրոշ ունենալու մասին պատմիչները ոչինչ չեն հաղորդում, ինչը նույնպես անուղղակիորեն վկայում է դրոշի և հաղթանակի փոխկապվածության մասին: Նույն վարքի արտահայտությունն է 12—13-րդ դարերում վրաց-հայկական միացյալ կորքի հաղթանակների նկարա·րությունում հաղորդվող այն տեղեկությունը, որ պարտված հակառակորդի դրոշի բունը կտրում վայր էին նետում[25]:

Դրոշի կենտրոնական դերը մարտի ընթացքում դրսևորվում է միայն *ուղղահայաց* հարթությունում, որում այն *միջնորդ* է մարդկանց և երկնային ուժերի միջև՝ ընդդեմ ստորերկրյա ուժերի: Մասնակից կողմերից յուրաքանչյուրի համար իր դրոշն ուղղված է դեպի վեր, իսկ հակառակորդինը դեպի վար՝ յուրաքանչյուրին հովանավորող վերին—ներքին, բարի—չար, արդար—մեղավոր ուժերի



Խաչադրոշների և պինանշանների նմուշներ

դիրքին համապատասխան: Մարտակար·երից յուրաքանչյուրում տարածվող վեր և առաջ դիրքորոշմամբ դրոշները թույլ չեն տալիս, որ այդ ուժերը խառնվեն միմյանց: Ճակատամարտի վերջում հաղթողի դրոշը դառնում է միակը:

Եկակի դրոշով ճակատամարտերի նկարա·րությունների մեծ մասը ներկայացնում է արդեն քրիստոնյա հայերի կրոնական պատերազմները: Այդպիսիք են թե՛ Խաղխաղի և Ավարայրի ճակատամարտերը հավատափոխություն պարտադրող պարսկական բանակների դեմ, թե՛ Սմբատաբերդի ճակատամարտը Բուղայի արաբական պատժիչ կորախմբի դեմ: Դրանց կրոնական բովանդակությունը պատմիչներն արտահայտում են ոչ միայն եկակի խաչադրոշների մասին հիշատակություններով, այլև ճակատամարտի *սրբազանությունը* և դրանում հայկական կողմի *արդարությունը* հավաստող աղոթքի և «հորդորի» խոսքերով՝ ասված հայոց առաջնորդների կամ կորքի

[23] Տես *Հովհաննես Դրասխանակերտցի*, Հայոց պատմություն (աշխարհաբար թար·մանությունը և ծանոթա·րությունները՝ Գ. Թոսունյանի): Ե., 1996, էջ 315:

[24] Տես *Մատթեոս ՈՒռհայեցի*, նշ. աշխ., էջ 284:

[25] Տես *И. Джорджадзе*, История военного искусства Грузии. Тбилиси, 1989, сс. 110—111.

կողմից: Տարբեր տևողությամբ և բովանդակությամբ այս խոսքերն ունեն մի քանի կարևոր կրկնվող իմաստներ:

**Առաջին.** մարտի մեջ մտնողները դիմում են աստծուն իրենց առաջնորդող կորավարի կամ հո·նորականի միջոցով կամ ողջ խմբով, այսինքն՝ բոլոր դեպքերում դա ընդհանրական աղոթք է՝ ուղղված աստծուն:

**Երկրորդ.** դիմողն անպայման ընդ·ծում է յուրայինների *արդարությունը* և հակառակորդի *մեղավորությունը:* Ըստ երևույթին սա կապված չէ միայն դավանանքի՝ ուղղահավատության խնդրի հետ: Աշոտ Բ Բա·րատունին, երդման ·իրն իր խաչակերպ դրոշին կապելով, ապստամբ հայ իշխանին մեղադրում է ուխտադրժության մեջ և կոչում արդար աստվածային դատաստանի[26]:

**Երրորդ.** ճակատամարտը հաճախ համեմատվում է *ահեղ դատաստանի* հետ, ինչը հստակ ներկայացված է Չիրավի ճակատամարտի ընթացքում Ներսես կաթողիկոսի աղոթքի խոսքում. «Զի դեռ աւադիկ յայսմ ժամու ոչ մարդ ընդ մարդկան ճակատեալ պատերազմին, այլ դատաւորն դատաւորաց յարեաւ դատել վերկիրն»[27]: Կատարածաբանական արտահայտությունները լրացվում են *ինքնազոհաբերության* և *հարության* կոչերով, հատկապես՝ Ավարայրում Ղևոնդ երեցի հորդորի խոսքում. «Եւ եթէ մահուամբ մահ մեռանի, մի՛ երկիւցուք մահակիցք լինել Քրիստոսի. զի ընդ որում մեռանեմք, ընդ նմին և կենդանանամք», «Մեր յոյսն մեզ կրկին երևի. եթէ մեռանիմք՝ կեամք, եթէ մեռուցանեմք՝ մեզ նոյն կեանք առաջի կան»: Եվ վերջապես՝ հանրահայտ՝ «Չիմացյալ մահը մահ է, իմացյալ մահը՝ անմահություն»[28]: Այս արտահայտությունները ոչ միայն ինքնազոհաբերության, այլև հակառակորդին *զոհաբերելու* կոչ են: Ճակատամարտում այս երկու ·աղափարների միացումն առկա է նաև *«նահատակ»* բառի դեռ վաղմիջնադարյան աղբյուրներում նկատվող երկիմաստության մեջ. «նահատակ» նշանակում է՝ 1. զինվոր, 2. մարտիրոս, վկա[29]:

**Չորրորդ.** Ավարայրի ճակատամարտի նախօրեին Վարդան Մամիկոնյանի և Ղևոնդ երեցի հորդորներն՝ ուղղված զորքին, սկսվում են *նախադեպի* հիշեցումով. «Ի բազում պատերազմունս մտեալ է իմ, և ձեր ընդ իս», «Յիշեցէք ամենեքեան զհարսն մեր զառաջինսն, որ յառաջ քան զծա·ումն Որդւոյն Աստծոյ իւրաքանչիւր ժամանակի»[30]: Նաև մյուս ճակատամարտերում հինկտակարանային աղոթքների և օրինակ·ությունների ընտրությունը պատահական չէ, այլ ուղղված է հաղթական նախադեպի ամրապնդմանը, *վերահիրականացմանը*:

Այս ընդհանուր դրույթներին ավելացնենք ևս մեկը, որն առկա է Խաղխաղի և Ավարայրի ճակատամարտերի Եղիշեի նկարա·րություններում: Զորքին դիմելով՝ թե՛ սպարապետը, թե՛ Ղևոնդ երեցը Քրիստոսին ներկայացնում են որպես հայերի «զօրա·լուխ»[31]: Ավելի վաղ Վարդանի զորքը դիմում էր աստծուն հետևյալ խոսքերով. «Մարտիր ընդ այնոսիկ, որ մարտնչին ընդ մեզ. զինու և ասպարաւ զով օ·նեա մեզ»: Քրիստոսի այսպիսի ոչ կանոնական, «ռազմական» ·ործառույթը կապված է, մի կողմից՝ ահեղ դատաստանն իրա·ործող դատավորի կերպարի, մյուս կողմից՝ ժողովրդական այն պատկերացումների հետ, որոնցում Քրիստոսը և նրա խաչանշանն ունեն վիշապամարտիկ հերոսի ·ործառույթ[32]:

[26] Տես *Հովհաննես Դրասխանակերտցի,* նշ. աշխ., էջ 315:

[27] *Փ. Բուզանդ,* նշ. աշխ., V—Դ, հմմտ. *Եղիշե,* նշ. աշխ., էջ 300:

[28] *Եղիշե,* նշ. աշխ., էջ 216, 222:

[29] Տես *Հ. Աճառյան,* նշ. աշխ., հ. 3, «նահատակ»:

[30] *Եղիշե,* նշ. աշխ., էջ 202, 214:

[31] Տես նույն տեղում, էջ 152, 208, 228:

[32] Տես *Л. А. Абраамян.* Христос как змееборец: церковная традиция и память художника. Мифологические представления в народном творчестве. М., 1993, сс. 165—179; նաև՝ *А. А. Саакян.* Культово-мемориальные памятники в системе армянской средневековой народной культуры. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук. Е., 1986, с. 15.

# СРЕДНЕВЕКОВЫЕ КРЕСТНЫЕ ЗНАМЕНА В АРМЯНСКОЙ ХРИСТИАНСКОЙ КУЛЬТУРЕ

*А. А. ДАБАГЯН*

РЕЗЮМЕ

Принятие христианства в Армении в начале IV в. привело к возникновению новых геральдических знаков—знамен в форме или с изображением креста, так называемых крестных знамен. Крестные знамена имели не только религиозное, но и мирское значение, чем в некоторой степени объясняется отсутствие упоминаний о зооморфных знаменах в источниках после VII в.

Первое упоминание крестного знамени в армянской действительности связано с именем Григория Просветителя. Армянский историк V в. Агафангел сообщает о том, что при разрушении знаменитого в Армении языческого капища в Тароне Просветитель держал в руке деревянный крест, как пишет сам историк, «знак Господнего креста». Тот же историк сообщает о крестном знамении, появившемся в небе при крещении в водах священной для исторической Армении дохристианского периода реки Арацани (Евфрат) армянского царя Трдата Великого и армянского народа.

Другой армянский историк V в. Егише в описании сражения при Хагхаге (450 г.) отмечает наличие крестного знамени перед армянским войском. О военном применении крестных знамен упоминает и Ован Мамиконян (VII в.) при описании армяно-персидских войн VI в.

В средневековой Армении существовали крестные знамена различных типов. В частности, это были как укрепленные на древках кресты из твердого материала и щиты с крестами на них, так и изображения, нанесенные на полотнища. Последний из этих типов известен, начиная с XIII в., по миниатюрам Саргиса Пицака (Киликийское Армянское царство). Вообще, контакты Киликийского царства с Западной Европой в эпоху крестоносцев во многом способствовали заимствованию у европейцев геральдических знаков.

Наличие крестных знамен у войск в средневековых описаниях и изображениях должно было подчеркивать справедливый для своей стороны характер войны. Причем свои знамена изображались направленными вверх и вперед, а у противника—наоборот, т. е. в иерархически более подчиненном положении.

Символический смысл крестных знамен в сражении выявляет их следующие ритуальные аспекты: это коллективная молитва, обращение к Богу от всего войска, часто персонифицируемого полководцем или духовным пастырем; подчеркивание своей богоугодной справедливости и греховности неприятеля; проведение параллелей со Страшным Судом; стремление к переповторению прецедента одержанных в прошлом побед; признание Господа в качестве Верховного предводителя своих войск.

# MEDIEVAL CROSSFLAGS IN ARMENIAN CHRISTIAN CULTURE

*A. A. DABAGHIAN*

SUMMARY

With the adoption of Christianity in Armenia at the beginning of the $4^{th}$ century so called crossflags, i.e. heraldic ensigns, shaped crosswise or bearing a cross symbol, came into use. These flags had not only religious but also worldly significance, which someway clarifies why flags bearing zoomorphic images were not mentioned in the historical sources since the $7^{th}$ century.

The first crossflag accounted in the Armenian history is associated with the name of Gregory the Illuminator. An Armenian historian of the $5^{th}$ century, Agathangelos, accounts that at destruction of the pagan temple in Taron, famous in Armenia, St. Gregory held up a wooden cross, as the historian writes,«the sign of the Lord's cross». The same historian relates that a sign of the crossflag appeared in heavens at baptisting of the king Tiridat the Great and the Armenian people in waters of Aratsani (Euphrates), the sacred river in pre-Christian Armenia.

Another Armenian historian of the $5^{th}$ century, Eghishe, in his description of the battle at Khaghkhagh (450) mentions that there was a crossflag ahead of the Armenian troops. Military application of crossflags is witnessed by Hovhan Mamikonian ($7^{th}$ c.) in his narrative of the Armenian-Persian wars in the 6th century.

Different types of crossflags existed in medieval Armenia. In particular, it was a cross of a firm material fixed on the staff or a shield with cross drawn on it, as well as a crossbearing breadth. The latter type is known since the $13^{th}$ century, on miniatures of Sargis Pitzak (from the Armenian Kingdom of Cilicia). In general, the close contacts of the Cilician kingdom with the Western Christendom in the Crusades period promoted also the adoption of some European heraldic signs.

The existence of crossflags ahead of the army in the medieval narrations and miniatures was intended to accent the justness of his own party in the war. And the own flags were described as directed up and forward and the flags of the enemy-contrariwise, i.e. in hierarchically subdued position.

The symbolism of crossflag in battle reveals its ritual meanings as the folowing: it is a collective pray, an appeal to God by all the warriors, often personified by the commander or by the chief pastor; it demonstrates the pious justice of them and the sinful essence of the enemies; it recalls in mind the great assizes; it expresses the will to repeat the victories won in the past; it symbolizes the admission of God as supreme guide of their troops.

# ¼ÆÜ ì ² Ì àôÄºðÆ ÞÆÜ²ð²ðàôÂÚàôÜ

## ´²Ü²Î²ÚÆÜ ø²Ð²Ü²ÜºðÆ Ð²êÎ²ÎàôÂÚàôÜÀ ÐÐ ¼ÆÜ ì ² Ì àôÄºðàôØ

*²ðÞºÜ ³µ»Õ³ ê²ÜàêÚ²Ü*

1997 թ. նոյեմբերի 13-ին երջանկահիշատակ Ամենայն հայոց կաթողիկոս Գարե·ին Առաջինի և ՀՀ պաշտպանության նախարար երջանկահիշատակ Վազ·են Սար·սյանի համատեղ նախաձեռնությամբ ՀՀ զինված ուժերում հիմք դրվեց հո·ևոր ծառայությանը:

Հայոց բանակն արցախյան ազատամարտի ընթացքում փայլուն հաղթանակ տարավ և, փորձա·ետների ·նահատմամբ, դասվեց տարածաշրջանի ամենամարտունակ բանակների շարքը:

Իրականություն դարձավ հայ ժողովրդի դարավոր երազանքը՝ անկախ պետականությունն ու հաղթանակող բանակը: Պատերազմից հետո մեծ թափով շարունակվում էր բանակի շինարարությունը՝ թե՛ մարտունակության բարձրացման, թե՛ կար·ապահական և թե՛ բարոյահո·եբանական առողջ մթնոլորտ ստեղծելու ուղղություններով: Եվ թեև ներկա զար·ացման դարում ·իտնականները ·երժամանակակից ռազմական տեխնիկայի բնա·ավառում հասել են մեծ հաջողությունների, բայց և մարդկային ·ործոնը՝ իր բարոյահո·եբանական դրսևորումներով, չի կորցրել իր կարևորությունը պատերազմական ·ործողություններում: Հայոց բանակում բարոյահո·եբանական վիճակի բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքներին աջակցելուն էր միտված և Վեհափառ Հայրապետի ու պաշտպանության նախարարի համատեղ նախաձեռնությունը:

Հայոց բանակ զորակոչվեցին ութ հո·ևորականներ (քահանա հայրեր և ճեմարանավարտ սարկավա·ներ) և նշանակվեցին տարբեր սահմանամերձ զորամասերում: Վեհափառ Հայրապետի կողմից նշանակվեց նաև բանակի հո·ևորականների աշխատանքը կազմակերպող և հսկող հո·ևորական՝ պաշտպանության նախարարի հո·ևոր խորհրդականը հանձին հո·եշնորհ Վրթանես վարդապետ Աբրահամյանի:

Թեև հայ ժողովրդի պատմության հոլովույթում, որպես հայրենիքի պաշտպան և հայրենասիրության ·աղափարի կրող հայոց բանակն ու հայոց եկեղեցին մշտապես հանդես են եկել միևնույն դիրքերում և միմյանց աջակից, և թեև եղել են փորձեր համակար·ելու բանակի և եկեղեցու փոխհարաբերությունները (Ներսես Շնորհալի՝ «Թուղթ ընդհանրական», Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյան՝ «Զավերա·րեր»), այնուամենայնիվ վերստին անդրադարձ կատարելու և փոխհարաբերությունների համար իրավական դաշտ ապահովելու խիստ կարիք էր զ·ացվում:

Այս ուղղությամբ առաջին քայլը պետք է լիներ ·ործունեության կանոնադրության և ծրա·րերի ստեղծումը: Բնական է, որ պետք էր ստեղծել մեր ավանդույթներին և ազ·ային մտածողությանը համապատասխանող կանոնադրություն: Դժբախտաբար մեր պատմության մեջ շատ քիչ բան է պահպանվել եկեղեցու և բանակի փոխհարաբերությունների իրավական դաշտի մասին: Մեկ ան·ամ Երևանի փոխթեմակալ Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը 1918 թ. կազմել է մի այդպիսի կանոնադրություն և ներկայացրել Ամենայն հայոց Հայրապետի ուշադրությանը: Սակայն այդ

կանոնադրությունն իրավական ուժ չի ստացել:

Հայ եկեղեցու և հայոց բանակի փոխհարաբերությունների կար·ավորումը պետք էր սկսել համապատասխան օրենսդրական դաշտի ստեղծմամբ: Սակայն ո՛չ աս·ային փորձը (Կիլիկյան Հայ-

Եվ պետք է նշենք, որ այդ կանոնադրությունը դարձավ ԱՊՀ երկրներում իր տեսակի մեջ առաջին պաշտոնական վավերաթուղթը:

Կանոնադրությամբ սահմանվում են ԶՈՒ-ի հո·ևոր ծառայության ստեղծման նպատակներն ու խնդիրները, նրա



Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն
և ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը. Էջմիածին, 2000 թ.

կական թա·ավորությունը միջնադարում, Հայաստանի Հանրապետությունը 1920-ական թվականներին), ո՛չ էլ արտասահմանյան երկրների փորձը այստեղ օ·տա·ործման համար պիտանի չեղան: Այնուամենայնիվ որպես երկու տարիների կատարված աշխատանքների արդյունք մշակվեց ՀՀ զինված ուժերում Հայաստանյայց առաքելական եկեղեցու հո·ևոր ծառայության կանոնադրությունը, որը 2000 թ. սեպտեմբերի 14-ին Մայր Աթոռում, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարե·ին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի և ՀՀ պաշտպանության նախարար պարոն Սերժ Սար·սյանի ներկայությամբ, ստորա·րեցին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշատվելի Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը և ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ ·եներալ-մայոր Միքայել Գրի·որյանը:

կառուցվածքն ու կառավարումը:

Հո·ևոր ծառայության ղեկավարումն իրականացվում է Հո·ևոր ծառայության առաջնորդի կողմից, ըստ պաշտպանության նախարարի դաստիարակչական աշխատանքների ·ծով տեղակալի ղեկավար հրահան·ների ու հանձնարարականների: Հո·ևոր ծառայության առաջնորդը նշանակվում է Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնա·րով և պաշտպանության նախարարի հրամանով:

Զորամասերում հո·ևոր սպասավորները ·ործում են Հո·ևոր ծառայության առաջնորդի և ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալի համատեղ հաստատած ծրա·րերով, իսկ ընթացիկ և կազմակերպական հարցերում առաջնորդվում են զորամասի հրամանատարի հրամաններով՝ համա·ործակցելով հրամանատարի դաստիարակչական աշխատանքի ·ծով տեղակալի հետ:

Զինված ուժերում հո·ևոր ծառայության նպատակն է պինված ուժերի անձնակազմին հաղորդակից դարձնել Քրիստոսի Ավետարանին և քրիստոնեական հավատի սկզբունքներին՝ Հայաստանյայց առաքելական եկեղեցու դավանանքի, եկեղեցական կանոնների և ավանդույթների համաձայն, դաստիարակել քրիստոնեական-բարոյական սկըզբունքներով և ապ·ային-հայրենասիրական ո·ով, հաղորդել կրոնական, եկեղեցա·իտական, ծիսական ·իտելիքներ, թույլ չտալ աղանդավորական շարժումների տարածումը, համա·ործակցելով սպայական անձնակազմի հետ՝ աշխատանք տանել կար·ապահության ամրապնդման, ինչպես նաև պինված ուժերին անհարիր ·աղափարների չտարածման ուղղություններով:

Ներկայումս պինված ուժերում ծառայության են կոչվել շուրջ քսան հո·ևորականներ: Հո·ևորականներն իրենց առաքելությունն իրականացնում են՝ օ·տա·ործելով հետևյալ միջոցները.

1. ծիսական արարողություններ,
2. քարոզ-դասախոսություններ՝
—Աստվածաշունչը,
—«Քրիստոնեական» ·իրքը,
—հայ եկեղեցու պատմությունը,
—տոնացույցները և սրբերի վարքը,
3. անհատական զրույցներ,
4. կրոնական, ապ·ային և հասարա-



ՀՀ պինված ուժերում Հայաստանյայց առաքելական եկեղեցու հոգևոր ծառայության կանոնադրության ստորագրումը ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ գեներալ-մայոր Միքայել Գրիգորյանի և Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի կողմից.
Էջմիածին, 2000 թ. սեպտեմբերի 14

կական բովանդակություն ունեցող ֆիլմեր, տեսաֆիլմեր,

5. հոսպիտալներ և պատժախցեր կատարվող այցելություններ,

6. բարե·ործություն,

7. հանդիսությունների կազմակերպում,

8. կրոնական, հայրենասիրական ·րականության տարածում:

Մեծ կարևորություն է տրվում հատկապես անհատական-խոստովանական զրույցներին, որոնց նպատակն է, հո·ևկան անհավասարակշիռ վիճակում հայտնըված պինվորին հասցնելով խոստովանական վիճակի, նրան դուրս բերել հո·ևկան ճ·նաժամից և լիցքաթափելով կանխել հնարավոր անօրինական ·ործողությունները, խոստովանության ·աղտ-

նիությունը պահպանելով և վստահություն ներշնչելով՝ հնարավորություն ըստեղծել զինվորի հետ ապատ, սրտաբաց զրույց ունենալու համար:

Այստեղ մենք փորձեցինք ընդհանուր ·ծերով ներկայացնել ԶՈՒ-ի հո·ևոր ծառայությունը և նրա ·ործունեության ոլորտները: Ինչպես ասացինք, այս հաստատությունը նորաստեղծ կառույց է և ունի զար·ացման ու ամրապնդման անսնելիք մեծ ճանապարհ և, հետևաբար, ուշադրության և բազմակողմանի օժանդակության կարիք ունի:

ՈՒրախ կլինենք, եթե մեզ համա·ործակցության նպատակով ներկայացվեն այնպիսի առաջարկություններ, ծրա·րեր, որոնք նպաստեն մեր ծառայության աշխատանքի բարելավմանը:

# СТРОИТЕЛЬСТВО ВООРУЖЕННЫХ СИЛ

## ИНСТИТУТ АРМЕЙСКИХ КАПЕЛЛАНОВ В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА

*Иеромонах АРШЕН САНОСЯН*

РЕЗЮМЕ

13 ноября 1997 г. по инициативе Католикоса всех армян Гарегина I и министра обороны РА Вазгена Саргсяна в Вооруженных силах РА был создан институт армейских капелланов. В ряды армии, ставшей по признанию многих зарубежных специалистов одной из самых боеспособных в регионе, были призваны 8 священнослужителей, которые получили назначение в приграничные воинские части.

Упорядочение взаимоотношений церкви и армии следовало начинать с создания соответствующего законодательного поля. Однако ни национальный исторический опыт (Киликийское Армянское царство в средние века, Республика Армения в 20-е годы прошлого века), ни опыт зарубежных стран в данном случае не оказались пригодными к использованию. Тем не менее в результате двухлетней кропотливой работы было разработано Положение о духовной службе Армянской апостольской церкви в ВС РА, которое 14 сентября 2000 г. в присутствии Католикоса всех армян Гарегина II и Министра обороны РА Сержа Саркисяна было подписано духовным предводителем Араратской епархии епископом Навасардом Кчояном и заместителем министра обороны по воспитательной работе генерал-майором Михаилом Григоряном.

Согласно положению, целью духовной службы в ВС является приобщение личного состава к христианской вере, его ознакомление с догматами армянской церкви, воспитание в национально-патриотическом духе, в соответствии с морально-этическими устоями христианства. В настоящее время в ВС РА проходят службу 20 священнослужителей, осуществляющих свою миссию с целью оказания духовной и психологической поддержки страждущим, поддержания здорового морально-психологического климата в войсках, повышения морально-боевых качеств личного состава.

# THE BUILDING OF THE ARMED FORCES

## INSTITUTE OF THE ARMY'S CHAPLAINS IN THE ARMED FORCES OF THE REPUBLIC OF ARMENIA

*Celibate priest ARSHEN SANOSSIAN*

SUMMARY

On the 13th of November of 1997 on the initiative of Catholicos of all the Armenians Garegin the 1st and the Minister of Defence of Republic of Armenia Vazgen Sarkissian an institute of the army's chaplains was created in the Armed Forces of Republic of Armenia. To the ranks of the army, which became one of the most efficient of the region according to the recognition of many foreign specialists, 8 priests were called, those, who got assignment to the military units near borders.

The regulation of the relations between the church and the army should be started with the creation of the appropriate legislative field.

However, neither the national historical experience (Cilician Armenian kingdom in the Middle Ages, the Republic of Armenia in the twenties of the last century), nor the experience of foreign countries turned out to be fit for use. Nevertheless, as a result of two years' laborious work a thesis about spiritual service of the Armenian Apostolic church in the Armed Forces of the Republic of Armenia was worked out, it was signed by the spiritual leader of the Ararat diocese the bishop Navasard Kchoyan and by the Deputy Minister of Defence on the educational work the major-general Michael Grigorian on the 14th of September of 2000 in the presence of Catholicos of all the Armenians Garegin II and the Minister of Defence of the Republic of Armenia Serj Sarkissian.

According to the thesis, the purpose of the spiritual service in the Armed Forces is access of the staff to Christian faith, their acquaintance with the doctrines of the Armenian church, education in national patriotic spirit in accordance with moral and ethic principles of Christianity. At present twenty priests serve in the Armed Forces of the Republic of Armenia. They fulfil their mission with the aim of rendering spiritual and psychological support to the sufferers, maintaining favourable moral psychological climate in the troops, increasing the moral fighting qualities of the staff.

# ¼àð²Ð²ì²ø²ÚÆÜ ä²îð²êîàôÂÚàôÜ

## ²ÜÒÜ²Î²¼Øàì ¼àðøºðÆ Ð²Ø²ÈðØ²Ü ÐÆØÜ²Î²Ü ¼àð²Ð²ì²ø²ÚÆÜ ØÆæàò²èàôØÜºðÀ

*È. ê. Î²ð²äºîÚ²Ü, ·»Ý»ñ³É-Ù³Ûáñ*

ՀՀ աշխարհաքաղաքական դրությունը պարտավորեցնում է նրա Զինված ուժերի ամենօրյա ·ործունեության մեջ ·լխավոր ուշադրությունը դարձնել մարտական և վորահավաքային պատրաստության այնպիսի մակարդակի ապահովման վրա, որն անհրաժեշտ է հայրենիքի պաշտպանության համար: ՈՒստի կարիք կա ուսումնասիրելու վորահավաքի կազմակերպման և անցկացման բնա·ավառում կուտակված համաշխարհային փորձը:

Ժամանակակից վորահավաքը բարդ ·ործընթաց է՝ պայմանավորված պատերազմի, առանձնապես նրա սկզբնական շրջանի բնույթով ու դրանից բխող պահանջներով, և վորքերը պետք է մշտապես պատրաստ լինեն համալրման, իսկ վինկոմիսարիատները՝ վորակոչի խստորոշ ժամկետներում լրացուցիչ մարդկային և տրանսպորտային ռեսուրսներ բանակ ներ·րավելուն:

Բոլոր դեպքերում վորահավաքը նըպատակ է հետապնդում ժամանակին չեվոքացնելու երկրի վրա կախված վտան·ը, ընդամին մոբիլիվացվում են ողջ ուժերը՝ հակառակորդի ա·րեսիվ ·ործողությունները կանխելու, մեծ ուժերով նրան հակահարված տալու և վավթված տարածքներից դուրս քշելու համար: Այս առումով ներկայումս վորահավաքը պետք է բավարարի հետևյալ հիմնական պահանջներին.

—վորքերի վորահավաքային ծավալում կարճ ժամկետներում,

—մարտական տա·նապի ազդանշանով վորքերի արա· ապակենտրոնացում մշտական տեղակայման կետերից և տեղաբաշխում իրենց համար նախատեսված պահեստային շրջաններում,

—յուրաքանչյուր վորամասի (ստորաբաժանման) կարողություն՝ ինքնուրույն համալրվելու և սահմանված ժամկետներում իրեն լրիվ մարտական պատրաստության բերելու:

Զորահավաքի հաջող անցկացման անհրաժեշտ պայմաններն են՝

—մարդկային ռեսուրսների առկայությունը և պատրաստվածությունը վորամասերի համալրմանն ու ծավալմանը, ինչպես նաև նոր վորամասերի ու ստորաբաժանումների ձևավորման համար,

—խաղաղ ժամանակ սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների անհրաժեշտ պաշարների կուտակումը,

—վորահավաքի ենթակա վինապարտների և տրանսպորտային միջոցների հաշվառումը, իրազեկումը (վինապարտների, ինչպես նաև տրանսպորտային միջոցների վերաբերյալ՝ համապատասխան սուբյեկտների), հավաքումը և ընդունումը վինված ուժերի կազմի մեջ:

Զորահավաքին ·ործնական նախապատրաստման և վորքերի՝ ըստ պատերազմական ժամանակի հաստիքների համալրման հաջող իրականացման ·րավականն է վորամասերի և վինկոմիսարիատների սերտ համա·ործակցությունը վորահավաքային ռեսուրսների ուսումնասիրման, ընտրման, կցա·րման, իրազեկման, որակական կազմի ապահովման և նրանց ժամանման ժամկետների սահմանման ·ործում: Այդ ամենը պետք է կատարվի մշտապես՝ խաղաղ ժամանակ պլանների մշակման սկզբից նեթ և շարունակվի մինչև այն պահը, երբ վորամասը համալրումից հետո մեկնի ըստ իր օպերատիվ նախանշանակման: Համա·ործակցության ապահովման հետ

կապված հարցերը կարող են լինել տարբեր բնույթի և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կախված լինել զորահավաքային առաջադրանքների ծավալից, համալրման պայմաններից, զորակոչվող և ներ·րավվող ռեսուրսների որակից և այլ հան·ամանքներից:

Ժամանակակից զորահավաքների արա·ընթացության պայմաններում զինապարտների պատրաստման և ստորաբաժանումների մարտական կար·ավորման համար ժամանակ չի լինի: Հետևաբար զորամասը պետք է համալրվի այնպիսի կցա·րված անձնակազմով, որն ստորաբաժանում ժամանելուն պես, առանց լրացուցիչ պատրաստման կարողանա վստահորեն կատարել հաստիքային պաշտոններով նախատեսվող պարտականությունները:

Այս հարցերը կարելի է ճիշտ լուծել միայն զինապարտների ընտրության նախորոշմանը և ըստ համապատասխան հաստիքային պաշտոնների բաշխմանը զորամասերի ղեկավար կազմերի անձնական մասնակցության պայմանով: ՈՒստի անհրաժեշտ են զորամասերի հրամանատարների և զինկոմների միջև ·ործնական կապերի առկայություն, փոխադարձ սկզբունքային պատասխանատվություն զորահավաքային ռեսուրսներով զորքերի համալրման բոլոր փուլերի համար:

Հրամանատարներն անձնական պատասխանատվություն են կրում զորամասերի ու ստորաբաժանումների զորահավաքային և մարտական պատրաստության, զորահավաքային միջոցառումների լրիվ և ճիշտ կատարման համար: Զորքերում և զինկոմիսարիատներում կցա·րված անձնակազմի ուսումնասիրման կազմակերպումը, ձևերը և կար·ը պետք է լինեն հրամանատարության ուշադրության կենտրոնում, քանի որ դրանցից է կախված զորքերի մարտունակությունը:

Որպեսզի հնարավոր լինի կարճ ժամկետում ապահովել զորքերի մարտունակությունը, անհրաժեշտ է ունենալ այնպիսի կցա·րված մարդկային ռեսուրսներ, որոնք ունակ լինեն շարք կան·նելուն պես կատարելու մարտական կար·ավորման իրենց վրա դրված խնդիրները: Անհրաժեշտ է, որ ամեն մի զինապարտ ·իտենա իր զորամասը, ստորաբաժանումը և պաշտոնը, տիրապետի հաստիքային սպառազինությանը և կարողանա այն հմտորեն օ·տա·ործել մարտում: Ընդ որում պետք է նկատի ունենալ, որ զինապարտի ուսումնասիրումը նշանակում է հենց այն, որ զինապարտի հետ զրույցի ընթացքում հրամանատարը առաջին հերթին պարզի այդ առումով նրա ունեցած պատրաստության մակարդակը:

## ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԵՏԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Զորքերի մարտական և զորահավաքային պատրաստության բարձրացման ·ործընթացում բացառիկ կարևոր դեր է խաղում խաղաղ ժամանակ զորահավաքային միջոցառումների ·ործնական նախապատրաստումը: Այստեղ առաջնակար· խնդիրներից մեկն է անձնակազմի ընդունման կետերի ·ործունեությունը՝ զորամասերը տարբեր աստիճանի մարտական պատրաստության բերելու, ըստ պատերազմական ժամանակի հաստիքները համալրելու, օպերատիվ խնդիրները ժամանակին կատարելու, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում նոր զորամասեր և ստորաբաժանումներ կազմավորելու ուղղությամբ:

Զորամասերում անձնակազմի ընդունման կետերը կարող են լինել շարժական (դաշտային) և անշարժ:

*Անձնակազմի ընդունման շարժական կետն* ստեղծվում է ռեսուրսների ընդունումը և բաշխումը դաշտային պայմաններում կատարելու նպատակով, երբ զորամասն արդեն դուրս է եկել իր օպերատիվ ·ործողությունների շրջան:

Ընդունման շարժական կետերի ըստեղծման համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան քանակով վրաններ և այլ նյութատեխնիկական միջոցներ, կետերը պետք է ապահովված լինեն լուսավորությամբ, ջեռուցմամբ և ջրամատակա-

րարմամբ: Բացի այդ, ընդունման շարժական կետի ամբողջ ·ույքը պետք է նախապես տեղադրված լինի առանձին բեռնամփոփների մեջ և ·տնվի դրա համար նախատեսված մեքենաների կամ հատուկ հարթակների վրա բարձված վիճակում:

*Անձնակազմի ընդունման անշարժ կետերն* ստեղծվում են զորամասերի հրամանատարների որոշումներով նախատեսվող վայրերում, որտեղ էլ կա-

3. նվազում է ընդունման կետի ծանրաբեռնվածությունը,

4. ստորաբաժանման հրամանատարությունը հնարավորություն է ստանում անմիջական շփման միջոցով ծանոթանալու և ուսումնասիրելու զինապարտներին:

Ինչպես ցույց է տալիս տարբեր երկրներում լրահամալրումների անցկացման փորձը, կցա·րված ռեսուրսի հիմ-




Նկ. 1. Անձնակազմի ընդունման շարժական կետի ծավալման տարբերակ

տարվում են ռեսուրսների ընդունումն ու բաշխումը:

Զորամասերը և զինկոմիսարիատները կարող են համատեղ ընդունել մի այլ որոշում նս՝ անձնակազմի ընդունումը կատարել անմիջականորեն այն վայրերում, որտեղ եղած զորահավաքային ռեսուրսն ապահովում է ստորաբաժանման համալրումն ու լրահամալրումն ըստ զինհաշվառումային մասնա·իտությունների և պաշտոնների:

Լրահամալրման նշված ձևն ունի հետևյալ առավելությունները.

1. կրճատվում է տվյալ ստորաբաժանման լրահամալրման ժամկետը,

2. մեծ նյութատեխնիկական ծախսեր չեն պահանջվում,

նական քանակը սովորաբար ժամանում է իրապեկումից 10 ժամ հետո, ինչը անձնակազմի ընդունման կետի համար կարող է առաջ բերել մեծ ծանրաբեռնվածություն: Այստեղ անշուշտ ուսանելի է Իսրայելի փորձը, որտեղ զորահավաքի անցկացման ընդհանուր ժամկետը կըրճատված հասցված է մի քանի ժամի:

Արտա·նա պայմաններում զորահավաքի անցկացման դեպքում անհրաժեշտ է լինում ռեսուրսների ընդունումը կատարել մի քանի հոսքով, ինչի համար նախապես ընտրվում և ·ործնականորեն պատրաստվում է կետի համապատասխան անձնակազմ:

Կցա·րված ռեսուրսների հոսքային ընդունման դեպքում առավելա·ույն աշ-

խատանքային ծանրաբեռնվածությունն ընկնում է ընդունման և հանդերձավորման բաժանմունքների անձնակազմերի վրա. ռեսուրսները ժամանակին ընդունելու և բաշխելու պատրաստությունը կարող է վճռորոշ նշանակություն ունենալ ընդհանրապես մարտական և զորահավաքային պատրաստության համար:

տասխան պաշտոններ զբաղեցնող այն սպաներից, որոնք լավ ·իտեն ընդունման կետի աշխատակար·ը, ունեն ·ործնական մեծ փորձ:

Անձնակազմի ընդունման կետի աշխատանքում կարևոր դեր են խաղում բաժանմունքների դասավորությունը, ·ույքային ապահովվածությունը, ջրա-

*Աղյուսակ*

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԵՏՈՒՄ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

| Հ/հ | Նյութատեխնիկական միջոցների անվանումը | Չափի միավորը | Անհրաժեշտ միջոցների քանակը |
|---|---|---|---|
| 1 | վրան | հատ | 2–3 |
| 2 | սեղան | հատ | 12 |
| 3 | աթոռ | հատ | 14 |
| 4 | «Չղջիկ» լապտեր | հատ | 12 |
| 5 | խմելու ջրի աման | հատ | 1 |
| 6 | ուսապարկ | հատ | ըստ կցագրված անձնակազմի քանակի |
| 7 | երկաթյա կամ փայտե հավաքովի դարակաշար հանդերձանքի համար | հատ | – ” – |
| 8 | ճամպրուկ (պարկ) զինապարտների փաստաթղթերի և անձնական գործերի համար | հատ | ըստ անհրաժեշտության |
| 9 | գրպանի լապտեր | հատ | 4–5 |
| 10 | գրենական պիտույքներ (գրիչ, մատիտ, ռետին, սոսինձ, աշխատանքային տետրեր և այլն) | հատ | ըստ անհրաժեշտության |
| 11 | նավթ (լապտերների համար) | լիտր | 10–15 |
| 12 | ցուցատախտակ (երկաթյա կամ փայտե) | հատ | 12 |

Զորահավաքային ռեսուրսների հոսքային ընդունումը կարող է կատարվել երկու եղանակով.

1. անձնակազմի ընդունումը և ըստ ստորաբաժանումների բաշխումը կատարվում են կոնկրետ հոսքերով, իսկ հանդերձավորումը՝ 1-2 հոսքով,

2. անձնակազմի ընդունումը և բաշխումը կատարվում են մեկ հոսքով, իսկ հանդերձավորումը՝ մի քանի հոսքով:

Բոլոր դեպքերում անձնակազմի ընդունման կետի ·ործունեությունը հետապնդում է մի նպատակ՝ ժամանակին և որակով կատարել լրահամալրումը:

Անձնակազմի ընդունման կետի պետն ու բաժանմունքների պետերն ընտըրվում և նշանակվում են համապա-

մատակարարումը, հուսալի կապի առկայությունը, կար·ուկանոնի պահպանումը, ինչպես նաև համալրող փինկոմիսարիատների հետ համա·ործակցությունը:

Այնտեղ, որտեղ ամենօրյա ուշադրության կենտրոնում են ·տնվում անձնակազմի ընդունման կետերի պատրաստության հարցերը, և ամիսը մեկ ան·ամ աշխատակազմի հետ անց են կացվում ·ործնական պարապմունքներ, չկան և չեն կարող լինել դրված խնդիրների ժամանակին և որակյալ կատարմանը խան·արող հան·ամանքներ:

Կարևոր է իմանալ, որ զորահավաքային ռեսուրսների ընդունման ժամանակի հաշվարկն սկսվում է ընդունման

բաժանմունք նրանց մտնելու պահից և ավարտվում է վինկոմիսարիատի կողմից առաջադրանքի լրիվ կատարումով ըստ սահմանված ժամկետների:

Զինապարտի մուտքն անձնակազմի ընդունման և բաշխման բաժանմունք իրավական տեսանկյունից նրան դարձնում է զինծառայող:




Նկ. 2. Անձնակազմի ընդունման կետում օգտագործվող ցուցատախտակներ և ուղեցույցներ

Անձնակազմի ընդունման կետի հիմնական խնդիրներն են՝ զինապարտների արա· ընդունումը և ըստ ստորաբաժանումների նրանց ժամանակին բաշխումը:

Անձնակազմի ընդունման կետը համարվում է պատրաստ, եթե բոլոր բաժանմունքները կար·ավորված, ծավալված են, կետի անձնակազմն ապահովված է բոլոր անհրաժեշտ միջոցներով և ·ործնականում ի վիճակի է կատարելու իր պարտականությունները:

Անձնակազմի ընդունման կետն ունի հետևյալ կազմը.

—ղեկավարություն,

—դիմավորման բաժանմունք,

—սպաների բաշխման բաժանմունք,

—սերժանտների և շարքայինների բաշխման բաժանմունք,

—հանդերձավորման բաժանմունք,

—բժշկական զննման բաժանմունք:

ԴԻՄԱՎՈՐՄԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դիմավորման բաժանմունքի առջև դրվում են հետևյալ խնդիրները:

1. Ժամանակին ծավալել բաժանմունքը (տես նկ. 3):

2. Դիմավորել զինապարտներին, ստու·ել խմբի ճիշտ ժամանումը և ցուցակում նշված զինապարտների քանակն ըստ զինկոմիսարիատների ներկայացրած տվյալների:

3. Դոզաչափման կետի անձնակազմի միջոցով ստու·ել ժամանած անձնակազմի դոզաչափական վիճակը:

4. Ուղեկցողների միջոցով խումբը փաստաթղթերով հանդերձ ուղարկել ընդունման և բաշխման բաժանմունք:

5. Ընդունման կետի պետին զեկուցել ժամանած անձնակազմի թվաքանակի և ներկայանալու ժամանակի վերաբերյալ:

6. Կատարել համապատասխան նշումներ հսկողության տեղեկա·րում:

ՍՊԱՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սպաների բաշխման բաժանմունքի առջև դրվում են հետևյալ խնդիրները:

1. Ժամանակին ծավալել բաժանմունքը:

2. Դիմավորման բաժանմունքի ուղեկցողներից ստանալ սպաների անձնական ·ործերն ու զին·րքույկներն ըստ ցուցակի:

3. Համաձայն հաստիքապաշտոնային ցուցակի և հսկողության տեղեկա·րի կատարել պահեստի սպաների բաշխումն ըստ ստորաբաժանումների:

Զին·րքույկներից առանձնացնել կորահավաքային կար·ադրա·րի հմ. 1 կտրոնները և բաշխել ըստ զինկոմիսարիատների:

4. Ընդունված սպաներին ուղարկել հանդերձավորման բաժանմունք, այնուհետև՝ ստորաբաժանումների հրամանատարների և ծառայության պետերի տրամադրության տակ:

5. Կատարել ընդունվածների քանակական և հաստիքապաշտոնային հաշվառում:

6. Ընդունման կետի պետին ժամանակին զեկուցել ընդունված և բաշխված սպաների քանակի և որակի մասին:

7. Ընդունված սպաների անձնական ·ործերը, ծառայողական քարտերը, ցուցակները, կորահավաքային կար·ադրա-

·րի հմ. 1 կտրոնները հանձնել անձնակազմի ընդունման կետի պետին:

8. Ընդունված սպաների ցուցակի վավերացված երկրորդ օրինակը հանձնել զինկոմիսարիատների ներկայացուցիչներին:

7. Ընդունված սերժանտների և շարքայինների ցուցակի վավերացված երկրորդ օրինակը հանձնել զինկոմիսարիատների ներկայացուցիչներին:

8. Ընդունումից և բաշխումից հետո հսկողության տեղեկա·իրը և ցուցակի ա-




Նկ. 3. Դիմավորման բաժանմունքի սխեմա

ռաջին օրինակը, կորահավաքային կար·ադրա·րի հմ. 1 կտրոնները հանձնել անձնակազմի ընդունման կետի պետին:

9. Անձնակազմի ընդունման կետի պետին ժամանակին զեկուցել ընդունված և բաշխված զինապարտների քանակի և որակի մասին:

### ՍԵՐԺԱՆՏՆԵՐԻ ԵՎ ՇԱՐՔԱՅԻՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սերժանտների և շարքայինների բաշխման բաժանմունքի առջև դրվում են հետևյալ խնդիրները:

1. Ժամանակին ծավալել բաժանմունքը:
2. Դիմավորման բաժանմունքի ուղեկցողներից ստանալ զինապարտների զին·րքույկները և ցուցակները:
3. Համաձայն հաստիքապաշտոնային ·րքի և հսկողության տեղեկա·րի կատարել սերժանտների ու շարքայինների բաշխումն ըստ ստորաբաժանումների:
4. Զին·րքույկներից առանձնացնել կորահավաքային կար·ադրա·րի հմ. 1 կտրոնները և բաշխել ըստ զինկոմիսարիատների, իսկ զին·րքույկները՝ ըստ ստորաբաժանումների:
5. Դուրս ·րել հանդերձանքի քարտ, հանձնել զինապարտներին և նրանց ուղարկել հանդերձավորման բաժանմունք:
6. Կատարել ընդունվածների քանակական և որակական հաշվառում՝ ըստ հաստիքապաշտոնային ·րքերի:

### ՀԱՆԴԵՐՁԱՎՈՐՄԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հանդերձավորման բաժանմունքի առջև դրվում են հետևյալ խնդիրները:

1. Ժամանակին ծավալել բաժանմունքը:
2. Ժամանակին հանդերձավորել զինապարտներին և նրանց ապահովել ուսապարկերով:
3. Ընդունել զինապարտների անձնական իրերը:
4. Կատարել հանդերձավորված զինապարտների և իրային միջոցների հաշվառում:
5. Հանդերձավորված անձնակազմի քանակի մասին պարբերաբար զեկուցել անձնակազմի ընդունման կետի պետին:

ԲԺՇԿԱԿԱՆ ՔՆՆՄԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ընդունման կետի բժշկական կննման բաժանմունքի առջև դրվում են հետևյալ խնդիրները:

1. Բժշկական կննման ենթարկել այն զինապարտներին, որոնք ·ան·ատվում են առողջական վիճակից, ինչպես նաև բոլոր խոհարարներին և սննդամթերման աշխատանքներում ընդ·րկվող անձնակազմին:

2. Այն զինապարտներին, որոնք ունեն բժշկական հետազոտման կարիք, ընդունման կետի պետի միջոցով ուղարկել համապատասխան զինկոմիսարիատների տրամադրության տակ:

3. Սահմանել սանիտարահի·իենիկական հսկողություն և սանիտարական վիճակի մասին զեկուցել անձնակազմի ընդունման կետի պետին:

4. Սահմանել հսկողություն ջրամատակարարման, սննդի ընդունման և բաշխման կետերի վրա:

Նշված բոլոր խնդիրների կատարման դեպքում անձնակազմի ընդունման կետը հնարավորություն կունենա մեկ ժամում ընդունելու, հանդերձավորելու և ըստ ստորաբաժանումների բաշխելու սահմանված քանակով մարդկանց:

Քննարկված խնդիրների ճիշտ և ժամանակին կատարումը որոշիչ դեր կխաղա զինված ուժերի մարտական և զորահավաքային պատրաստության բարձրացման ·ործում:

## è²¼Ø²Î²Ü ÎàðàôêîÜºðÆ ¸²ê²Î²ð¶Ø²Ü Ð²ðòÆ Þàôðæ

*Ø. ¾. ØÎðîâÚ²Ü, µÅßÏ³Ï³Ý ·ÇïáõÃÛáõÝÝ»ñÇ Ã»ÏÝ³Íáõ,*
*¶. ². ²Ô²Ú²Ü, µ/Í ·Ý¹³å»ï, µÅßÏ³Ï³Ý ·ÇïáõÃÛáõÝÝ»ñÇ Ã»ÏÝ³Íáõ,*
*ê. ¶. ¶²Èêî Ú²Ü, µ/Í ÷áË·Ý¹³å»ï, µÅßÏ³Ï³Ý ·ÇïáõÃÛáõÝÝ»ñÇ ¹áÏïáñ, åñáý»ëáñ*

Վերջին տասնամյակներում երկրա·նդի կանայան շրջաններում ընթանում են իրենց նպատակներով, խնդիրներով ու մասշտաբներով տարբեր տեղային պատերազմներ: Մեծ մասամբ պատերազմող կողմերի կամ դրանցից մեկի մարդկային, տնտեսական, նյութական և մյուս ռեսուրսները խիստ սահմանափակ են լինում: Դրանցից առավել կարևորներից է մարդկային ռեսուրսը, որը կապված է բանակի անձնակազմի համալրման հետ: Խորհրդային Միության քայքայումից հետո նմանատիպ պրոբլեմ առաջացել է նաև նրա մի շարք նախկին հանրապետություններում, այդ թվում և Հայաստանի Հանրապետությունում: Հարկ է նշել, որ մինչև հիմա բանակի համալրման համար մշակված բազմաթիվ տարբերակներում քիչ ուշադրություն է դարձվել ռազմական կորուստների վերական·նման պրոբլեմին, չնայած դրա կարևորությանը: Չի բացառվում, որ մեծ պետությունների համար դա պայմանավորված է բավարար ռեսուրսների առկայությամբ:

Ընդհանրացնելով եղած տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ ·ործնականում մեծ պետությունների կողմից ռազմական կորուստների հաշվառման տարբերակներն արտացոլում են միայն զան·-վածային ոչնչացման զենքի կիրառման հետևանքները: Սակայն Բալկանյան թերակղզում և Հյուսիսային Կովկասում (1999 թ.) մղված տեղային պատերազմները ցույց են տալիս, որ այս ասպարեզում մեծ պետությունների համար նույնպես առաջացել է որոշակի ճշ·րտումների անհրաժեշտություն:

Ռազմական կորուստների պրոբլեմի լուծումը թույլ կտա կատարել բժշկական օ·նության օպտիմալ պլանավորում, օբյեկտիվորեն ·նահատել սանիտարական կորուստները, արա· կազմակերպել վիրավոր և հիվանդ մարտիկների վերադարձը շարք և, հետևաբար, որոշակի ներդրում ունենալ զորահավաքային պրոբլեմների լուծման մեջ:

Մեր կարծիքով այստեղ կարևոր է ռազմական կորուստների դասակար·ումը: Վիճակա·րական նյութերի վերլուծությունն առանց այդ դասակար·ման ·ործնականում կարող է բերել ոչ ճիշտ հետևությունների և առաջարկների:

ԱՊՀ-ի պետություններում ամենալայն տարածում են ստացել Բ. Կ. Լեոնարդովի և Լ. Ս. Կամինսկու կողմից առաջարկված դասակար·ումները:

Ըստ Լեոնարդովի դասակար·ման (տես աղ. 1) ընդհանուր ռազմական կորուստները բաժանվում են երկու խմբի.

—*անդառնալի կորուստներ*, որոնց շարքն են դասվում սպանվածները, անհայտ կորածները և ·երի ընկածները, պինծառայողների մարտական ծառայության շրջանում, առաջ է ·ալիս կորքերի մարտական ·ործողությունների հետևանքով, սակայն կարող են դիտվել նաև կենցաղային բնույթի ցրտահարությունների առանձին դեպքեր, որոնք ընդհանուր ոչինչ չունեն պինծառայության հետ: Նման ցրտահարությունները, ինչպես նաև պատահական հրակենային վերքերը՝ զենքի հետ անզ·ույշ վարվելու հետևանքով, կամ էլ զենքի այլ տեսակներից պատահական վիրավորումները չեն կարող ընդ·րկվել մարտական սանիտարական կորուստների թվում,

—պ·ալի ·ործնական դժվարություն է ներկայացնում այն վնասվածքների (կոտրվածքներ, կոնտուզիաներ, ցրտահարություններ) մարտական բնույթի հաստատումը, որոնք առաջացել են ոչ թե հակառակորդի զենքի անմիջական կիրառումից, այլ ·ործող բանակի պայմաններում՝ այլ պատճառներով,

*Աղյուսակ 1*

ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ Բ. Կ. ԼԵՈՆԱՐԴՈՎԻ

| Ռազմական կորուստներ | | | |
|---|---|---|---|
| Անդառնալի | | Սանիտարական (մարտական և ոչ մարտական) | |
| 1 | սպանվածներ (մինչև բուժօգնություն ստանալը մահացածներ) | 1 | վիրավորներ |
| | | 2 | կոնտուզիա ստացածներ |
| 2 | անհայտ կորածներ | 3 | ցրտահարվածներ |
| 3 | գերի ընկածներ | 4 | այրվածքներ ստացածներ |
| | | 5 | մարտական թունավոր նյութերով ախտահարվածներ |
| | | 6 | հիվանդներ |
| | | 7 | խառնակազմ (խառը ախտահարումներով) |

—*սանիտարական կորուստներ*, որոնց շարքն են դասվում վիրավորները, հիվանդները, բուժօ·նություն ու բուժում ստանալու համար բուժհիմնարկներ (բուժստորաբաժանումներ) ընդունվածները:

Մասնա·ետները նշում են ներկայված դասակար·ման որոշ թերություններ.

—նրանում հաշվի չեն առնվում այն մարտական վնասվածքներն ու հիվանդությունները, որոնք չեն հան·եցնում շարքից դուրս ·ալուն,

—վիճելի է բոլոր ցրտահարվածներին անխտիր ռազմական կորուստների թվին դասելը: Ցրտահարությունների ·երակշռող մեծամասնությունը, հատկապես այն մասը, որը տեղի է ունեցել

—որոշ դեպքերում ինքնասպանությունները, որոնք սովորաբար վերա·րվում են ոչ մարտական սանիտարական կորուստներին, պետք է մտնեն մարտական կորուստների մեջ, եթե, օրինակ, անելանելի դրության մեջ հայտնվելով ու չցանկանալով ·երի ընկնել, վիրավորը վերջին փամփուշտն ուղղում է իր վրա,

—մարտական իրավիճակի, ռազմական ·ործողությունների թատերաբեմի ու էքստրեմալ ախտաբանական որոշ պայմաններ հաճախ առաջ են բերում

մարտական սանիտարական կորուստների բնույթ կրող հիվանդություններ, որոնք կարող են ավելի մեծ մահացության հան·եցնել և մարտունակության համար ավելի անբարենպաստ լինել, քան հրազենային վնասվածքները (օրինակ՝ մալարիա, տուլյարեմիա և այլն),

—բոլորովին հաշվի չի առնվում մարտական վիրաբուժական վնասվածքների նոր տեսակների առաջացումը, ինչպես նաև թերապևտիկ ախտահարման այլ տեսակներ:

Բ. Կ. Լեոնարդովն ինքն ընդ·ծում է, որ ժամանակակից պատերազմում մարտական կորուստները ճիշտ դասակար·ելու համար անհրաժեշտ է կիրառել մի որևէ որոշակի և օբյեկտիվ չափանիշ:

Լ. Ս. Կամինսկու դասակար·ման մեջ (տես աղ. 2) տարբերակված են մարտական և ոչ մարտական կորուստները, որոնք իրենց հերթին ստորաբաժանվում են անդառնալի և ժամանակավոր կորուստների:

Համարվում է, որ այս դասակար·ումը չի կարող ամբողջությամբ կիրառվել պատերազմի ժամանակ և օպերատիվ մշակումների դեպքում, քանի որ այն կարող է հան·եցնել միևնույն անձանց կրկնակի հաշվառման. որպես վիրավորների՝ ժամանակավոր կորուստների խմբում, որպես կորայրվածների կամ մահացածների՝ անդառնալի կորուստների խմբում:

Մենք համոզված ենք, որ տարբեր տիպի մարտերի ժամանակ կորուստների տարբերակված նորմատիվների ստեղծման ճիշտ եղանակը որոշակի մարտական իրադրության բոլոր պայմանների և սանիտարական կորուստների թվի ու բնույթի վրա այդ իրադրության առանձին տարրերի ներ·ործության խոր և համակողմանի վերլուծությունն է: Մասնավորապես, առանձին մարտական ·ործողությունների դեպքում էական կարելի է համարել ժամանակի ·ործոնը և համեմատվող կորախմբերի թվակազմի ·ործոնը:

*Աղյուսակ 2*

ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ Լ. Ս. ԿԱՄԻՆՍԿՈՒ

| | | | |
|---|---|---|---|
| Մարտական ռազմական կորուստներ | | | |
| Անդառնալի | | Ժամանակավոր | |
| 1 | սպանվածներ (մինչև բուժօգնության ցուցաբերումը մահացածներ) | 1 | վիրավորներ |
| 2 | անհայտ կորածներ | 2 | կոնտուզիա ստացածներ |
| 3 | գերի ընկածներ | 3 | ցրտահարվածներ |
| 4 | բուժօգնության առաջին կետի ճանապարհին մահացածներ (մարտական հարվածներից) | 4 | այրվածք ստացածներ |
| 5 | գերության մեջ մահացածներ | 5 | մարտական թունավոր նյութերով ախտահարվածներ |
| 6 | բուժական հիմնարկներում վերքերից մահացածներ | 6 | մարտական վիրավորումների հետևանքով արձակուրդ մեկնածներ |
| 7 | մարտական այլ վիրավորումներից մահացածներ | | |
| 8 | մարտական այլ վիրավորումների հետևանքով բանակից զորացրվածներ | | |
| Ոչ մարտական ռազմական կորուստներ | | | |
| Անդառնալի | | Ժամանակավոր | |
| 1 | հիվանդություններից մահացածներ | 1 | հիվանդներ |
| 2 | ոչ մարտական վնասվածքներից մահացածներ | 2 | հիվանդության պատճառով արձակուրդ մեկնածներ |
| 3 | ինքնասպանությամբ մահացածներ | | |
| 4 | հիվանդությունների և ոչ մարտական վնասվածքների հետևանքներից մահացածներ | | |

Ռազմական կորուստների վերաբերյալ տվյալների աղբյուր կարող են ծառայել ամենօրյա բժշկական զեկույցները, որոնք պետք է ներառեն մարտական վիրավորումների և հիվանդությունների հետևանքով շարքից դուրս եկածների մասին տեղեկություններ: Սակայն մանրամասնորեն մշակված պաշտոնական սանիտարավիճակագրական տեղեկություններ և հաշվետվություններ հրապարակվել են շատ քիչ պատերազմների մասին: Ընդ որում, առանձին պատերազմների մասին աշխատությունների մի զգալի մասը պատկանում է զինվորական պատմաբանների գրչին: Նրանց հետազոտությունների հիմքում զինվորական արխիվների նյութերն են, զինվորական զեկույցները, պատերազմող բանակներում ու չեզոք երկրներում գործող գործակալների, զինվորական թղթակիցների հաղորդագրությունները և այլն: Այդ հետազոտություններից շատերում մանրամասն դիտարկվում են առանձին ճակատամարտերի ու պատերազմների ռազմավարական և մարտավարական առումները, մինչդեռ կորուստները հաճախ բերվում են ընդհանուր, հանրագումարային տեսքով:

Վիետնամական, աֆղանական, իրան-իրաքյան, չեչենական, բալկանյան և այլ տեղային պատերազմներում եղած ռազմական կորուստների վերաբերյալ հաղորդումները մանրամասն ու հավաստի վիճակագրական տեղեկություններ չեն պարունակում: Դրանց ժամանակ զորքերի թվաքանակի նվազման պատճառները դժվար է որոշել, որովհետև անհնար է սպանվածների թիվն առանձնացնել «անհայտ կորածների» թվից, դասալիքների թիվը՝ գերի ընկածների թվից, կամ ճիշտ որոշել, թե վերջիններից քանիսն են եղել վիրավոր, իսկ քանիսը գերության մեջ մահացել են վերքերից կամ հիվանդություններից: Բացի այդ, չի բացառվում, որ այդ տվյալները կանխամտածված կերպով խեղաթյուրված լինեն ինչպես հաղթողների, այնպես էլ պարտվողների կողմից:

ԶՈՒ-ի մարտունակության մակարդակի պահպանման ու բարձրացման համար մենք, հիմք ընդունելով Կամինսկու դասակարգումը, առաջարկում ենք կորուստների դասակարգումը կատարել հետևյալ կերպ (տես աղ. 3):

1. Պատերազմական ժամանակվա բոլոր կորուստներն անվանել ռազմական կորուստներ:

2. Ռազմական կորուստների մեջ ընդգրկել և՛ բանակի անձնակազմի, և՛ քաղաքացիական բնակչության կորուստները:

3. Անդառնալի ու սանիտարական կորուստների մեջ հաշվի առնել ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական կորուստները: Սրա կարևորությունը բացատրվում է փոքր պետությունների մարդկային ռեսուրսների ու տնտեսական հնարավորությունների սահմանափակությամբ, ընդհանուր առողջապահության սուղ միջոցների առկայությամբ, ինչպես նաև բանակի համար վիրավորներին արագ շարք վերադարձնելու անհրաժեշտությամբ: Նման առաջարկի կիրառման դեպքում կփոխվեն զինվորական ղեկավարության քաղաքականությունը և պետական կառույցների մոտեցումն ու վերաբերմունքը անդառնալի կորուստների նկատմամբ (բանակի անձնակազմի համալրման հնարավորությունը թռիչքաձև կաճի, զորքի հիմնական համալրումը կկատարվի ի հաշիվ արդեն մարտի բովով անցած զինվորների, ինչն իր հերթին զգալի չափով կբարձրացնի անձնակազմի մարտունակությունը):

4. Բացարձակ և հարաբերական կորուստներում որպես հոսպիտալներում բուժման ժամկետների համար սահմանագիծ վերցնել 3 ամիսը, ինչը հիմնվում է հետևյալ փաստարկների վրա՝

—ներկայիս պատերազմական գործողություններում զգալի թիվ են կազմում բազմակի և համակցված վնասվածքները, որոնց բուժման ժամկետը, ինչպես ցույց է տալիս փորձը, տևում է մինչև 3 ամիս: Ավելի մեծ ժամկետով բուժման ենթակա վիրավորներին պետք է դիտել որպես հարաբերական անդառնալի կորուստ,

—3 ամսից ավելի բուժվող զինծա-

*Աղյուսակ 3*

ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

<table>
<tr><td colspan="6">Մարտական ռազմական կորուստներ</td></tr>
<tr><td colspan="4">Անդառնալի</td><td colspan="2">Ժամանակավոր</td></tr>
<tr><td colspan="2">Բացարձակ</td><td colspan="2">Հարաբերական</td><td rowspan="2">1</td><td rowspan="2">մարտական վիրավորումների հետևանքով արձակուրդ մեկնածներ, եթե բուժման ընդհանուր ժամկետը չի գերազանցում 3 ամիսը</td></tr>
<tr><td>1<br>2<br>3<br>4<br>5</td><td>սպանվածներ (մինչև բուժօգնության ցուցաբերումը մահացածներ)<br>բուժօգնության առաջին կետի ճանապարհին մահացածներ<br>բուժական հիմնարկներում վերքերից մահացածներ<br>անհայտ կորածներ<br>գերի ընկածներ</td><td>1<br>2<br>3</td><td>հոսպիտալներում 3 ամսից ավելի բուժվողներ<br>մարտական վիրավորումների հետևանքով բանակից զորացրվածներ<br>մարտական վիրավորումների հետևանքով արձակուրդ մեկնածներ, եթե բուժման ընդհանուր ժամկետը գերազանցում է 3 ամիսը</td></tr>
<tr><td colspan="6">Ոչ մարտական ռազմական կորուստներ</td></tr>
<tr><td colspan="4">Անդառնալի</td><td colspan="2">Ժամանակավոր</td></tr>
<tr><td colspan="2">Բացարձակ</td><td colspan="2">Հարաբերական</td><td rowspan="2">1<br>2</td><td rowspan="2">հիվանդներ, եթե բուժման ընդհանուր ժամկետը չի գերազանցում 3 ամիսը<br>հիվանդության պատճառով արձակուրդ մեկնածներ, եթե բուժման ընդհանուր ժամկետը չի գերազանցում 3 ամիսը</td></tr>
<tr><td>1<br>2<br>3</td><td>հիվանդություններից մահացածներ<br>ոչ մարտական վնասվածքներից մահացածներ<br>ինքնասպանությամբ մահացածներ</td><td>1<br>2<br>3<br>4</td><td>հիվանդության և ոչ մարտական վնասվածքների հետևանքով մահացածներ<br>հիվանդությունների հետևանքով բանակից զորացրվածներ<br>հիվանդներ, եթե բուժման ընդհանուր ժամկետը գերազանցում է 3 ամիսը<br>հիվանդությունների հետևանքով արձակուրդ մեկնածներ, եթե բուժման ընդհանուր ժամկետը գերազանցում է 3 ամիսը</td></tr>
<tr><td colspan="6">Ըստ կիրառված զենքի կամ ազդող գործոնի տեսակի</td></tr>
<tr><td>1</td><td colspan="5">հրաձգային զենքից վիրավորներ</td></tr>
<tr><td>2</td><td colspan="5">ականապայթյունային վնասվածքներով վիրավորներ</td></tr>
<tr><td rowspan="2">3</td><td rowspan="2">կոնտուզիա ստացածներ</td><td colspan="4">մարտական պայմաններում</td></tr>
<tr><td colspan="4">ոչ մարտական պայմաններում</td></tr>
<tr><td rowspan="2">4</td><td rowspan="2">ցրտահարվածներ</td><td colspan="4">մարտական պայմաններում</td></tr>
<tr><td colspan="4">ոչ մարտական պայմաններում</td></tr>
<tr><td rowspan="2">5</td><td rowspan="2">այրվածք ստացածներ</td><td colspan="4">մարտական պայմաններում</td></tr>
<tr><td colspan="4">ոչ մարտական պայմաններում</td></tr>
<tr><td>6</td><td colspan="5">ռադիացիոն վնասվածք ստացածներ</td></tr>
<tr><td>7</td><td colspan="5">մարտական թունավոր նյութերով ախտահարվածներ</td></tr>
<tr><td>8</td><td colspan="5">կենսաբանական զենքից ախտահարվածներ</td></tr>
<tr><td>9</td><td colspan="5">կենցաղային թունավորումներով ախտահարվածներ</td></tr>
</table>

ռայոդի օր·անիցմը ենթարկվում է ապահարմարման, իսկ ռապմական ·ործին կրկնական վարժեցումը կխլի լրայուցիչ ժամանակ,

—բուժման ժամկետի ընդհանուր տևողությունը հակադարձ համեմատական է շարք վերադառնալու վիրավորի ցանկությանը:

5. Կորուստները տարբերակել ըստ կիրառվող ցենքի կամ ապդող ·ործոնի:

Քննարկված հարցը բավականին բարդ է և առայժմ չի ստացել վերջնական լուծում, որը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ զինված ուժերի մարտունակության բարձրացման համար:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. *Л. С. Каминский.* К вопросу построения классификации военных потерь. «Военно-медицинский журнал» (այսուհետև՝ «ВМЖ»), 1946, № 7—8.
2. *Ф. И. Комаров, О. С. Лобастов.* Основные итоги и уроки медицинского обеспечения Советской Армии в годы Великой Отечественной войны. «ВМЖ», 1990, № 5.
3. *Б. К. Леонардов.* Наставление по санитарной службе Красной Армии. М.—Л., 1941.
4. *И. М. Чиж, Е. Г. Жиляев, Л. Л. Галин, В. В. Белозеров.* Военно-медицинская доктрина—научная основа медицинского обеспечения Вооруженных сил. «ВМЖ», 1995, № 12.


# МОБИЛИЗАЦИОННАЯ ГОТОВНОСТЬ

## ОСНОВНЫЕ МОБИЛИЗАЦИОННЫЕ МЕРОПРИЯТИЯ ПО ПОПОЛНЕНИЮ ВОЙСК ЛИЧНЫМ СОСТАВОМ

*Л. С. КАРАПЕТЯН, генерал-майор*

### РЕЗЮМЕ


Важнейшими условиями успешного проведения мобилизации являются: наличие людских ресурсов и их подготовленность для пополнения и развертывания частей, а также формирования новых; накопление в мирное время необходимых запасов вооружения, военной техники и других материальных средств; учет, оповещение, сбор и передача в состав вооруженных сил военнообязанных и транспортных средств, подлежащих мобилизации,—при тесном сотрудничестве командования частей и военных комиссариатов в деле изучения, отбора, приписки, оповещения, обеспечения качественного состава и определения сроков прибытия в часть мобилизационных ресурсов.

Знание требований, соответствующая выучка отведенных для этого кадров являются непреложным условием достижения успеха в деле доукомплектования частей личным составом, способным в самые короткие сроки приступить к исполнению своих штатных обязанностей и обеспечить высокую боеготовность частей.


## К ВОПРОСУ КЛАССИФИКАЦИИ ВОЕННЫХ ПОТЕРЬ

*М. Э. МКРТЧЯН, кандидат медицинских наук, Г. А. АГАЯН, полковник м/с, кандидат медицинских наук, С. Г. ГАЛСТЯН, подполковник м/с, доктор медицинских наук, профессор*

### РЕЗЮМЕ


Опыт локальных войн показывает, что проблема учета, восполнения и прогнозирования военных потерь становится все более насущной. Но для решения этой проблемы необходимо уточнить классификацию военных потерь.

На наш взгляд наиболее оптимальной является классификация Л. С. Каминского, требующая однако некоторой доработки, в частности: учета потерь не только личного состава, но и среди гражданского населения; учета

по абсолютной и относительной категориям с рубежом в 3 месяца лечения; дифференциация потерь по виду примененного оружия. Предлагаемая классификация позволит восполнение военных потерь производить за счет возвращенных в строй лиц, имеющих опыт боевых действий.

# THE MOBILIZATIONAL READINESS

## THE MAIN MOBILIZATIONAL MEASURES ON THE REINFORCEMENT OF THE TROOPS WITH THE STAFF

*L. S. KARAPETIAN, Major-General*

SUMMARY

The most important conditions for the successful process of mobilization are: the presence of human resources and their readiness for the reinforcement and the deployment of the units, and also the formation of the new ones; accumulation at the peaceful times of the necessary resources of the armament, the military technics and other material means; the registration, notification, gathering and transmission of the men liable for call-up to the Armed Forces and means of transport, subject to mobilization.

The pledge of the successful process of the mobilization is the close collaboration of the units' commandment and the military commissariats in the case of the consideration, selection, addition, notification, provision of the qualitative staff and definition of the dates of the arrival to the unit of the mobilized resources.

The knowledge of the demands, the appropriate training of the persons supposed for it are an indisputable condition for achieving success in the case of bringing up to strength of the units by the staff, capable of fulfiling their staff duties within the shortest period of time and providing a high combat preparedness of the units.

## ABOUT THE QUESTION OF THE CLASSIFICATION OF THE MILITARY LOSSES

*M. E. MKRTCHIAN, Candidate of Medical Sciences, G. A. AGAYAN, Colonel of Medical Service, Candidate of Medical Sciences, S. G. GALSTIAN, Lieutenant-Colonel of Medical Service, Doctor of Medical Sciences, Professor*

SUMMARY

The experience of the local wars shows that the problem of the registration, supply and forecasting of the military losses is becoming more and more vital. But in order to solve this problem it is necessary to make the classification of the military losses more exact.

The most optimal classification is the Kaminski's, which demands a certain revision, in particular: the registration of the losses not only in the staff, but also among the civil population; the registration according to the absolute and referential categories with the limit of three month's treatment, to differentiate the losses according to the applied weapon.

The suggested classification will allow to make the supplying of the military losses owing to the persons who returned to the formation and who have the experience of the combat activities.

# Ðúä-Æ ¼àðøºðàôØ

## Ð²Î²è²Îàð¸Æ ²ìÆ²òÆ²ÚÆ Ð²Î²¼¸ºòàôÂÚàôÜÀ ¼ºÜÆÂ²ÐðÂÆè²ÚÆÜ ¼àðøºðÆÜ ºì ¸ð² ¸ºØ ä²Úø²ðÆ àðàÞ ºÔ²Ü²ÎÜºð

*². ². ääàÔàêÚ²Ü, ÷áË·Ý¹³å»ï, ê. ². ²ê²îðÚ²Ü, Ï³åÇï³Ý*

Վերջին տարիներին տեղի ունեցած պինված հակամարտությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ավելի ու ավելի է մեծանում ավիացիայի և հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) միջոցների պայքարի դերը:

Որպես կանոն հակառակորդն առաջին հերթին կազմակերպում է ակտիվ հակազդեցություն զենիթահրթիռային զորքերին (ԶՀԶ): Ժամանակակից հակաօդային մարտում այդպիսի հակազդեցության արդյունավետությունն առանձնապես մեծ է լինում այն դեպքերում, երբ հայտնի են լինում զենիթահրթիռային համալիրների կոորդինատները:

ՀՕՊ-ի զորքերի ·ործողությունների ճիշտ կազմակերպման համար կարևոր է իմանալ հակառակորդի ավիացիայի կողմից ԶՀԶ-ին հակազդեցության հնարավոր եղանակները:

Գոյություն ունեն ԶՀԶ-ին հակառակորդի ավիացիայի հակազդեցության հետևյալ եղանակները.

—ռադիոէլեկտրոնային ճնշում՝ ԶՀԶ-ի ռադիոտեխնիկական միջոցների համար ակտիվ և պասիվ խան·արումների ստեղծմամբ,

—զենիթահրթիռային դիվիզիոնների կրակային ճնշում,

—կառավարման և հրակոծության դեմ տարաշարժերի կատարում,

—թռիչք փոքր բարձրություններով,

—ներ·ործություն ԶՀԶ-ի օբյեկտների վրա առանց կրակի ·ոտի մտնելու:

Զենիթահրթիռային համալիրում (ԶՀՀ) ռադիոէլեկտրոնային խան·արումների համար խոցելի են մի քանի կապուղիներ: Հեռակառավարման համակար·երում այդպիսի կապուղիներ են նշանակետի, հրթիռի ուղեկցման և ռադիոկառավարման ·ծի կապուղիները, իսկ կիսաակտիվ ինքնուղղորդման համակար·երում այդ կապուղիներն են նշանակետի լուսավորման ռադիոտեղորոշիչի՝ նշանակետի ուղեկցման և ինքնուղղորդման ·լխիկի կապուղիները: Խան·արումները լինում են ակտիվ և պասիվ (տես նկ. 1) և կարող են ազդեցություն ·ործել նաև զենիթային կառավարվող հրթիռների մարտական լիցքի ոչ հպումային պայթուցիչների աշխատանքի վրա, ինչպես նաև հետախուզության և նշանացուցման կայանների աշխատանքի վրա:

*Ակտիվ խան·արումներն* ստեղծվում են խան·արումների հատուկ աղբյուրներով, որոնք էլեկտրամա·նիսական էներ·իա են ճառա·այթում ճնշման ենթակա ռադիոէլեկտրոնային միջոցների աշխատանքային հաճախականությունների տիրույթում: Ակտիվ խան·արումների ազդեցությամբ տեղի է ունենում օ·տակար ազդանշանի աղավաղում, քողարկում կամ կորուստ: Դրանց արդյունավետությունը կախված է խան·արումների աղբյուրի և ճնշվող սարքավորանքի պարամետրների էներ·իական, հաճախականային և ժամանակային հարաբերակցություններից:

Ներկայումս ոչ մոդուլացված խան·արումները լայն կիրառություն չունեն: Աղմկային խան·արումներն ստեղծվում են խան·արումների ·եներատորի տատանումները քաոսային աղմուկներով մոդուլացնելու եղանակով: Այս խան·արումները շատ դժվար է զտել կայանի




Նկ. 1. Խանգարումների դասակարգման սխեմա

ընդունիչ տրակտում, քանի որ ճառա·այթվող ազդանշանի լայնույթի, հաճախականության և փուլերի փոփոխությունները պատահական են, ինչն էլ այն դարձնում է անընդհատ ռադիոէլեկտրոնային խան·արումների առավել արդյունավետ տեսակներից մեկը: Տարածության կննում կատարող ՌՏԿ-ի վրա աղմըկային խան·արման ներ·ործության արդյունք է լինում նշանակետերից անդրադարձող ազդանշանների քողարկումը, որը տեղի է ունենում ցուցիչ սարքերի էկրաններում լուսավոր հատվածների (վոլերի) առաջացման հետևանքով: Ռադիոէլեկտրոնային կայանի տրված բնութա·րիչների դեպքում ցուցասարքի էկրանում խան·արման հատվածի (վոլի) լայնությունը և լուսավորվածության խտությունը կախված են լինում խան·արումների աղբյուրի հզորությունից և հեռավորությունից:

Կախված ճառա·այթվող հաճախականությունների սպեկտրի $\Delta f_n$ լայնությունից՝ խան·արումները լինում են նշանառվական և ծածկապատնեշային: *Նշանառվական խան·արման* ճառա·այթվող ազդանշանի հաճախականությունների սպեկտրի լայնությունը համեմատաբար փոքր է: Խան·արումների հաղորդիչը պետք է բավական ճշ·րտորեն համալարվի ըստ ճնշվող ռադիոէլեկտրոնային սարքի հաճախականության: Նեղ տիրույթով խան·արումների ստեղծումը հնարավորություն է տալիս ստանալու հզորությունների մեծ խտություն:

*Ծածկապատնեշային խան·արումների* հաճախականությունների տիրույթը կարող է լինել հարյուրավոր մե·ահերց: Այդպիսի խան·արումներն ազդում են տվյալ տիրույթում աշխատող բոլոր կայանների վրա: Ծածկապատնեշային խան·արումների դեպքում հզորության խտությունն էապես ավելի փոքր է լինում, քան նշանառվական խան·արումների դեպքում: Դա պայմանավորված է նրանով, որ հաղորդչի հզորությունը բաշխվում է հաճախականությունների լայն տիրույթում:

Նշանառվական և ծածկապատնեշային խան·արումների առավելությունները որոշակի չափով իրացվում են *սահուն խան·արումների* հաղորդիչներում: Հաճախականությունների լայն տիրույթի վրածածկումն ստացվում է խան·արումների հաղորդչի արա· վերալարմամբ, ընդսմին այս դեպքում հաճախա-

կանությունները ճառա·այթվում են համեմատաբար նեղ սպեկտրով: Այդպիսի հաղորդիչները բավական արդյունավետ են հաճախականության թռիչքաձև վերալարմամբ ՌՏԿ-ների ռադիոէլեկտրոնային ճնշման ժամանակ: Իմպուլսային խան·արումները շրջանաձև կննման ցուցասարքի (ՇԶՑ) և ուղղորդման ցուցասարքի (ՈՒՑ) էկրաններում ստեղծում են կեղծ պատկերներ, որոնք քողարկում են օ·տակար ազդանշանը և ապատեղեկացնում են օպերատորին: Այսպիսի խան·արումներից առավել տարածված են բազմակի, նմանակային և քաոսային իմպուլսային խան·արումները:

*Պասիվ խան·արումներն* ստեղծվում են տարբեր տիպի արհեստական անդրադարձիչների միջոցով և նախանշանակվում են օ·տակար ազդանշանի քողարկման կամ նմանակման (կեղծ նշանակետերի ստեղծման) համար:

Պասիվ խան·արումների ստեղծման առավել տարածված եղանակն է տարածության մեջ երկբևեռ անդրադարձիչների (մետաղապատված ժապավեններ կամ ապակեթելքեր) տուփերի ցրումը: Այդպիսի տուփերով էլեկտրամա·նիսական էներ·իայի առավելա·ույն անդրադարձումը դիտվում է անդրադարձիչների այնպիսի երկարությունների դեպքում, որոնք մոտավորապես հավասար են լինում ճնշվող ռադիոտեղորոշիչ սարքերով առաքվող ալիքի երկարությանը: Օ·տակար ազդանշանի քողարկման աստիճանը կախված է տարածության մեջ անդրադարձիչների խտությունից և ճնշվող ՌՏԿ-ի լուծունակությունից: Հեռակառավարման համակար·երում եղած հրամանատու ռադիո·իծն ապահովում է կառավարող հրամանների հաղորդումը ուղղորդման կետից հրթիռին: Այն ուղղորդման կոնտուրի օղակ է: Նրա աշխատանքի ցանկացած խախտում անմիջականորեն ազդում է նշանակետերի արդյունավետ հրակոծման՝ ԶՀՀ-ի հնարավորությունների վրա: Հրամանատու ռադիո·ծի կազմի մեջ մտնում են ծածկա·րիչը և ռադիոհաղորդիչը, որոնք տեղադրվում են ուղղորդման կետում, ռադիոընդունիչը և ապածածկա·րիչը, որոնք տեղադրվում են հրթիռում: Հնարավոր է կրող տատանումների (անընդհատ կամ իմպուլսային) տարբեր մոդուլացում՝ լայնաիմպուլսային, կոդաիմպուլսային, փուլային, հաճախականային և այլն:

Կառավարման հրամանատու ռադիո·ծերի (ԿՀՌ) համար սկզբունքորեն կարող են ստեղծվել նմանակային, աղմկային և քաոսային իմպուլսային խան·արումներ:

Նմանակային խան·արումն իր կառուցվածքով նմանակում է հրամանների ռադիոհաղորդչով ճառա·այթվող ազդանշանը: Այդ խան·արումների ապարատուրայի մշակումը հնարավոր է միայն հրամանատու կառավարող ռադիո·ծերի հաճախականությունների, կոդերի և պարամետրների վերաբերյալ տվյալների առկայության դեպքում: Այդ ապարատուրայի աշխատանքը կարող է հիմնված լինել կառավարող հրամանների ընդունման, ապածածկա·րման, հապաղեցման և վերաճառա·այթման վրա: Խան·արման ·ործողության արդյունքը ԶԿՀ-ի ուղղորդման հնարավոր խափանումն է:

Աղմկային և քաոսային իմպուլսային խան·արումները կարող են առաջ բերել ապածածկա·րչի կեղծ ·ործարկումներ, կառավարող հրամանի լրիվ կամ մասնակի ճնշում և աղավաղում:

Խան·արումներից պաշտպանության միջոցների ընտրությունը կատարվում է ռադիոտեղորոշումային կապուղիների վրա խան·արումների ազդեցության նվազեցման նպատակով: Պասիվ խան·արումներից պաշտպանվելու համար կիրառվում է շարժվող նշանակետերի ընտրիչ (ՇՆԸ) կամ շարժունակ նշանակետերի ընտրիչ (ՇկՆԸ) ապարատուրա, որի աշխատանքը հիմնված է Դոպլերի էֆեկտի կիրառության վրա:

Ակտիվ խան·արումներից պաշտպանության ամենաարդյունավետ միջոցը ՌՏԿ-ի աշխատանքի հաճախականության վերափոխումն է այն պայմանով, որ հաճախականության վերափոխման տիրույթը մեծ լինի խան·արումների սպեկտրի լայնությունից: Ակտիվ խան-

·արումների պայմաններում դժվարանում է կամ անհնար է դառնում նշանակետի հեռավորության որոշումը: Տարբեր ԶՀՀ-ներում կիրառվում է համապատասխան ապարատուրա, որը համալիրի ռադիոտեղորոշումային կապուղին մասամբ պաշտպանում է ակտիվ խան·արումներից: Այդպիսի ապարատուրա է, օրինակ, ԱԽԳ-ն (խան·արումների ապամոդուլացման սարքը), որը կիրառվում է Ս-125Մ ԶՀՀ-ներում: Այն կատարում է նշանակետից եկող մոդուլացված ազդանշանների «հարթեցում», հրաձը·ության ժամանակ հրթիռի ուղղորդման դինամիկական սխալի նվազեցում: Սակայն այս սարքավորումն ի վիճակի չէ որոշելու ակտիվ խան·արումների ստեղծողի (ԱԽՍ) հեռավորությունը:

Որոշ ԶՀՀ-ներում (Ս-300ՊՄՈՒ) կա այնպիսի ապարատուրա, որը ռադիոտեղորոշումային կապուղին պաշտպանում է միայն խան·արումների այն ազդանշաններից, որոնք շարժվում են ալեհավաքների ուղղորդվածության տրամատի կողմնային թերթերի ուղղությամբ:

Համարվում է, որ եթե խան·արումների աղբյուրի պարամետրներն ըստ իրենց ուղղության, հաճախականության և բևեռացման համընկնում են ճնշվող ՌՏԿ-ի համապատասխան պարամետրների հետ, պաշտպանության որևէ եղանակի կիրառություն անհնար է դառնում:

Խան·արումների ժամանակ կենիթային ստորաբաժանումներին ԱԽՍ-ի նշանայցուցման համար օ·տա·ործվում է հետախուզական համակար·ի հաղորդած ուղղորոշումային տեղեկույթը:

Խան·արումներ ստեղծող ինքնաթիռի դիրքի և շարժման պարամետրների վերաբերյալ (հեռավորությունների տիրույթի, հնարավոր բարձրության, արա·ության և այլն) որևէ տվյալի ստացումը նվազեցնում է կենիթային ստորաբաժանման կողմից ԱԽՍ-ի որոնման համար անորոշության շրջանը («մաաշտաբավորում» է ուղղորոշումը):

ԱԽՍ-ի հորիզոնական հեռավորությունը և այդ հարթության մեջ նրա շարժման ուղղությունը որոշելու համար անհրաժեշտ է երկու տարանջատված ՌՏԿ-ներով կատարել ակտիվ խան·արումների ստեղծողի միաժամանակյա ուղղորոշում: ԱԽՍ-ի բոլոր կոորդինատների որոշումը ապահովվում է երեք կետերից կատարվող ուղղորոշմամբ: ԱԽՍ-ի հեռավորությունը կարելի է որոշել եռանկյունավորման մեթոդով:

Հեռակառավարման համակար·երում հրթիռի թռիչքը կառավարող հրամանները մշակվում են ուղղորդման կետում և կապի ·ծերով (հեռակառավարման ·ծեր) հաղորդվում են հրթիռին: Կախված նշանակետի կոորդինատների չափման և հրթիռի նկատմամբ նրա դիրքի որոշման եղանակից՝ տարբերում են հեռակառավարման երկու տեսակի հրամանատու համակար·եր: *Առաջին տեսակի համակար·երում* նշանակետի ընթացիկ կոորդինատների որոշումը կատարվում է անմիջականորեն ուղղորդման վրա·ետնյա կետից: Իսկ *երկրորդ տեսակի համակար·երում* դա արվում է հրթիռի կողային կոորդինատորով՝ այնուհետև կոորդինատների հաղորդմամբ ուղղորդման կետին: Հրթիռի կառավարման հրամանների մշակումը ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ դեպքում կատարվում է ուղղորդման վրա·ետնյա կետում: Նշանակետի և հրթիռների ընթացիկ կոորդինատների (օրինակ՝ հեռավորության, ազիմուտի և տեղի անկյան) որոշումը կատարում է ուղեկցող ռադիոտեղորոշիչ կայանը: Որոշ համալիրներում այս խնդիրը լուծվում է երկու ռադիոտեղորոշիչների միջոցով, որոնցից մեկն ուղեկցում է նշանակետին (նշանակետի դիտոցային ռադիոտեղորոշիչ), իսկ մյուսը՝ հրթիռին (հրթիռի դիտոցային ռադիոտեղորոշիչ): Նշանակետի դիտոցումը հիմնված է պասիվ պատասխանով ակտիվ ռադիոտեղորոշման սկզբունքի կիրառման վրա, այսինքն՝ կատարվում է նշանակետի ընթացիկ կոորդինատների վերաբերյալ այդ նշանակետից անդրադարձած ռադիոազդանշաններով հաղորդվող տեղեկույթի հիման վրա: Նշանակետի ուղեկցումը կարող է լինել ավտոմատացված, ձեռքի կամ խառը:

Այդպիսի համակար·երում հրթիռների դիտոյման համար, որպես կանոն, կիրառվում են ակտիվ պատասխանով ռադիոտեղորոշումային ·ծեր: Հրթիռի վրա տեղադրվում է հաղորդիչ-ընդունիչ, որը, արձա·անքելով ուղղորդման կետից ուղարկվող հարցման իմպուլսներին, առաքում է պատասխան իմպուլսներ: Հրթիռի դիտոյման այդպիսի եղանակն ապահովում է նրա հաստատուն ավտոմատ ուղեկցումը, ընդսմին դա ապահովվում է նաև ս·ալի հեռավորությունների վրա հրաձ·ության դեպքում: Հրթիռի կառավարումը կատարվում է անընդհատորեն մինչև նշանակետի հետ նրա հանդիպումը:

Հեռակառավարման առաջին տեսակի համակար·ում խան·արումների ազդեցության կարող են ենթարկվել հրթիռի ու նշանակետի ուղեկցման կապուղիները և ռադիոկառավարման ·ծերը:

Արտասահմանյան մասնա·ետները տվյալ համակար·ի խան·արումների կայունության մեծացման պրոբլեմի լուծումը կապում են տարբեր տիրույթների հաճախականությունների, այդ թվում և համալիր, կիրառման հետ, ինչպես նաև նշանակետի ու հրթիռի դիտոյման կապուղիների (ռադիոտեղորոշումային, ինֆրակարմիր, տեսողական և այլն) և փուլայնացված ալեհավաքային ցանցով (ՓԱՑ) օժտված ռադիոտեղորոշումային կայանների կիրառման հետ: Հեռակառավարման երկրորդ տեսակի հրամանատու համակար·ում նշանակետի կոորդինատորը (ռադիոուղղորոշիչը) տեղադրվում է հրթիռում: Այն հետևում է նշանակետին և որոշում է նրա ընթացիկ կոորդինատները հրթիռի հետ կապված շարժուն համակար·ում: Նշանակետի կոորդինատները կապուղով հաղորդվում են ուղղորդման կետ: Կողային ռա-




Նկ. 2. Հեռակառավարման համակցված հրամանատու համակարգ

1. կողային ռադիոուղղորոշիչ, 2. նշանակետի ազդանշանների ընդունիչ, 3. կոորդինատների որոշման սարք, 4. ծածկագրիչ, 5. նշանակետի կոորդինատների վերաբերյալ տեղեկույթ պարունակող ազդանշանների հաղորդիչ, 6. հաղորդող ալեհավաք, 7. հրամանների ընդունիչ, 8. ինքնօդաչու

դիտուղղորոշիչն ընդհանուր դեպքում ներառում է նշանակետի ազդանշանների ընդունման ալեհավաք, ընդունիչ, նշանակետի կոորդինատները որոշող սարք, ծածկա·րիչ, նշանակետի կոորդինատների վերաբերյալ տեղեկույթ պարունակող ազդանշանների հաղորդիչ և հաղորդող ալեհավաք:

Նշանակետի կոորդինատներն ընդունվում են ուղղորդման վրա·ետնյա կետի կողմից և հաղորդվում են կառավարող հրամանների մշակման սարքին:

Հրամանների մշակման սարքը (ՀՄՍ) ստանում է նաև պենիթային կառավարվող հրթիռի ընթացիկ կոորդինատները, որոնք իրեն հաղորդում է հրթիռի ուղեկցման կայանը (ռադիոդիտոց): ՀՄՍ-ն որոշում է ապահամաձայնեցման պարամետրը և ձևավորում է կառավարող հրամաններ, որոնք հրամանների հաղորդման կայանում կատարվող համապատասխան ձևափոխություններից հետո հաղորդվում են հրթիռին: Այդ հրամանների ընդունման, ձևափոխման և հրթիռի կողմից կատարման համար հրթիռի խցիկում տեղակայվում է այնպիսի սարքավորում, ինչպիսին տեղակայված է լինում հեռակառավարման առաջին տեսակի համակար·երում:

Մեր կարծիքով մինչև ԱԽՍ-ն եղած հեռավորությունների որոշման ամենաօպտիմալ եղանակը հեռակառավարման առաջին և երկրորդ տեսակի համակար·երի միաժամանակյա կիրառումն է: Նըշանակետի դիտոցման ռադիոտեղորոշիչով որոշվում են ԱԽՍ-ի անկյունային կոորդինատներն անշարժ կոորդինատային համակար·ի նկատմամբ (ուղղորդման վրա·ետնյա կետ), իսկ հրթիռի կողային ռադիոուղղորոշիչով որոշվում են ԱԽՍ-ի անկյունային կոորդինատները հրթիռի հետ կապված շարժուն կոորդինատային համակար·ի նկատմամբ: Ընդսմին հրթիռի կոորդինատները որոշվում են հրթիռի դիտոցման ռադիոտեղորոշիչով: Այս եղանակը հնարավորություն կտա ԱԽՍ-ի հեռավորությունը որոշելու եռանկյունավորման մեթոդով:

# В ВОЙСКАХ ПВО

## ПРОТИВОДЕЙСТВИЕ АВИАЦИИ ПРОТИВНИКА ЗЕНИТНО-РАКЕТНЫМ ВОЙСКАМ И НЕКОТОРЫЕ СПОСОБЫ БОРЬБЫ С НИМ

*А. А. ПОГОСЯН, подполковник, С. А. АСАТРЯН, капитан*

РЕЗЮМЕ

Современный противовоздушный бой проходит в условиях активного противодействия авиации противника зенитно-ракетным войскам (ЗРВ).

Для обеспечения эффективности действий ПВО важно знать возможные способы противодействия ЗРВ со стороны авиации противника. К таким способам относятся: радиоэлектронное подавление посредством активных и пассивных помех, огневое подавление, осуществление маневров, малые высоты полетов, воздействие на объекты без вхождения в зону огня.

Наиболее эффективным способом использования систем телеуправления в условиях помех является такой, при котором радиолокатором визирования цели определяются угловые координаты постановщика активных помех (ПАП) относительно наземного пункта наведения, а с помощью бортового радиопеленгатора ракеты определяются угловые координаты ПАП относительно ракеты. Такой способ позволяет определять расстояние до ПАП триангуляционным методом.

# IN THE TROOPS OF THE ANTI-AIRCRAFT DEFENCE

## THE COUNTERACTION OF THE AIR FORCE OF THE ENEMY TO THE ANTI-AIRCRAFT AND ROCKET TROOPS AND SOME WAYS OF FIGHTING AGAINST IT

*A. A. POGHOSSIAN, Lieutenant-Colonel, S. A. ASATRIAN, Captain*

SUMMARY

The modern anti-aircraft combat goes in the condition of active counteraction of the enemy's air force to the anti-aircraft and rocket troops (ART).

For the provision of efficiency of the anti-aircraft defence's actions it is important to know the possible ways of the counteraction of the ART on the part of the enemy's air force. Such ways are: radio-electronic suppression through the active and passive interference, the fire suppression, the realization of manoeuvers, the small heights of the flights, the influence of the objectives without entering the zone of the fire.

The most effective way of using the systems of TV managing in the conditions of the interference is the one under which the corner coordinates of the active interference's producer are defined relative to the ground post of laying by the radio-locator of sighting at the aim, and with the help of the radio direction-finder of the rocket the corner coordinates of the active interference's producer relative to the rocket are defined. Such way allows to define the distance up to the active interference's producer with the triangulation method.

# è²¼Ø²Î²Ü ø²Ô²ø²Î²ÜàôÂÚàôÜ

## ¼ÆÜìì²Ì àôÄºðÆ ¸ºðÀ ºì îºÔÀ
## äºî²Î²Ü Î²¼Ø²Îºðäì²Ì øÆÀÜ ¸Ð²ÜàôÐ Ð²Ø²Î²ð¶àôØ

*Ü. ¶. îºð-¶ðÆ¶àðÚ²Üò, ·»Ý»ñ³É-É»Ûï»Ý³Ýï*

Ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, պետության զինված ուժերը (այսուհետև՝ բանակ), որոնց հիմնական նախանշանակումն արտաքին հակառակորդների հետ զինված պայքարն է, որոշակի պայմաններում ակնհայտորեն կամ ոչ ակնհայտորեն միջամտում են իրենց պետության ներքին կյանքին, ինչը լուրջ ազդեցություն է ·ործում այդ պետության հետա·ա զար·ացման վրա: Այս պրոբլեմի վերլուծությունը, մեր կարծիքով, ունի կարևոր նշանակություն, առանձնապես ժողովրդավարական վերափոխումների ուղին ընտրած պետությունների համար:

Բանակի դերը ներքին քաղաքական կյանքում պայմանավորված է շատ ·ործոններով՝ հասարակական և պետական կար·ի, քաղաքական վարչակար·ի բնույթով, իշխանության վիճակով և իրա·ործման միջոցներով, հասարակության զար·ացման սոցիալ-քաղաքական մակարդակով և այլն:

Զար·ացած և կայունացած ժողովրդավարական արժեքներ ունեցող երկրներում, որտեղ պետության և քաղաքացիների միջև ձեռք է բերվել սահմանադրությամբ ամրա·րված համաձայնություն հասարակական զար·ացման հիմնարար հարցերի վերաբերյալ, քաղաքացիները, ինքնակամորեն պարտավորություններ վերցնելով, ենթարկվում են իշխանության մարմինների որոշումներին և իշխանությունն օժտում են մի շարք ·ործառույթներով, որոնցից են արտաքին ա·րեսիայից պաշտպանությունը և պետության ներսում կար·ուկանոնի ու կայունության ապահովումը: Եվ եթե նըկատվում են վարչաիրավական, իրավապահ մարմինների թուլացում, քաղաքական կյանքի ապակայունացում, ապա օրինականորեն ընտրված և լիազորություններ ստացած իշխանությունը պետք է օ·տա·ործի բոլոր միջոցները, ընդհուպ մինչև բանակի կիրառումը, կար·ուկանոնի վերական·նման և բռնությունից օրինապահ քաղաքացիների պաշտպանության համար: Իշխանությունների կողմից սահմանադրության, օրենքների խստիվ պահպանումն արդարացված է: Նման միջոցառումները (ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա) վերջին հաշվով արժանանում են բնակչության, ընդհանուր առմամբ համաշխարհային ընկերակցության հավանությանը:

Այստեղ բանակը հավատարիմ է մնում կառավարությանը և խստիվ հետևում է նրա ցուցումներին: Բայց նույնիսկ այսպիսի երկրներում հնարավոր է, որ զինվորականները չենթարկվեն վարչակար·ին և ·ործողություններ ձեռնարկեն որպես որևէ կուսակցության կողմից կամ ինքնուրույնաբար ·ործող մի ընդդիմադիր ուժ:

Կայուն անձնիշխանական վարչակար· ունեցող երկրներում դրությունը փոքր-ինչ այլ է: Իշխանափոխության խաղաղ տարբերակն այստեղ քիչ հավանական է, իսկ բռնի հեղաշրջումն անհնար է այնքան ժամանակ, քանի դեռ բանակը հավատարիմ է մնում վարչակազմին:

Նման դեպքերում ընդդիմությունը, որպես կանոն, ընտրում է հետևյալ երկու տարբերակներից մեկը.

1. փորձել քայքայել բանակը, ·ցել նրա մարտունակությունը և այդ ձևով ղեկավար խմբավորմանը զրկել ·լխավոր հենարանից,

2. ակտիվ քարոզչության միջոցով վինվորականներին համոզել հրաժարվել բռնապետական վարչակար·ին ծառայելուց և անցնել ժողովրդի կողմը (Չաուշեսկուի վարչակար·ի անկումը Ռումինիայում, 1979 թ. իրանական բանակը և 1986 թ. ֆիլիպինյան բանակը):

Հնարավոր է, որ բանակը հանդես ·ա որպես ինքնուրույն սուբյեկտ, որը տապալի քաղաքացիական վարչակազմը և հաստատի ռազմական դիկտատուրա:

Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի որոշ երկրներում երկար ժամանակ մշակվում է այն պատկերացումը, որ բանակը համազ·ային հաստատություն է, մի յուրատեսակ «·երկուսակցություն», որը երաշխավորում է կայունություն, կանխում է երկպառակությունները, թույլ չի տալիս, որ երկիրը քայքայվի կամ հայտնվի քաոսի ու անիշխանության վիճակում:

Այդ տրամաբանությամբ ստացվում է, որ բանակը կարծես չի խառնվում քաղաքական կյանքին, այլ միայն ապահովում է քաղաքա·ետների կողմից «խաղի կանոնների» պահպանումը: Այս դրույթը նույնիսկ տեղ է ·տել մի շարք պաշտոնական փաստաթղթերում: Ամերիկյան պետությունների կազմակերպության մասնակից պետությունների ԶՈՒ-երի հրամանատարների՝ Բո·ոտայում տեղի ունեցած խորհրդակցության (1979 թ.) նյութերում ուղղակի ասված է, որ վինվորականները պետք է իրենց ձեռքը վերցնեն իշխանությունն ամեն ան·ամ, երբ երկրում առաջանում է «քաղաքական վակուում»:

Պետք է նկատի ունենալ, որ պարտադիր չէ, որ բանակը պետության ներքաղաքական կյանքին միջամտի ուղղակի վինվորական բռնության միջոցով: Այդպիսի միջամտությունը կարող է իրականացվել տվյալ տարածքում բանակի ներկայության, հան·ույային օբյեկտների նկատմամբ վերահսկողության, հակամարտային իրավիճակներում դրսևորվող աներեր դիրքորոշման, ուժի ·ործադրման սպառնալիքի ձևերով:

Կախված այն բանից, թե որ սոցիալ-քաղաքական ուժերի շահերին է ծառայում բանակը, նրա դերը կարող է լինել առաջադիմական, ժողովրդավարական, հետադիմական, պահպանողական և այլն:

Պետք է նշել, որ այս հարցում էական դեր է խաղում բանակի համալրման եղանակը: Ժամանակակից բանակներն ըստ այդ եղանակի կարելի է բաժանել երկու խմբի.

—պրոֆեսիոնալ (վարձու) բանակներ, որոնք համալրվում են կամավորության հիմքի վրա, այն դեպքում, երբ չկա պարտադիր վինվորական ծառայություն: Այդպիսի բանակներ կան ավելի քան 50 երկրներում (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ճապոնիա, Հնդկաստան, Կանադա, Պակիստան, Ավստրալիա, Ֆրանսիա, Հոլանդիա, Մոնակո, Մալթա, Լյուքսեմբուր· և այլն),

—բանակներ, որոնցում ծառայությունը պարտադիր է պետության բոլոր քաղաքացիների համար: Այդպիսի բանակներն իրենց հերթին կարելի է բաժանել երկու խմբի՝

ա) կադրային-միլիցիական բանակներ, որոնք առանձնանում են ոչ մեծ կադրային միջուկով (ուսումնական կենտրոնների հրահան·իչներ և աննըշան թվով մարտական վորամասեր) և մեծ ռեզերվով, որը պահվում է բարձր վորահավաքային պատրաստության վիճակում (Դանիա, Շվեդիա, Նորվե·իա, Ավստրիա, նաև Շվեյցարիայի զուտ միլիցիական բանակը),

բ) կադրային-զորակոչային բանակներ, որոնք միջանկյալ դիրք են ·րավում պրոֆեսիոնալ և կադրային-միլիցիական բանակների միջև: Համալրման այսպիսի ձևը հնարավորություն է տալիս խաղաղ ժամանակներում ստեղծելու ավելի բազմաքանակ պահեստային զորքեր: Համալրման այս եղանակն առավել տարածված է (Գերմանիա, Ինդոնեզիա, Իսպանիա, Թուրքիա, Բրազիլիա, ԱՊՀ երկըրներ, Իտալիա և այլն):

Ակնհայտ է, որ համընդհանուր զինապարտության հիմքի վրա ստեղծված բանակն ավելի սերտ է կապված ժողովրդի հետ, ուստի և ավելի հեշտ է ենթարկվում քաղաքացիական հաստատությունների վերահսկողությանը, և

պակաս հավանական է, որ հանդես ·ա որպես ինքնուրույն քաղաքական ուժ:

Մյուս կողմից, բնակչության մեծամասնությունից կտրված և իր սպեցիֆիկ մեկուսախմբային շահերն ունեցող պրոֆեսիոնալ բանակը կարող է ·ործիք դառնալ ցանկացած, նույնիսկ հետադիմական ուժերի ձեռքում կամ կարող է ինքնուրույն լուծել ինչպես սեփական, այնպես էլ որպես ամբողջություն վերցված հասարակության պրոբլեմները:

Այսպիսով՝ բանակի համալրման եղանակի ընտրությունը սերտորեն կապված է այնպիսի մի օպտիմալ տարբերակի ընտրության կարևոր պրոբլեմի հետ, որը, մի կողմից, հնարավորություն տա առավելա·ույն արդյունավետությամբ կատարելու զինված ուժերի ·ործառական նախանշանակումից բխող խնդիրները, մյուս կողմից՝ դրանց հնարավորություն չտա բռնություն ·ործադրելու անզեն խաղաղ բնակչության նկատմամբ:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ քաղաքական իշխանության համար պայքարին բանակի չմասնակցելու սկզբունքի խախտումը և նրա մարտական հնարավորությունների օ·տա·ործումը ոչ ըստ նախանշանակման կարող են հան·եցնել իրադարձությունների զար·ացման հետևյալ տարբերակներին.

—բանակը վերածվում է ինքնաբավ ուժի, դուրս է ·ալիս իշխանության ենթակայությունից և կատարում է հեղաշրջում, որի նպատակները, բնույթը և բովանդակությունը կարող են ունենալ տարբեր քաղաքական ուղղվածություն,

—բանակն օ·տա·ործվում է այս կամ այն քաղաքական շրջանների կամ խմբավորումների կողմից իշխանության վրա ճնշում ·ործադրելու համար,

—պետության ղեկավարությունը, իրեն վարկաբեկելով, կտրվելով զան··վածներից, կորցնելով հասարակության կառավարման բարոյական իրավունքն ու հնարավորությունը, փորձում է բանակի միջոցով անվտան·ություն ապահովել իր համար,

—բանակն օ·տա·ործվում է հասարակական անկար·ությունների կասեցման համար, այսինքն՝ մասնակիորեն կատարում է քաղաքացիական իրավակար·ը պահպանող մարմինների ·ործառույթ,

—որոշ տարածաշրջաններում ճը··նաժամային իրավիճակ ստեղծվելու դեպքում բանակը նախաձեռնում է ինքնուրույն ·ործողություններ զինվորականների, նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև զորքերի կենսապահովման համակար·երի պաշտպանության համար:

Բոլոր թվարկված դեպքերում, երբ խաղաղ ժամանակ բանակը դուրս է ·ալիս զորանոցներից, թեկուզ ամենամարդասիրական նպատակներով, նա ցբաղվում է մի ·ործով, որը նրան չի բերում ո՛չ հասարակական ճանաչում, ո՛չ էլ իշխանության «շնորհակալություն», ինչը կարող է հան·եցնել նրա օտարմանը ժողովրդից, ժողովրդի անբարյացակամությանը կամ, ծայրահեղ դեպքում, իրադրության աղետալի զար·ացմանը:

Նշված հան·ամանքների հաշվառումով պետական իշխանության խնդիր պետք է դիտվեն պատշաճ ուշադրությունը բանակի կարիքներին, քաղաքական և զինվորական ղեկավարությունների միջև ընդհարումների կանխումը:

Ինչպես իշխանության, այնպես էլ որպես ամբողջություն վերցված հասարակության կենտրոնական խնդիրն է քաղաքական իշխանության և բանակի փոխհարաբերությունների օպտիմալացումը՝ ուղղված քաղաքական կայունության հաստատմանը և հասարակականքաղաքական կառուցվածքի ժողովրդավարականացման հանրորեն նշանակալից խնդիրների լուծմանը:

*Հանդեսի խմբա·րական խորհուրդը և խմբա·րության աշխատակիցները ջերմորեն շնորհավորում են հոդվածի հեղինակին՝ հանդեսի խմբա·րական խորհրդի առաջին նախա·ահին, իր 65-ամյակի առթիվ և քաջառողջություն ու հետա·ա հաջողություններ են մաղթում նրան:*

# ВОЕННАЯ ПОЛИТИКА

## РОЛЬ И МЕСТО ВООРУЖЕННЫХ СИЛ В ОБЩЕЙ СИСТЕМЕ ГОСУДАРСТВЕННОГО УСТРОЙСТВА

*Н. Г. ТЕР-ГРИГОРЯНЦ, генерал-лейтенант*

РЕЗЮМЕ

Как показывает мировой опыт, вооруженные силы государства (в дальнейшем—армия), основным предназначением которых является вооруженная борьба с внешними противниками, в определенных условиях явно или неявно вмешиваются во внутреннюю жизнь собственного государства, что оказывает серьезное влияние на развитие этого государства. Роль армии во внутриполитической жизни зависит от многих факторов: природы общественного и государственного строя, характера политического режима, состояния власти и средств ее осуществления и т. д. Армия не обязательно вмешивается во внутриполитическую жизнь государства путем прямого военного насилия. Вмешательство может осуществляться путем присутствия армии на данной территории, контроля над ключевыми объектами, непоколебимости позиции в конфликтных ситуациях, угрозы применения силы.

Существенное влияние на рассматриваемую проблему оказывает способ комплектования армии (профессиональная (наемная) или по обязательному призыву). Включение армии в борьбу за политическую власть может привести к различным вариантам развития событий: военный переворот; использование армии оппозицией для давления на правительство; использование армии правительством для сохранения режима или для пресечения общественных беспорядков; самостоятельные действия армии по защите военнослужащих и членов их семей. Во всех случаях, когда армия выходит из казарм в мирное время, даже во имя самых гуманных целей, она занимается делом, не приносящим ей ни общественного признания, ни «благодарности» властей.

Оптимизация взаимодействия политической власти и армии—центральная задача как власти, так и общества в целом, нацеленная на достижение политической стабильности и демократизацию общества.

# MILITARY POLICY

## THE ROLE AND PLACE OF THE ARMED FORCES IN THE COMMON SYSTEM OF THE STATE STRUCTURE

*N. G. TER-GRIGORIANTS, Lieutenant-General*

SUMMARY

As the world experience shows, the Armed Forces of the state (further—the army), the main predestination of which is the armed struggle with external enemies, under certain conditions interfere with the internal life of their own state, that has a serious influence on the development of this state. The role of the army in the internal political life depends on many factors such as: the social or state structure's nature, the character of the political regime, the state

of the power and the ways of its realization and so on. Not always the army interferes with the internal political life of the state by means of the direct military violence. Such interference can be realized by means of the army's presence on the given territory, the control over the key objectives, the firmness of the position in the conflict situations, the threat of using the force.

Depending on the fact, the interests of which social and political forces are served by the army, its role in such cases may be progressive, democratic, reactionary, conservative and etc.

The significant influence on the considered problem is shown by the way of recruitment of the army (professional (hired) or by the obligatory call). The involvement of the army in the struggle for the political power can lead to different variants of the developments—the military coup d'etat, using of the army by the opposition for the pressure on the government, using of the army by the government for the preservation of the regime or for suppressing the social disorders, the independent actions of the army on the defence of the military men and their families' members. In all the cases when the army leaves the barracks at peace-time, even in the name of the human purposes, it is occupied with such business which brings neither social recognition, nor «gratitude» of the authorities to it.

The organization of the interaction of the political power and the army—the central objective both of the power and the society in the whole, aimed to the achievement of the political stability and democratization of the society.

# è²¼Ø²Î²Ü îÜî°ê²¶ÆîàôÂÚàôÜ

## ¼ÆÜì²Ì àôÄºð ä²Ðºàô Ì²Êêºð Æ
## Î²ÜÊ²î°êØ²Ü Ð²ðòÆ Þàôðæ

*Ø. ². ê²ð¶êÚ²Ü*

Ինչպես հայտնի է, երկրի ազգային անվտանգության գլխավոր տարրերն են ռազմական և տնտեսական անվտանգությունները: Իրենց հերթին այդ ոլորտներում անվտանգության ապահովման հիմնական գործոններից են ռազմական ծախսերի ճիշտ կանխատեսումն ու ձևավորումը:

Ցանկացած պետության պաշտպանության վրա կատարվող ծախսերն ուղղակիորեն կապված են նրա զինված ուժերի թվաքանակի հետ: Ինչպես հայտնի է, զինված ուժերի թվաքանակի որոշման եղանակներից մեկը հիմնված է տվյալ պետության տնտեսական, ժողովրդագրական և տարածքային բնութագրիչների վիճակագրական վերլուծության վրա[1]: Ինչպես նշվում է հիշատակված աշխատության մեջ, արդյունքների մեծ ճշգրտություն է ապահովվում այն դեպքում, երբ համաշխարհային ընկերակցության մասնակից պետությունները բաժանվում են չորս դասի՝ ըստ զինված ուժերի թվաքանակի, և հիմնական պարամետրերը (մեկ զինծառայող պահելու միջին արժողությունը՝ $C_{պծ}$-ն, և մեկ զինծառայող պահելու արժողության հարաբերությունը բնակչության մեկ շնչին բաժին հասնող եկամտին՝ $K_{պծ}$-ն) հաշվարկվում են առանձին վերցված այդ դասերի համար: Ինչ վերաբերում է ելակետային ընտրանքում ընդգրկված պետությունների վերաբերյալ ցուցանիշներին, ապա դրանք վերցվել էին «Military balance». 1997/1998, ինչպես նաև «CIA World Factbook 1999» հրատարակություններից: Ըստ նշված բաշխման Հայաստանի Հանրապետությունը 44 այլ պետությունների հետ ընդգրկվել էր 1-ին դասում[2]:

Ինչպես ցույց է տալիս համաշխարհային ընկերակցության երկրների փորձը, խաղաղ ժամանակ պետությունների մեծ մասի ԶՈՒ-ի թվաքանակը կազմում է երկրի բնակչության թվաքանակի 0,5—0,7 %-ը (1-ին դասին պատկանող պետությունների համար՝ 0,04—2 %, միջին արժեքը՝ 0,65 %):

Ընդունված է համարել, որ խաղաղ ժամանակ պետության ռազմական ծախսերը նրա տնտեսության բնականոն զարգացման պայմաններում չպետք է գերազանցեն ազգային համախառն արտադրանքի (ԱՀԱ) 2—5 %-ը (1-ին դասի պետությունների համար՝ 0,8—11,1 %-ը, միջին արժեքը՝ 2,99 %): Զարգացած երկրների մեծ մասում, այդ թվում և Չինաստանում ռազմական ծախսերը կազմում են 2 %-ից ոչ ավելի, իսկ ԱՄՆ-ում՝ 3 %-ից փոքր ինչ ավելի: Այս թիվն ավելի մեծ է միայն այն պետություններում, որոնք փաստորեն գտնվում են ռազմական դիմակայության այնպիսի վիճակում, որը կարող է արագորեն վերածվել բաց զինված հակամարտության (Հունաստան, Թուրքիա, Իսրայել, Սաուդյան Արաբիա, Քուվեյթ, Թայվան, Հարավային և Հյուսիսային Կորեաներ և մի շարք այլ երկրներ): Աշխարհի առաջավոր երկրների բանակներում մեկ զինծառայող պահելու միջին արժողությունը հասնում է 150000—200000 ԱՄՆ-ի դոլարի (1-ին դասի պետությունների համար՝ 534—214066 դոլար, միջին արժեքը՝

[1] Տես *Լ. Մ. Բիշարյան, Օ. Վ. Գերասիմենկո, Ա. Ե. Սարգսյան, Մ. Ա. Սարգսյան*, Զինված ուժերի թվաքանակի հաշվարկման մի մասնավոր դեպք: «ՀԲ», 2000, հմ. 4:

[2] Տես նույն տեղում:

40633 դոլար): $C_{ցծ}$-ն ցույց է տալիս ԶՈՒ-ն ժամանակակից տեսակների վինամթերքով և տեխնիկայով վինելու պետության հնարավորությունը: Զար·ացած երկրների ռազմական բյուջեի՝ ըստ ծախսերի հոդվածների բաշխման վերլուծությունը ցույց է տալիս, որ վինծառայողներ պահելու համար ծախսվում է բյուջեի մինչև 30 %-ը, ՍՌՏ-ի ·նման համար՝ 20—25 %-ը, ՍՌՏ-ի շահա·ործման համար՝ 13—17 %-ը, ԳՀՓԿԱ-ների կատարման համար՝ 10—12 %-ը, այլ նպատակներով՝ 16—27 %-ը: ՍՌՏ-ի նմուշները շահա·ործվում են միջինում 15—20 տարի (ՍՌՏ-ի առանձին նմուշներ՝ 25—40 տարի): Այդ պատճառով էլ ամեն տարի անհրաժեշտ է լինում նորացնել (առանց հնարավոր կորուստների հաշվառման) տեխնիկայի մոտ 5 %-ը՝ միաժամանակ ապահովելով սպառազինության համակար·ի հաշվեկշռվածությունը:

Այդպիսի ծավալներով նոր սպառազինության և ռազմական տեխնիկայի պլանաչափ մատակարարումը հնարավորություն կտա ապահովելու ոչ միայն տեխնիկայի մարտական համակազմի սահուն նորացում, այլև դրանց յուրացում և արդյունավետ կիրառում՝ կուտակված մասնա·ետների պատրաստմամբ և կորահավաքային ռեզերվների ստեղծմամբ: Հարկ է նշել, որ կորքի վինման և ապահովման տեմպերն ու ծավալները, համապատասխան մարտական պատրաստության հետ մեկտեղ, էապես ազդում են նրա մարտունակության վրա, իսկ սպառազինության ֆիզիկական մաշումը պահանջում է ավելի մեծ ծախսեր վերանորո·ման, պահեստային մասերի ձեռքբերման վրա և այլ նպատակներով:

Վերջին տասնամյակում աշխարհի առաջավոր երկրներում նկատվում է ռազմական ծախսերի կրճատման միտում, որն առավել վ·ալի է վենքի և ռազմական տեխնիկայի ·նման ասպարեզում (5—10 ան·ամ): Բայց ռազմական ԳՀՓԿԱ-ների և մարտական պատրաստության վրա կատարվող ծախսերն աճում են, իսկ անձնակազմին պահելու համար ծախսերը չեն նվազում:

ԳՀՓԿԱ-ների ֆինանսավորման պահպանումը բարձր մակարդակում ենթադրում է.

—շարունակել ԳՀՓԿԱ-ներն առանց ՍՌՏ-ի նորաստեղծ նմուշների պարտադիր սերիական արտադրության,

—ապահովել ՍՌՏ-ի նմուշների «ընտրողական» արդիականացումը՝ դրանց մարտական արդյունավետության բարձրացմամբ,

—հասնել կտրուկ ռազմատեխնիկական վերընթացի՝ շնորհիվ մինչև 2010 թ. ՍՌՏ-ի 6-րդ սերնդի (շրջանցելով 5-րդ սերնդի ՍՌՏ-ի սերիական արտադրման փուլը) մշակման նոր տեխնոլո·իաների հիման վրա, ինչը կմեծացնի հնարավոր մրցակիցների հետմնացումը:

Նշենք նաև, որ այսօր աշխարհի ընդամենը մի քանի պետություններ, ներառյալ ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և մի քանի այլ երկրներ, կարող են ամբողջությամբ ապահովել նոր տեխնոլո·իական վենքի նկատմամբ իրենց ազ·ային ԶՈՒ-երի պահանջարկները: Նկատվել են հետևյալ միտումները:

—Վերջին երեսուն տարում ՍՌՏ-ի արժեքը դրանց կատարելա·ործման համեմատ աճում էր ավելի արա· տեմպերով, քան երկրում տեղի ունեցող արժեզրկումը: Համապատասխանաբար, ԶՈՒ-ի թվաքանակի պահպանման դեպքում յուրաքանչյուր 18—20 տարին մեկ սպառազինության ·նման արժեքն ընդհանուր բյուջեի նկատմամբ տոկոսային հարաբերությամբ կրկնապատկվում է: ԱՀԱ-ի՝ պաշտպանությանը հատկացվող չափաբաժնի մակարդակի պահպանման և տարեկան աննշան աճման դեպքում ՍՌՏ-ի ·նման վրա կատարվող ծախսերը ռեալ մասշտաբով անխուսափելիորեն հան·եցնում են ԶՈՒ-ի թվաքանակի կրճատմանը,

—Որքան փոքր է ԶՈՒ-ի թվաքանակը, այնքան մեծ է լինում բյուջեի այն չափաբաժինը, որը հատկացվում է ՊՆ-ին և հաստիքային ենթակառույցներին:

Հաշվարկները ցույց են տալիս, որ 1-ին դասի պետություններում (բացառու-

թյամբ Մոզամբիկի) մեկ փինծառայող պահելու արժողության հարաբերակցությունը բնակչության մեկ շնչին բաժին հասնող եկամտին ($K_{ցծ}$-ն) կազմում է 1,25—47՝ միջին 6,15 արժեքի դեպքում: Նկ. 1-ում բերված է 1-ին դասի համար




Նկ. 1. $K_{ցծ}$ գործակցի կախումը զինված ուժերի թվաքանակից (ZS) 1-ին դասի համար պարամետրների միջին արժեքների դեպքում

$K_{ցծ}$ ·ործակցի կախումը ԶՈՒ-ի թվաքանակից պարամետրների միջին արժեքների դեպքում:

ԶՈՒ-ի թվաքանակի և պաշտպանության վրա կատարվող ծախսերի ·նախատումը կատարվել է ·ործիքածրա·րային համալիրի կիրառությամբ, որը մշակվել է անորոշության և հակադրությունների պայմաններում ·ործող բարդ համակար·երի վերլուծության և համադրման խնդիրների լուծման համար:

Հաշվարկվել են $K_{ցծ}$ ·ործակցի արժեքները, պաշտպանության վրա կատարվող DB ծախսերը և երկրի համար մեկ փինծառայողի պահման $C_{ցծ}$ միջին վիճակա·րական արժողությունը՝ որպես ԶՈՒ-ի թվաքանակի ֆունկցիա (նկ. 2):

Մինչև 2010 թ. եղած ժամանակահատվածում 1-ին դասի պետությունների համար ռազմական ծախսերի կանխատեսման համար դիտարկվել են տընտեսության մեջ տիրող իրավիճակի զար·ացման 3 սցենար.

—հոռետեսական՝ ուսումնասիրվող ժամանակահատվածում տնտեսության վիճակը չի բարելավվի,

—իրատեսական՝ մինչև 2010 թ. տեղի կունենա ԱՀԱ-ի աստիճանական աճում՝ տարեկան 4 %-ով,

—լավատեսական՝ այդ ժամանակա-




Նկ. 2. $K_{ցծ}$ գործակցի, պաշտպանության համար կատարվող ծախսերի (DB) և մեկ փինծառայողի պահման արժողության ($C_{ցծ}$) կախումը զինված ուժերի թվաքանակից (ZS)

հատվածում տեղի կունենա ԱՀԱ-ի աստիճանական աճում՝ տարեկան 8 %-ով:

Որպես արժեւրկման մակարդակի նորմատիվ արժեք ընդունվել է ռազմական ծախսերի պլանավորման համար ԱՄՆ-ի ԶՈՒ-ում ընդունված մակարդակը՝ տարեկան 4 %-ի չափով:

Դիտարկվող ժամանակահատվածում ռազմական ծախսերի կանխատեսման համար ընդունվել են երկրում ժողովրդա·րական իրադրության զար·ացման հետևյալ բազային միտումները: Այժմ կա այն տեսակետը, որ բնակչության թիվը մինչև 2025 թ. եղած ժամանակաշրջանում ինտենսիվորեն կնվազի՝ ծնելիության նվազման և կյանքի ավելի բարձր մակարդակ ունեցող ու տնտեսապես ավելի կայուն երկրներ բնակչության արտահոսքի հետևանքով, ուստի հաշվարկների համար ընդունվել են երկրի բնակչության թվի փոփոխության 3 տարբերակ. մեկ տարում բնակչության կրճատում 0,5, 1 և 1,5 % դեկրեմենտներով:

Հոռետեսական սցենարով ԱՀԱ-ն

նորմալ արժեկրկման հաշվին կնվազի, իրատեսական սցենարով կմնա ներկայիս մակարդակում, իսկ լավատեսական




Նկ. 3. Պաշտպանության վրա կատարվող ծախսերի (DB) և $K_{ցծ}$ գործակցի կախումը ԶՈՒ-ի թվաքանակից (ZS) մինչև 2010 թ. տնտեսության կարգացման հոռետեսական սցենարի դեպքում

տարբերակում կաճի: Այդ տարբերակների համար ԶՈՒ-ի թվաքանակից ֆունկ-




Նկ. 4. Պաշտպանության վրա կատարվող ծախսերի (DB) և $K_{ցծ}$ գործակցի կախումը ԶՈՒ-ի թվաքանակից (ZS) մինչև 2010 թ. տնտեսության կարգացման իրատեսական սցենարի դեպքում

ցիայի տեսքով ստացվում են երկրի ռազմական ծախսերի այն արժեքները, որոնք անհրաժեշտ են, որպեսզի երկիրը մնա իր դասում (նկ. 3—5): Այդ կախումների վերլուծությունը հնարավորություն է տալիս որոշելու ԶՈՒ-ի այն օպտիմալ թվաքանակը, որի դեպքում ռազմական ծախսերը կլինեն նվազա·ույնը:

Կախված տնտեսական իրադրության զար·ացման միտումներից՝ ԶՈՒ-ի օպտիմալ թվաքանակը որոշ չափով կա՛մ կփոքրանա, կա՛մ կմեծանա, սակայն այդ փոփոխությունը էական չի լինի:




Նկ. 5. Պաշտպանության վրա կատարվող ծախսերի (DB) և $K_{ցծ}$ գործակցի կախումը ԶՈՒ-ի թվաքանակից (ZS) մինչև 2010 թ. տնտեսության կարգացման լավատեսական սցենարի դեպքում

Տեղին է նշել, որ 1-ին դասի երկրներում ԶՈՒ-ի համալրումը կատարվում է կամավորության, զորակոչի կամ խառը սկզբունքով: Ըստ զորակոչի ծառայության ժամկետը 15 շաբաթից մինչև 36 ամիս է, մինչդեռ ծառայության միջին ժամկետը 12 ամսից պակաս է: Բնական է, որ այս ·ործոնը, ֆինանսականի հետ մեկտեղ, ԶՈՒ-ի թվաքանակի վրա սահմանափակող ազդեցություն է ·ործում:

Այսպիսով՝ կարելի է անել հետևյալ եզրակացությունները:

1. Ժողովրդա·րական իրադրության փոփոխությունը մինչև 2010 թ. ·ործնականում չի ազդի $K_{ցծ}$ ·ործակցի արժեքի և պետության ռազմական ծախսերի վրա:

2. Զինված ուժերի թվաքանակի նվազումը չի հան·եցնում ռազմական ծախսերի համապատասխան նվազման,

քանի որ կտրուկ մեծանում է մեկ պինծառայողի միջին արժողությունը (հավանաբար դա կապված է նրա տեխնիկական պինվածության մակարդակի բարձրացման և նրա վրա կատարվող դրամական ծախսերի աճման անհրաժեշտության հետ): Հարկ է նշել, որ հաշվարկներում հաշվի չեն առնվել պինծառայողների սոցիալական պաշտպանվածության ապահովման նպատակով կատարվող ծախսերը:

3. Ռազմական ծախսերի և ԶՈՒ-ի թվաքանակի գնահատման առաջարկվող մեթոդի կիրառման դեպքում հաշվի է առնվում միայն տնտեսական կողմը, բայց հաշվի չեն առնվում կոնկրետ ռազմաքաղաքական իրավիճակը և այն ռազմական խնդիրները, որոնք պետք է լուծի ԶՈՒ-ն երկրի անվտանգության ապահովման համար: Ռազմական դոկտրինի շրջանակներում այդ ռազմական խնդիրների հաշվառումը էապես կփոխի ԶՈՒ-ի թվաքանակի և ռազմական ծախսերի ստացվող գնահատականները, բայց այս մոտեցման քննարկումը դուրս է սույն հոդվածի շրջանակներից և պահանջում է առանձին նպատակային հետազոտություն:

## ВОЕННАЯ ЭКОНОМИКА

### К ВОПРОСУ ПРОГНОЗИРОВАНИЯ РАСХОДОВ НА СОДЕРЖАНИЕ ВООРУЖЕННЫХ СИЛ

*М. А. САРКИСЯН*

РЕЗЮМЕ

Одним из основных элементов обеспечения национальной безопасности является формирование и прогнозирование военных расходов.

Предлагаемый подход основан на статистическом анализе экономических, демографических и территориальных характеристик государств и позволяет определить как оптимальную численность вооруженных сил, при которой ее военные расходы будут минимальными, так и максимальную и минимальную численность вооруженных сил при заданной величине военных расходов.

## MILITARY ECONOMICS

### TO THE ISSUE OF FORECASTING THE EXPENDITURES ON THE SUPPORT OF THE ARMED FORCES

*M. A. SARKISSIAN*

SUMMARY

One of the main elements of the national security's provision is the formation and forecasting the military expenditures.

The suggested approach based on the statistical analysis of the economical, demographic and territorial characteristics of the states allows to define both the optimal number of the Armed Forces for the military expenditures to be minimal, and maximal as well as minimal number of the Armed Forces at the proposed quantity of the military expenditures.

# è²¼Ø²Î²Ü ´ÄÞÎàôÂÚàôÜ

## ´²ðÒð ÈºèÜ²ÚÆÜ ä²ÚØ²ÜÜºðÆÜ ¼ÆÜÌ²è²ÚàÔÜºðÆ Ð²ðØ²ðØ²Ü àðàÞ ²è²ÜÒÜ²Ð²îÎàôÂÚàôÜÜºð

*². ê. ²Ô²´²ÈÚ²Ü, µ/Í Ù³Ûáñ, Ï»Ýë³µ³Ý³Ï³Ý ·Çï áõÃÛáõÝÝ»ñÇ ¹áÏïáñ, åñáý»ëáñ, ². Ì. Ô²¼²ðÚ²Ü, µ/Í ÷áË·Ý¹³å»ï, µÅßÏ³Ï³Ý ·Çï áõÃÛáõÝÝ»ñÇ Ã»ÏÝ³Íáõ, ¹áó»Ýï, ². ê. ê²ð¶êÚ²Ü, ². Ð. ØÆÜ²êÚ²Ü*

Որոշ զինվորական ստորաբաժանումների ·ործունեության առանձնահատկությունն է ծառայողական պարտականությունների կատարումը արտաքին միջավայրի այնպիսի պայմաններում, որոնք զ·ալի չափով տարբերվում են այն պայմաններից, որոնց ընդհանուր առմամբ հարմարված է մարդու օր·անիզմը: Այդպիսի պայմաններից են մասնավորապես բարձր լեռնային պայմանները: Այս դեպքում մեծ նշանակություն է ստանում ·ործունեության վաղ փուլերում ամբողջության մեջ վերցված օր·անիզմի և նրա առանձին համակար·երի ·ործառույթների հարմարումային վերակառուցումը, որը կատարվում է արտաքին միջավայրի փոփոխված պայմաններին համապատասխան:

Արտաքին միջավայրի այն տարրերը, որոնք ազդում են մարդու վրա լեռներում, կոչվում են բարձր լեռնային ·ործոններ, բարձր լեռնային ·ործոնների համալիր: Դրանք լինում են երկու կար·ի՝ մշտական, որոնք ազդում են անընդհատ, և ոչ մշտական, որոնք ազդում են ժամանակ առ ժամանակ: Ստորև ներկայացվում է այդ ·ործոնների ցանկը (տես աղյուսակը):

Զինծառայողի օր·անիզմի վրա ազդող լեռնային ·ործոնների համալիրի հիմնական բաղադրիչն է օդի միավոր ծավալում թթվածնի բացարձակ քանակի՝ բարձրության համեմատ նվազումը, որը հան·եցնում է արտածին թերթթվածնայնության (հիպոքսիա) կար·ացման:

Լեռնային բժշկության մեջ տարբերում են հարմարման հետևյալ ձևերը. պոպուլյացիոն և անհատական, ինչպես նաև տևողության՝ երկարատև, կարճատև, ընդհատուն:

*Պոպուլյացիոն* կոչվում է հարմարման այն ձևը, որը հատուկ է ընդհանրապես լեռնաբնակներին: *Անհատական հարմարումը* նկատվում է լեռների ժամանակավոր բնակիչների օր·անիզմում: *Երկարատև անհատական հարմարումը* նկատվում է երկար տարիներ լեռներում բնակվելու դեպքում: *Կարճատև հարմարումը* նկատվում է լեռներ բարձրանալիս հարաբերականորեն կարճ ժամկետում (շաբաթներ, ամիսներ): Զինվորական ստորաբաժանումների արա· փոխադրումը լեռներ և հաճախակի տեղաշարժը լեռներում առաջ են բերում բարձր լեռնային *ընդհատուն հարմարում:* Զինվորական բժիշկը պետք է իր տրամադրության տակ ունենա ·իտականորեն հիմնավորված տվյալներ բարձր լեռնային ընդհատուն հարմարման մասին՝ դրա խան·արումները ժամանակին հայտնաբերելու և նպատակային կանխար·ելիչ ու բուժական միջոցառումներ անցկացնելու համար:

Վ. Յ. Շանինը տարբեր բնակլիմայական շրջաններից 18—20 տարեկան 60 առողջ կամավորների (զորակոչիկների) հետազոտության ժամանակ պարզել է, որ լավ և միջին ֆիզիոլո·իական զար·ացածությամբ զինծառայողների ընդհատուն հարմարման ընթացքում, ի տարբերություն մեկ բարձրության նկատմամբ հարմարման դեպքից, ավելի լարված հակազդում են օր·անիզմի կենսապա-

*Աղյուսակ*

| ՄԾՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ | ՈՉ ՄԾՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ |
|---|---|
| ցածր մթնոլորտային ճնշում<br>օդի ցածր խտություն<br>օդի միավոր ծավալում թթվածնի, ազոտի, ածխաթթու գազի ցածր խտություն<br>օդում ջրային գոլորշիների ցածր խտություն<br>օդի բարձր իոնացվածություն<br>միջավայրի ցածր ջերմաստիճան<br>բարձր արևային ռադիացիա | օդային հոսանքների մեծ արագություն՝ քամիներ<br>հարաբերական խոնավության տատանում<br>էլեկտրական դաշտի փոքր լարվածություն<br>հողի միկրոտարրերի կազմի փոփոխություն<br>ռադիացիոն և տիեզերական ճառագայթման մակարդակի բարձրացում |

հովման այն հիմնական համակար·երը, որոնք պատասխանատու են լեռնային հարմարման օպտիմալ ընթացքի համար և շատ բանով նպաստում են ապահարմարիչ խան·արումների կար·ացմանը, որոնք նվազեցնում են վորքի աշխատունակությունը և մարտունակությունը[1]: Օր·անիզմի դիմադրողականության ապահովման ·ործում կարևոր դեր է կատարում իմունային համակար·ը: Այն օր·անիզմը պաշտպանում է ·ենետիկորեն օտար արտածին և ներածին նյութերից, մասնակցում է տարբեր օր·անների և հյուսվածքների վերական·նման կենսընթացներին[2]: Իմունային համակար·ի ·ործառության խան·արումը, հատկապես օր·անիզմի համար անսովոր արտաքին միջավայրի պայմաններում, որն ուղեկցվում է հակա·ենային խթանման սպեկտրի փոփոխությամբ, հան·եցնում է պինծառայողների շրջանում վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման և արա· տարածման վտան·ի մեծացմանը: Այսպես՝ հաստատված է, որ հարթավայրային պայմաններից բարձր լեռնային պայմաններ տեղափոխվելու դեպքում առողջ մարդկանց օր·անիզմում առաջին 4—10-րդ օրերում նկատվում են շրջանառող T-լիմֆոցիտների քանակի նվազում և հարմարման ընթացքում B-լիմֆոցիտների քանակի մեծացում[3]:

Բարձր լեռնային պայմաններում ·տնվելու սկզբնական շրջանում արյան մեջ տեղի է ունենում երեք դասի իմունա·լոբուլինների (IgA, IgM, IgG) քանակի կ·ալի նվազում, ինչպես նաև ոչ սպեցիֆիկ դիմադրողականության և հակամանրէական իմունային հակազդումների թուլացում[4]: Փոփոխված իմունաբանական պարամետրերը մեծ մասամբ վերական·նվում հասնում են իրենց ֆիզիոլո·իական մակարդակին 20—30 օրում, մինչդեռ հակամարմինների առաջացման ·ործընթացի նորմալացման համար անհրաժեշտ է 1,5—2 ամիս: Իմունային համակար·ի ուսումնասիրման ժամանակ հարմարման շրջանում նկատ-

[1] Տես *В. Ю. Шанин, А. В. Дергунов, О. К. Куттубаев, В. Н. Цыган.* Динамика физиологических показателей у военнослужащих в процессе прерывистой горной адаптации. «Военно-медицинский журнал», 2000, № 3.

[2] Տես *А. С. Агабалян, Р. В. Захарян, А. П. Макарян.* Стимуляция неспецифической резистентности организма препаратами низкомолекулярной экзогенной РНК. «Доклады АН АрмССР», 1966, № I; *Ա. Ս. Աղաբալյան, Ա. Վ. Ղազարյան, Է. Հ. Հակոբյան,* Զինծառայողների օրգանիզմի ոչ սպեցիֆիկ դիմադրողականության խթանման հարցը: «ՀԲ», 1999, հմ. 1, *А. А. Поваженко.* Иммунологическая реактивность организма на ранних этапах адаптации к различным климатогеографическим условиям. «Военно-медицинский журнал», 1988, № 7.

[3] Տես *М. И. Китаев, А. Г. Тахтабаев, Л. В. Сабурова.* Адаптация человека в различных климатогеографических условиях. «3-ья Всесоюзная конференция, тезисы докладов», т. 2. Ашхабад, 1981; *Ա. Ա. Պովաժենկո*, նշ. աշխ.:

[4] Տես *А. Д. Бучнов, А. Т. Гречко, Я. Т. Мурга.* Адаптивная фармакологическая коррекция функциональных нарушений у молодого пополнения с гипотрофией. «Военно-медицинский журнал», 2000, № 4; *А. Т. Гречко.* Физиологические механизмы адаптации и ее фармакологическая коррекция «быстродействующими адаптогенами». «Международные медицинские обзоры», 1994, № 5.

վում է T-լիմֆոցիտների պարունակության նվազում և նրանց ·ործառական ակտիվության թուլացում: Իսկ շրջանառող O-լիմֆոցիտների քանակն առողջ մարդկանց օր·անիզմում չափավոր շըրջաններից բարձր լեռնային շրջաններ տեղափոխվելու դեպքում զ·ալիորեն մեծանում է: Հաստատուն փոխադարձ կապ է բացահայտվել T և B իմունային համակար·երի հակազդելիության թուլացումների միջև, ինչպես նաև ոչ սպեցիֆիկ դիմադրողականության նվազման և բարձր ·ոտիներ առողջ մարդկանց տեղափոխությունից հետո հիվանդացությունների թվի աճման միջև: Կարելի է ենթադրել, որ արյան մեջ T և B լիմֆոցիտների քանակը կարող է ծառայել որպես բարձր լեռնային պայմաններում աշխատունակության չափանիշ[5]:

Վերն ասվածից հետևում է, որ պետք է մշակել բարձր լեռնային պայմաններին առողջ մարդկանց հարմարման շըրջանում իմունային համակար·ի հակազդելիության պահպանման և կայունացման արդյունավետ մեթոդներ: Այս առումով մեծ հեռանկար ունի իմունախըթանիչների կիրառումը, որոնցից են նատրիումի նուկլեինատը, տիմալինը, տակտիվինը, թիմո·ենը, ինտերֆերոնը և նրա մակածիչները: Բարձր իմունախթանիչ և իմունակար·ավորիչ ակտիվությամբ է օժտված նաև մեր կողմից առաջարկված վետապոլ պատրաստուկը[6]:

Տարբեր կլիմայաաշխարհա·րական պայմաններին հարմարման կար·ավորման նպատակով հաջողությամբ կիրառվում են արա· ազդող հարմարածիններ (վտավիս, «ալթայան էլիքսիր»): Հաստատված է դրանց բարձր արդյունավետությունը խախտված իմունային համակար·ի շտկման և սիրտանոթային համակար·ի ցուցանիշների բարելավման առումով: Հարմարածինների, այդ թվում վետապոլի ընդունումն զ·ալիորեն բարելավում է օր·անիզմում սպիտակուցային փոխանակությունը և բարձրացնում է օր·անիզմի ոչ սպեցիֆիկ դիմադրողականությունը նրա ֆա·ոցիտար (բջջակուլային) օղակի ակտիվացման շնորհիվ:

Այդ նպատակով կարևոր է նաև բարձր լեռնային պայմաններում տեղակայված զորքի սննդակար·ի որոշումը՝ մթնոլորտային ճնշման նվազման հետ թթվածնի մասնակային ճնշման նվազման, օր·անիզմի ·երտաքացմանը և ·երսառեցմանը հան·եցնող օդի ջերմաստիճանի օրական զ·ալի տատանումների, կտրուկ վայրէջքների ու վերելքների առկայության, խմելու ջրով ապահովման անհրաժեշտության և նմանատիպ այլ հան·ամանքների հաշվառումով: Բարձր լեռնային պայմաններում նկատվում է աղեստամոքսային տրակտի արտազատողական և շարժունային ·ործառույթների թուլացում, որը հիմնականում կապված է թթվածնի պակասի հետ, հնարավոր է՝ նաև այլ սննդանյութերի ներծծման խան·արումների հետ: Նըկատվում են նաև հիմնային և ջրային փոխանակության փոփոխություններ: Այս ցուցանիշները փոփոխվում են՝ կախված մարդու սեռից, տարիքից և հարմարվածության աստիճանից, և պետք է հաշվի առնվեն լեռներում անձնակազմի սընունդը կազմակերպելու ժամանակ:

Ամենից առաջ պետք է նախատեսվի սննդի օրաբաժնի անհրաժեշտ կալորիականությունը, քանի որ լեռներում կատարվող ·ործողությունները կապված են էներ·իայի զ·ալի ծախսման հետ: Խորհուրդ է տրվում լեռներում ·ործող անձնակազմին ապահովել այնպիսի սընընդով, որի օրաբաժինը պարունակի մինչև 4500 կիլոկալորիա էներ·իա: Հանձնարարվում է նաև ածխաջրերի քանակի ավելացում, ընդ որում դա նպատակահարմար է անել վերելքից մի քանի օր առաջ: Նպատակահարմար է նաև լրացուցիչ վիտամինացում այնպիսի պատրաստուկներով, որոնք պարունակեն $B_6$, $B_1$, A, C, E խմբի վիտամիններ,

[5] Տես *Ա. Ա. Պովաժենկո,* նշ. աշխ., *Վ. Յ. Շանին, Ա. Վ. Դերգունով, Օ. Վ. Կուտուբաև, Վ. Ն. Ցիգան,* նշ. աշխ.:

[6] Տես *А. С. Агабалян, П. А. Казарян.* Эффективность применения двуспиральной РНК при различных патологических состояниях. «Актуальные проблемы экспериментальной и клинической медицины». Е., 1998.

որոնք ունեն իմունամոդուլացնող հատկություն և կար·ավորում են լիմֆոցիտների դիֆերենցման ընթացքը:

Այսպիսով՝ վերը ներկայացվածը միանշանակ կերպով ցույց է տալիս, որ բարձր լեռնային պայմաններում վինծառայողների հարմարման շրջանում նրանց օր·անիզմում տեղի են ունենում իմունային հակադրելիության փոփոխություններ և ոչ սպեցիֆիկ դիմադրողականության նվազում: Բարձր արդյունավետություն ունեցող իմունա- և կենսախթանիչների կիրառումը հատուկ սրընդակար·ի և համապատասխան վ·ետավորման հետ մեկտեղ թույլ կտան շատ դեպքերում կանխել վինծառայողների վրա լեռնային պայմանների անբարենպաստ ազդեցությունը և վ·ալիորեն նվազեցնել տարբեր հիվանդությունների առաջացման հավանականությունը:

# Ðð²¼ºÜ²ÚÆÜ ìºðøºðÆ îºÔ²ÚÆÜ ´àôÄàôØÀ ¸º¼úøêÆÎàðîÆÎàêîºðàÜàì

*Ø. ¶. Ø²ð¶²ðÚ²Ü, µ/Í ÷áË·Ý¹³å»ï, µÅßÏ³Ï³Ý ·Çï áõÃÛáõÝÝ»ñÇ Ã»ÏÝ³Íáõ, ¹áó»Ýï, È. Ø. Ä²Ø²¶àðÌÚ²Ü, µ/Í Ï³åÇï³Ý, µÅßÏ³Ï³Ý ·Çï áõÃÛáõÝÝ»ñÇ Ã»ÏÝ³Íáõ, Æ. Ø. Ø²ð¶²ðÚ²Ü, ². ê. ¶²Èêî Ú²Ü, Ê. Ð. ¼²ø²ðÚ²Ü*

Վերքերի բուժման բազմադարյան պատմության մեջ մշտապես փոխվել են դրանց լավացման վերաբերյալ ·ոյություն ունեցող պատկերացումները: Ընդ որում վերքային մակերևույթի վերական·նման պրոցեսի նուրբ մեխանիզմների իմացության, դրան խոչընդոտող ·ործոնների ուսումնասիրությունների համեմատ փոխվել են նաև անհրաժեշտ դեղանյութերի ընտրության նկատմամբ մոտեցումները:

Վերքերի լավացումն արա·ացնող միջոցները և դրանց նկատմամբ մասնբէների վ·այունությունը բարձրացնող դեղերի կիրառումը համարվում են բավականին մեծ նվաճում: Վերջին ժամանակներս այս ասպարեզում էական առաջընթաց է տեղի ունեցել: Մասնավորապես այժմ մեծ նշանակություն է տրվում հակաբորբոքիչ ազդեցություն ·ործող միջոցներին, ինչպես նաև պրոտեոլիտիկ ֆերմենտներին:

Բորբոքումը կար·ավորող ֆունկցիայով օժտված միջոցներից է մակերիկամների կեղևի հորմոն դեզօքսիկորտիկոստերոնը (ԴՕԿԱ), որի ընդհանուր ազդեցությունը վերքերում ընթացող բորբոքային և վերական·նողական պրոցեսների վրա հան·ամանորեն ուսումնասիրվել է՝ կապված նրա հակաբորբոքային ազդեցության հետ[1], իսկ 50-ական թվականներին հաստատվել է նաև նրա տեղային հակաբորբոքիչ ազդեցությունը[2]: Կարևոր է, որ ապացուցվել է դեզօքսիկորտիկոստերոնի դրական ներ·ործությունը վերքում եղած միկրոօր·անիզմների կազմի և հատկությունների, ինչպես նաև հակամանրէական պատրաստուկների նկատմամբ դրանց վ·այունության փոփոխման վրա: Բոլոր հեղինակները համակարծիք են, որ տեղի է ունենում մանրէական ասոցիացիաների վ·ալի կրճատում և միակուլտուրայում ստաֆիլոկոկների թվի որոշակի ավելացում: Իսկ այն շտամներում, որոնց ախտածնությունը չէր նվազում կամ նույնիսկ ավելանում էր, դիտվում էր

[1] Տես *P. Dukommun*. L'action de l'ACTH de la cortisone et de la dezoxycorticosterone dans l'informmation. Schweis Med., Wochenschr., 1952; *А. А. Ханин*. К вопросу о нейрогормональной регуляции восстановительных процессов в коже при стимуляции. Автореф. дис. Е., 1967; *М. Г. Маргарян*. К вопросу о местном применении дезоксикортикостерона при лечении гранулирующих ран и некоторых поверхностных повреждений кожи. Автореф. дис. Е., 1975.

[2] Տես *A. Robert, J. K. Nezamis*. Effect of dezoxycorticosteron on inflamination after lokal administration. «Acta Endocrinology», 1957, 25, 3/298—302.

հակամանրէական պատրաստուկների նկատմամբ կ·այունության բարձրացում (ամպիցիլին, պենիցիլին, ·ենտամիցին, ցեֆապոլին): Հետաքրքրական է այն փաստը, որ նման դեպքերում հետապոտված 80 շտամներում էլ բարձրանում է ստաֆիլոֆա·ի նկատմամբ ստաֆիլոկոկների կ·այունությունը:

Մեր կողմից ԴՕԿԱ-ն կիրառվել է հրապենային վերքերի բուժման համար: Ստացված նախնական արդյունքները վկայում են այն մասին, որ հաջողվում է կ·ալիորեն նվազեցնել մանրէների բազմացումը, կրճատել ֆա·ոցիտոզի ժամանակը և լավացնել լեյկոցիտների ֆա·ոցիտար ակտիվությունը՝ այն հասցնելով նորմային (իջած էր մինչև 30—35 % և ավելի):

Հրապենային վերքերի ԴՕԿԱ-ով բուժման մեթոդիկան հետևյալն է: Վերքային մակերեսը ենթարկվում է մանրակրկիտ և խնայողական մշակման, որից հետո դրվում է դեղամիջոցը: Մեկ ան·ամվա համար օ·տա·ործվում է 0,5—1,5 մլ ԴՕԿԱ: Բուժումը կատարվում է վիրակապի տակ, որը փոխվում է 2 օրը մեկ ան·ամ մինչև վերքի լրիվ լավացումը: Վերքերի լավացման դինամիկան ուսումնասիրվել է դաջման եղանակով՝ հաշվելով լավացման արա·ությունը: Ընդ որում կ·ալիորեն կրճատվել են այդ վերքերի լավացման ժամկետները:

# ВОЕННАЯ МЕДИЦИНА

## НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ АДАПТАЦИИ ВОЕННОСЛУЖАЩИХ К УСЛОВИЯМ ВЫСОКОГОРЬЯ

*А. С. АГАБАЛЯН, майор м/с, доктор биологических наук, профессор, А. В. КАЗАРЯН, подполковник м/с, кандидат медицинских наук, доцент, А. С. САРГСЯН, А. Г. МИНАСЯН*

РЕЗЮМЕ

Условия высокогорья оказывают существенное влияние на состояние человеческого организма. Важную роль в развитии дезадаптационных расстройств играют ослабление неспецифической резистентности организма, снижение активности антимикробных и антивирусных иммунных реакций, нарушения основного и водного обменов, угнетение секреторной и моторной функций желудочно-кишечного тракта.

В целях профилактики и предупреждения указанных нарушений, в числе используемых препаратов, обладающих иммунно- и биомодулирующими свойствами, предлагается зетапол.

Для коррекции адаптационного процесса важное значение имеет и выбор оптимального рациона питания войск. Рекомендуется за несколько дней до подъема на высоту применять высокоуглеводную диету.

## МЕСТНОЕ ЛЕЧЕНИЕ ОГНЕСТРЕЛЬНЫХ РАНЕНИЙ ДЕЗОКСИКОРТИКОСТЕРОНОМ

*М. Г. МАРГАРЯН, подполковник м/с, кандидат медицинских наук, доцент, Л. М. ЖАМАГОРЦЯН, капитан м/с, кандидат медицинских наук, И. М. МАРГАРЯН, А. С. ГАЛСТЯН, Х. Г. ЗАХАРЯН*

РЕЗЮМЕ

Известны антимикробные и бактерицидные свойства дезоксикортикостерона. Проведенные авторами исследования показали, что этот препарат может быть эффективным средством и при лечении огнестрельных ран.

# MILITARY MEDICINE

## SOME PECULIARITIES OF THE ADAPTATION OF MILITARY MEN TO THE CONDITIONS OF THE ALPINE

*A. S. AGABALIAN, Major of Medical Service, Doctor of Biological Sciences, Professor, A. V. KAZARIAN, Lieutenant-Colonel of Medical Service, Candidate of Medical Sciences, Docent, A. S. SARKISSIAN, A. H. MINASSIAN*

SUMMARY

The conditions of the Alpine have an essential influence on the state of human organism. The weakening of non-specific resistibility of the organism, the decrease of the activity of antimicrobe and antiviral immunity reactions, the breach of the main and water metabolisms, the oppression of the secretory and motive functions of the alimentary canal play an important role in the development of disadaptational breakdowns.

With the purpose of prophylaxis and preventing of the mentioned breaches, zetapol is suggested among the applied preparations, having immune and biomodulating properties.

The choice of the optimal food allowance of the troops also has a principal meaning for the correction of the adaptational process. It is recommended several days before rising.

## THE LOCAL TREATMENT OF THE BULLET WOUNDS WITH DEZOXYCORTICOSTERON

*M. G. MARGARIAN, Lieutenant-Colonel of Medical Service, Candidate of Medical Sciences, Docent, L. M. ZHAMAGORTSIAN, Captain of Medical Service, Candidate of Medical Sciences, I. M. MARGARIAN, A. S. GALSTIAN, KH. H. ZAKHARIAN*

SUMMARY

Antimicrobe and bactericidal properties of dezoxycorticosteron are well known. The explorations held by the authors showed that this preparation might be an effective remedy for the treatment of the bullet wounds as well.

# ՁՈՐՔԵՐԻ ԹԻԿՈՒՆՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

## ²ÔÆø²ÚÆÜ Ü°Ø²îà¸Ü°ðàì ì²ð²Îì²Ì àâÊ²ðÜ°ðÆ Î²ÂÆ àð²ÎÆ ìð² ²Êî²Ð²ðàôÂÚ²Ü ²¼¸°òàôÂÚ²Ü ì°ð²òØ²Ü ²Ü²êÜ²´àôÄ²ê²ÜÆî²ð²Î²Ü ØÆæàò²èàôØÜ°ðÀ

*ì. ì. ²´ð²Ð²ØÚ²Ü, ³Ý³ëÝ³µáõÅ³Ï³Ý ·Ç ïáõÃÛáõÝÝ»ñÇ Ã»ÏÝ³ Íáõ*

Վերջին ժամանակներս Արևմտյան Եվրոպայում տարածում են ստացել մըսայու կենդանիների անասնաճարակային այնպիսի հիվանդություններ, որոնք վտան·ավոր են նաև մարդու համար: Բացի այդ, կան նաև այլ վարակիչ հիվանդություններ, որոնք հեշտությամբ կարող են մսի, կաթի կամ դրանց ածանցյալ սննդամթերքի միջոցով փոխանցվել մարդուն, օրինակ՝ բրուցելյոզը:

Գաղտնիք չէ, որ ներկայումս սննդամթերքի մի վ·ալի մասը հանրապետություն է ներմուծվում Արևմուտքից, որտեղ այսպես կոչված երրորդ աշխարհի երկըրներ առաքվող ապրանքները չեն ենթարկվում խիստ ստու·ումների: Եթե հաշվի ենք առնում, որ մեր հանրապետությունում էլ սննդի որակի նկատմամբ վերահսկողությունն առայժմ բարձըր մակարդակի չի հասել (թեև այդ հարցում այժմ շոշափելի առաջընթաց կա), որ սննդամթերքը երբեմն վաճառում են պատահական, բժշկական ստու·ումների չենթարկված մարդիկ, ապա պարզ է դառնում, որ նման պայմաններում ·ոյություն ունի անասնաբուծական ծա·-ման սննդամթերքից համաճարակային վարակումների լուրջ վտան·: Այդ վըտան·ն ավելի մեծ է զորամասերում և զինվորական ստորաբաժանումներում, որտեղ մարդկանց մեծ կուտակումների և միևնույն սննդամթերքի կան·վածային օ·տա·ործման հան·ամանքը բավական ռեալ են դարձնում կան·վածային ախտահարումների հնարավորությունը: Իհարկե, այս հարցում մեծ պատասխանատվություն ունեն հրամանատարները և զինվորական բժիշկները, որոնք պետք է անշեղորեն և ամենայն լրջությամբ կատարեն անասնաբուժասանիտարական նորմերի պահանջները: Սակայն, կարծում ենք, այս ասպարեզում աշխատող ·իտնականներն էլ պետք է օ·նեն համապատասխան բանակային ծառայություններին:

Ներկայումս Հայաստանում անասունների ամենատարածված ախտահարումներից է աղիքային նեմատոդներով ախտահարումը: Հայի սեղանին միշտ էլ լինում են պանիր ու մածուն, և դժվար է պատկերացնել, որ զինծառայողին ծնողների կողմից ուղարկվող ծանրոցում չլինի մի կտոր չանախ կամ բրինզա, իսկ կարա·ն ան·ամ պարտադրաբար մտնում է զինվորների օրաբաժնի մեջ: Պետք է հաշվի առնել, որ որոշ կաթնամթերքների պատրաստման ժամանակ, հատկապես տան պայմաններում, կաթը չի ենթարկվում անհրաժեշտ ջերմային և այլ մշակումների: Դրա հետևանքով մեծանում է կաթնամթերքում ախտածին մանրէների պահպանման վտան·ը: Ելնելով այս հան·ամանքից՝ մենք ձեռնամուխ եղանք կաթի որակի և նրա բնապահպանական վիճակի վրա կաթ տվող անասունների՝ աղիքային նեմատոդներից ստրոն·իլյատներով վարակվածության ներ·ործության հետազոտությանը: Դրան խթան եղավ նաև այն, որ մակաբույծ ճիճուների ազդեցությունը կաթի ֆիզիկաքիմիական ցուցանիշների և մանրէական ախտահարվածության աստիճանի վրա մինչև այսօր բավականաչափ ուսումնասիրված չէ:

Գիտափորձի համար վերցվեցին 10

մաքի, որոնք դիեցման շրջանի 4-րդ ամսում էին: Դրանցից 5-ը վարակված էին աղիքային ստրոն·իլյատներով (փորձարկվող խումբ), իսկ 5-ը վերծ էին այդ վարակից (ստու·ողական խումբ): Խըմբերն ընտրվեցին ձվադիտական հետազոտման մեթոդով: 10 օր օրը երեք ան·ամ կատարվում էր կաթի հետազոտություն, որի արդյունքները ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում:

արտահայտված, ուստի և այն ավելի արա· է ենթարկվում տարբեր միկրոֆլորաներով սերմնավորվածության, ինչը պետք է անպայման հաշվի առնվի կաթի պահման, սառեցման, փոխադրման և մշակման ժամանակ:

Նշված հետազոտություններին զու·ահեռ մենք ուսումնասիրեցինք նաև տնտեսությունների, պահվող ոչխարների, ինչպես նաև այդտեղ աշխատող

*Աղյուսակ*

ԱՌՈՂՋ ԵՎ ՎԱՐԱԿՎԱԾ ՈՉԽԱՐՆԵՐԻ ԿԱԹԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

| Ցուցանիշներ | Առողջ ոչխարների կաթը | Հիվանդ ոչխարների կաթը |
|---|---|---|
| մանրէական ախտավորվածություն՝ որոշված ըստ ռեդուկտազային փորձի, խումբ | 1-ին, 2-րդ | 2-րդ, 3-րդ |
| ճարպի պարունակություն, % | 3,8 | 3,2 |
| սպիտակուցի պարունակություն, % | 3,2 | 3,6 |
| այդ թվում՝ կազեինի | 2,6 | 2,2 |
| շիճուկային սպիտակուցների | 0,6 | 1,4 |
| թթվայնություն, $^{0}$T | 18,5 | 14,4 |

Ինչպես երևում է աղյուսակից, հիվանդ ոչխարների կաթն ըստ մանրէական ախտահարվածության համապատասխանում էր 2-րդ և 3-րդ խմբերին, իսկ առողջ ոչխարներինը՝ 1-ին և 2-րդ խմբերին: Պարզվեց նաև, որ աղիքային ստրոն·իլյատների ներ·ործության հետևանքով կաթի մեջ տեղի է ունենում ճարպերի (0,6 %-ով) ու կազեինի (0,4 %-ով) քանակների նվազում և, հակառակը, ընդհանուր սպիտակուցի (0,4 %-ով) ու շիճուկային սպիտակուցի (0,8 %-ով) քանակների աճում:

Շրդանախմորումային հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ վարակված մաքիների կաթը պանրա·ործության համար ցածր որակի է, քանի որ ունի ցածր մակարդունակություն: Պարզվեց նաև, որ հիվանդ ոչխարներից նոր կթված կաթի թթվայնությունը 4,1 $^{0}$T-ով ցածր է առողջ ոչխարների նոր կթված կաթի թթվայնությունից:

Ախտահարված ոչխարների կաթի մանրէաաբան (բակտերիցիդային) հատկությունները նույնպես ավելի թույլ են

մարդկանց սանիտարական վիճակի ազդեցությունը ստացվող կաթի որակի և բնապահպանական մաքրության մակարդակի վրա:

Սովորաբար սարքավորանքի օ·տա·ործումից հետո նրա մակերևույթին մնում է որոշ քանակով կաթ, որը լավ միջավայր է տարբեր միկրոօր·անիզմների բազմացման համար և կաթի ու կաթնամթերքի աղտոտման աղբյուր է դառնում:

Բարձր սանիտարական որակի կաթի ստացման պայմանները պարզելու համար մենք հետազոտեցինք լվացող և աղտապերծիչ միջոցների ազդեցությունը կաթի աղտոտվածության վրա: Կիրառելով ·րականության մեջ հայտնի մեթոդներ՝ մենք որոշեցինք մանրէական մարմինների քանակները կթվորուհիների ձեռքերի, ոչխարների կուրծերի և օ·տա·ործվող սարքավորանքի ու ամանեղենի վրա: Ապա վարակազերծեցինք կթվորուհիների ձեռքերը և ոչխարների կուրծերը «Վեսան» մանրէաաբան նյութի 0,2 %-անոց լուծույթով, իսկ սարքա-

վորանքն ու ամանեղենը՝ «Պոսուդոմոյ-2» լվացաողտահանիչ նյութի 0,8 %-անոց լուծույթով: Այնուհետև առաջրեցինք ստացված արդյունքները:

Կթվորուհիների չմշակված ձեռքերից մանրէաբանական ողողալուծույթի 1 մլ-ում հայտնաբերվեց միջինում 5—8 հազ. մանրէ, մաքիների կուրծի մակերեվույթից՝ 10—16 մլն., իսկ սարքավորանքի և ամանեղենի մակերևույթից ստացված ողողալուծույթի 1 մլ-ում՝ 5—20 մլն. մանրէ: Կաթի մեջ մանրէների ընդհանուր քանակն ավելի քան 1 մլն. էր, մինչդեռ անմիջականորեն կուրծից վերցված կաթի մեջ այն ընդամենը 5—8 հազ. էր: Նշված եղանակով մշակումից հետո այդ թվերը նվազեցին՝ կազմելով ձեռքերից և կուրծերից ստացված ողողալուծույթի 1 մլ-ում 200—300 մանրէ, իսկ սարքավորանքի և ամանեղենի ողողալուծույթում դրանք ·ործնականում չկային: Այսպիսով՝ շնորհիվ ձեռնարկված միջոցների մեզ հաջողվեց ստանալ բնապահպանական առումով ·րեթե մաքուր կաթ:

Այստեղից կարելի է անել հետևյալ եզրակացությունները:

1. Ոչխարների աղիքային ստրոն·իլյատներն իջեցնում են կաթի սննդային և տեխնոլո·իական հատկությունները. բացասաբար ազդելով կաթի մանրէասպանային հատկությունների վրա՝ դրանք նպաստում են կաթի մանրէական սերմնավորվածության կտրուկ աճմանը:

2. Լվացող և վարակազերծիչ միջոցներն էապես նվազեցնում են կաթի մանրէական ախտահարվածության մակարդակը, հնարավորություն են տալիս ստանալու բնապահպանորեն համարյա մաքուր կաթ՝ չազդելով կաթի որակի վրա:

# ТЫЛОВОЕ ОБЕСПЕЧЕНИЕ ВОЙСК

## ВЕТЕРИНАРНО-САНИТАРНЫЕ МЕРОПРИЯТИЯ ПО УСТРАНЕНИЮ ВЛИЯНИЯ КИШЕЧНЫХ НЕМАТОД НА КАЧЕСТВО МОЛОКА ОТ БОЛЬНЫХ ОВЕЦ

*В. В. АБРАМЯН, кандидат ветеринарных наук*

РЕЗЮМЕ

В последнее время на Западе участились случаи эпизоотии опасных для человека болезней. Подобные случаи представляют особую опасность для военнослужащих с учетом специфики воинской службы—сильная концентрация больших людских масс, массовое употребление в пищу одних и тех же продуктов. В виду широкой представленности молочных продуктов (масло, сыр, мацун) в пищевом рационе населения республики, распространенности среди поголовья мелкого рогатого скота инвазий кишечными нематодами были проведены исследования по определению влияния инвазированности овцематок кишечными стронгилятами на физико-химические показатели молока. Было доказано, что в молоке больных овец понижаются содержание жира (на 0,6 %), казеина (на 0,4 %), а также кислотность (на 4,1 $^0$Т) и повышается содержание сывороточного белка (на 0,8 %) и общего белка (на 0,4 %), что приводит к ухудшению бактерицидных свойств и более быстрому обсеменению микрофлорой. Было доказано также, что обработка рук доярок и вымени овец 0,2 %-ным раствором бактерицидного средства «Весан» и оборудования и посуды 0,8 %-ным раствором моюще-дезинфицирующего средства «Посудомой-2» позволяет получить почти экологически чистое молоко.

# LOGISTIC SUPPORTS OF ARMIES

## VETERINARY-SANITARY MEASURES ON THE REMOVAL OF INTESTINAL NEMATODS' INFLUENCE ON THE QUALITY OF THE MILK OF THE SICK SHEEP

*V. V. ABRAHAMIAN, Candidate of Veterinary Sciences*

SUMMARY

For the last time the cases of epizootic of the illnesses dangerous for man have become frequent in the West. Such cases have a special danger for the servicemen with regard for the specific character of the military service—strong concentration of large human masses, mass eating of the same products. The explorations on defining the influence of the invasion of the sheep's dams by intestinal strongilyats on the physical and chemical indices of milk were held on account of the wide representation of dairy produce (butter, cheese, matsoni) in the food allowance of the republic's population, the prevalence of invasions by intestinal nematods among the total number of the small cattle.

It was proved that in the milk of the sick sheep the content of the fat (by 0.6 %), the casein (by 0.4 %) and also the acidity (by 4.1°T) decreases and the content of the serum protein (by 0.8 %) and the common protein (by 0.4 %) increases, that brings to the deterioration of bactericidal properties and producing more rapidly seeds with microflora. It was also proved, that the treatment of the dairymaid's hands and the udder of the sheep with the 0.2 % solution of the bactericidal means «Vesan» and the equipment and the dishes with the 0.2 % solution of the washing disinfectant «Posudomoi-2» allows to get almost ecologically pure milk.

# ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

## Ø²ðî²Î²Ü Æð² ¸ðàôÂÚàôÜàôØ ²ÜÒÜ²Î²¼ØÆ Ðàô¼²Î²Ü ²ÜÎ²ÚàôÜàôÂÚ²Ü Î²ÜÊØ²Ü Ð²ðòÆ Þàôðæ*

*È. ä. ²ðîÆÞâº ì, µ/Í ÷áË·Ý¹ ³å» ï*

### 3. ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԽՈՒՃԱՊԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

**3.1. Ընդհանուր դրույթներ:** Մարտական ·ործողությունների ընթացքում ծա·ող հո·եախտաբանական խան·արումները հաճախ ի հայտ են ·ալիս որպես խմբային երևույթներ, որոնք համակում են սահմանափակ թվով մարդկանց կամ մարդկանց մեծ խմբեր: Լավ հայտնի է խան·արումների համաճարակային բնույթը, հատկապես ոչ բավարար պատրաստականություն ունեցող զինծառայողների շրջանում կամ այն զորքերում, որոնք հապճեպ են կազմավորվել, վատ են համալրվել սպայակազմով, ունեն ցածր մարտական ո·ի, նախորդ երկարատև ծանր մարտերի հետևանքով իրենց մեջ կուտակել են լարվածություն ու հո·նածություն կամ հուսալքվել են նահանջի կամ շրջափակման ազդեցությամբ: Նման հան·ամանքների բերումով վերանում է համախմբվածությունը ընկրզբնական մարտական բջջում, որի կայունությամբ է ապահովվում դժվարությունների հաղթահարումը: Խուճապի այս «վարակիչ սկզբունքը» զան·վածային խուճապների առաջացման սկզբնապատճառն է, իսկ դրանց մեխանիզմները չեն հան·ում անհատական խուճապային դրսևորումների պարզ ·ումարմանը կամ փոխազդեցությանը:

Խուճապը կարելի է բնորոշել որպես չկառավարվող վախի զան·վածային դրսևորում, մի վախ, որը կյանքի համար վտան·ի կամ այլ սպառնալիքի՝ ռեալ կամ մտացածին, երևան ·ալուն պես միաժամանակ համակում է մարդկանց խմբի (զան·վածի) բոլոր անդամներին: Այդ չկառավարվող վախը պարտադրաբար ուղեկցվում է այն համոզմամբ, որ մարդը հայտնվել է մի թակարդում, որն ուր որ է կփակվի, բայց և այն հույսի առկայությամբ, որ այնուամենայնիվ փրկության ինչ-որ ելք կա: Խուճապը դրսևորվում է մարդկանց անկանոն փախուստի և այլ ·ործողությունների ձևով, որոնք չեն համապատասխանում առկա իրադրությանը: Ընդսմին մարդիկ սկսում են ·ործել միայնակ, որպես միմյանց մրցակիցներ, չեն համա·ործակցում իրար հետ, ինչը ոչ միայն չի նվազեցնում վըտան·ը, այլև հակառակը՝ մեծացնում է այն: Խուճապի առաջացման մեկ այլ պայման է անկազմակերպ, վատ կառավարվող զորքերի կամ իրենց կազմակերպվածությունը կորցրած մարդկային մեծ զան·վածների կուտակումը: Նման դեպքերում շատ կարևոր է դառնում հրամանատարի դերը: Հրամանատարի բացակայությունն առաջ է բերում մարդկանց խմբի համախմբվածության կորուստ: Վախով տո·որված զինվորներն այդ զ·ացմունքը տարածում են խմբի մյուս անդամների վրա, և առաջանում է զան·վածային խուճապ[8]:

* Սկիզբը՝ 2000 թ. 4-րդ համարում:

8 Մարտական իրադրություններում խուճապի զար·ացման և դրանց հետ կապված սանիտարական կորուստների մասին տես, օրինակ, *И. В. Синопальников*. Санитарные потери советских войск во время войны в Афганистане. «Военно-медицинский журнал» («ВМЖ»), 1999, № 1.

**3.2. Կլինիկական առում**: Սովորաբար խուճապային տրամադրություններն աճում են թիկունքից դեպի առջևի ·իծ առաջխաղացման համեմատ: Երևակայական վտան·ը հաճախ ավելի մեծ վնաս է պատճառում, քան դեմ առ դեմ հանդիպումը անմիջական վտան·ին:

Նկատվում են խուճապի երկու հիմնական տարատեսակ: Առաջինն է *սուր խուճապային վիճակը որպես արտաքին ազդեցությունների հետևանք*: Այս խուճապի ժամանակ նկատվում են մարդկային կան·վածների անկանոն շարժումներ, փախուստ դեպի թիկունք, երբեմն էլ՝ հակառակորդի կողմը: Դա կարող է խուճապ առաջացնել նաև հակառակորդի շարքերում, այսպես կոչված «կաթվածահարիչ» խուճապ: Այն առավել հաճախ պատահում է առաջին ·ծում ·ործող կորքերի շրջանում: «Ինքնասպանությանը» համարժեք խուճապը կարող է դրսևորվել խուճապահար փախուստի ձևով, երբ մարդիկ իրենց կյանքի մասին չեն էլ մտածում:

Երկրորդը *խուճապի համարժեքներ են, որոնք դրսևորվում են զինծառայողների վարքում պարբերաբար առաջ եկող շեղումների ձևով*. զինծառայողները հաճախակի դիմում են իրենց առողջական վիճակից ·ան·ատներով, կեղծա·ործում են հիվանդություն, կան·վածաբար դիմում են անդամախեղության (իրենց միտումնավոր վերքեր են հասցնում), դասալքության: Այս դեպքում կար·ապահական խախտումներն արտացոլում են այն հան·ամանքը, որ կորքը կորցնում է իր մարտունակությունը: Զինծառայողների վարքում նորմայից այդ պարբերական, բայց բավականին հաճախ տեղի ունեցող շեղումները «թաքնված խուճապի» դրսևորումներ են, և այս իրավիճակում շատ մեծ է բժշկի՝ որպես հրամանատարի խորհրդատուի դերը նման շեղումների նշանակալիության որոշման և կանխար·ելիչ միջոցառումների անցկացման ·ործում:

Հարկ է ուշադրություն դարձնել շեղումների նաև այլ աննշան դեպքերի վրա. ·իշերով տեսողական ընկալումների կան·վածային խախտումներ, ձայնային ·ր·ռիչների ազդեցությամբ ձ·անների ակամա սեղմում, օրինակ, անտառում շարժվելու ժամանակ, և այլն: Պետք է նշել, որ մարտի ժամանակ ձ·անի ակամա սեղմման դեպքերը շատ հազվադեպ են լինում:

Խուճապային վիճակի զար·ացումը կատարվում է միմյանց հաջորդող երեք փուլերով՝ հարված, հակազդում և լուծում:

*Հարվածի փուլը* շատ կարճատև է, այն համապատասխանում է իրական կամ երևակայական սպառնալիքի ընկալմանը: Այդ հարվածի ազդեցությամբ առաջանում է ինտենսիվ վախ, որը ճնշում է դատողականությունը և հան·եցնում է առանձին անհատների որոշակի մերձեցման:

*Հակազդման փուլը* համապատասխանում է խուճապին՝ նրան հատուկ անվերահսկելի ·ործողություններով հանդերձ: Այս փուլը կարող է տևել մի քանի օր:

*Լուծման փուլը* վերջ է դնում խուճապին. կատարվում են փոխօ·նության ·ործողություններ, նշանակվում են հրամանատարներ, որոշվում են առաջացած խուճապի աղբյուրներն ու մեղավորները:

Զորքերի տարաբաշխման անհրաժեշտությունը հան·եցնում է զորքի փոքր խմբերի օպերատիվ կիրառման: Այստեղից էլ՝ «մանրախուճապի» հաճախակի առաջացման հնարավորությունը: «Մանրախուճապի» առաջացման մեխանիզմները նույն սովորական մեխանիզմներն են, որոնք հան·եցնում են խուճապի առաջացման, երբ խմբի ներսում տեղի ունեցող համախմբվածության վերացումն ու ապակազմակերպումը միանում են արտաքին ·ործոնների ազդեցության հետ, ·ործոններ, որոնք մարդկանց կողմից ընկալվում են որպես մի մահացու վտան·, որից, սակայն, դեռ կարելի է փրկվել:

Կեղծ լուրերը, աղավաղված տեղեկությունները, սխալ ընկալված կամ մեկնաբանված հրամանները մարդկանց

անկայուն խմբերում առաջանում են վախի վիճակ: ՈՒստի շատ կարևոր է խուճապի կանխման նպատակով մարտական ստորաբաժանումներում պահպանել հստակ կազմակերպվածք, ընդամին, այդ ստորաբաժանումները պետք է լավ ուսումնավարժված լինեն և պատկերացում ունենան պանապան անսպասելի իրադրությունների մասին, որոնք կարող են հան·եցնել հուսական անկայունության:

**3.3. Հոգեկան խանգարումների կանխարգելումը**: Հո·եկան խան·արումների կանխար·ելման միջոցառումները պետք է տարվեն երկու ուղղությամբ՝ առանձին պինծառայողների մակարդակով և պինծառայողների կոլեկտիվների մակարդակով:

Առանձին պինծառայողների մակարդակով կատարվող միջոցառումներն առաջին հերթին ներառում են կորամասում (ստորաբաժանումում) այն մարդները, և որտեղ անձնակազմի ընտրության մասին խոսք ան·ամ չի կարող լինել: Հարկ է հաշվի առնել այն հան·ամանքը, որ վերջիններում անկայուն բնութա·րիչներ կամ նույնիսկ հո·եախտաբանական խախտումներ կունենա անձնակազմի 10—15 %-ը:

Վերջին երկու-երեք տասնամյակում կտրուկ աճել է ·իտության հետաքրքրությունը հո·եբանական ներ·ործության հնարավոր ուղիների, ինչպես նաև մարդու հո·եկանի վրա ստրեսների ներ·ործության հետևանքների նկատմամբ: Հետապոտվել են, օրինակ, արտակար· պայմաններում ծառայած պինծառայողների նևրոպային և հո·եմարմնական խան·արումների կլինիկահո·եբանական առանձնահատկությունները[9] (տես նկ. 1):

Մեծ թվով հետապոտություններ են կատարվել ստրեսային պայմաններին հարմարման ·ործընթացների վրա մարդկանց տարբեր բնավորություններ




Նկ. 1. Արտակարգ պայմաններում ծառայած զինծառայողների նևրոզային և հոգեմարմնական խանգարումների կլինիկահոգեբանական առանձնահատկությունները

1. անուժականություն, 2. վեգետատիվ խախտումներ, 3. դյուրագրգռություն, 4. արագ հոգնելիություն, 5. գլխացավեր, 6. կենտրոնացման դժվարություն, 7. քնի խանգարումներ, 8. անկայուն տրամադրություն, 9. հիշողության թուլացում, 10. սևեռուն մտքեր, 11. գլխապտույտ, 12. աշխատանքի նկատմամբ հետաքրքրության կորուստ

կանց առկայության պարզումը, որոնք առավել մեծ հավանականությամբ կարող են խախտել կոլեկտիվի բարոյական վիճակը: Այս առումով վիճակները տարբեր են այն կորամասերում, որոնք համալրված են ընտրյալ անձնակազմով, և այն կորամասերում, որոնցում մեծ տոկոս են կազմում պահեստապորից կորակոչվածրի ապդեցության բացահայտման ուղղությամբ: Այսպես՝ լեռներում մարդկանց փոքր մեկուսի խմբերի կյանքի ուսումնասիրությունը ցույց է տվել, թե ինչ

[9] Տես *А. В. Белинский*. Современные подходы к медицинской реабилитации военнослужащих с пограничными психическими расстройствами. «ВМЖ», 2000, № 8.

հսկայական տարբերություն կա տոկուն անձերից և խոցելի, հեշտ վիրավորվող անձերից կազմված խմբերի միջև[10], ինչը հաստատում է անձնակազմի ուսումնասիրության անհրաժեշտությունը: Այդ ստուգման համար պետք չէ հատուկ մշակել պարտադիր հնարներ: Նման ստուգման համար հիմք կարող են դառնալ այն տեղեկությունները, որոնք վորամասի բժիշկը կարող է հավաքել անձնակազմի հետ ունեցած իր ամենօրյա շփումների ժամանակ: Այս պրոբլեմի լուծումը մոտոհրաձգային վորամասերի դեպքում դըժվարանում է այն բանի հետևանքով, որ դրանք ունենում են մեծաթիվ անձնակազմ, ուստի բժիշկը դժվարանում է ծանոթանալ յուրաքանչյուր փինծառայողի հետ: Այդ պայմաններում պրոբլեմը կարող է լուծվել հետևյալ ձևով. փինծառայողների թվից առանձնացվում են հոգեպես առավել կայուն անձինք, որոնց հրամանատարը բժշկի ներկայացմամբ բաշխում է ըստ ստորաբաժանումների՝ դրանց կայունությունն ապահովելու նպատակով: Ընդսմին պետք է հիշել, որ թիկունքային վորամասերում հուզական անկայունության երևան գալու հավանականությունը երբեմն ավելի բարձր է, քան այն վորամասերում, որոնք գտնվում են հակառակորդի հետ անմիջական մարտական շփման մեջ: Իսկ դա նշանակում է, որ անկայուն հոգեկան ունեցող փինծառայողներին թիկունքային և նյութատեխնիկական մատակարարման վորամասեր ուղարկելը միշտ չէ, որ կարող է լինել վորքերի հոգեբանական կայունության ապահովման պրոբլեմի ճիշտ լուծում:

**3.4. Հուզական անկայունությամբ անձանց բուժումը մարտի ընթացքում:** Կարելի է առանձնացնել արտակարգ պայմաններում ծառայող փինծառայողների հոգեկան առողջության չորս մակարդակներ (տես աղյուսակը)[11]:

Հուզական խանգարումները հարմարման սուր հակազդումներ են, որոնք տարբերվում են իրենց աստիճանով, սահմանափակ են ըստ տևողության և կապված են արտածին ստրեսների հետ[12]: Ընդ որում դրանք կապված չեն ներքին հոգեկան հակամարտություններ, առնվազն՝ դրանց մեծ մասի հետ:

Բուժման հայեցակարգը հիմնված է պարզ տեսական նախադրյալների վրա: Պատերազմի կամ խաղաղության շրջանում ծագող ցանկացած հակամարտության ժամանակ առաջացող գլխավոր հոգեկան ախտանիշը վախն է՝ որպես ցանկացած մարդու բնականոն հակազդում կռվին, մարտին և այլ ընդհարման: Այդ վախը, կախված ստրեսի ուժից և տևողությունից, համակում է մարդու գիտակցությունը՝ ապակազմակերպելով և ապակայունացնելով այն: Որքան երկար են տևում այդ կարգի հոգեկան անկայունությունները, այնքան կայուն և ցայտուն են դառնում դրանք, իսկ կենսաէլեկտրական ուղեղային և վարքային խախտումները կարող են դառնալ անդառնալի: ՈՒստի մարտում վախի հակազդումը պետք է ճնշվի հենց այն ժամանակ, երբ առաջին անգամ ի հայտ է գալիս:

Հուզական խանգարումների թերապևտիկ բուժումն անհրաժեշտ է սկսել հնարավորին չափ շուտ: Երբ հիվանդի հոգեկան վիճակը դեռևս պարզված չէ, նշանակվում է շտապ բուժում հանգստացնող միջոցների կիրառմամբ: ՈՒշ ձեռնարկված բուժման դեպքում հոգեկան խանգարման վիճակը դառնում է երկարատև և կարող է վերածվել հիվանդության խրոնիկական ձևերի:

Ասվածից հետևում է, որ բուժումը պետք է կատարվի անմիջականորեն մարտական գործողությունների գոտում կամ դրա մոտակայքում, օրինակ՝ գնդի բուժկետում: Հոգեկան խանգարումներով հիվանդների փոխադրման

[10] Տես *В. Ю. Шанин и др.* Динамика физиологических показателей у военнослужащих в процессе прерывистой горной адаптации. «ВМЖ», 2000, № 1.

[11] Սույն դասակարգումը վերցված է Ա. Վ. Բելինսկու հիշատակված աշխատությունից:

[12] Տես *М. М. Решетников и др.* Психофизиологические аспекты состояния, поведения и деятельности людей в очагах стихийных бедствий и катастроф. «ВМЖ», 1991, № 9; *Ю. А. Александровский.* Пограничные психические расстройства. Ростов-на-Дону, 1997.

*Աղյուսակ*

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

| Մակարդակ | Չափանիշային հատկանիշներ | Կանխատեսում |
|---|---|---|
| 1. գործնականում առողջ | Ներկայումս ախտաբանական դրսևորումներ չկան, դիտվում է հուզական լավ կայունություն (հոգեկան ոլորտում տարբեր հոգեխոցիչ գործոնների ազդեցությամբ չեն առաջանում շեղումների արտահայտված հատկանիշներ), մասնագիտական գործունեության հաջող կատարման բարձր կամ միջին գնահատականներ: | բարենպաստ |
| 2. անբարենպաստ կանխատեսումային հատկանիշների առկայություն | Ժառանգական բնույթի անբարենպաստ գործոններ (հարազատների շրջանում հոգեկան հիվանդությունների, ալկոհոլիզմի արձանագրվածություն և այլն):<br>Հիվանդության ընթացքում հոգեկան գործունեության շեղումներ (հարմարման դժվարություն, դժվարություններ ուսումնավարժման ժամանակ, պարբերական կարճատև ալկոհոլիկացում, ստրեսի նկատմամբ տարբեր վարքային կամ սուր հակազդումներ և այլն):<br>Զանազան հակամարտային իրավիճակների առկայություն, հուզական անկայունություն, գլխի վնասվածքների հետևանքներ, նյարդավարակումներ, թունավորումներ, մարմնական հիվանդություններ, որոնք չեն խանգարում մասնագիտական պարտականությունների կատարմանը:<br>Ոչ ախտաբանական բնույթի կարճատև հակազդումներ, անձնավորության անբարենպաստ առանձնահատկություններ (անհարմարվողականություն, նեղացկոտություն, ագրեսիվություն, հոգեանուժականություն և այլն), բնավորության շեշտվածություն, ռազմամասնագիտական գործունեության շարունակման նկատմամբ բացասական վերաբերմունք:<br>Անբարենպաստ հոգեկան վիճակներ, այդ թվում նաև օբյեկտիվ ստուգման տվյալներով բացահայտված վիճակներ:<br>Միջին կամ ցածր մասնագիտական ընդունակություններ, որոնք դրսևորվում են առաջադիմության ցածր գնահատականների ձևով՝ մասնագիտական գործունեության ասպարեզում դժվարացման առկայությամբ: | բարենպաստ՝ ժամանակին վերականգնողական միջոցառումների իրականացման պայմանով |
| 3. ոչ ախտաբանական բնույթի կարճատև հակազդումների առկայություն | Ոչ ախտաբանական բնույթի կարճատև հոգեծին հակազդումներ, որոնք ունենում են հարմոնիկ կամ անհարմոնիկ տիպի ոչ երկարատև (10—15 օրից ոչ ավելի) հոգեբանական ստրեսային հակազդումներով անձինք, գերազանցապես ոչ ախտաբանական կարճատև հակազդումների հուզական դրսևորումներով հետվնասվածքային ստրեսային խանգարումների հատկանիշների առկայություն: | բարենպաստ՝ ժամանակին վերականգնողական միջոցառումների իրականացման պայմանով |
| 4. հոգեկան ախտաբանության հատկանիշներ | Տարբեր ծագում ունեցող հոգեկան խանգարումների հատկանիշների առկայություն, հետվնասվածքային ստրեսային խանգարումներ, որոնք առաջ են բերում մասնագիտական պարտականությունների կատարման կարողության կայուն նվազում: | կասկածելի՝ ժամանակին վերականգնողական միջոցառումներ չձեռնարկվելու դեպքում |

ժամանակ խորհուրդ չի տրվում օ·տա·րծել սովորական տարահանումային ուղիները. պետք է խուսափել այլ կար·ի հիվանդություններով տառապողների կամ վիրավորների հետ այդպիսի հիվանդություններով տառապող անձանց շփումներից:

Զինծառայողների հիվանդացման վաղ շրջանում բուժմիջոցառումների կիրառության դեպքում առողջացումն ա-

րա· է կատարվում, ինչը հնարավորություն է տալիս այդ փինծառայողներին օ·-տա·ործելու ինչպես պաշտպանական ·ործողությունների ժամանակ, այնպես էլ փրկարարական օպերացիաներում: Նման հիվանդների հաջող բուժման անհրաժեշտ պայմաններ են բուժաշխատակազմի համոզվածությունը հիվանդների արա· առողջացման մեջ և այդ համոզվածությունը հիվանդներին ներշնչելու կարողությունը:

Վախի վիճակում ·տնվող անձինք սովորաբար շատ ընկճված և ենթարկվող են լինում: Նրանք պատրաստ են լինում այն բանին, որ իրենց ղեկավարեն, ան·ամ ցանկանում են դա: Փորձը ցույց է տալիս, որ հո·եկան խան·արումներով տառապող մարդկանց վիճակը լավանում կամ վատանում է՝ կախված բուժման ընթացքում տիրող մթնոլորտից, որը բնորոշվում է կա՛մ նյարդայնությամբ ու անկանոնությամբ, կա՛մ արա· առողջացման նկատմամբ վստահությամբ և հան·ստությամբ:

Բուժման այդ փուլում բուժող անձնակազմի վստահ և հան·իստ ·ործողություններն ու վարքն ավելի են օ·ուտ տալիս, քան հորդորները: Եթե անձնակազմն ինքը համոզված չի լինում այն բանում, որ առողջացումն արա· տեղի կունենա, ապա հիվանդն ինքը շուտով կ·ում է դա այն աննշան հատկանիշներից, որոնք նա մեկնաբանում է որպես հիվանդության ծանրության վկայություն՝ անկախ այն բանից, որ նրա հետ տարվող զրույցներին հաղորդվում է կենսուրախ բնույթ:

Արա· առողջացման սպասումը պետք է իր արտայոլումն ստանա նաև տվյալ հիվանդությանը վերաբերող տերմինների ·ործածության մեջ. ցանկալի է, որ հո·եկան խան·արումների ախտորոշման ժամանակ չ·ործածվեն այնպիսի տերմիններ, ինչպես՝ «հո·ե·արություն», «նևրոզ», «հիստերիա», «խելա·արություն», քանի որ դրանք այն պատկերացումն են ստեղծում, թե հո·եկան հիվանդությունը լուրջ բնույթ ունի, որի դեպքում առողջացումը թվում է կասկածելի, իսկ հետևանքները՝ ·բեթե որոշակի[13]: Ուստի պետք է օ·տա·ործել այնպիսի տերմիններ, ինչպես՝ «մարտական հո·նածություն», «ուժասպառություն» և այլն:

Պետք է կիրառվեն բուժման պարզ եղանակներ: Բուժման բարդ մեթոդների, երկարատև հան·ստի, դեղերի երկարատև ընդունման, հո·եթերապիայի կիրառություններն իրենց չեն արդարացնում: Ընդհակառակը՝ շատ ավելի արդյունավետ են լինում հիվանդի կարճատև «լիցքաթափումը», նրան ուտելու և հան·ստանալու հնարավորության ընձեռումը: Հո·եկան խան·արումների բուժման լավա·ույն մեթոդն այն է, որ հիվանդն ապահովված լինի սննդով, համեմատաբար տաք անվտան· տեղով, նորմալ քնելու հնարավորությամբ, և կարճատև զրույցի միջոցով նրան հնարավորություն տրվի հասկանալու եղածը, և դա՝ այն նկատառումով, որ նա կարողանա ազատվել հուզական լարվածությունից և վերա·տնի ինքնատիրապետման վիճակը: Պետք չէ, որ հո·եկան լարվածությունը մշտապես վերացվի քիմիաթերապևտիկ միջոցներով, քանի որ այդ միջոցների անընդհատ կիրառումը խոչընդոտում է հիվանդի հետ համակողմանի կապի հաստատումը: Նման միջոցները պետք է կիրառվեն միայն այն դեպքերում, երբ մյուս միջոցներն արդյունք չեն տալիս, առանձնապես կան·վածային խուճապի իրադրությունում՝ դրա կար·ացումը կանխելու նպատակով: Նկատենք, որ հան·ստացնող դեղամիջոցների կիրառման հաճախականությունը հակադարձ համեմատական է բուժող բժշկի մարտական փորձառությանը: Քիմիաթերապիան պետք է բավարարի միայն այն պահանջին, որ հիվանդի համար ապահովված լինեն մի քանի ժամվա հան·իստն ու քունը: Հարկ է խուսափել այն բանից, որ առաջին ·իծ վե-

[13] Տես *Ю. А. Александровский, А. А. Чуркин и др.* Этапы и содержание помощи лицам с психическими расстройствами при стихийных бедствиях и катастрофах. «Тезисы докладов всесоюзной конференции», Казань, 1988; *А. С. Никифиров.* Неврозы. «Неврология и психиатрия», 1998, т. 98, № 11.

բաղառնան այն պինծառայողները, որոնց վ·ոնությունը նվազել կամ խախտըվել է դեղամիջոցներ ընդունելու պատճառով: Այդ դեղամիջոցների ներ·ործությունը նաև չպետք է լինի շատ ուժեղ, որ չստացվի այնպես, որ «նստակյաց» հիվանդը դեղեր ընդունելուց հետո դառնա «պառկած» հիվանդ: Հան·ստացնող միջոցների այդպիսի խելամիտ և խնայողական օ·տա·ործման պահանջին պետք է ավելացնել նաև այն պահանջը, որ դրանց ընտրությունը կատարվի յուրաքանչյուր հիվանդի հուզական անկայունության ձևին համապատասխան:

Հիվանդի ռեակտիվ վիճակի դեպքում, երբ այն շատ ցայտուն չի արտահայտված, չի ուղեկցվում ·իտակցության խախտումներով ու կառանցանքով, նախապատվություն պետք է տրվի բարբիտուրատներին, որոնք աչքի են ընկնում իրենց արա· և կարճատև ներ·ործությամբ՝ հիվանդին հան·իստ քուն բերելով: Այն դեպքում, երբ այդ միջոցները դրական արդյունք չեն տալիս, կամ ավելի ծանր դեպքերում կարելի է կիրառել բենզոդիազեպինների խմբի որևէ անքսիոլիտիկ:

Այն դեպքերում, երբ հիվանդությունը կարճ ժամկետներում բուժման չի ենթարկվում և առանձնապես՝ երբ «թիկունքային ապահովման խախտումների» պատճառով առկա է տարահանման 2-3-օրյա հապաղում, կարելի է կիրառել երկարաձ·ված ներ·ործություն ունեցող հան·ստացուցիչ (սեդատիվ) նեյրոլեպտիկ դեղամիջոցներ՝ ֆենոդիազինի ածանցյալներ, որոնք ունեն արա· ներ·ործելու (15 րոպեից) հատկություն, և այդ ներ·ործությունը երկարատև բնույթ է կրում, ընդամին ·ր·ռվածության ժամանակ դրանք պետք է ներարկվեն ներմկանային սրսկմամբ[14]:

Դաշտային պայմաններում կատարվող բուժման դեպքում հատկապես կարևորվում է բուժման մեթոդների ճիշտ կիրառման հարցը, քանի որ անմիջականորեն մարտադաշտի մոտակայքում դըժվար թե լինեն անհրաժեշտ թվով հո·եբույժներ, մի հան·ամանք, որը որոշակի բացասական դեր կխաղա բուժման շտապ միջոցների կիրառմամբ անձնակազմի արա· առողջացման ·ործում: Նպատակահարմար է հետևյալ ճանապարհը. թեթև ձևի հուզական խան·արումների ժամանակ օ·նությունը վստահել հրամանատարական կազմին՝ անմիջականորեն հո·եխոցման վայրում կամ այն ընկերներին, որոնց այցելությունն իրենց հիվանդ մարտընկերոջը նրա վրա դրական ազդեցություն կ·ործի, իսկ ծանր ձևերի հիվանդությունների բուժումը պետք է կատարվի ·ումարտակների կամ ·նդերի բուժկետերում, ընդամին բժիշկը պետք է ·ործի իբրև «առջևի ·ծի հո·եբույժ»:

Կարևոր և անհրաժեշտ է հո·եկան խան·արումների բուժման նշված մեթոդների ուսուցումը թերապևտ բժիշկներին և հրամանատարական կազմին: Չնսեմացնելով մարտում բժշկի՝ որպես վնասվածք ստացածների (վիրավորների և հիվանդների) հետ անմիջական շփման մեջ ·տնվող անձի հիմնական դերը՝ կարծում ենք, որ այդ պատրաստման ժամանակ շեշտը պետք է դրվի հուզական անկայունության դեպքերի վրա, որոնք ապա·այի պինված հակամարտություններում կրեն թերևս ավելի ծանր բնույթ, քան այժմյան հակամարտությունների ժամանակ:

Շարային և բժշկական ծառայության սպաները ռազմա·իտական ուսումնարաններում սովորելու ժամանակ պետք է ստանան ·իտելիքներ անձնակազմի հո·եկան վիճակի վերահսկման և հո·եկան անկայունության առաջացման դեպքում անհապաղ միջոցների ձեռնարկման մասին: Պահեստապորում եղած՝ ընդհանուր մասնա·իտության բժիշկները պետք է այդ պրոբլեմի մասին իրազեկվեն ուսումնական հավաքների ժամանակ: Պահեստապորի համապորային սպաները նույնպես պետք է քաջատեղ-

[14] Տես *А. В. Белинский, Н. В. Лямкин.* Медико-профилактическая реабилитация участников боевых действий в многопрофильном госпитале. «ВМЖ», 2000, № 1.

յակ լինեն իրենց ծառայողական պարտականությունների հո·եբանական առումներին: Հայտնի է, որ մարտ վարող կորամասում (ստորաբաժանումում, խըմբում) հուսալի հաղորդակցության պահպանումը բոլոր մակարդակներում այդ կորամասի համախմբված և միասնական ·ործողությունների ապահովման ·րավականն է: Մարտական ·ործողությունների վարման շրջանում հո·եախտաբանական հակազդումների և վարքի ապակայունացման ·ործոնների իմացությունը կորքերի հո·եբանական կայունության ապահովման ուղղությամբ կանխար·ելիչ միջոցառումների իրականացման պայմաններից մեկն է:

Հո·եկան խան·արումների կանխար·ելման երկրորդ ուղղությունը հիմնըված է անձնակազմի համապատասխան ուսուցման վրա: Կարևոր է միշտ աչքի առաջ ունենալ վարքի ճիշտ օրինակներ: Մարդու վարքի ապակազմակերպման պատճառ կարող են դառնալ չկանխատեսված և նոր իրադրությունները, որոնցում նա հայտնվել է: Զինվորներին պետք է սովորեցնել դիտել և լսել, որպեսզի նրանք կարողանան մարտի ժամանակ որոշել կարևոր հատկանիշները և ուշադրություն չդարձնել երկրորդական հատկանիշների վրա, թեև վերջիններս, շնորհիվ իրենց հատուկ ավելի մեծ ուշա·րավության, կարող են ավելի ակընհայտ թվալ: Ասենք՝ շատ ավելի կարևոր է պարզել այն ուղղությունը, որտեղից վտան· է սպառնում, քան նայել իր վիրավոր ընկերոջը: Բացի այդ, յուրաքանչյուր զինծառայող պետք է լավ ·իտենա, թե ինչ պետք է անել այս կամ այն իրավիճակում: Ինչպես ասել է Ա. Վ. Սուվորովը, «յուրաքանչյուր զինվոր պետք է իմանա իր տարաշարժը»:

Զան·վածային սանիտարական կորուստների առաջացման դեպքում ամեն մի զինծառայող պետք է կարողանա ինքն իրեն առաջին օ·նությունը ցույց տալ, մասնակցել տարահանման կազմակերպմանն ու իրա·ործմանը: Շատ կարևոր է, որ ամեն մեկը լավ ·իտենա իր առաջադրանքը և այն կատարի ·րեթե ավտոմատիկորեն: Գործողությունը վախի հակաթույնն է[15]: Սեփական ·ործողությունների օ·տավետության վ·ացումը, եթե նույնիսկ դա թվացյալ օ··տավետություն է, նպաստում է մարդու մեջ սեփական ուժերի նկատմամբ վստահության վերական·նմանը:

Զինծառայողների ուսուցումը պետք է կատարել ·ործնական պարապմունքների ժամանակ՝ հույսը չդնելով միայն դասարանային, տեսական պարապմունքների վրա: Այն, ինչ պետք է ուսումնասիրվի ·ործնական պարապմունքների ընթացքում, պետք է լինի ճշ·րտորեն որոշված և այնուհետև կատարված: Ընդամին չի կարելի սահմանափակվել միայն այն բանի պարզաբանմամբ, թե ինչու պետք է վարվել այսպես և ոչ թե այնպես: Դրա հետ մեկտեղ զինվորներին պետք է տրվեն միայն այնպիսի սկզբնական տվյալներ, ըստ որոնց կարելի լինի ընդունել պարզ, արդյունավետ որոշումներ: Անիմաստ բան է ուսուցման ընթացքում քննարկել այնպիսի դեպքեր կամ իրադրություններ, որոնց համար հնարավոր չէ զինվորին ցուցադրել անհրաժեշտ վարքի կամ հատուկ որոշման օրինակ: Գործնական պարապմունքները պետք է անցկացվեն ռեալ մարտական իրադրությանն առավել նման պայմաններում:

Զինվորական բժշկի խնդիրը չէ մասնակցությունը ընդհանուր մարտական պատրաստությանը: Նա հաշվետու է առաջին բժշկական օ·նություն ցույց տալու համար և զբաղվում է անմիջականորեն անձնակազմի բուժպատրաստմամբ: Այդ պարապմունքների ժամանակ բժիշկը պետք է փաստերը լուսաբանի օբյեկտիվորեն՝ չթաքցնելով իրական վիճակը: Մարդու մեջ ·ալիք վտան·ի նկատմամբ որոշակի վախի ստեղծումը մարտում այդ մարդու վարքի ապակազմակերպումից նրա պաշտպանության միջոց է: Ստրեսային իրավիճակի սպասման հետևանքով առաջացած վախը անհրաժեշտ պայման է, որ մարդու մեջ մշակվի մի

[15] Տես «Психолого-педагогические основы деятельности командира». М., 1977.

ներքին պաշտպանություն, որն էլ հենց նրան հնարավորություն կտա հաղթահարելու այդ ստրեսը: Այդ երևույթը կոչվում է «տա·նապի աշխատանք»: Զինվորը պետք է իմանա իր թերությունները, նրան պետք է բացատրել, որ վախը բնական բան է: Հնարավոր չէ վախը վերացնել նրա ·ոյության պարզ ժխտմամբ. դրան կարելի է հասնել միայն այն բանի ·իտակցմամբ, որ վախը կարելի է և պետք է հաղթահարել[16]:

Անձնակազմի ընտրությունն ու վարժեցումը նրա հո·եբանական պատրաստման միայն մի մասն են կազմում: Մարտադաշտում դրանցով զբաղվելու այլևս ժամանակ չի լինի: Այդ պայմաններում հիմնական ·ործոն են դառնում իր իսկ զինվորական բժշկի ·ործողությունները: Նրա ներկայությունն ու խորհուրդները պետք է դառնան մշտական հիշեցում անձնակազմի հո·եկան կայունության պահպանման համար ցույց տրվող առաջին օ·նության տարրերի մասին: Բժիշկը պետք է ապացուցի մարդկանց, որ ինքը պատրաստ է տոկունությամբ տանելու ցանկացած աղետալի իրադրություն, և նրանց համար դառնա հենց այդպիսի տոկունություն ցուցաբերողի օրինակ: Շատ կարևոր է, որ ոչ միայն բժիշկը վստահություն ներշնչի մարդկանց, այլև նրա խորհուրդները ամբողջությամբ ընկալվեն մարդկանց կողմից, որ անձնակազմը լիովին վստահի նրան վիրավորների տեսակավորման ժամանակ, ինչը հո·եբանական առումով առավել ծանր պահերից մեկն է:

Կոլեկտիվի հո·եկան վիճակի ապահովման ոլորտում զինվորական բժշկի ·ործունեությունը պետք է ծավալվի երկու մակարդակով: Նախ՝ անձնակազմի բժշկական պատրաստության պարապմունքներում, որոնք բժիշկը պետք է անձամբ վարի: Այդ պարապմունքների կազմակերպման հմտությունը, այդ ժամանակ բժշկի դրսևորած կանխատեսման կարողությունը պետք է մարդկանց համար ծառայեն որպես օրինակ, որն է՛լ ավելի կամրապնդի անձնակազմի վստահությունն իր բժշկի նկատմամբ: Երկրորդ՝ ·ործունեության՝ որպես ամրակցող հո·եբանական ·ործոնի մակարդակով: Այս առումով ·ործունեության դերը շատ մեծ է: Ահա թե ինչու սանիտարների խմբերը պետք է լավ վարժված լինեն կոլեկտիվ ·ործողությունների: Անհրաժեշտ են մշտական ·ործնական պարապմունքներ ռեալ պայմաններին առավելա·ույնս մոտ իրադրություններում: Պետք է նմանակվեն ստրեսային իրավիճակի զանազան տեսակները՝ սկսած էլեկտրամատակարարման վթարներից և վերջացրած խուճապի առաջացմամբ, հրամանատարական կազմի, այդ թվում և բժիշկների բացակայությամբ. դա անհրաժեշտ է, որպեսզի բոլոր հնարավոր որոշումների կայացումը և հրամանատարների ու բժիշկների փոխարինման ուղղությամբ ձեռնարկվող ·ործողությունները ավտոմատիկության հասցվեն: Բժշկական ստորաբաժանումում ապակազմակերպման երևույթների առաջացման հնարավորությունը չպետք է անտեսվի[17]:

Անձնակազմի հո·եկան վիճակի ոլորտում ընդհանուր կանխար·ելիչ միջոցառումների իրականացման ժամանակ զինվորական բժիշկը պետք է հիշի հրամանատարի խորհրդականի իր դերը: Նրա իրավասությունից դուրս են կորքի բարոյական ո·ու պահպանման նկատմամբ հրամանատարի ունեցած մոտեցումներին միջամտությունը և այդ բնա·ավառում հաստատված կար·ի մեջ փոփոխությունների կատարումը: Նրա պատասխանատվության ոլորտից դուրս են կորքերի բարոյական վիճակի պրոբլեմները և մարտական օպերացիաների նպատակները: Սակայն նա պետք է լինի այն զրուցակիցը, որի հետ յուրաքանչյուր զինծառայող կարող է անբռնազբոսիկ կերպով խոսել իր վախի, անհան·ստության մասին, այլ ոչ թե այն մարդը,

[16] Տես *В. Б. Захаржевский.* Физиологические аспекты невротической и психосоматической патологии. Л., 1990.

[17] Տես *В. Б. Куликов и др.* Роль военно-врачебной экспертизы в сохранении психического здоровья военнослужащих. «ВМЖ», 1999, № 9.

որն զբաղվում է բարոյականության իդեալների վրա հիմնված ավանդական և անհրաժեշտ տեսակետների տարածմամբ: Իհարկե, այդ ·ործոններն ունեն իրենց կարևոր դերը, սակայն բժիշկը պետք է ·ործի հրամանատարի հետ միևնույն հունով, այլ ոչ թե իր ·ործունեությամբ հակադրվի այն նպատակներին, որոնք հետապնդում է հրամանատարությունը[18]:

Գրեթե նույն պրոբլեմն է առաջ ·ալիս նաև այն ժամանակ, երբ հակառակորդը ձեռնամուխ է լինում քայքայիչ ·ործունեության (հո·եբանական պատերազմ) և կեղծ լուրերի տարածման: Բժիշկը պարտավոր է ապացուցել մարդկանց, որ ինքն ի վիճակի է հավանական լուրերը տարբերել կեղծ լուրերից: Նրա խնդիրն է՝ լինել օբյեկտիվ, իր զ·ացմունքներում ժուժկալ, դրանով իսկ ձեռք բերել մարդկանց վստահությունը: Հրամանատարության համար զինվորական բժիշկը և նրա ենթակայության տակ դրված անձնակազմը այն մարդիկ են, որոնք կարող են լավա·ույնս ·նահատել զորամասի անձնակազմի հնարավորությունները: Անձնակազմին ուսուցանելիս բժիշկը պետք է կարողանա լինել այն կազմակերպիչը, որն ունակ է դիմա·րավելու ցանկացած անկանխատեսելի իրավիճակին, ան·ամ այն դեպքում, երբ ինքը շարքից դուրս է եկել: Զորավարժությունների ժամանակ հարկ է շեշտել այն հան·ամանքը, որ ամբողջ խմբի արդյունավետ աշխատանքն այն անհրաժեշտ պայմանն է, որի առկայության դեպքում կարող է ապահովվել այդ խմբի յուրաքանչյուր անդամի կենսունակությունը, ինչպես նաև հիշեցնել, որքան էլ որ դա ծանր լինի, որ մեկ մարդու ակներև զոհաբերությունը կարող է փրկել շատ մարդկանց կյանքը:

[18]Այս բնա·ավառում հրամանատարի ·ործունեության մասին ավելի հան·ամանորեն տես «Психолого-педагогические основы деятельности командира».

# ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ

## К ВОПРОСУ О ПРЕДОТВРАЩЕНИИ ЭМОЦИОНАЛЬНОЙ НЕУСТОЙЧИВОСТИ ЛИЧНОГО СОСТАВА В БОЕВОЙ ОБСТАНОВКЕ

*Л. П. АРТИЩЕВ, подполковник м/с*

РЕЗЮМЕ

Разработка новых средств уничтожения ставит перед военным врачом проблему предотвращения (профилактики) и лечения массовых психических расстройств, вызванных такими условиями боевой обстановки, которые в значительной мере отличаются от прежнего опыта и знаний военнослужащего, облегчающих адаптацию к воздействиям боевых действий на его психику.

Адаптация к боевой обстановке происходит в определенной последовательности: уяснение обстановки, ее оценка, сравнение с прошлым опытом, выбор определенного вида поведения. Однако этим нормальным формам поведения человека в боевой обстановке противостоят состояния, характеризующиеся нарушениями поведения как отдельной личности, так и группы людей. Такие состояния называют эмоциональными срывами, или паникой. Переход от состояния адаптации к эмоциональным срывам связан с психотравмирующим характером обстановки.

Наиболее важными психотравмирующими факторами являются: постоянная опасность для жизни; возможный конфликт между моральными принципами и необходимостью убивать; разрыв с привычным образом жизни;

тоска по дому; опасения за жизнь родных. К этим чисто психологическим факторам добавляются физиологические (физическая усталость, недосыпание) и физические (интенсивность раздражителей, климатические условия). Другие воздействия являются специфическими для отдельных видов ВС и родов войск и типов боевых операций.

Главными факторами, вызывающими психические расстройства, являются: снижение физиологической и психической сопротивляемости; подавление информацией, с которой участник боя ранее не сталкивался и в которой нет возможных ответных реакций, вытекающих из прошлого опыта; состояние физической и психической изоляции; возможность дезорганизации группы людей, которая, теряя сплоченность, превращается в скопление отдельных лиц с интересами, не совпадающими с интересами группы в целом.

Замечено, что число психических расстройств значительно больше в войсках, находившихся в тылу, чем в тех частях, которые действовали на переднем крае. Следовательно, боевая обстановка не всегда является главным источником психических расстройств, хотя именно бой приводит к их клиническим проявлениям и развитию.

В начале боя проявляется тенденция к снижению боеспособности, солдата охватывают страх быть убитым, раненым, паника. В дальнейшем боеспособность вновь повышается, а страх значительно уменьшается. Однако через 10—30 дней боеспособность вновь понижается. Если боевые действия продолжаются длительное время, то у участников наступает фаза истощения с рядом возможных психических и физических отклонений, проявляющихся позднее, в период отдыха.

В большинстве случаев проявления психических расстройств не имеют четко определенного типа, а являются сложным комплексом неустойчивых, подвижных, быстро меняющихся «элементарных форм» в различных пропорциях, однако главным симптомом психических реакций во время боевых действий остается страх.

В зависимости от выраженности страха и возможностей защитного механизма различают 6 основных признаков эмоциональной неустойчивости: состояние острого страха, расстройства сознания, параноидные состояния, истерические реакции, психосоматические расстройства, депрессии.

В ходе боевых действий психопатологические расстройства зачастую проявляются как групповые явления. Их эпидемический характер особенно четко выражен у недостаточно обученных военнослужащих и спешно сформированных войсковых подразделений, имеющих низкий боевой дух или деморализованных отступлением, окружением.

Явление паники можно определить как массовое выражение неуправляемого страха, одновременно охватывающего всех членов группы (массы) людей при внезапном появлении опасности для жизни или другой—реальной или мнимой—угрозы. Непременными условиями возникновения паники являются: уверенность в том, что человек попал в западню, которая вот-вот захлопнется, и надежда на то, что еще существует возможность спасения; скопление значительных масс неорганизованных, плохо управляемых войск. В последнем случае очень важна роль командира.

Профилактика психических расстройств должна проводиться по двум направлениям: профилактические меры на уровне отдельной личности и меры по профилактике в коллективе.

Поскольку большую роль при адаптации людей к стрессовым ситуациям играют различия в их характерах, то возникает необходимость в изучении личного состава в этом аспекте, которое может проводиться в ходе ежедневного общения врача с личным составом. Врач рекомендует командиру распределить отобранных военнослужащих с наиболее устойчивой психикой по различным подразделениям с целью обеспечения устойчивости последних.

Терапевтическое лечение эмоциональных расстройств надо начинать по возможности сразу, т. е. в зоне боевых действий или в непосредственной близости от нее, например, на медпункте полка. Опыт показывает, что состояние психического расстройства у людей улучшается в зависимости от атмосферы, в которой протекает лечение. Уверенность медперсонала в скором излечении пациента способствует сокращению сроков его выздоровления.

Опыт применения сложных методов лечения, длительного отдыха, продолжительного приема лекарств, психотерапии себя не оправдал. Наилучшими методами лечения являются обеспечение человека питанием, относительно теплым безопасным местом и нормальный сон. Химиотерапия должна быть достаточной для того, чтобы обеспечить несколько часов сна и спокойствия, но не должна широко использоваться.

Из лекарственных препаратов эффективны барбитураты, а также нейрологические препараты пролонгированного действия (производные фенотиацина), применение которых должно быть разумным и экономным.

Хороший эффект дают короткие беседы, которые помогают пострадавшему разобраться в случившемся, освободиться от эмоционального напряжения и вернуть самообладание.

Психологическая помощь в случаях эмоциональной неустойчивости в легкой форме должна быть доверена командному составу, а также товарищам по службе и проводиться непосредственно на месте получения психической травмы. Лечение же тяжелых форм должно проводиться на медпунктах батальонов и полков, где врач должен действовать как «психиатр переднего края».

Следовательно, как строевые офицеры и военные врачи общего профиля, так и те, которые находятся в запасе, должны иметь достаточную информацию и навыки по оказанию помощи при эмоциональных расстройствах. Другое направление в профилактике эмоциональных расстройств заключается в обучении личного состава приемам оказания первой помощи, с проведением занятий в условиях, приближенных к реальной боевой обстановке.

## MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION

### CONCERNING THE ISSUE OF PREVENTING THE EMOTIONAL UNSTEADINESS OF THE STAFF IN THE FIGHTING SITUATION

*L. P. ARTISHCHEV, Lieutenant-Colonel of Medical Service*

SUMMARY

The development of the new means of annihiliation raises before a military doctor the problem of preventing (prophylaxis) and treating the mass mental disorders, caused by such conditions of the fighting situation which to a significant

extent differs from the former experience and knowledge of the serviceman, which relieved the adaptation to the influence of the combat activities on his psychology.

The adaptation to the fighting situation takes place in a certain succession: making out the situation, its estimation, comparison with the former experience, the choice of the certain kind of behaviour. However, the states, characterized by the breach of the behaviour both of a separate person and of a group of people, oppose this normal forms of a man's behaviour in the fighting situation. Such states are called emotional frustrations or panic. The transition from adaptation to the emotional frustrations is connected with the psychotraumatizing character of the situation.

The most important psychotraumatizing factors are: permanent danger for life; possible conflict between moral principles and the necessity to kill; renunciation of the habitual mode of life; homesickness; fear for the life of the relatives. Physiological (physical fatigue, not getting enough sleep) and physical (the intensity of the irritants, the climatic conditions) factors are added to the above psychological factors. Other influences are specific for the separate kinds of the Armed Forces and types of the Army and of combat activities.

The main factors of influence, causing mental disorders, are: a decrease in physiological and mental resistibility; the pressure of unknown information that doesn't contain the resource of possible reciprocal reactions based on the previous experience; the state of physical and mental isolation; the possibility of disorganization in a group of people, when they lose their solidarity and separate their personal interests from common interests.

It is noticed that the number of mental disorders is significantly greater in the troops that fought in the rear, than in units acting at the front. Therefore, the fighting situation is not always the main source of mental disorders, though exactly the battle brings to their clinical displays and development.

At the beginning of the battle the tendency to the fighting capacity's decreasing is displayed, the soldier is seized with fear of being killed, wounded. Further the fighting capacity increases, and the fear lessens significantly. However the fighting capacity decreases again in 10-30 days. If the combat activities continue for a long time, then the participants have the phase of exhaustion with a number of possible mental and physical defects which are displayed later at the period of rest.

In the majority of cases the displays of the mental disorders do not have a precisely defined type. It is a complex of unsteady, active, rapidly changing «elementary forms» in various proportions. However the main symptom of mental reactions during the combat activities remains the fear.

There are six major features of emotional unsteadiness depending on the degree of the fear's expression and possibilities of the protective mechanism: the state of acute fear, of the disorder of the consciousness, paranoiac states, hysterical reactions, psychosomatic disorders, depressions.

During the combat activities the psychopathological disorders are often displayed as group phenomena. Their epidemic character is especially precisely expressed among the servicemen who are not trained enough, as well as in hurriedly formed army sub-units which have a low fighting spirit or are demoralized by the retreat and encirclement.

The phenomena of panic may be defined as a mass expression of uncon-

trollable fear, covering all members of the group (mass), when sudden danger for life or other-threat, real or false, appear. The indispensable conditions for the appearance of panic are: the assurance that the man got into a trap which will be slammed soon, and the hope that there still exists the possibility of being saved; the gathering of unorganized, badly led troops. In the last case the role of the commander is very important.

The prophylaxis of the mental disorders must be carried out in two directions: prophylactic measures for a separate person and for a group.

Since the differences in people's characters play a great role in the process of adaptation of the people to the stress situations, then the necessity of examining the staff arises in this aspect, which can be held during the daily meeting of the doctor with the staff. The doctor recommends the commander to distribute psychologically steady servicemen among other sub-units for stabilization of psychological atmosphere there.

The therapeutic treatment of the emotional disorders must be started as soon as possible, that is in the zone of the combat activities or directly near it, for example, at the medical supply center of the regiment. The experience shows, that the state of mental disorder among the people gets better depending on the atmosphere, in which the treatment proceeds. The assurance of the medical staff of the rapid recovering of the patient shortens the period of his recovering.

The treatment methods applied, the long rest, the long taking of the medicines, the psychotherapy didn't prove their value. The best methods of treatment are good nourishment, a comparatively warm safe place and normal sleep. The chemical therapy must be enough in order to provide several hours of sleep and rest, but mustn't be used widely.

Among the medicine the barbiturates are effective, and also the neuroleptic medicine of long-lasting effect (the derivatives of the phenotiatsin), the application of which must be reasonable and economical.

Short talks have also a good effect. They help the sufferer make out what happened, get rid of the emotional tension and return the self-control.

The psychological help in the cases of the slight emotional unsteadiness must be entrusted to the command's staff, and also to the companions in service and must be provided directly at the place of getting the mental trauma. The treatment of the hard forms must be provided at medical supply center of the battalions and regiments, where the doctor must act like «the psychiatrist of the front».

Thus, both the combatant officers and the military doctors of the common type, and those, who are in the reserve, must have enough information and skills on giving a help in cases of the emotional disorders.

The other direction in the prophylaxis of the emotional disorders is arrangement of training courses for the staff, the ways of giving the first aid. The lessons must be held in the conditions close to the real fighting situation

# ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## èàôê²Î²Ü ´²Ü²ÎÆ Ð²ÚÎ²Î²Ü Ðð²Ò¶²ÚÆÜ ¶àôØ²ðÎ²ÎÜºðÀ àðäºê 20-ð¸ ¸²ðÆ ²è²æÆÜ Ð²ÚÎ²Î²Ü Î²ÜàÜ²ì àð¼àð²Ø²êºð

*Ø. È. Î²ð²äºîÚ²Ü, å³ïÙ³Ï³Ý ·Çï áõÃÛáõÝÝ»ñÇ Ã»ÏÝ³Íáõ*

Առաջին աշխարհամարտին ակտիվ մասնակցություն ցուցաբերեց հայ ժողովուրդը: Համաձայն պաշտոնական տրվյալների՝ Ռուսական կայսրությունում բնակվող յուրաքանչյուր 100 հայից 13-ը կորակոչվեց բանակ: Կայսրությունում բնակվում էին 2 միլիոն 54 հազար հայեր, նրանցից 250000-ը զինվորա·րվեց ռուսական բանակին[1]: Հայ զինվորների մի վ·ալի մասը մարտնչում էր Կովկասյան ռազմաճակատում: Այս ճակատում թուրքական զորքերի դեմ կռվում էին նաև հայ կամավորական խմբերը (դրուժինաները)՝ Անդրանիկի, Դրոյի, Համազասպի, Քեռու, իշխան Արղության, Վարդանի, Հայկ Բժշկյանի ·լխավորությամբ:

Հայերի այսպիսի ակտիվությունն ուներ իր հիմնավոր պատճառները: Այսպես՝ պատասխանելով ռուսական կառավարության հայասիրական հայտարարություններին և ո·նորված դրանցով՝ Ամենայն հայոց կաթողիկոս Գևոր· Ե Սուրենյանցը տեղեկացնում էր հայ կամավորական համաժողովրդական շարժման և Ռուսաստանի շահերի սատարման հարցում հայության պատրաստակամության, հայերի մեջ արմատավորված այն մտքի մասին, որ միայն Ռուսաստանը կարող է ապահովել իրենց ֆիզիկական և մշակութային զար·ացումն Արևմտյան Հայաստանում: Կովկասի փոխարքա հեծելազորի ·եներալ Վորոնցով-Դաշկովին 1914 թ. օ·ոստոսի 5-ին ·րված իր նամակում Վեհափառը հավաստիացնում էր, որ «հայ ժողովուրդը, մոռանալով սեփական վերքերից եկած վ·ացմունքը, իր բոլոր մտքերը կենտրոնացրել է Հայրենիքի վրա, որի փառքի համար նա ո·նորությամբ արձա·անք տվեց իր թա·ավորի կոչին՝ կատարել իր սուրբ պարտականությունը Նորին Կայսերական Մեծության և Հայրենիքի առաջ»[2]: 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնա·րով նախատեսվող բարենորո·ումները Վեհափառի կարծիքով պետք է կատարվեին Ռուսաստանի հովանավորությամբ և ներառեին Ռուսաստանի ընտրությամբ նշանակված քրիստոնյա կառավարիչների ·լխավորությամբ հայկական վեց վիլայեթներից մի անբաժան նահան·ի ստեղծումը՝ քրիստոնյաների ու մահմեդականների համար հավասար ներկայացուցչությամբ:

Նույն օրը Վեհափառը մեկ այլ նամակով փոխարքային խնդրում էր միջնորդել այսպես կոչված «դաշնակցության ·ործով» 1906—1910 թթ. բանտարկված դաշնակցական ·ործիչների ազատ արձակման համար: Դիմումին կցված էին 180 ·ործիչների ազ·անուններ[3]: Վեհափառի դիմումը կառավարությանը ներկայացնելով՝ փոխարքան իր կողմից ավելացրել էր. «Ռուսաստանի համար ծանր պայմաններում կովկասահայությունը երկրամասում ամենուր դրսևորում է հայրենասիրական բարձր տրամադրություն՝ ո·նորությամբ ընդունե-

[1] Տես *Գ. Ղորղանյան*, Հայերի մասնակցությունը համաշխարհային պատերազմին Կովկասյան ռազմաճակատի վրա 1914—1917 թթ.: «Հայրենիք», Բոստոն, 1927, hմ. 2:

[2] *Г. Чалхушян.* Красная книга. Ростов-на-Дону, 1919, с. 24, նաև՝ «Մեծ պատերազմը և հայ ժողովուրդը»: Կ. Պոլիս, 1920, էջ 5—7:

[3] Տես *Լեո*, Թուրքական հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Բ: Փարիզ, 1935, էջ 113:

լով զորահավաքի հարցը և զորամասեր մտնելով»: Սակայն «շատ ճանաչված հայեր հայտնում են ափսոսանք, որ հայերը նշանակվում են Արևմտյան սահմաններում, մինչդեռ կցանկանային գնալ թըշնամու դեմ»:

Տեղեկացնելով Վեհափառին օգոստոսի 5-ի նրա նամակի կապակցությամբ Ռուսաստանի կառավարության պատասխանի մասին՝ Վորոնցով-Դաշկովը գրում էր. «Այժմ ստատս-քարտուղար Գորմեկինը տեղեկացնում է ինձ, որ ռուսական կառավարությունը ոչ մի դեպքում ոչ մի զիջում չի անի հայկական հարցում, այն իմաստով, որ Թուրքիայի հայկական նահանգներում բարեփոխումները կկատարվեն ռուսական սկզբնական ծրագրով և Ռուսաստանի բացառիկ վերահսկողությամբ»[4]:

1914 թ. նոյեմբերին Կովկաս ժամանած կայսր Նիկոլայ 2-րդը Վեհափառի հետ հանդիպման ժամանակ նրան վստահեցրել էր, որ «հայկական հարցը կլուծվի հայերի սպասումների համաձայն»: Նրա հավաստումն իր մեջ ուներ մեծ խորհուրդ. օգտագործել հայ ժողովրդի ռուսամետ կողմնորոշումը, շահել արևմտահայության համակրանքը: Նոյեմբերի 24-ին թուրքահայերին ուղղված կոչում կայսրը երաշխավորում էր «Հայաստանին ինքնավարություն Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթների սահմաններում և նրանց հետ անխզելիորեն կապված Կիլիկիայում, մեծ Ռուսաստանի հզոր հովանու տակ, ինչին պետք է հասնել դաշնակիցների հետ հատուկ համաձայնությամբ»: «Թուրքահայերի բախտը սերտորեն կապված է մեր հաղթանակի հետ, և նրանք պետք է ամեն կերպ օգնեն մեր կողմից վերջնական հաղթանակի նվաճմանը, ինչն զգալիորեն կհեշտանա տեղական բնակչության ակտիվ համագործակցության շնորհիվ»[5], ասվում էր կոչում:

Կամավորական շարժմանն առաջին իսկ օրերից ակտիվ օժանդակություն էր ցուցաբերում հայ առաքելական եկեղեցին: Էջմիածնում՝ Գևորգյան ճեմարանի բակում, կաթողիկոսի մասնակցությամբ տեղի ունեցավ Վարդանի գլխավորած Արարատյան զորաջոկատի (2-րդ, 3-րդ և 4-րդ խմբեր) հանդիսավոր երդման արարողությունը, որից հետո զորաջոկատն շարժվեց դեպի Վան:

Հայ հոգևորականությունն իր հայրենասիրական պարտքն էր համարում նաև ռազմաճակատ մեկնելը, կամավորներին ու զորականներին ոգևորելն ու սատարելը: Հայ կամավորներին հոգեպես համախմբելու համար, Հովհաննես Թումանյանի, Ալեքսանդր Շիրվանզադեի և այլ հայ մտավորականների հետ, ռազմաճակատ էին մեկնել հայ առաքելական եկեղեցու Արարատյան թեմի առաջնորդական տեղապահ Խորեն արքեպիսկոպոսը, վրաց-իմերեթական թեմի առաջնորդական տեղապահ Մեսրոպ արքեպիսկոպոսը, Թիֆլիսի Վերայի վանքի քահանա Նիկողայոս Բավլյանը, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տնօրեն Հովսեփ Խունունցը և ուրիշ հոգևորականներ[6]:

Հայ կամավորների շարքերում էլ քիչ չէին հայ հոգևորականները: Դրանից բացի, մարտական գործողություններում ռուսական զորքերին մեծ օժանդակություն էին ցուցաբերում հայ հոգևորականների կողմից գլխավորվող հայկական ջոկատները: Օրինակ՝ Վանի ազատագրման համար մղված կռիվներում աչքի ընկավ տեր Գրիգոր քահանայի կազմած ջոկատը:

Դրսևորելով բացառիկ խիզախություն ու ռազմական հմտություն՝ հայ կամավորները պատերազմի առաջին շրջանում մեծապես նպաստեցին ռուսական բանակի հաղթանակներին Կովկասյան ճակատում, մասնավորապես՝ Արևմտյան Հայաստանի ազատագրման գործին: Կատարելով առաջապահ, հետախուզական և պահակազորային գործողություններ՝ հայ կամավորական խմբերն ակտիվ մասնակցություն ունեցան Սարիղամիշի, Ալաշկերտի, Դիլմանի, Ռևան-

[4] Архив внешней политики России (այսուհետև՝ АВПР), ф. Политархив, 1914 г., оп. 1, д. 34—64, лл. 12—16.

[5] Նույն տեղում, թթ. 36—38.

[6] Տես «Ձիթենի»: Թիֆլիս, 1914, էջ 10:

դուկի և այլ ճակատամարտերին, Բերկրի-Կալայի, Վանի, Խնուսի, Մուշի, Բիթլիսի, Էրզրումի ազատա·րմանը: Նրանք մեծ դեր խաղացին նաև արևմտահայ ·աղթականությանը փրկելու, ազատա·րված շրջաններում հայ կյանքը վերական·նելու ·ործում:



Անդրանիկն իր զինակիցներով Էջմիածնում, 1915 թ.: Կենտրոնում՝ Անդրանիկ, ձախից՝ եպիսկոպոս Գ. Հովսեփյան (հետագայում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս), աջից՝ եպիսկոպոս Գ. Չորեքչյան (հետագայում Ամենայն հայոց կաթողիկոս)

Ռուսական բանակի հրամանատարությունը բարձր ·նահատեց հայ կամավորականների ռազմական ·ործունեությունը: Նրանցից շատերը պար·նատրվեցին մարտական շքանշաններով ու մեդալներով, այդ թվում նաև Գեոր·իյան խաչով: Օրինակ՝ միայն 2-րդ կամավորական խմբի անձնակազմից (հրամանատար՝ Դրո) 1914 թ. հոկտեմբերի 23-ից մինչև 1916 թ. հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում Գեոր·իյան խաչով պար·նատրվեց 76 կամավորական (որից երկուսը՝ առաջին աստիճանի), 138 մարդ պար·նատրվեց մեդալներով[7]: Մարտական ·ործողություններին ակտիվորեն մասնակցելու համար Գեոր·իյան խաչի 2-րդ և 4-րդ աստիճանի շքանշաններով պար·նատրվեցին նաև Արարատյան գորաջոկատի կազմի մեջ մտնող տասնյակ կամավորականներ[8]: Ռազմի դաշտում զոհվեց ավելի քան 700 կամավոր[9]:

Հայ ականավոր հասարակական-քաղաքական ·ործիչ Նիկոլ Աղբալյանը այսպես է ·նահատել կամավորական շարժումը. «Այդ շարժումով հայ ժողովուրդն ապրեց ամբողջ երեք տարի: Դա բարոյական վերածնունդի տարեթիվ է հայ ժողովրդի համար: 10000-ոց անձնվեր բանակ հանել՝ մեր պատմության մեջ եզակի երևույթ է: Վերջին դարում կորովակուրկ հայ ժողովուրդն առաջին ան·ամ էր այդքան մեծ, կազմակերպված ուժ և կորով ցուցաբերում»[10]:

Չնայած հայ կամավորական խմբե-

[7] Տես ՀՀ պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 121, ց. 1, գ. 16, թ. 3:

[8] Տես Российский государственный военно-исторический архив (այսուհետև՝ РГВИА), ф. 551, оп. 3, д. 20, նաև՝ д. 9, л. 200.

[9] Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 56, թ. 2: Կովկասյան ճակատում հայ կամավորական խմբերի կազմավորման և մարտական գործունեության մասին հանգամանորեն տես *Մ. Կարապետյան*, Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում (1914— 1917 թթ.): Ե., 1999:

[10] Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 221, ց. 1, գ. 21, թթ. 24—35, նաև՝ «Հորիզոն», 1917 թ. հոկտեմբերի 18:

րի մարտիկների սխրանքներին և անձնվեր ·ործունեությանը՝ 1915 թ. վերջերին, երբ ռուսական հրամանատարությունն ուժեղացրեց Կովկասյան բանակը և ռազմաճակատում անցավ վճռական ·ործողությունների, այլևս հայ կամավորների «կարիքը» չէր զ·ացվում: 1915 թ. դեկտեմբերին հրաման արձակվեց հայ կամավորական խմբերի կազմացրման մասին: Նրանց փոխարեն, ռուսական բանակի ·երա·ույն ·լխավոր հրամանատարի 1916 թ. մարտի հրամանի համաձայն, Կովկասյան ճակատի ·ործող բանակի զորամասերի կազմում մինչև նույն թվականի հունիս՝ երեք ամսվա ընթացքում, պետք է ստեղծվեին հայ սպաների հրամանատարությամբ ·ործող հայկական 6 հրաձ·ային ·ումարտակներ: Ռուսական բանակի առաջին հայկական հրաձ·ային ·ումարտակները համալրվելու էին նոր անձնակազմով և սպառազինությամբ՝ վերածվելով կանոնավոր բանակի մարտական ուժի: Ռուսական բանակի ·երա·ույն ·լխավոր հրամանատարի 1916 թ. մարտի 13-ի հրամանով հայկական նոր հրաձ·ային ·ումարտակները համալրվում էին հիմնականում պինապարտներով և հայ կադրային սպաներով: Նույն հրամանով կար·ադրվում էր յուրաքանչյուր հայկական հրաձ·ային ·ումարտակին կից ստեղծել հեծյալ-հետախուզական խումբ և հեծյալ-հանձնակատարների (արդինարնեթի) ու ·նդացրային ջոկատներ[11]: Կամավորական խմբերի կազմացրումից հետո կամավորականների մի մասը (3176 մարդ), հիասթափված ռուսական հրամանատարության քաղաքականությունից, ընդհանրապես թողեց զինվորական ծառայությունը, արտասահմանից եկածները վերադարձան տուն, 2000 մարդ համալրեց հայկական կանոնավոր ·ումարտակները[12]:

*Հայկական 1-ին հրաձգային գումարտակը* կազմավորվեց Էրզրումում, հայկական 2-րդ կամավորական խմբի ունեցվածքի և կամավորների հիման վրա: Գումարտակի հաստիքային համալրումն ապահովելու նպատակով Կովկասյան բանակի 39-րդ հետևակային դիվիզիայի յուրաքանչյուր ·նդից առանձնացվեց բացառապես հայերից կազմված մեկ վաշտ, իսկ այդ վաշտերը միավորվելով դրեցին ·ումարտակի հիմքը: Գումարտակի կապի, ·նդացրային ջոկերի ցածր աստիճանավորները, ինչպես նաև սանիտարները, ·րա·իրները և ոչ շարային ծառայողները ռուսներ էին: Սպայական կազմը բաղկացած էր բացառապես հայերից, սակայն 2-3 ամիս անց այն համալրեցին 10 ռուս սպա, որոնք ցանկություն էին հայտնել ծառայելու հայկական ·ումարտակում: 1916 թ. մարտի 27-ին ·ումարտակի հրամանատար նշանակվեց ·նդապետ Պավել Բեժանբեկը[13]: Դեռևս ·տնվելով կազմավորման ·ործընթացում՝ ·ումարտակը 1916 թ. հունիսի սկզբին Կովկասյան 39-րդ դիվիզիայի կազմում հրամանով Էրզրումից տեղափոխվեց Ենիքեյ: Հունիսի 22-ին 39-րդ դիվիզիայի հրամանատարի կար·ադրությամբ ·ումարտակը տեղաշարժվեց և դիրքեր ·րավեց Կյուրկյութլիում[14]:

*Հայկական 2-րդ հրաձգային գումարտակը* կազմավորվեց 1916 թ. հունիսին Խնուսում: Նրա հրամանատար նշանակվեց փոխ·նդապետ Սերոբ Սամարցյանը[15]:

[11] Տես նույն տեղում, ֆ. 121, ց. 1, գ. 15, թթ. 13—14:

[12] Տես «Համառոտ տեղեկագիր Հայոց Ազգային Բյուրոյի գործունեության 1915—1917 թթ. ընթացքում»: Թիֆլիս, 1917, էջ 89:

[13] Գնդապետ, հետա·այում ·եներալ-մայոր Պողոս (Պավել) Պետրոսի Բեժանբեկը (Բեժանբեկյան) ռուսական բանակի մարտական սպաներից էր: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ծառայել է Կովկասյան ճակատում, աչքի է ընկել Երզնկայի ·րավման ժամանակ: Պար·ևատրվել է Սբ. Ստանիսլավի 3-րդ և 2-րդ, Սբ. Աննայի 3-րդ և 4-րդ՝ «Արիության համար» մակա·րությամբ, Սբ. Վլադիմիրի 4-րդ և 3-րդ աստիճանի շքանշաններով: 1917 թ. սեպտեմբերի 11-ին նշանակվել է հայկական առաջին հրաձ·ային բրի·ադի հրամանատար, 1918 թ. մարտի 16-ին՝ հայկական Հավաքական զորաջոկատի հրամանատար՝ այդ պաշտոնում փոխարինելով Անդրանիկին (տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, ·. 1, թ. 47, «Послужной список генерал-майора Павла Бежанбека»):

[14] Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, ·. 15, թթ. 1—11:

[15] Տես նույն տեղում, ·. 16, թթ. 6—7:

*Հայկական 3-րդ հրաձգային գումարտակն* սկսեց ձևավորվել Ջուլֆայում, ապա մի քանի օր անց՝ Մարանդայում (Իրան), 1916 թ. մարտի 30-ից հուլիսի 4-ն ընկած ժամանակաշրջանում՝ Ադրբեջանական ռուսական կորաջոկատի կազմում[16]: Գումարտակի հրամանատարն էր ·նդապետ Արտեմ Տեր-Նիկողոսյանը[17]: Հունիսի 18-ին ·ումարտակը (800 սվին) Մարանդայից տեղափոխվեց Հեյդարաբադ, որտեղ մինչև հուլիսի 4-ը շարունակվեցին նրա ձևավորման աշխատանքները: Հուլիսի 11-ին Ադրբեջանական կորաջոկատի հրամանատար ·եներալ-լեյտենանտ Չեռնոզուբովի հրամանով ·ումարտակը Հեյդարաբադից տեղափոխվեց Հերիդ-Սամրանդ լեռնաշղթա և այստեղ սկսեց կատարել պահակակորային ծառայություններ[18]:

*Հայկական 4-րդ հրաձգային գումարտակն* սկսեց կազմավորվել Ջուլֆայում: Գումարտակի հրամանատար նշանակվեց փոխ·նդապետ Արտեմ Հովսեփյանը: Սպայական կազմը համալրվեց հիմնականում ռուսական 2-րդ Թուրքեստանյան կորպուսի և Կովկասյան բանակի մյուս զորամասերի հայ սպաներով: Զինվորական անձնակազմը համալրվեց՝ 1) Վարդանի ·լխավորած 5-րդ կամավորական խմբի 300 վինապարտ կամավորներով, 2) Անդրկովկասի պահեստային հմ. 218, 222 և 223 ·նդերում ծառայող հայ վինվորներով, 3) Հյուսիսային Կովկասի պահեստազորային ·նդերի այն հայ մարտիկներով, որոնք ցանկություն էին հայտնել ծառայությունը շարունակելու հայկական ·ումարտակներում: Մայիսի 13-ին, կազմավորումը շարունակելու նպատակով, ·ումարտակը տեղափոխվեց Մարանդա: Այստեղ ·ումարտակի կազմավորման աշխատանքները տեղի էին ունենում Կովկասյան բանակի 70-րդ աշխարհազորային բրի·ադի հրամանատար ·եներալ-մայոր Բլեժինսկու անմիջական հսկողությամբ: Մայիսի 25-ին ·ումարտակի համալրման ·ործընթացը հիմնականում ավարտված էր: Հունիսի 1-ին ·ումարտակը Մարանդայից շարժվեց դեպի Շարաֆ-Խանե (Ուրմիա լճի արևելյան շրջան)՝ հունիսի 3-ին ·ումարտակը հասավ այնտեղ, իսկ հունիսի 5-ին կար·ադրություն եղավ ·ումարտակը լճի վրայով լաստանավերով տեղափոխելու Հեյդարաբադ: Հունիսի 10-ին Ադրբեջանական կորաջոկատի հրամանատար ·եներալ Չեռնոզուբովի հրամանով ·ումարտակը տեղափոխվեց Սոուջ-Բուլաղ, որտեղ, մտնելով Սոուջ-Բուլաղի ռուսական կորաջոկատի կազմի մեջ, սկսեց կատարել կայազորային և պահակային ծառայություններ[19]:

1916 թ. մայիսից Մարանդայում իր ձևավորումն էր սկսել *հայկական 5-րդ հրաձգային գումարտակը* ·նդապետ Պավել Բեկ-Փիրումյանի հրամանատարությամբ: Գումարտակի վինվորական անձնակազմը համալրվեց հիմնականում Ալեքսանդրապոլից և մյուս վայրերից ժամանած հայ վինվորներով: Մայիսի վերջին ·ումարտակը, դեռևս ձևավորված չլինելով, Մարանդայից երկաթ·ծով տեղափոխվեց Շարաֆ-Խանե, որտեղ շարունակվեցին նրա կազմավորման աշխատանքները: Հունիսի վերջին ·ումարտակը Ուրմիա լճի վրայով լաստանավերով տեղափոխվեց Հեյդարաբադ և մտավ ·եներալ Չեռնոզուբովի ·լխավորած Կովկասյան 7-րդ բանակային կորպուսի կազմի մեջ: Ջելի-Խանե ·յուղի մոտ, ·եներալ Չեռնոզուբովի հրամանով, 5-րդ ·ումարտակին միացան 4-րդ հայկական կամավորական խմբից մնացած և հայկական ·ումարտակում ծառայությունը շարունակելու ցանկություն հայտնած 130 կամավորներ: Հու-

[16] Զորաջոկատը Ադրբեջանական էր կոչվում հյուսիսային Իրանում տեղակայված լինելու պատճառով:

[17] Գնդապետ Արտեմ Միքայելի Տեր-Նիկողոսյանը ռուսական բանակի մարտական սպաներից էր, ավարտել է Թիֆլիսի հայկական հո·ևոր ճեմարանը և Թիֆլիսի հետևակային յունկերական ուսումնարանը: Ռուսական բանակում ծառայել է 1878 թվականից: Մարտական ծառայությունների համար պար·ևատրվել է Սբ. Աննայի 3-րդ (1909 թ.) և Սբ. Ստանիսլավի 2-րդ աստիճանի (1912 թ.) մարտական շքանշաններով (տես «Список полковникам по старшинству». СПб., 1916, с. 119):

[18] Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, ·. 17, թթ. 1—4:

[19] Տես նույն տեղում, ·. 18, թթ. 2—29:

լիսի 12-ին ·ումարտակը շարժվեց Կալեշինի լեռնանցքի ուղղությամբ և մարտական դիրքեր ·րավեց 4-րդ կորպուսի ծայր թևում, որտեղ նա ունեցավ առաջին ընդհարումը թշնամու հետ[20]:

Մարանդայում էր ձևավորվում նաև *հայկական 6-րդ հրաձգային գումարտակը:* Նրա հրամանատար նշանակվեց փոխ·նդապետ Միքայել Մելիք-Մուրադյանը[21]: Կովկասյան բանակի շտաբի պետի մարտի 13-ի կար·ադրությամբ ·ումարտակի անձնակազմը համալրվեց հիմնականում Արղությանի ·լխավորած 7-րդ կամավորական խմբի պինվորների և սպաների հաշվին, որոնք թիկունք էին վերադարձել Ռևանդուզից: 1916 թ. հունիսին ·ումարտակը մտցվեց Սա·իզի ռուսական կորաջոկատի կազմի մեջ և ակտիվ մասնակցություն ունեցավ Մարանդա—Սա·իզ—Ռևանդուզ—Բանե—Բոքքան—Փենջվին շրջաններում ծավալված արյունահեղ մարտերին[22]:

1917 թ. հունվարի 1-ի դրությամբ հայկական 6 հրաձ·ային ·ումարտակներում ծառայում էր 5179 մարդ, որից 174-ը՝ սպա[23]: Նույն թվականի հունիսի 1-ի դրությամբ հայկական ·ումարտակների մարտական կազմը ներկայացնում էր հետևյալ պատկերը. 1-ին հրաձ·ային ·ումարտակ՝ 40 սպա, 930 պինվոր, 4 ·նդացիր, 2-րդ ·ումարտակ՝ 37 սպա, 713 պինվոր, 4 ·նդացիր, 5-րդ ·ումարտակ՝ 27 սպա, 1104 պինվոր, 24 ·նդացիր, իսկ 3-րդ, 4-րդ և 6-րդ ·ումարտակները մտնում էին Կովկասյան 7-րդ կորպուսի կազմի մեջ[24]:

Հայկական հրաձ·ային ·ումարտակները հատկապես աչքի ընկան 1916—1917 թթ. Արևմտյան Հայաստանում, հյուսիսային Իրանում և Իրանական Քրդստանում տեղի ունեցած մարտական ·ործողություններում: Հայկական 1-ին ·ումարտակը 39-րդ դիվիզիայի կազմում մեծ սխրանքներ ·ործեց Քիլքեթի և Երզնկայի շրջանում 1916 թ. հունիսի 25-ից մինչև 27-ը տևած կատաղի մարտերում: Շտաբային զեկուցա·րում ասված է. «Հուլիսի 25-ի լույս 26-ի ·իշերը հրամայվեց ·րոհել թուրքական անառիկ դիրքերի վրա: Հայկական 1-ին ·ումարտակն արա·որեն կատարեց իր առաջադրանքը. առաջանալով լեռնաշղթայի վրայով և միանալով հարևան զորամասերին՝ տիրեց Բալիթափակ ·յուղի մոտ ·տնվող հմ. 2350, 2300 և 2660 բարձունքներին: Դրանից հետո թուրքերը, մեծ կորուստներ կրելով, հեծելազորի պաշտպանությամբ սկսեցին նահանջել: Այս առաջին ճակատամարտի ժամանակ իր կազմավորումը նոր ավարտած ·ումարտակը դրսևորեց բարձր մարտական ո·ի, հիանալի կար·ապահություն և անդրդվելի տոկունություն: Կորցնել ամբողջ անձնակազմի կեսից ավելին (55 տոկոսը) և դարձյալ ·լուխ բերել հանձնարարված ·ործը՝ հաճախ վեր է մինչև իսկ հին ու փորձված զորամասերի ուժերից»: Զեկուցա·րում նշվում է նաև, որ այդ արյունահեղ մարտերում «·ումարտակը լիովին ջախջախեց ու փախուստի մատնեց թուրք երիտասարդության ծաղիկից կազմավորված «Ավջի թաբուր» (որսորդական ·ումարտակ) կոչվող աշխարհազորային զորամասը, որը կազմավորվել էր ·երմանացիների անմիջական մասնակցությամբ և միջոցներով»[25]:

Հուլիսի 11-ին 39-րդ դիվիզիայի առաջապահ զորամասերի հետ հայկական 1-ին ·ումարտակը կատաղի մարտերից

[20] Տես նույն տեղում, ·. 19, թթ. 1—10:

[21] Փոխ·նդապետ Միքայել Մելիք-Մուրադյանը ավարտել է Երևանի ·իմնազիան և Թիֆլիսի Միխայլովյան սպայական ուսումնարանը: Մասնակցել է 1904—1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմին: Առաջին աշխարհամարտի տարիներին աչքի է ընկել Կարինի ·րավման ժամանակ: Հայաստանի առաջին հանրապետության ստեղծումից հետո ծառայել է հայկական բանակում՝ ·եներալ-մայորի կոչումով: Հայաստանի խորհրդայնացումից հետո ձերբակալվել է: 1921 թ. փետրվարյան ապստամբության ժամանակ, ազատվելով բանտից, նշանակվել է Երևան քաղաքի ինքնապաշտպանության պետ: Ապստամբության ճնշումից հետո անցել է Թավրիզ (տես «ՎԷՄ», 1937 թ., հմ. ԺԸ, էջ 93):

[22] Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, ·. 20, թթ. 2, 4—7, 7—8:

[23] Տես РГВИА, ф. 2100, оп. 1, д. 1, л. 44, лл. 1—6; д. 43, лл. 15, 19:

[24] Տես նույն տեղում, թթ. 175—176:

[25] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, ·. 15, թթ. 6—7:

հետո առաջիններից մեկն էր, որ մտավ և ·րավեց Երզնկան: 1916 թ. աշնանն ու ձմռանը, մինչև 1917 թ. փետրվարը ·ընդապետ Բեժանբեկի ·լխավորած ·ումարտակը մեծ սխրանքներ ·ործեց նաև Երզնկա—Սվազ ուղղությամբ՝ չափազանց դժվարին պայմաններում կատարելով առաջապահական, պահակակորային և հետախուզական ծառայություններ:

Ռազմաճակատի պարսկական հատվածում իրենն լավա·ույնս դրսևորեց հայկական 3-րդ հրաձ·ային ·ումարտակը՝ ·նդապետ Նիկողոսյանի հրամանատարությամբ: 1916 թ. հունիսի 22-ին, ավարտելով իր կազմավորումը, ·ումարտակը, որի կազմում կազմավորման պահին կար 800 մարդ, ռուսական Ադրբեջանական զորաջոկատի կազմում ժամանեց Հեյդարաբադ, իսկ հուլիսի 4-ին զորաջոկատի հրամանատար ·եներալ Չեռնոզուբովի հրամանով ուղարկվեց Հերդ-Սամրանդ՝ ՈՒշլու ·յուղից դեպի հարավ-արևմուտք, շրջակայքի հետախուզման և պահակային ծառայություն կատարելու համար: Հուլիսի 29-ից մինչև օ·ոստոսի 9-ը ·ումարտակն անընդհատ արշավանքների, մարտերի և ընդհարումների մեջ էր: Տալով 140 սպանված, 20 վիրավոր և անհայտ կորած՝ ·ումարտակը, արյունահեղ մարտերից հետո, Սուուջ-Բուլաղի շրջանում թուրքերից ազատա·րեց Քելիշլի, Դուրու և Սիակով ·յուղերը: Քելիշլիում ·ումարտակը մընաց մինչև 1916 թ. հոկտեմբերի 22-ը՝ կատարելով հետախուզական և պահակային դժվարին ծառայություն և հաճախակի փոխհրաձ·ություն ունենալով հակառակորդի զորամասերի հետ: 1916 թ. վերջը և 1917 թ. ձմեռն ու ·արունը ·ումարտակն անցկացրեց Նալուս բնակավայրում, որտեղ ծանր բնակլիմայական պայմաններում, հաճախ նաև կիսաքաղց և վատ հանդերձավորված վիճակում պանազան արյունահեղ մարտեր ունեցավ թուրքական ուժերի հետ[26]:

Պարսկական ռազմաբեմում իրենց փայլուն դրսևորեցին 4-րդ և 6-րդ հայկական հրաձ·ային ·ումարտակները, որոնք մեծ սխրանքներ ·ործեցին Իրանական Քրդստանում տեղի ունեցած մարտական ·ործողություններում: Փոխ·նդապետ Ա. Հովսեփյանի ·լխավորած 4-րդ ·ումարտակը 1916 թ. հունիսի 10-ից մինչև օ·ոստոսի 23-ն անընդհատ արշավանքների և մարտերի մեջ էր: Հունիսի 17-ի լույս 18-ի ·իշերը փայլուն իրականացված առաջխաղացմամբ 4-րդ ·ումարտակը ճեղքեց թուրքերի ամուր կազմակերպված պաշտպանությունը, ·րավեց Սեր-Սիրդաղ լեռան բարձունքները: Մեկ օր տևած համառ կռվում ·ումարտակը տվեց 4 սպանված և 53 վիրավոր[27]: Հուլիսի 18-ին ·ումարտակը հայկական 6-րդ հրաձ·ային ·ումարտակի հետ ·րավեց Փենջվինը: Քաղաքի և նրա շրջակա բարձունքների համար մղված արյունահեղ մարտերում 4-րդ ·ումարտակը տվեց 9 սպանված և 80 վիրավոր[28]: Հուլիսի 31-ի լուսաբացին 4-րդ ·ումարտակը, հարևան զորամասերի հետ, թեժ մարտերով տիրելով շրջակա բարձունքներին, ·րավեց կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող մի կետ՝ Սա·իզը:

Այդ հաղթանակի, մասնավորապես Սա·իզի շրջակա հմ. 1027 բարձունքը ·ըրավելու կապակցությամբ Սա·իզի զորաջոկատի պետ ·եներալ Կուլեբյակինը փոխ·նդապետ Հովսեփյանին հղում է մի հեռա·իր, որում ասվում է. «Շնորհավորում եմ ·ումարտակին առաջին հաղթանակի և մարտական մկրտության առթիվ: Շնորհակալություն մարտական փայլուն աշխատանքի համար: Այսօր անձամբ եղա ձեր ·րաված անառիկ դիրքերում և տեղում ·նահատեցի այն հաղթահարած հայ հրաձի·ների ջանքն ու սխրա·ործությունը»[29]:

Հայկական ·ումարտակի սխրա·ործությունը, նրա անձնվիրությունը բարձըր ·նահատեց նաև ընդհանուր հրամանատար ·եներալ Չեռնոզուբովը: Փոխնդապետ Հովսեփյանին հղած նրա հեռա·րում ասվում է. «Սրտանց ուրախ

[26] Տես նույն տեղում, ·. 17, թթ. 1—4:

[27] Տես նույն տեղում, ·. 18, թ. 27:

[28] Տես նույն տեղում, թ. 28:

[29] Նույն տեղում, թ. 14:

եմ Ձեր ·լխավորած կտրիճների փայլուն ·րծունեությունից: Թող օ·նի Ձեզ աստված և հետա·այում»[30]: 1917 թ. մարտի 2-ին ·ումարտակը ·րավեց Սունջը, մարտի 4-ին՝ Բանե քաղաքը: Այդ հաղթանակի առթիվ Թավրիզի կորաջոկատի պետ ·եներալ Նազարովը փոխ·նդապետ Հովսեփյանին հղել է մի հեռա·իր, որում ասվում է. «Շնորհավորում եմ կտրիճ հրաձի·ներին և նրանց հրամանատարին հաջողության կապակցությամբ:

Հատուկ շնորհակալությունս եմ հայտնում 4-րդ հայկական վաշտին»[31]:

Ընդհանրացնելով 4-րդ հրաձ·ային ·ումարտակի մարտական ·րծունեությունը՝ ·եներալ Կուլեբյակինը իր հուշերում ·րել է. «Հետևելով հայկական 4-րդ հրաձ·ային ·ումարտակի մարտական ·րծունեությանը՝ չի կարելի չհան·ել այն եզրակացության, որ այն անբասիր էր: Արշավանքներում նրա ցուցաբերած տոկունությունը, համառությունը հանձնարարված մարտական առաջադրանքների կատարման ·րծում, ·ումարտակի բոլոր պաշտոնյաների ·իտակցական վերաբերմունքն իրենց բացառիկ ծանր պարտականությունների նկատմամբ և անտրտնջությունը զրկանքների նկատմամբ, հատկապես ռազմական ·րծողությունների այնպիսի դժվարին, հեռավոր շրջաններում, ինչպիսիք են Սոուջ-Բուլաղ—Բանեն, և, վերջապես, հայ հրաձի·ների բարձր հայրենասիրությունը՝ ահա ·ումարտակի այն դրական կողմերը, որոնք բնորոշ են բարձր կար·ապահություն ունեցող և ճիշտ կազմակերպված զորամասերին»[32]:

Հայկական 6-րդ հրաձ·ային ·ումարտակը փոխ·նդապետ Միքայել Մելիք-Մուրադյանի ·լխավորությամբ մեծ սխրանքներ ·րծեց Սա·իզի շրջանում: 1917 թ. ·արնանը և ամռանը ·ումարտակն անընդհատ մարտերի և ընդհարումների մեջ էր: Մարտի 24-ից մայիսի 10-ը ·ումարտակը մեծ սխրանքներ ·րծեց Բանե քաղաքի շրջանում: Այդ ·ումարտակի ·րծողությունների մասին շտաբային զեկուցա·րում ասվում է. «Հայկական 6-րդ հրաձ·ային ·ումարտակը Սա·իզի կորաջոկատի կազմում մարտ ամսից, տեղակայվելով Բանեից 8



Գնդապետ (հետագայում գեներալ-մայոր)
Մ. Մելիք-Մուրադյան

վերստ հեռավորության վրա ·տնվող Դերիկխան ·յուղում, կատարում էր պահակազորային և հետախուզական ծառայություն ՈՒշթուրմիլի, Բաղվանի և Սա·իզի ուղղությամբ... 1917 թ. մարտի 24-ին թուրքական հետախույզները հարձակում ·րծեցին մեր ·ումարտակի՝ հմ. 835 բարձունքի վրա ·տնվող պահակաջոկատի վրա... Հակառակորդը, շրջապատելով առջևում ·տնվող պահակակորին, որտեղ ·տնվում էր 3-րդ վաշտի կրտսեր սպա պրապորշչիկ Սար·ըսյանցն իր դասակով, փորձում էր այն ·րավել: Սակայն պրապորշչիկ Սար·ըսյանցը, ո·ևորելով մարդկանց, ինքն առաջինը նետվեց ·րոհի և, ճեղքելով թըշնամու շղթան, հետապնդեց թուրքերին: Տեսնելով դա՝ հակառակորդը հրաժարվեց իր փորձերից և դիմեց փախուստի: Այդ մարտում հերոսի մահով ընկավ պահակակորի պետ պրապորշչիկ Սար·ըս-

[30] Նույն տեղում:
[31] Նույն տեղում, թ. 17:
[32] Նույն տեղում, ·. 18, թ. 29:

յանցը և իր մահով հավերժացրեց սխրա·ործությունը... Մարտի 28-ին՝ ·իշերը, հակառակորդը մեկ վաշտի ուժով հարձակվեց «835» բարձունքի շրջանում ·տնվող պահակակետի վրա: Պահակակետի պետ 3-րդ վաշտի կրտսեր սպա պրապորշչիկ Խեչունը իր դասակի հետ, չնայած հակառակորդի երկու համառ ·րոհներին, արիաբար պաշտպանեց պահակակետը և, չնայած թշնամու թվային առավելությանը և ·իշերային մարտավարության դժվարություններին, ստիպեց թուրքերին նահանջել:

Այդ սխրանքի համար պրապորշչիկ Խեչունը ներկայացվեց Սբ. Վլադիմիրի շքանշանի՝ ժապավենով և սրով»[33]:

Նույն թվականի ամռանը ·ումարտակը մեծ սխրանքներ ·ործեց նաև Փենջվինի շրջանում: Հունիսի 15-ից 17-ը տևած արյունահեղ ճակատամարտերում ·ումարտակը ·րավեց Բիստան բնակավայրը և նրա անառիկ համարվող դիրքերը: Այդ ժամանակ ձեռքից վիրավորվեց հետախույզների ջոկատի հրամանատար պոդպորուչիկ Հրաչյա Սարաֆյանը, որը վիրավորվելուց հետո էլ մնաց շարքում: Վիրավորվեցին, սպանվեցին կամ կաթվածահար եղան ևս 109 հրաձի·ներ, վիրավորվածներից շատերը մնացին շարքերում[34]:

Գումարտակի սխրա·ործությունները շնորհավորեցին Կովկասյան բանակի հրամանատար ·եներալ-լեյտենանտ Պրժևալսկին և կորպուսի հրամանատար ·եներալ-լեյտենանտ իշխան Վողբոլսկին: Դիվիզիայի հրամանատար ·եներալ Կարպովը, հեռա·րով շնորհավորելով ·ումարտակին լավա·ույն ·ործերի համար, իր հպարտությունն էր հայտնում առ այն, որ «հայ հրաձի·ները մտնում են իր դիվիզիայի կազմի մեջ»[35]:

Ռազմական ·ործողություններում իրեն լավա·ույնս դրսևորեց նաև ·նդապետ Պավել Բեկ-Փիրումյանի ղեկավարած հայկական 5-րդ հրաձ·ային ·ումարտակը, որը կազմված էր հիմնականում ղարաբաղցիներից: Գումարտակը 1916 թ. հուլիսի 12-ից մինչև օ·ոստոսի վերջը անընդհատ արշավանքների, մարտերի և ընդհարումների մեջ էր: 1916 թ. օ·ոստոսի 9-ին ·ումարտակը ·եներալ Ռիբալչենկոյի ·լխավորած կորաջոկատի կազմում մասնակցեց Պարսկաստանի Դրիթ-Ռայաթ և Ասխաբա լեռան մոտ տեղի ունեցած նշանավոր ճակատամարտին, որտեղ ռուսական կորքերը ·լխովին ջախջախեցին թուրքական 4-րդ (Դարդանելյան) դիվիզիան: Այդ ճակատամարտում ռուսական կորքերը, բացի մեծ ռազմաավարից, ·երի վերցրին 2000 թուրք զինվոր և 60 սպա[36]: Նույն թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին 5-րդ ·ումարտակը հայկական 4-րդ և 6-րդ ·ումարտակների հետ ·րավեց նաև Բանե քաղաքը: 5-րդ ·ումարտակի ·ործողությունների մասին նրա հրամանատար ·նդապետ Բեկ-Փիրումյանը ·րում է. «Երկարատև արշավանքներից մարդիկ բնավ մաշվել էին՝ չունենալով ո՛չ սպիտակեղեն, ո՛չ էլ կոշիկ, իսկ վերևի շորերից մնացել էին միայն պատառոտված շինելները: Նրանք օրերով մնում էին քաղցած, սակայն չէին տրտնջում՝ սրբորեն կատարելով իրենց պարտքը»[37]:

1916 թ. նոյեմբեր—դեկտեմբեր ամիսներին ·ումարտակը, անցնելով պարսկա-թուրքական սահմանը, դեկտեմբերի 6-ին Կոթուրի լեռնանցքով հասավ Վան: Դեկտեմբերի 13-ից մինչև 15-ը տևած կռիվներում ·նդապետ Պավել Բեկ-Փիրումյանի ·լխավորած ·ումարտակը, ռուսական զորամասերի հետ անցնելով հարձակման, սրընթաց հարվածներով դուրս քշեց թուրքական և նրանց օժանդակող քրդական ջոկատներին Վանի շրջակայքից, ազատա·րեց Աթաման ·յուղը և Ոստանի ուժեղ ամրացված թուրքական դիրքերը: Թուրքերը, ծանր կորուստներ կրելով, ստիպված նահանջեցին մինչև Սև լեռը[38]: Ազատա·րվեց Վանի ամբողջ շրջանը:

[33] Նույն տեղում, ·. 20, թթ. 9—11:

[34] Տես նույն տեղում:

[35] Նույն տեղում, թթ. 10—11:

[36] Տես նույն տեղում, ·. 19, թթ. 1—24:

[37] Նույն տեղում, թ. 4:

[38] Տես նույն տեղում, թթ. 1—24:

Ռուսական բանակի հրամանատարությունը բարձր ·նահատեց հայ հրաձի·ների մարտական սխրա·ործությունները: Հրաձի·ներից շատերը պար·ևատրվեցին մարտական շքանշաններով ու մեդալներով: Միայն 1917 թ. հուլիսի 15-ից 17-ն ընկած ժամանակամիջոցում Բիտտանի ճակատամարտին մասնակցելու համար Գեոր·իյան խաչի և այլ բարձր պար·ևների էին ներկայացվել ավելի քան 68 հայ հրաձի·ներ[39]: Քիչ չէր նաև փոխվածների թիվը:

1917 թ. ամռանը հայկական 6 հրաձ·ային ·ումարտակները վերակազմավորվեցին: Նրանց հիման վրա Կովկասյան ճակատում 1917 թ. օ·ոստոսի 12-ից մինչև սեպտեմբերի 28-ը ժամանակահատվածում կազմավորվեցին 6 հայկական հրաձ·ային ·նդեր, որոնք մտան ռուսական ·ործող բանակի կազմի մեջ:

Այսպիսով՝ երկար դարեր պետականությունից զրկված, ուստի և կանոնավոր բանակ չունեցող հայ ժողովուրդը 20-րդ դարի սկզբին հայ եկեղեցու և այլ ազ·ային կազմակերպությունների ջանքերի շնորհիվ ռուսական բանակի կազմում ունեցավ իր կամավորական ջոկատները, ապա և կանոնավոր փինվորական կազմավորումները՝ ազ·ային ·ումարտակները: Հետա·այում այդ ·ումարտակները փաստորեն դարձան Հայկական բանակային կորպուսի միջուկը, մի կորպուս, որն իրեն փառքով պսակեց հայ ժողովրդի համար բախտորոշ 1918 թ. մայիսյան հերոսամարտերում՝ դրանով իսկ նա-

[39] Տես նույն տեղում, թ. 11:

# ВОЕННАЯ ИСТОРИЯ

## АРМЯНСКИЕ СТРЕЛКОВЫЕ БАТАЛЬОНЫ РУССКОЙ АРМИИ— ПЕРВЫЕ АРМЯНСКИЕ РЕГУЛЯРНЫЕ ВОЕННЫЕ ФОРМИРОВАНИЯ XX ВЕКА

*М. Л. КАРАПЕТЯН, кандидат исторических наук*

### РЕЗЮМЕ

Армяне приняли самое активное участие в первой мировой войне: 13 из каждых 100 армян, проживавших на территории Российской империи, были призваны в армию и сражались в основном на Кавказском фронте. Подобная активность имела свои объективные причины. Вступая в войну с Турцией, Россия провозгласила своей целью решение «Армянского вопроса», в рамках которого гарантировала проведение реформ на территории Западной Армении, в частности—предоставление автономии 6 вилайетам, в основном населенным армянами, и «неразрывно связанной с ними» Киликии.

При активном участии Армянской апостольской церкви среди армян началось и приобрело широкий размах добровольческое движение, получившее одобрение со стороны русского командования. Добровольческие дружины (всего их было 7) оказали существенную помощь русским войскам, отличившись во многих сражениях на первом этапе войны. Однако к концу 1915 г. необходимость в дружинах отпала, поскольку русское командование сумело к этому времени сосредоточить на Кавказском фронте значительные силы регулярных войск.

Взамен дружин в составе русской армии были сформированы 6 стрелковых батальонов из офицеров и солдат армянской национальности, до этого сражавшихся в различных частях русской армии, а также часть армянских добровольцев из расформированных дружин. Русское командование высо-

ко оценило боевые заслуги бойцов армянских батальонов, многие из которых удостоились самых высоких боевых наград. В частности, командир дивизии, в составе которой действовал 6-ой армянский стрелковый батальон, генерал Назаров в своей поздравительной телеграмме по случаю успешных действий батальона в районе Пенджвина (Иран) отмечал, что он горд тем, что «армянские храбрецы сражаются под его командованием».

Боевые заслуги армянских батальонов высоко оценили такие русские полководцы, как командующий Кавказским фронтом генерал-лейтенант Пржевальский, командующие корпусами, отдельными отрядами и дивизиями генералы Чернозубов, Кулебякин, князь Водбольский, Карпов и многие другие. Они отмечали как высокое боевое умение армян, так и их самоотверженность, готовность выполнять самые трудные задачи в исключительно сложной боевой обстановке.

Армянские стрелковые батальоны стали первыми регулярными национальными военными формированиями в XX в. В дальнейшем они стали основой для армянских стрелковых полков—ядра Армянского армейского корпуса, который в судьбоносных для армянского народа майских сражениях 1918 г. не только сумел отстоять право армян на существование и отвел угрозу нового геноцида, нависшего над армянами в результате агрессии Турции, но и создал реальные предпосылки для возрождения армянского национального государства в лице провозглашенной 28 мая 1918 г. первой Армянской Республики.

## MILITARY HISTORY

### ARMENIAN SHOOTING BATTALIONS OF RUSSIAN ARMY— FIRST ARMENIAN REGULAR MILITARY FORMATION OF XX CENTURY

*M. L. KARAPETIAN, Candidate of Historical Sciences*

SUMMARY

The Armenian people took an active part in the World War I. Thirteen of one hundred Armenians living on the territory of Russian Empire were called to join the Army and were fighting mainly at the Caucasian front. Such an activity has its own objective reasons. Entering the war with Turkey, Russia proclaimed as its purpose the solution of «The Armenian question», within the bounds of which it guaranteed to make reforms on the territory of the Western Armenia, in particular—the autonomy of six vilajets, populated by Armenians mainly, and the Cilicia, «indissolubly connected with them».

With the active participation of the Armenian Apostolic Church a voluntary movement began and became widespread among the Armenian people. It got approval on the part of the Russian commandment. The voluntary friendly groups (there were seven of them) gave an essential help to the Russian troops, which distinguished themselves in many battles at the first stage of the war. However, there was no necessity to form the friendly groups, as the Russian commandment managed to concentrate the significant forces of the regular troops on the Caucasian front by the end of 1915.

Six shooting battalions were formed consisting of officers and soldiers of Armenian nationality instead of the friendly groups inside the Russian Army. They had been fighting in different parts of the Russian Army before. There was also a part of Armenian Volunteers from the divided friendly groups. The Russian Commandment appreciated highly the military merits of the Armenian battalions' fighters, many of which were honoured by the highest war awards. In particular, the commander of the division having within its structure the $6^{th}$ Armenian shooting battalion, general Nazarov sent a telegram containing the congratulation on the occasion of the battalion's successful actions in the region of Pendjvin (Iran). He noted that he was proud of the fact that «the brave Armenian people were fighting under his commandment».

The war merits of the Armenian battalions were appreciated highly by such Russian leaders as the lieutenant-general Prjevalski, who commanded the Caucasian front, the generals Chernozubov, Kulebiakin, the prince Vodbolski, Karpov and many others, who were the commanders of the corpses, separate unions and divisions. They signified both the high war mastery of the Armenian people and their self-denial, the readiness to fulfil the most difficult tasks in the exceptionally complicated fighting situation.

The Armenian shooting battalions became the first regular national military formations in the $20^{th}$ century. Further they became a base for the Armenian shooting regiments, the kernel of the Armenian Army corps. In the May battles of 1918 that were important for the destiny of the Armenian people this corps could defend the right of the Armenians for the existence and prevented the threat of the new Genocide as a result of Turkey's aggression. It also created real prereqiusits for the regeneration of the Armenian national state that was declared as the first Armenian Republic on the $28^{th}$ of May 1918.

# ՌԱԶՄԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՈՒՅԹՆԵՐ

**Հրետանային զինամթերքի զարգացման միտումները:** Աշխարհի պար·ացած երկրներում հրետանային հրաձ·ության արդյունավետության բարձրացման նպատակով ներկայումս ակտիվորեն մշակվում է ինքնուղղորդվող համակար·երով օժտված հրետանային պինամթերք (արկեր և ականներ), որը շատ մասնա·ետների կարծիքով պատկանում է ·երճշ·րիտ վենքերի թվին: Ռուսաստանի Դաշնությունում այդպիսի պինամըթերք են 152-մմ ·երճշ·րիտ «Սանտիմետր», «Կրասնոպոլ» արկերը և 240-մմ «Սմելչակ» ականը, որոնք ընդունվել են դաշտային հրետանու սպառապինության մեջ:

Այս պինամթերքն օժտված է ինքնուղղորդման կիսաակտիվ լազերային համակար·ով, որի ·ործողության սկզբունքը հասկանալի է դառնում նկ. 1-ից: Նշանառուն լազերային նշանացույցի պիսակն ուղղում է խոցվող օբյեկտի վրա, որի նշանաբռնումը կատարվում է պինամթերքի ինքնուղղորդման ·լխիկով (ԻՈԻԳ): ԻՈԻԳ-ով նշանակետի նշանաբռնումից հետո արկի շարժման կառավարումը կատարվում է շտկման շարժիչների օ·-նությամբ («Սանտիմետր» և «Սմելչակ») կամ աերոդինամիկական սարքերի միջոցով («Կրասնոպոլ»):

Նշված պինամթերքը ներկայումս չի ըստացել լայն կիրառում, ինչը մասնա·ետների կարծիքով պայմանավորված է հետևյալ հան·ամանքներով:

1. Զինամթերքն օժտված է միայն բեկորաականառումբային մարտական մասով (ԲԱՄՄ), ինչը թույլ չի տալիս հասնել բարձր արդյունավետության, հատկապես պրահատեխնիկայի խոցման դեպքում: Կուտակային լիցքի կիրառմանը խան·արում է այն հան·ամանքը, որ այդ դեպքում մենք ստիպված կլինեինք նրա առջևի մասում տեղադրել ԻՈԻԳ-ը և պայթուցիչ սարքը (տես նկ. 2):

2. Քանի որ ԲԱՄՄ-ն տեղադրված է պինամթերքի միջնամասում, ապա լիցքի պայթյունը տեղի կունենա խոչընդոտից ոչ պակաս, քան 500 մմ հեռավորության վրա, ինչը կիան·եցնի պրահահարման համար պայթյունի էներ·իայի ոչ ռացիոնալ օ·տա·ործման:

3. Արկի (ականի) թռիչքի ժամանակ լազերային ճառա·այթով նշանակետի թեթև լուսավորումը անհնար է դարձնում նշված պինամթերքի կիրառումը առավելա·ույն հեռավորության` 9—20 կմ-ի վրա հրաձ·ություն վարելու համար:

4. Նշանակետի թեթև լուսավորման կազմակերպման համար պահանջվում է հա-




Նկ. 1. Լազերային ուղղորդմամբ շտկիչ հրետանային սպառապինության «Սանտիմետր» համալիր

1. ինքնա·նաց հրետանային սարքավորանք, 2. թռիչքի հետա·իծը, 3. 2Կ25 արկը` նշանակետին մոտենալիս, 4. նշանակետ, 5. լազերային ճառա·այթ, 6. լազերային նշանացուցիչ-հեռաչափ, 7. նշանառու

կառակորդի թիկունքում ունենալ նշանառու՝ զինված 50 կ·-ից ոչ պակաս զան·ված ունեցող լուսավորիչ սարքով:

5. 10—20 կմ հեռավորությունների վրա նշանակետերի հայտնաբերման և լուսավորման համար հարկավոր է ունենալ ուղղաթիռ, որը 15 վրկ տևողությամբ լուսավոր-




Նկ. 2. 152-մմ կառավարվող 2Կ25 արկ

ման դեպքում կարող է խփվել հակառակորդի կողմից:

6. Վրա·ետնյա կամ օդային միջոցից արձակվող լազերային ճառա·այթով 5—15 վրկ-ի ընթացքում նշանակետի անհրաժեշտ լուսավորումը կքողարկերծի դիտակետի դիրքը, քանի որ ժամանակակից ցրահատեխնիկան զինվում է լազերային ճառա·այթման հայտնաբերման սարքերով, ինչը հակառակորդին թույլ է տալիս ակտիվ պաշտպանության և աերոզոլային քողարկող ծածկապատնեշի ստեղծման միջոցով հակազդել հրակծմանը:

Նշված համակար·երի մշակման ուղղությամբ տարվող աշխատանքը շարունակվում է, և հնարավոր է, որ մոտ ժամանակում ՌԴ-ում ստեղծվի ավելի արդիական ·երճշ·րիտ զինամթերք:

Զար·ացած արևմտյան երկրներում ժամանակակից հրաձ·ային-հրետանային զինամթերքի մշակումների հիմքում դրված է «կրակեցիր՝ մոռացար» սկզբունքը, ինչպես նաև համապիտանիության սկզբունքը, որի դեպքում միևնույն մարտական տարրերի կրողներ են լինում տարբեր միջոցներ (հրետանի, հրթիռներ, ավիառումբեր, ավիակասետներ, պաշտպանական կրակի համակար· և այլն):

Ընդամին մշակումների սկզբնական փուլերում օ·տա·ործված լազերային լուսավորման սարքերի փոխարեն ընտրվել են ռադիոտեղորոշումային և ինքնուղղորդման ինֆրակարմիր ·լխիկները՝ որպես «բոլորեղանակյա» և կիրառության համար ավելի հարմար մարտական միջոցներ: Դրանց թվին են դասվում ինքնանշանառու մարտական տարրերը (ԻՆՄՏ) և ինքնուղղորդվող մարտական տարրերը (ԻՈԻՄՏ):

ԻՆՄՏ-ն հիմնականում կիրառվում է անշարժ խմբային նշանակետերի խոցման համար: ՆԱՏՕ-ի երկրներում կատարված առավել հեռանկարային մշակումն է ԻՆՄՏ ՍԱԴԱՌՄ-ը (նկ. 3), որը նախանշանակված է 155 հրետանային համակար·երում (երկու մարտական մաս մեկ արկի մեջ), օպերատիվմարտավարական հրթիռների ·լխամասում, կառավարվող ավիառումբերում, կառավարվող հրթիռներում և հեռանկարային ավիացիոն կասետներում կիրառման համար: Հրետանու օ·նությամբ ԻՆՄՏ-ի կիրառման ընկըզբունքը հետևյալն է: Երկու ԻՆՄՏ պարունակող արկն արձակվում է դեպի կրահատեխնիկայի կուտակման շրջան: Պայթուցիչ սարքի հրամանով, մոտավորապես 750 մ բարձրության վրա կատարվում է արկի պատյանի բացում և տարրերի դուրսնետում հատակամասից: Ար·ելակային սարքի միջոցով տարրերի՝ արկի պտտմամբ առաջացած անկյունային արա·ությունը հասցվում է 0-ի, ինչից հետո բացվում է ժապավենաձև պարաշյուտը: ԻՆՄՏ-ն վայրէջքի և պտտման ընթացքում նշանակետի տվիչի միջոցով պարուրա·ծով նկարում է («կննում է») տեղանքը: Տվիչի տեսադաշտում նշանակետի հայտնվելու դեպքում միկրոպրոցեսորի օ·նությամբ որոշվում է նրա դիրքը և կատարվում է տարրի նշանաբերում ու հրարձակում դեպի այն:

ԻՈԻՄՏ-ն նախանշանակված է շարժվող խմբային նշանակետերի խոցման համար և զինված է անմիջականորեն դեպի նշանակետ ուղղորդման համակար·ով: Թռիչքի ըն-




Նկ. 3. Ինքնանշանառվող մարտական տարրի տեղաբաշխումային գծապատկեր

1. պատյան, 2. էլեկտրոնային բլոկ և սնուցման բլոկ, 3. պարաշյուտ, 4. ԻԿ տվիչ (աշխատանքային վիճակում), 5. պայթուցիկ նյութ, 6. երեսպատվածք, 7. միլիմետրանոց տվիչի ալեհավաք

կըվբնական հատվածում արկը շարժվում է ձ·աբանական հետա·ծով: Այնուհետև աերոդինամիկական ար·ելակման սարքերի միջոցով նրա պտտման հաճախականությունը նվազեցվում է մինչև 10 պտ/վրկ, իսկ թռիչքի կայունությունն ապահովվում է ար·ելակման պարաշյուտի միջոցով: Դրանից հետո դեն է նետվում պաշտպանական ·լխամասային շրջհոսիչը, և բացվում են թևերն ու պոչաթևերը: Հետա·ծի վերջին հատվածում նշանակետի հայտնաբերումը և կառավարումը կատարվում են ինքնուղղորդման ռադիոտեղորոշումային ·լխիկի միջոցով, ինչը թույլ է տալիս նշանակետը հայտնաբերել մինչև 2000 մ հեռավորությունների վրա: Կան 81 և 120 մմ տրամաչափի ականանետային ականներում սեփական ԻՆՄՏ-ների կիրառման տարբերակներ:

Արևմտյան պետությունների, ներառյալ Ճապոնիան, և նրանց ֆիրմաների միջև ·ոյություն ունեցող համա·ործակցությունը և ինտե·րացիան, որակյալ կադրերի ներ·րավումը և անհրաժեշտ ֆինանսավորումը այդ երկրներին հնարավորություն են տալիս համեմատաբար կարճ ժամկետներում մշակելու ԻՆՄՏ-ի և ԻՈԻՄՏ-ի մի ամբողջ ընտանիք:

Մշակումները կատարվում են հետևյալ հիմնական ուղղություններով.

—տարրերի նվազա·ույն եզրաչափերի և կան·վածի ապահովում՝ միաժամանակ մարտական մասի արդյունավետության մեծացմամբ,

—նշանակետերի բոլորեղանակյա ու խան·արումապաշտպանված տվիչների և ինքնուղղորդման ·լխիկների մշակում,

—նշանակետի որոնման օպտիմալ ալ·որիթմների մշակում, որոնք բացառեն նշանակետի բացթողումը կամ համակար·ի սխալ ·ործարկումը,

—լայն բլոկամոդուլային միօրինակացում, ինչը թույլ կտա հասնել տարբեր տեսակի կրողների վրա տարրերի կիրառման համապիտանիացման:

*Պատրաստեց գնդապետ Ա. Տ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆԸ*

# ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## Ð²Ú°ð°ÜÆ è²¼Ø²¶Æî²Î²Ü î°ðØÆÜ²´²ÜàôÂÚ²Ü Ò°ì²ìàðØ²Ü ä²îØàôÂÚàôÜÆò

*². è. Ø²ðîÆðàêÚ²Ü*

Հայերենի ռազմա·իտական տերմինաբանության ձևավորման սկզբնական փուլերում որդե·րվել է հիմնականում փոխառության ուղին: Հ. Աճառյանը ·րում է. «Նախահայերենը չուներ պատերազմական արվեստի, զենքերի և պետական կազմակերպության վերաբերյալ բառեր, ...որոնք ավելի հետո պիտի փոխ առնվեին իրանյաններից կամ այլ ազ·երից... Հայոց բնիկ զենքի անուններն են *թուր*, *նետ* և *սլաք*, որոնք հնդեվրոպական ծա·ում ունեին, մնացյալը մեծ մասամբ պարսկերեն է»[1]: Իսկ Մ. Աբեղյանն ավելի խիստ է արտահայտվում. «Դարերից ի վեր ռազմական կյանքով ապրած չլինելով՝ մեր լեզուն մնացել է այս նկատմամբ ընդհանրապես նախնական դրության մեջ»[2]:

Հ. Աճառյանը նշում է հնդեվրոպական նախալեզվից եկած ռազմա·իտական իմաստով ընդամենը 7 հայերեն բառ՝ *աղմուկ* (կռիվ), *մարտ*, *·երի*, *թուր*, *նետ*, *սլաք* (երկար կոթով նիզակ), *կունբ* (վահանի ուռուցիկ մասը): Ինչպես տեսնում ենք, այս բառերից մինչև այսօր էլ իրենց իմաստը պահպանել են չորսը՝ *մարտ*, *·երի*, *թուր*, *նետ*, իմաստափոխվել են *աղմուկ* և *սլաք* բառերը, *կունբ*-ն էլ ընդհանրապես դուրս է եկել ·ործածությունից: Իսկ իրենց իմաստը պահպանած պարզ բառերից կազմվել են նոր բառեր՝ *մարտավարություն*, *·երեվարել*, *թրատել*, *նետաձի·* և այլն:

Հայերենին ռազմա·իտական տերմիններ են անցել ասուրերենից (*բերդ*, *·ա·աթ* (ամրության վայր) և այլն), ասորերենից (*ավին*, *սուր* և այլն), եբրայերենից (*քոռին* (թիկնապահ խումբ), *սա·երովթ* (կորաշարք), *ռասիմ* (սուրհանդակների ·ունդ) և այլն), լատիներենից (*լե·եոն*, *մեքենա*, *կոմենտարիոս* (բանակի ցուցակը պահող անձ, համարակալ), *արմա* (զինանշան) և այլն), արաբերենից (*ալամ* (դրոշ), *թալան* (ռազմավար), *խանդակ* (խրամ, փոս՝ փորված հատկապես պարիսպների մոտ), *դմիշկ* (սուսեր) և այլն), թուրքերենից (*բաբան* (պարիսպ քանդելու սարք), *բարութ* (վառոդ)), ֆրանսերենից (*բասաճ* (արշավանք, մասնավորապես՝ խաչակիրների), *·ունդստաբլ* (սպարապետ, ·ալիս է լատիներենից, որտեղ նշանակում էր ախոռապետ), *·ալեր կամ ·ալերա* (ռազմանավ), *մարաջախտ* (մարշալ, ·ալիս է հին ֆրանսերենից, որտեղ սկզբնապես նշանակում էր ձիաբույծ, պայտար, հետա·այում ռուսերենի ազդեցությամբ փոխարինվել է *մարշալ* (ժամանակակից ֆրանսերենում՝ *մարեշալ*) ձևով), *հաստատ* (զինվոր, նիզակավոր) և այլն) և այլ լեզուներից: Եվրոպական լեզուներից փոխառությունները կատարվել են հիմնականում թար·մանական ·րականության միջոցով:

Փոխառություններն առավել շատ են եղել պարսկերենից, և միաժամանակ դրանք առավել կենսունակ են եղել, հատկապես իրենց բառակազմական արժեքով: Աճառյանը պարսկերեն փոխառությունները ներկայացնում է երկու խմբով՝ բառեր պատերազմի վերաբերյալ և բառեր զենքի վերաբերյալ[3]: Առա-

---

[1] *Հր. Աճառյան*, Հայոց լեզվի պատմություն, հ. 1: Ե., 1940, էջ 125:

[2] *Մ. Աբեղյան*, Ռուս-հայերեն ռազմական բառարան: Ե., 1925, էջ 5:

[3] Տես *Հր. Աճառյան*, նշ. աշխ., էջ 296:

ջին խմբի բառերն են՝ *ապուռ* (ավար), *ապստամբ*, *արշավ*, *·ումարտակ*, *·ունդ*, *դարան*, *դրոշ*, *կորք*, *թիրախ*, *թշնամի*, *ճամբար*, *սպարապետ*, *նահանջ*, *ռազմ*, *պատերազմ*, *վաշտ* և այլն: Երկրորդ խմբի բառերն են՝ *աշտե* կամ *աշտեն* (երկար կոթով նիզակ), *ասպար* (վահան), *զենք*, *զրահ*, *լախտ*, *նիզակ*, *պարս*, *սաղավարտ*, *տե·* և այլն:

Պարսկերենի ազդեցությունն ·ա·ավում է նաև հայերենի բառակազմության մեջ: Այսպես՝ դեռ հնում *·ունդ* բառից կազմվել է *·ունդա·ունդ* կրկնավորը, հմմ. պարսկերեն gurūhagurūh նույն իմաստով, *·ունդ ի ·ունդ*, հմմտ. պարսկերեն hajavar hajavar դարձյալ նույն իմաստով, *տուր հա տուր*, հմմտ. պարսկերեն dihadih կռիվ իմաստով: Այս բառերը, կիրառվելով որպես ածական և մակբայ, պարսկերենի նմանությամբ արտահայտում էին և մինչև այժմ էլ արտահայտում են սաստկության կամ հաճախության իմաստ:

Նշված փոխառությունները կատարվել են հիմնականում ·րաբարյան շրջանում, որոշ դեպքերում՝ միջին հայերենի շրջանում: Դրանց մի որոշակի մասը բընականաբար անցել է աշխարհաբարին: Ընդ որում աշխարհաբարում կան ·րաբարյան բառեր, որոնք աշխարհաբարին են անցել «·իտակցական իմաստափոխության» (Է. Աղայան) ճանապարհով, այլ կերպ ասած՝ ·րողների կամ ·իտնականների կողմից վերցվել են ուղղակի ·րաբարից և տարբեր իմաստներով ·ործածվում են մինչև այսօր: Ռազմական բընա·ավառին վերաբերող այդպիսի բառեր են՝ *պարետ*, *պարեկ*, *մարտկոց*, *ռումբ*, *դետ* և այլն: Սրանցով կազմվել են տերմինային արժեք ունեցող շատ բառեր ու բառակապակցություններ:

Մինչխորհրդային շրջանում հետըզհետե ձևավորվում ու հարստանում էր հայերենի ռազմա·իտական տերմինաբանության համակար·ը: Դրան նպաստում էր մասնավորապես հայոց պատմությանը նվիրված հայերեն ·իտական ·րականությունը, որը, բնականաբար, ընդ·րկում էր նաև երկրի ռազմական պատմությունը: Որոշակի դեր էին խաղում նաև ·եղարվեստական, այդ թվում թար·մանական ·րականությունը, բառարանները և այլն: Քիչ թե շատ ծավալուն բառարանները, թեկուզ ընդհանուր, ոչ մասնա·իտական, որոշակի առումով կար·ավորում, համակար·ում են իրենց ընդ·րկած բառապաշարը, ուրեմն և առանձին ·իտությունների տերմինաբանությունը: Այս առումով հիշատակության արժանի են Հարություն Դաղբաշյանի երկու բարձրարժեք բառարանները՝ «Լիակատար բառարան ռուսերենից հայերեն» (1902—1906 թթ., 125000 բառ) և «Լիակատար բառարան հայերենից ռուսերեն» (1911 թ., 70000 բառ):

Հայերենի ռազմա·իտական տերմինաբանությունը որոշակի կար·ացում ապրեց, մասնավորապես հայեցի տերմինների կազմավորման առումով, Հայաստանի առաջին հանրապետության տարիներին՝ 1918—1920 թթ., երբ Հայաստանն ունեցավ իր կանոնավոր բանակը, և որոշակի ժամանակահատվածում բանակում պաշտոնական հաղորդակցման լեզուն ռուսերենի փոխարեն հայերենն էր:

Հայերենի ռազմա·իտական տերմինաբանության կար·ացման համար առավել բարենպաստ պայմաններ ըստեղծվեցին խորհրդային իշխանության տարիներին, երբ Հայաստանը դարձավ խորհրդային դաշնային պետության մի մասը: Այդ տարիներին մեր ռազմա·իտական տերմինաբանությունը կար·անում էր՝ ուղեցույց ունենալով ռուսերենի լավ կար·ացած տերմինաբանական համակար·ը:

1925 թ. լույս տեսավ Մանուկ Աբեղյանի «Ռուս-հայերեն ռազմական բառարանը», որը հայերենի ռազմա·իտական տերմինաբանության կար·ացման կարևորա·ույն ուղենիշ է: Ժամանակի համար ծավալուն այս բառարանը մեկանում առաջինն է իր տեսակի մեջ: Նրանում մեծանուն հայա·ետը, քննական վերլուծությամբ զտելով ու կար·ավորելով մինչ այդ եղած տերմինաբանությունը, անհրաժեշտության բերումով կազ-

մելով նոր տերմիններ, ներկայայրեց հայերենի ռապմա·իտական տերմինաբանության ·իտականորեն ճշ·րտված ու համալրված, կար·ավորման որակապես նոր աստիճանի բարձրայված մի համակար·, որը կար·ավորիչ և ուղեյույց մեծ դեր խաղայ հետա·ա տարիներին և այժմ էլ այդ առումով չի կորյրել իր նշանակությունը:

Բերենք մի քանի օրինակ: Մինչև Աբեղյանի բառարանի լույս տեսնելը *կապիտան* տերմինը թար·մանվում էր *·ըլխապետ*: Աբեղյանը վերական·նեց *կապիտան* տերմինը, և այդպես էլ այն կիրառվում է մինչև այսօր: *Գեներալ* տերմինը թար·մանվում էր *պորավար*, որ նըպատակահարմար չէր, քանի որ *պորավար*-ն արդեն ռապմա·իտական տերմին է և ուրեմն դրանով դառնում է երկիմաստ, ինչն անհարմարություն է ստեղծում տերմինի կիրառության ժամանակ: Օրինակ՝ եթե ուպում ենք ասել՝ «Զորավար Անդրանիկը ·եներալ էր», պետք է ասեինք՝ «Զորավար Անդրանիկը պորավար էր»: Աբեղյանը *·եներալ* տերմինը ևս վերական·նեց, թեև ոչ բոլոր դեպքերում: Նա կապմել է նաև *նշանոց* (прицел) տերմինը, *առաջապահ* (авангардный) և *վերջապահ* (арьергардный) բառերին պու·ահեռ կապմել է *առաջապահական* և *վերջապահական* բառերը լրայուցիչ իմաստների արտահայտման համար (*առաջապահ* ·ունդ, բայց՝ *առաջապահական* մարտ), տարբերակել է *ականանետ* (·ործիք) և *ականաձի·* (պինվոր), նույն ձևով էլ՝ *ռմբանետ* և *ռմբաձի·* տերմինները և այլն: Նշենք նաև, որ Աբեղյանի կապմած որոշ տերմիններ էլ կիրառություն չ·տան, ինչպես՝ *ձի·* (выстрел), *բաժնյակ* (дивизион), *ինքնեկ* (автомат), *մեկնապեն* (партизан) և այլն:

1933 թ. լուսժողկոմատի կապմում ըստեղծվեց տերմինաբանական խորհուրդ, հետա·այում՝ տերմինաբանական կոմիտե (1955 թվականից՝ Մինիստրների խորհրդին առընթեր), որով տերմինաշինությունը դրվեց ·իտական ու պետական վերահսկողության տակ:

Ռապմա·իտական տերմինաբանության կար·ապման մեծ խթան դարձավ իր մասշտաբներով աննախադեպ Հայրենական մեծ պատերապմը: Նոր պենքեր ու սարքեր, մարտավարական և ռապմավարական նոր եղանակներ ու միջոյներ, և այդ բոլորը պահանջում էին իրենց տերմինները: Մեզ համար խընդիրը հան·ում էր ռուսերեն պատրաստի բառերի թար·մանությանը կամ փոխառությանը: Պատերապմի ընթայքում և պատերապմից հետո շատ տարիներ ավելի ու ավելի ճշտվում ու համալրվում էր հայերենի ռապմա·իտական տերմինաբանությունը: Ընդամին պատերապմի ժամանակ վիճակն այնպիսին էր, որ տերմինաշինությամբ պբաղվում էին ոչ այնքան ·իտնականներն ու ·րողները, որքան լրա·րողները. այնքան հրատապ ·ործ էր դա: Գ. Սևակը ·րել է. «Ռուսայ լեպուն բայի փոխառություններ տալուց հենց միայն Հայրենական պատերապմի ժամանակ պահանջ առաջադրեց կապմելու բապմաթիվ հայերեն բառեր, որոնց մի մասը, մոտ 60 բառ, հաստատվեց Տերմինաբանական կոմիտեի միայն մեկ նիստում. դրանք «Սովետական Հայաստան» օրաթերթի ստեղծած և որդե·րած նոր բառերն են՝ *·ետանց* (переправа), *դիպում* (попадание), *թևանցել, թիկնանցել, շրջանցել* (обходить), *կրակահերթ* (очередь), *վայրասլաց* (пикирующий), *տորպեդակիր* (торпедоносец), *փոխհրաձ·ություն* (перестрелка) և այլն»[4]:

Այստեղ մյուս ուշա·րավ հան·ամանքն այն է, որ մեր լեպուն սկսում է ուրիշ լեպուներից փոխառել բայեր: Գ. Սևակը ·րում է. «Հայոց լեպուն դարեր շարունակ պուրկ է եղել օտարազ·ի *բայեր* փոխառելու կարողությունից և անհրաժեշտ դեպքում դիմել է և մինչև 1943 թիվը դիմում էր միայն նկարա·րական կամ հարադրական միջոյին: Այսպես օրինակ՝ ասում էինք *մոբիլիպայիայի ենթարկել*, *օկուպայիայի ենթարկել* և այլն»[5]: Այս ձևերը դարձան, համապա-

[4] Գ. *Սևակ*, Հայոց լեզվի կարգացման սովետական փուլը: Ե., 1946, էջ 15:

[5] Նույն տեղում, էջ 18:

տասխանաբար, *մոբիլիզացնել*, *օկուպացնել և այլն*:

Այս շրջանում կատարվեցին բազում տերմինային ճշ·րտումներ: Այսպես՝ *զրահահար*-ը և *ավտոմատ*-ը սկսեցին ·ործածվել և՛ ·ոյականի, և՛ ածականի իմաստով, *կրրասյուն*-ի համաբանությամբ կազմվեց *շարասյուն*-ը, *ավտոմատ*-ի կողքին (ածականի իմաստով) կազմվեց *ինքնա·նաց*-ը (самоходный) և այլն:

Որոշ փոխառյալ տերմիններ պատերազմից առաջ ունեին իրենց հայերեն համարժեքները: Բայց վերջիններս մնայուն չեղան, և փոխառյալ տերմինները վերական·նվեցին իրենց կար·ավիճակով: Օրինակ՝ *կապիտան*, *·եներալ* (սրանք, ինչպես նշվեց, առկա էին նաև Աբեղյանի բառարանում), *լեյտենանտ*, *մայոր*, *սերժանտ* և այլն:

Հայերենի ռազմա·իտական տերմինաբանության զար·ացման համար նոր պայմաններ ստեղծվեցին Հայաստանի անկախության ձեռքբերմամբ: Բայց դա արդեն այլ խոսակցության նյութ է:

## Ð²Ø²ðÆ ´²è²ð²Ü

### *ì. Ê. ´²Ô¸²ê²ðÚ²Ü, ÷ÇÉÇëá÷³Û³Ï³Ý ·Ç ïáõÃÛáõÝÝ»ñÇ Ã»ÏÝ³Íáõ, ¹áó»Ýï, ¦Ð³ÛÏ³Ï³Ý µ³Ý³Ï§ Ñ³Ý¹»ëÇ Ñ³Û»ñ»Ý ï»ùëïÇ ËÙµ³·Çñ*

### Ð²Ú–èàôêºðºÜ-²Ü¶Èºðºõ ´²è²ð²Ü

աբբա—аббат; abbot
աբեղա—иеромонах; monk-priest
ազ·ային—национальный; national
—ազ·ային ինքնություն—национальная самость; national peculiarity
—ազ·ային միաբանություն—национальное единогласие; national unanimity
աղանդավորություն—сектантство; sectarianism
աղոթք—молитва; prayer
անձնակազմ—1. личный состав, 2. экипаж; 1. staff, 2. crew
—անձնակազմի բաշխման բաժանմունք—отделение распределения личного состава; department of staff's assignment
—անձնակազմի բժշկական զննման բաժանմունք—отделение медицинского осмотра личного состава; department of medical examination of the staff
—անձնակազմի դիմավորման բաժանմունք—отделение встречи личного состава; department of meeting of the staff
—անձնակազմի ընդունման կետ—пункт приема личного состава; point of the staff's admission
—անձնակազմի հանդերձավորման բաժանմունք—отделение экипировки личного состава; department of the staff's equipment
ապածածկա·րիչ—дешифратор; decoder
առաքյալ—апостол; apostle
աստված—бог; God
—աստծու հավատ—вера в бога; trust in God
աստվածաբանություն—теология, богословие; theology
Աստվածաշունչ—Библия; Bible
աստվածորդի—Сын Божий; God's Son
աստվածություն—божество; divinity
ավա·երեց—протоиерей; abbot
ավետյաց երկիր—земля обетованная; promised land
ատրուշան—капище (огнепоклонников); pagan temple
արարիչ—творец, создатель; creator
արժեքային կողմնորոշում—ценностная ориентация; value orientation
արքեպիսկոպոս—архиепископ; archbishop
բանակ—армия; army
—կադրային-զորակոչային բանակ—кадрово-призывная армия; regular and call-up army
—կադրային-միլիցիական բանակ—кадрово-милицейская армия; regular and militia army
—կանոնավոր բանակ—регулярная армия; regular army
—համընդհանուր զինապարտության հիմքի վրա ստեղծված բանակ—армия, созданная на основе всеобщей воинской повинности; army created on the base of universal military duty

բարձր լեռնային պայմաններ—условия высокогорья; Alpine conditions

բժշկական ստորաբաժանում—медицинское подразделение; medical unit

Գևոր·յան ճեմարան—семинария Геворгян; Gevorgian seminary

Գերա·ույն հո·ևոր խորհուրդ—Высший духовный совет, синод; synod

·երա·ույն քուրմ—Верховный жрец; Supreme priest

**դավանանք***—1. кредо, 2. вероисповедание, 3. догмат; 1. credo, 2. religion, 3. dogma

դավանափոխություն—вероотступничество; apostasy

**դավանություն**—1. вероисповедание, 2. кредо; 1. religion, 2. credo

դեզօքսիկորտիկոստերոն—дезоксикортикостерон; dezoxycorticosteron

դետք—дозор; patrol

դիտոց—визир; sight

դիտոցային—визирный; sight

դիտոցել—визировать; aim

դիտոցում—визирование; sighting, aiming

դրամական հան·անակություն—сбор денежных пожертвований; gathering of donations

դրոշ—знамя, флаг; flag

—խաչակերպ դրոշ—крестообразное знамя, крестовидное знамя; cross-shaped flag

—խաչակիր դրոշ—крестоносное знамя; cross-shaped flag

—խաչապատկեր դրոշ—знамя с изображением креста; flag with the picture of cross

—կենդանակերպ դրոշ—зооморфное знамя; zoomorphic flag

դրոշա·իտություն—наука о знаменах; flag science

եկեղեցական—1. церковный, 2. церковник; 1. church, 2. cleric

—եկեղեցական ժողով—церковный собор, церковное собрание; church meeting

եկեղեցի—церковь; church

—ազ·ային եկեղեցի—национальная церковь; national church

—Հայ առաքելական եկեղեցի—տես *Հայաստանյայց առաքելական եկեղեցի*

—Հայաստանյայց առաքելական եկեղեցի—Армянская апостольская церковь; Armenian apostolic church

—Հայ կաթոլիկ եկեղեցի—Армянская католическая церковь; Armenian catholic church

—ուղղափառ եկեղեցի—православная церковь; orthodox church

եպիսկոպոս—епископ; bishop

եպիսկոպոսություն—1. епископство, 2. епископат; episcopate

երեց—иерей; priest

**զորակոչ**—призыв; call

**զորահավաք**—мобилизация; mobilization

զորահավաքային—мобилизационный; mobilizational

զորանոց—казарма; barracks

զորք—войско; troops

—զորքի լրահամալրում—доукомплектование войск, пополнение войск; bringing up to strength of troops

—զորքի համալրում—комплектование войск; recruiting of troops

—զորքի հո·եբանական կայունություն—психологическая устойчивость войск; psychological stability of troops

զրահահարություն—бронепробивание; armour-piercing

թեմ—епархия; diocese

ժամեր·ություն—богослужение; mass

ինքնուղղորդման ·լխիկ—головка самонаведения; knob of self-directing system

իշխանափոխություն—смена власти; change of power

լազերային նշանացուցիչ-հեռաչափ—лазерный целеуказатель-дальномер; laser target-designator-range-finder

լուծունակություն—разрешающая способность; resolving power

լուսապաշտություն—светопоклонство; light worship

Լուսավորչի կանթեղ—лампада Просветителя; lamp of the Illuminator

խան·արում I—помеха; interference

—աղմկային խան·արում—шумовая помеха; sound interference

—ծածկապատնեշային խան·արում—заградительная помеха; blocking interference

—կազմակերպված խան·արում—организованная помеха; organized interference

—համաժամանակյա խան·արում—синхронная помеха; synchronous interference

—նշանառվական խան·արում—прицель-

---

* Սև տառատեսակով շարված տերմինների վերաբերյալ բառարաններից հետո տրվում են պարզաբանումներ:

ная помеха; aim interference
—սահուն խան·գարում—скользящая помеха; sliding interference
—տարաժամանակյա խան·գարում—асинхронная помеха; asynchronous interference
խան·գարում II—расстройство, нарушение; disorder, breaking
—խան·գարման կանխար·գելում—профилактика расстройства; prophylaxis of disorder
—հո·գեկան խան·գարում—психическое расстройство; mental disorder
—քնի խան·գարում—нарушение сна; breaking of sleep
խաչադրոշ—крестное знамя, хоругвь; crossflag
խաչանշան—крестный знак; cross sign
խաչվառ—տես *խաչադրոշ*
խոստովանություն—исповедь; confession
կաթողիկոս—католикос; catholicos
—Ամենայն հայոց կաթողիկոս—Католикос всех армян; Catholicos of all Armenians
—Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս—Католикос Великого Киликийского Дома, Catholicos of Great Cilician House
կաթողիկոսարան—патриаршие покои; patriarch's chamber
կառավարվող արկ—управляемый снаряд; directed bomb
կոնդակ—кондак, булла; bull
կորուստ—потеря; loss
—անդառնալի կորուստ—безвозвратная потеря; irreparable loss
—ժամանակավոր կորուստ—временная потеря; temporary loss
—կորստի դասակար·գում—классификация потерь; classification of losses
—մարտական կորուստ—боевая потеря; fighting loss
—ոչ մարտական կորուստ—не боевая потеря; non-fighting loss
—ռազմական կորուստ—военная потеря; military loss
—սանիտարական կորուստ—санитарная потеря; sanitary loss
կռապաշտություն—идолопоклонство; idolatry
կրոն—религия; religion
—հեթանոսական կրոն—языческая религия; heathenish religion
—քրիստոնեական կրոն—христианская религия; christian religion
կրոնական—религиозный; religious
—կրոնական ազատախոհություն—религиозное вольнодумство; religiou freethinking
—կրոնական հանդուրժողություն—веротерпимость, религиозная толерантность; religious tolerance
կրոնավոր—священнослужитель; priest
կրոնիշխանական հասարակություն—теократическое общество; theocratic society
կուտակային լիցք—кумулятивный заряд; cumulative charge
հակազդեցություն—противодействие; counteraction
հակազդում—реакция; reaction
համապիտանիության սկզբունք—принцип универсальности; principle of universality
Հայկական բանակային կորպուս—Армянский армейский корпус; Armenian Army Corps
Հայոց դարձ—обращение армян в христианство, крещение Армении; adoption of Christianity by Armenians, baptism of Armenia
հայրապետություն—патриаршество; patriarchate
հայրենադարձություն—репатриация; repatriation
հավատ—1. вера, 2. верование; 1. trust, 2. faith
—հավատո հան·անակ—символ веры; symbol of trust
—հեթանոսական հավատ—языческая вера; heathenish faith
—քրիստոնեական հավատ—христианская вера; Christian faith
հավատալիք—верование; religion
հավատացյալ—верующий; believer
հավատափոխություն—вероотступничество; apostasy
հավատք—տես *հավատ*
հարմարվել—адаптироваться, приспосабливаться; get adapted
հարմարվողական—1. приспособленческий, 2. приспособленец; 1. time-serving, 2. time-server
հարմարվողականություն—приспособленчество; time-serving
հարմարում—адаптация, приспособление;

adaptation
—անհատական հարմարում—индивидуальная адаптация; individual adaptation
—երկարատև հարմարում—длительная адаптация; long-term adaptation
—ընդհատուն հարմարում—прерывистая адаптация; interrupted adaptation
—կարճատև հարմարում—кратковременная адаптация; short-term adaptation
—պոպուլյացիոն հարմարում—популяционная адаптация; populational adaptation
հարմարումային—адаптационный; adaptational
հեթանոս—1. язычник, 2. языческий; 1. heathen, 2. heathenish
—հեթանոս մարդ—язычник; heathen
—հեթանոս ցեղ—языческое племя; heathenish tribe
հեթանոսական—языческий; heathenish
—հեթանոսական աստված—языческий бог; heathenish god
—հեթանոսական հավատալիք—языческое верование; heathenish religion
հեթանոսություն—язычество; heathenism
հեռակառավարում—телеуправление; telecontrol
հերալդիկա—геральдика; heraldry
հերալդիկ առարկա—геральдический предмет; heraldic article
հո · ևոր—духовный; spiritual
—հո · ևոր ծառայություն—духовная служба; spiritual service
հո · ևորականություն—духовенство; spiritual
հովվապետ—տես *քահանայապետ*
հովվապետություն—архиерейство; the bishops
հրաձ · ային · ումարտակ—стрелковый батальон; shooting battalion
հրամանատու համակար · —командная система; command's system
հրետանային զինամթերք—артиллерийский боеприпас; artillery ammunition
հուզական—эмоциональный; emotional
—հուզական անկայունություն—эмоциональная неустойчивость; emotional instability
—հուզական լարվածություն—эмоциональная напряженность; emotional tension
հունաբան դպրոց—грекофильская школа; greekophil school
հուսալքում—фрустрация; frustration
Մայր Աթոռ—патриарший престол; patriarch's throne
մանրէական պատրաստուկ—микробный препарат; microbe preparation
մար · արե—пророк; prophet
մար · արեական տեսիլք—пророческое видение; prophetic vision
մարդկային ռեսուրս—людской ресурс; human resource
մարտական տարր—боевой элемент; fighting element
մարտիրոս—мученик, страстотерпец; martyr
մարտիրոսություն—мученичество; martyrdom
մեկուսախմբային շահ—корпорационные интересы; corporational interests
մեհյան—1. языческий храм, 2. капище; pagan temple
մեղսա · ործություն—грехопадение; the Fall
մեղք—1. грех, 2. вина; 1. sin, 2. guilt
—մեղքի թողություն—отпущение грехов; remition of sins
—մեղքի քավում—искупление греха; redemption of a sin
Միածին—Единородный; Sole
մկրտություն—крещение; baptism
նվիրակ—1. посланник католикоса, легат, 2. духовное лицо—собиратель пожертвований для монастыря; 1. the envoy of catholicos, 2. spiritual person—collector of donations for monastery
նվիրապետություն—1. церковное духовенство, 2. иерархия духовенства; 1. clergy, 2. hierarchy of clergy
—եկեղեցական նվիրապետություն—церковная иерархия; church hierarchy
—թեմական նվիրապետություն—епархиальное духовенство; clergy of diocese
շարունակականություն—непрерывность; continuity
—մշակույթի շարունակականություն—непрерывность культуры; continuity of culture
—պատմության շարունականություն—непрерывность истории; continuity of history
պաշտամունք—культ; cult
պատարա · —литургия, месса, обедня; mass
—պատարա · մատուցել—служить литургию; serve mass
պատկերա · րություն—пиктография; pictography

պատկերամարտություն—иконоборчество; iconoclasm

պատմական հիշողություն—историческая память; historical memory

պատվո վարքականոն—кодекс чести; code of honour

պետականություն—государственность; State system

պետություն—государство; state

պսակ—1. венец, 2. տես *պսակադրություն;* 1. crown, 2. տես *պսակադրություն*

պսակադրություն—венчание; garland putting

ռազմա·իտական—военно-научный; military-scientific

—**ռազմագիտական բառարան**—военно-научный словарь; military-scientific dictionary

—**ռազմագիտական տերմին**—военный термин; military-scientific term

ռազմա·իտություն—военная наука; military science

սարկավա·—дьякон; deacon

—ավա· սարկավա·—протодьякон; archdeacon

սպարապետ—главнокомандующий, спарапет; commander-in-chief

ստրես—стресс; stress

—արտածին ստրես—экзогенный стресс; exogenous stress

ստրեսային իրավիճակ—стрессовая ситуация; stress situation

սրբա·ործել—освятить; inaugurate

սրբանալ—стать святым; to become saint

սրբավայր—святое место, святилище; sacred place

սուրբ—святой, священный; saint, holy

—սրբի վարք—житие святого; life of the saint

—Սուրբ ·իրք—Священное писание, Библия; Bible

—սուրբ ծնունդ—Рождество, святое рождение; Christmas

—սուրբ օծություն—святой помазанник; holy anointed sovereign

սփյուռքահայություն—армяне диаспоры; Armenians of Diaspora

վախ—страх; fear

վանական—монах; monk

վանահայր—настоятель, аббат, игумен; abbat

վարդապետ—1. архимандрит, 2. учитель; 1. archimandrite, 2. teacher

վարդապետություն—учение; doctrine

տանկային շարասյուն—танковая колонна; tank column

—«Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն—танковая колонна «Давид Сасунский»; tank column «Sasuntsi David»

տասնաբանյա—декалог; decalog

տերտեր—поп; priest

տոնացույց—святцы; church-calendar

ուխտ—1. обет, завет, 2. паломничество, 3. орден, конгрегация; 1. order, 2. pilgrimage, 3. vow

ուխտա·նացություն—паломничество, богомолье; pilgrimage

ուխտավայր—место паломничества; place of pilgrimage

քահանա—священник; priest

—ավա· քահանա—протоиерей; archpriest

—·նդի քահանա—полковой священник, капеллан; regiment priest

քահանայապետ—архиерей, первосвященник; high priest

քրիստոնեական—христианский; Christian

—քրիստոնեական համայնք—христианская община; Christian community

—քրիստոնեական մշակույթ—христианская культура; Christian culture

քրիստոնյա—1. христианин, 2. христианский; Christian

—քրիստոնյա ժողովուրդ—христианский народ; Christian people

քրիստոնեություն—христианство; Christianity

—քրիստոնեության որպես պետական կրոնի ընդունում—принятие христианства как государственной религии; adoption of Christianity as a state religion

## РУССКО-АРМЯНСКИЙ СЛОВАРЬ

аббат—1. աբբա, 2. см. *настоятель*

адаптационный—հարմարումային

адаптация—հարմարում

—длительная адаптация—երկարատև հարմարում

—индивидуальная адаптация—անհատա-

կան հարմարում
—кратковременная адаптация—կարճա-տև հարմարում
—популяционная адаптация—պոպուլյա-ցիոն հարմարում
—прерывистая адаптация—ընդհատուն հարմարում
адаптироваться—հարմարվել
апостол—առաքյալ
армия—բանակ
—армия, созданная на основе всеобщей воинской повинности—համընդհանուր զինապարտության հիմքի վրա ստեղծված բանակ
—кадрово-милицейская армия—կադրա-յին-միլիցիական բանակ
—кадрово-призывная армия—կադրա-յին-զորակոչային բանակ
—регулярная армия—կանոնավոր բանակ
армяне диаспоры—սփյուռքահայություն
Армянский армейский корпус—Հայկա-կան բանակային կորպուս
артиллерийский боеприпас—հրետանա-յին զինամթերք
архиепископ—արքեպիսկոպոս
архиерей—քահանայապետ, հովվապետ
архиерейство—հովվապետություն
архимандрит—վարդապետ
Библия—Աստվածաշունչ, Սուրբ գիրք
бог—աստված
богомолье—см. *паломничество*
богословие—см. *теология*
богослужение—ժամերգություն
боевой элемент—մարտական տարր
божество—աստվածություն
бронепробивание—զրահահարություն
булла—см. *кондак*
венец—պսակ
венчание—պսակադրություն, պսակ
вера—հավատ, հավատք
—вера в бога—աստծու հավատ
—символ веры—հավատո հանգանակ
—христианская вера—քրիստոնեական հա-վատ
—языческая вера—հեթանոսական հավատ
верование—1. հավատալիք, 2. см. *вера*
вероисповедание—1. դավանություն, 2. դա-վանանք
вероотступничество—1. դավանափոխու-թյուն, 2. հավատափոխություն
веротерпимость—կրոնական հանդուրժո-ղություն
верующий—հավատացյալ
Верховный жрец—գերագույն քուրմ
визир—դիտոց
визирный—դիտոցային
визирование—դիտոցում
визировать—դիտոցել
вина—մեղք
военно-научный—ռազմագիտական
военный—1. զինվորական, 2. ռազմական, պատերազմական, 3. ռազմագիտական
—военная наука—ռազմագիտություն
—военный словарь—ռազմագիտական բառարան
—военный термин—ռազմագիտական տերմին
войско—զորք
—доукомплектование войск—զորքի լը-րահամալրում
—комплектование войск—զորքի համա-լրում
—пополнение войск—см. *доукомплектование войск*
—психологическая устойчивость войск—զորքի հոգեբանական կայունություն
Высший духовный совет—Գերագույն հոգևոր խորհուրդ
геральдика—հերալդիկա
геральдический предмет—հերալդիկ ա-ռարկա
главнокомандующий—գլխավոր հրամա-նատար, սպարապետ
головка самонаведения—ինքնուղղորդ-ման գլխիկ
государственность—պետականություն
государство—պետություն
грекофильская школа—հունաբան դպրոց
грех—մեղք
—искупление греха—մեղքի քավում
—отпущение грехов—մեղքի թողություն
грехопадение—մեղսագործություն
дезоксикортикостерон—դեզօքսիկորտի-կոստերոն
декалог—տասնաբանյա
дешифратор—ապածածկագրիչ
догмат—դավանանք
дозор—դետք
духовенство—հոգևորականություն
—епархиальное духовенство—թեմական նվիրապետություն
—иерархия духовенства—նվիրապետու-թյուն
—церковное духовенство—նվիրապե-

տություն
духовный—հոգևոր
—духовная служба—հոգևոր ծառայություն
дьякон—սարկավագ
Единородный—Միածին
епархия—թեմ
епископ—եպիսկոպոս
епископат—եպիսկոպոսություն
епископство—եպիսկոպոսություն
завет—1. см. *обет*, 2. պատգամ
земля обетованная—ավետյաց երկիր
знамя—դրոշ
—знамя с изображением креста—խաչապատկեր դրոշ
—зооморфное знамя—կենդանակերպ դրոշ
—крестное знамя—խաչադրոշ, խաչվառ
—крестовидное знамя—см. *крестообразное знамя*
—крестоносное знамя—խաչակիր դրոշ
—крестообразное знамя—խաչակերպ դրոշ
игумен—см. *настоятель*
идолопоклонство—կռապաշտություն
иерей—երեց
иеромонах—աբեղա
иконоборчество—պատկերամարտություն
исповедь—խոստովանություն
историческая память—պատմական հիշողություն
казарма—զորանոց
капеллан—см. *полковой священник*
капище—1. ատրուշան, 2. մեհյան
католикос—կաթողիկոս
—Католикос Великого Киликийского Дома—Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս
—Католикос всех армян—Ամենայն հայոց կաթողիկոս
кодекс чести—պատվո վարքականոն
командная система—հրամանատու համակարգ
конгрегация—см. *орден*
кондак—կոնդակ
корпорационные интересы—մեկուսախմբային շահեր
кредо—1. դավանանք, 2. դավանություն
крестный знак—խաչանշան
крещение—մկրտություն
—крещение Армении—см. *обращение армян в христианство*
культ—պաշտամունք
кумулятивный заряд—կուտակային լիցք
лазерный целеуказатель-дальномер—լազերային նշանացույցիչ-հեռաչափ
лампада Просветителя—Լուսավորչի կանթեղ
литургия—պատարագ
—служить литургию—պատարագ մատուցել
личный состав—անձնակազմ
—отделение встречи личного состава—անձնակազմի դիմավորման բաժանմունք
—отделение медицинского осмотра личного состава—անձնակազմի բժշկական զննման բաժանմունք
—отделение распределения личного состава—անձնակազմի բաշխման բաժանմունք
—отделение экипировки личного состава—անձնակազմի հանդերձավորման բաժանմունք
—пункт приема личного состава—անձնակազմի ընդունման կետ
людской ресурс—մարդկային ռեսուրս
медицинское подразделение—բժշկական ստորաբաժանում
месса—см. *литургия*
микробный препарат—մանրէական պատրաստուկ
мобилизационный—զորահավաքային
мобилизация—զորահավաք
молитва—աղոթք
монах—վանական
мученик—մարտիրոս
мученичество—մարտիրոսություն
нарушение—см. *расстройство*
—нарушение сна—քնի խանգարում
настоятель—վանահայր
наука о знаменах—դրոշագիտություն
национальный—ազգային
—национальная самость—ազգային ինքնություն
—национальное единогласие—ազգային միաբանություն
непрерывность—շարունակականություն, անընդհատություն
—непрерывность культуры—մշակույթի շարունակականություն
—непрерывность истории—պատմության շարունակականություն
обедня—см. *литургия*
обет—ուխտ
обращение армян в христианство—քրիստոնեության ընդունում հայության կող-

միջ, Հայոց դարձ
орден—1. ուխտ, 2. շքանշան
освятить—սրբագործել
паломничество—1. ուխտ, 2. ուխտագնացություն
—место паломничества—ուխտավայր
патриаршество—հայրապետություն
патриаршие покои—կաթողիկոսարան
патриарший престол—Մայր Աթոռ
первосвященник—см. *архиерей*
пиктография—պատկերագրություն
помеха—խանգարում I
—асинхронная помеха—տարաժամանակյա խանգարում
—заградительная помеха—ծածկապատնեշային խանգարում
—организованная помеха—կազմակերպված խանգարում
—прицельная помеха—նշանառվական խանգարում
—синхронная помеха—համաժամանակյա խանգարում
—скользящая помеха—սահուն խանգարում
—шумовая помеха—աղմկային խանգարում
поп—տերտեր
потеря—կորուստ
—безвозвратная потеря—անդառնալի կորուստ
—боевая потеря—մարտական կորուստ
—военная потеря—ռազմական կորուստ
—временная потеря—ժամանակավոր կորուստ
—классификация потерь—կորուստների դասակարգում
—не боевая потеря—ոչ մարտական կորուստ
—санитарная потеря—սանիտարական կորուստ
призыв—զորակոչ
принцип универсальности—համապիտանիության սկզբունք
приспосабливаться—см. *адаптироваться*
приспособленец—հարմարվողական
приспособление—см. *адаптация*
приспособленческий—հարմարվողական
приспособленчество—հարմարվողականություն
пророк—մարգարե
пророческое видение—մարգարեական տեսիլք
противодействие—հակազդեցություն
протодьякон—ավագ սարկավագ
протоиерей—1. ավագ քահանա, 2. ավագերեց
разрещающая способность—լուծունակություն
расстройство—խանգարում II
—профилактика расстройства—խանգարման կանխարգելում
—психическое расстройство—հոգեկան խանգարում
реакция—հակազդում
религиозный—կրոնական
—религиозная толерантность—см. *веротерпимость*
—религиозное вольнодумство—կրոնական ազատախոհություն
религия—կրոն
—христианская религия—քրիստոնեական կրոն
—языческая религия—հեթանոսական կրոն
репатриация—հայրենադարձություն
Рождество—սուրբ ծնունդ
сбор денежных пожертвований—դրամական հանգանակություն
светопоклонство—լուսապաշտություն
святилище—см. *святое место*
святой—սուրբ
—житие святого—սրբի վարք
—святое место—սրբավայր
—святое рождение—см. *Рождество*
—святой помазанник—սուրբ օծություն
святцы—տոնացույց
священник—քահանա
—полковой священник—գնդի քահանա
священнослужитель—կրոնավոր
священный—սուրբ, սրբազան
—Священное писание—см. *Библия*
сектантство—աղանդավորություն
семинария Геворгян—Գևորգյան ճեմարան
синод—см. *Высший духовный совет*
смена власти—իշխանափոխություն
создатель—см. *творец*
спарапет—см. *главнокомандующий*
стать святым—սրբանալ
страстотерпец—см. *мученик*
страх—վախ
стрелковый батальон—հրաձգային գումարտակ
стресс—ստրես
—экзогенный стресс—արտածին ստրես
стрессовая ситуация—ստրեսային իրա-

վիճակ
Сын Божий—աստվածորդի
танковая колонна—տանկային շարասյուն
—танковая колонна «Давид Сасунский» —«Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն
творец—արարիչ
телеуправление—հեռակառավարում
теократическое общество—կրոնիշխանական հասարակություն
теология—աստվածաբանություն
управляемый снаряд—կառավարվող արկ
условия высокогорья—բարձր լեռնային պայմաններ
учение—1. ուսմունք, վարդապետություն, 2. ուսուցում
учитель—1. ուսուցիչ, 2. վարդապետ
флаг—см. *знамя*
фрустрация—հուսալքում
хоругвь—см. *крестное знамя*
христианин—քրիստոնյա
христианский—1. քրիստոնեական, 2. քրիստոնյա
—христианская культура—քրիստոնեական մշակույթ
—христианская община—քրիստոնեական համայնք
—христианский народ—քրիստոնյա ժողովուրդ
христианство—քրիստոնեություն
—принятие христианства как государственной религии—քրիստոնեության որպես պետական կրոնի ընդունում
ценностная ориентация—արժեքային կողմնորոշում
церковник—եկեղեցական
церковный—եկեղեցական
—церковная иерархия—եկեղեցական նվիրապետություն
—церковное собрание—см. *церковный собор*
—церковный собор—եկեղեցական ժողով
церковь—եկեղեցի
—Армянская апостольская церковь—Հայաստանյայց առաքելական եկեղեցի, Հայ առաքելական եկեղեցի
—Армянская католическая церковь—Հայ կաթոլիկ եկեղեցի
—национальная церковь—ազգային եկեղեցի
—православная церковь—ուղղափառ եկեղեցի
экипаж—անձնակազմ
эмоциональный—հուզական
—эмоциональная напряженность—հուզական լարվածություն
—эмоциональная неустойчивость— հուզական անկայունություն
языческий—հեթանոսական
—языческий бог—հեթանոսական աստված
—языческий храм—մեհյան
—языческое верование—հեթանոսական հավատալիք
—языческое племя—հեթանոս ցեղ

## ENGLISH-ARMENIAN DICTIONARY

abbat—վանահայր
abbot—1. աբբա, 2. ավագերեց
adaptation—հարմարում
—individual adaptation—անհատական հարմարում
—interrupted adaptation—ընդհատուն հարմարում
—long-term adaptation—երկարատև հարմարում
—populational adaptation—պոպուլյացիոն հարմարում
—short-term adaptation—կարճատև հարմարում
adaptational—հարմարումային
adoption of Christianity by Armenians—քրիստոնեության ընդունում հայերի կողմից, Հայոց դարձ
aim—դիտոցել
aiming—see *sighting*
Alpine conditions—բարձր լեռնային պայմաններ
apostasy—1. հավատափոխություն, 2. դավանափոխություն
apostle—առաքյալ
archbishop—արքեպիսկոպոս
archdeacon—ավագ սարկավագ
archimandrite—վարդապետ
archpriest—ավագ քահանա
Armenian Army Corps—Հայկական բանակային կորպուս
Armenians of Diaspora—սփյուռքահայություն

armour-piercing—զրահահարություն
army—բանակ
—army created on the base of universal military duty—համընդհանուր զինապարտության հիմքի վրա ստեղծված բանակ
—regular and call-up army—կադրային-զորակոչային բանակ
—regular and militia army—կադրային-միլիցիական բանակ
—regular army—կանոնավոր բանակ
artillery ammunition—հրետանային զինամթերք
baptism—մկրտություն
—baptism of Armenia—see *adoption of Christianity by Armenians*
barracks—զորանոց
believer—հավատացյալ
Bible—Աստվածաշունչ, Սուրբ գիրք
bishop—եպիսկոպոս
breaking—see *disorder*
—breaking of sleep—քնի խանգարում
bull—կոնդակ
call—զորակոչ
catholicos—կաթողիկոս
—Catholicos of all Armenians—Ամենայն հայոց կաթողիկոս
—Catholicos of Great Cilician House—Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս
change of power—իշխանափոխություն
Christian—1. քրիստոնեական, 2. քրիստոնյա
—Christian community—քրիստոնեական համայնք
—Christian culture—քրիստոնեական մշակույթ
—Christian people—քրիստոնյա ժողովուրդ
Christianity—քրիստոնեություն
—adoption of Christianity as a state religion—քրիստոնեության որպես պետական կրոնի ընդունում
Christmas—սուրբ ծնունդ
church—1. եկեղեցի, 2. եկեղեցական
—Armenian apostolic church—Հայաստանյայց առաքելական եկեղեցի, Հայ առաքելական եկեղեցի
—Armenian catholic church—Հայ կաթոլիկ եկեղեցի
—church hierarchy—եկեղեցական նվիրապետություն
—church meeting—եկեղեցական ժողով
—national church—ազգային եկեղեցի
—orthodox church—ուղղափառ եկեղեցի
church-calendar—տոնացույց
clergy—նվիրապետություն
—clergy of diocese—թեմական նվիրապետություն
cleric—եկեղեցական
code of honour—պատվո փարքականոն
continuity—շարունակականություն
—continuity of culture—մշակույթի շարունակականություն
—continuity of history—պատմության շարունակականություն
commander-in-chief—գլխավոր հրամանատար, սպարապետ
command's system—հրամանատու համակարգ
corporational interests—մեկուսախմբային շահեր
confession—խոստովանություն
counteraction—հակազդեցություն
creator—արարիչ
credo—1. դավանանք, 2. դավանություն
crew—անձնակազմ
crossflag—խաչադրոշ, խաչվառ
cross sign—խաչանշան
crown—պսակ
cult—պաշտամունք
cumulative charge—կուտակային լիցք
deacon—սարկավագ
decalog—տասնաբանյա
decoder—ապածածկագրիչ
dezoxycorticosteron—դեզօքսիկորտիկոստերոն
diocese—թեմ
directed bomb—կառավարվող արկ
disorder—խանգարում II
—mental disorder—հոգեկան խանգարում
—prophylaxis of disorder—խանգարման կանխարգելում
divinity—աստվածություն
doctrine—վարդապետություն, ուսմունք
dogma—դավանանք
emotional—հուզական
—emotional instability—հուզական անկայունություն
—emotional tension—հուզական լարվածություն
episcopate—եպիսկոպոսություն
faith—կրոն, հավատ
—Christian faith—1. քրիստոնեական կրոն, 2. քրիստոնեական հավատ, 3. քրիստոնեական հավատալիք
—heathenish faith—1. հեթանոսական կր-

րոն, 2. հեթանոսական հավատ, 3. հեթանոսական հավատալիք
fear—վախ
fighting element—մարտական տարր
flag—դրոշ
—cross-shaped flag—1. խաչակերպ դրոշ, 2. խաչակիր դրոշ
—flag science—դրոշա·գիտություն
—flag with the picture of cross—խաչապատկեր դրոշ
—zoomorphic flag—կենդանակերպ դրոշ
frustration—հուսալքում
garland putting—պսակադրություն, պսակ
gathering of donations—դրամական հան·անակություն
Gevorgian seminary—Գևոր·յան ճեմարան
get adapted—հարմարվել
God—աստված
God's Son—աստվածորդի
greekophil school—հունաբան դպրոց
guilt—մեղք
heathen—հեթանոս
heathenish—1. հեթանոսական, 2. հեթանոս
—heathenish god—հեթանոսական աստված
—heathenish tribe—հեթանոսական ցեղ
heathenism—հեթանոսություն
heraldry—հերալդիկա
heraldic article—հերալդիկ առարկա
hierarchy of clergy—նվիրապետություն
high priest—քահանայապետ, հովվապետ
historical memory—պատմական հիշողություն
holly anointed sovereign—սուրբ օծություն
human resource—մարդկային ռեսուրս
iconoclasm—պատկերամարտություն
idolatry—կռապաշտություն
inaugurate—սրբա·գործել
interference—խան·արում I
—aim interference—նշանառվական խան·արում
—asynchronous interference—տարաժամանակյա խան·արում
—blocking interference—ծածկապատնեշային խան·արում
—organized interference—կազմակերպված խան·արում
—sliding interference—սահուն խան·արում
—sound interference—աղմկային խան·արում
—synchronous interference—համաժամանակյա խան·արում
knob of self-directing system—ինքնուղղորդման ·լխիկ
lamp of the Illuminator—Լուսավորչի կանթեղ
laser target-designator-range-finder—լազերային նշանացույցիչ-հեռաչափ
light worship—լուսապաշտություն
loss—կորուստ
—classification of losses—կորուստների դասակար·ում
—fighting loss—մարտական կորուստ
—irreparable loss—անդառնալի կորուստ
—military loss—ռազմական կորուստ
—non-fighting loss—ոչ մարտական կորուստ
—sanitary loss—սանիտարական կորուստ
—temporary loss—ժամանակավոր կորուստ
martyr—մարտիրոս
martyrdom—մարտիրոսություն
mass—1. ժամեր·ություն, 2. պատարա·
—serve mass—պատարա· մատուցել
medical unit—բժշկական ստորաբաժանում
microbe preparation—մանրէական պատրաստուկ
military science—ռազմա·իտություն
military-scientific—ռազմա·իտական
—military-scientific dictionary—ռազմա·իտական բառարան
—military-scientific term—ռազմա·իտական տերմին
mobilization—զորահավաք
mobilizational—զորահավաքային
monk—վանական
monk-priest—աբեղա
national—ազ·ային
—national peculiarity—ազ·ային ինքնություն
—national unanimity—ազ·ային միաբանություն
order—ուխտ
pagan temple—1. ատրուշան, 2. մեհյան
patriarchate—հայրապետություն
patriarch's chamber—կաթողիկոսարան
patriarch's throne—Մայր Աթոռ
patrol—դետք
pictography—պատկերա·րություն
pilgrimage—1. ուխտ, 2. ուխտա·նացություն
—place of pilgrimage—ուխտավայր
prayer—աղոթք
priest—1. քահանա, տերտեր, 2. երեց, 3. կրոնավոր
—regiment priest—·նդի քահանա
principle of universality—համապիտանիության սկզբունք

promised land—ավետյաց երկիր
prophet—մար · արե
prophetic vision—մար · արեական տեսիլք
reaction—հակազդում
religion—1. կրոն, 2. հավատ, հավատք, 3. դավանություն, 4. դավանանք, 5. հավատալիք
religious—կրոնական
—religious free-thinking—կրոնական ազատախոհություն
—religious tolerance—կրոնական հանդուրժողություն
repatriation—հայրենադարձություն
resolving power—լուծունակություն
sacred—սրբազան
—sacred place—սրբավայր
saint—սուրբ
—life of the saint—սրբի վարք
sectarianism—աղանդավորություն
shooting battalion—հրաձ · ային · ումարտակ
sight—դիտողային
sighting—դիտողում
sin—մեղք
—redemption of a sin—մեղքի քավում
—remition of sins—մեղքի թողություն
Sole—Միածին
spiritual—1. հո · եոր, 2. հո · եորականություն
—spiritual service—հո · եոր ծառայություն
staff—անձնակազմ
—department of medical examination of the staff—անձնակազմի բժշկական զննման բաժանմունք
—department of meeting of the staff—անձնակազմի դիմավորման բաժանմունք
—department of staff's assignment—անձնակազմի բաշխման բաժանմունք
—department of the staff's equipment—անձնակազմի հանդերձավորման բաժանմունք
—point of the staff's admission—անձնակազմի ընդունման կետ
state—պետություն
stress—ստրես
—exogenous stress—արտածին ստրես
stress situation—ստրեսային իրավիճակ
Supreme priest— · երա · ույն քուրմ
synod—Գերա · ույն հո · եոր խորհուրդ
tank column—տանկային շարասյուն
—tank column «Sasuntsi David»—«Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն
sight—դիտոց
teacher—ուսուցիչ, 2. վարդապետ
telecontrol—հեռակառավարում
the bishops—հովվապետություն
the Fall—մեղսա · ործություն
theocratic society—կրոնիշխանական հասարակություն
theology—աստվածաբանություն
time-server—հարմարվողական
time-serving—1. հարմարվողականություն, 2. հարմարվողական
to become saint—սրբանալ
troops—զորք
—bringing up to strength of troops—զորքի լրահամալրում
—psychological stability of troops—զորքի հո · եբանական կայունություն
—recruiting of troops—զորքի համալրում
trust—հավատ, հավատք
—symbol of trust—հավատո հան · անակ
—trust in God—աստծու հավատ
value orientation—արժեքային կողմնորոշում
vow—ուխտ

# ä ² ð¼ ² ´ ² ÜàôØÜºð

**«Դավանություն», «դավանանք»:** Այս բառերն իմաստով մոտ են իրար, բայց սրանց միջև առկա է նաև որոշակի տարբերություն, որով սրանք դառնում են երկու տարբեր տերմիններ: «Դավանություն» տերմինը հիմնականում նշանակում է կրոնական համոզմունքների, հավատալիքների ամբողջություն, որոնցով մարդն առաջնորդվում է իր · ործունեության մեջ: Իսկ «Դավանանք» տերմինը հիմնականում նշանակում է փիլիսոփայական, քաղաքական, բարոյական սկզբունքների, համոզմունքների ամբողջություն, որոնցով մարդը նույնպես առաջնորդվում է իր · ործունեության մեջ (կրեդո, հավատամք): Սա՝ հիմնականում: Իսկ երկրորդաբար «դավանություն»-ը · ործածվում է նաև «դավանանք»-ի նշված իմաստով, և հակառակը: Այս հան · ամանքն անշուշտ լեզվի անկատարության դրսևորում է, հակասում է

տերմինին ներկայացվող միարժեքության պահանջին: ՈՒստի պետք է խուսափել դրանից, այսինքն՝ այդ տերմինները կիրառել միայն որպես հիմնական նըշված իրենց իմաստներով:

Հետաքրքիր է, որ նույնարմատ «դավանափոխ», «դավանակից», «դավանաբանություն» բառերը ավելի շատ վերաբերում են դավանությանը, քան դավանանքին: Ստ. Մալխասյանցը բերում է այսպիսի մի օրինակ. «Կաթոլիկը և բողոքականը հավատակից են իրար, բայց դավանակից չեն»:

**«Զորակոչ», «զորահավաք»:** Այս տերմինները ևս իմաստով մոտ են իրար, բայց սրանց միջև նույնպես կա որոշակի տարբերություն, և սրանք նույնպես երկու տարբեր տերմիններ են: «Զորակոչ» (призыв) տերմինը նշանակում է որոշակի տարիքի հասած և դրանով պինապարտ դարձած երիտասարդներին ըստ օրենքի պարտադիր պինվորական ծառայության կանչելը, որը կատարվում է պարբերաբար, խաղաղ ժամանակ: Իսկ «վորահավաք»-ը (мобилизация) նշանակում է ռազմական դրության հայտարարման ժամանակ պահեստի տարբեր տարիքի պինապարտներին պինվորական ծառայության կանչելը:

Այստեղ կա մի նրբություն: «Մոբիլիզացիա» օտար բառը նշանակում է ոչ միայն վորահավաք, այլև տրանսպորտի և այլ տեխնիկական միջոցների ներ·բավում պաշտպանության ·ործի մեջ, խաղաղ վիճակից պինված ուժերի լիակատար մարտական պատրաստության վիճակի բերում, ընդհանրապես տնտեսության, պետական հաստատությունների համապատասխանեցում ռազմական դրությանը: Այսպիսի լայն իմաստի արտահայտման համար պահպանվում է «մոբիլիզացիա» տերմինը:

**«Ռազմագիտական բառարան», «ռազմագիտական տերմին»:** Խորհրդային տարիներին մեզանում լույս են տեսել չորս ռազմա·իտական բառարան, որոնցից երեքը վերնա·րում անվանվում են «ռազմական բառարան», իսկ մեկը՝ «ռազմական տերմինների բառարան»: Սա բացահայտ սխալ է: Բառարանը, տերմինը չեն կարող կոչվել «ռազմական», պետք է կոչվեն «ռազմա·իտական». չէ՞ որ չկան տնտեսական, բարոյական և այլ բառարաններ ու տերմիններ, այլ կան տնտեսա·իտական, բարոյա·իտական և այլ բառարաններ ու տերմիններ: Սխալը ·ալիս է նրանից, որ ռուսերենում չկա ռազմա·իտություն իմաստով մեկ բառ, այլ կա բառակապակցություն՝ военная наука, որից, չ·իտես ինչու, նպատակահարմար չի համարվում հարկ եղած դեպքերում կազմել военно-научный ածականը, և շարունակում է կիրառվել военный ածականը: Բայց մենք պետք է հաշվի առնենք военный բառի տվյալ իմաստը և նման դեպքերում այդ բառը թար·-

## РАЗЪЯСНЕНИЯ

**«Դավանություն», «դավանանք»**: Эти слова близки по смыслу, но в то же время между ними есть некоторое различие, в силу чего они становятся двумя различными терминами. Термин դավանություն (вероисповедание) в основном обозначает совокупность религиозных убеждений, верований, которыми человек руководствуется в своей деятельности. А термин դավանանք (кредо, догмат) в основном обозначает совокупность философских, политических, моральных принципов, которыми также руководствуется человек. Побочно же դավանություն употребляется и в указанном для термина դավանանք смысле, и наоборот. Последнее обстоятельство несомненно является свидетельством несовершенства языка, противоречит предъявляемому к терминам требованию однозначности. А значит, следует избегать этого, то есть применять термины толь-

ко в указанном как основной смысле.

Кстати, однокоренные слова դավանափոխ (вероотступник), դավանաբանություն (вероучение), դավանակից (принадлежащий к тому же исповеданию) в большей степени относятся к слову դավանություն, чем к слову դավանանք. С. Малхасянц в своем толковом словаре армянского языка приводит следующий пример: «Католик и протестант принадлежат к той же вере (единоверцы), но не к тому же вероисповеданию».

**«Զորակոչ», «զորահավաք»:** Эти термины тоже близки по смыслу, но между ними существует определенное различие, что делает их двумя разными терминами. Термин զորակոչ (призыв) обозначает установленный законом вызов (призыв) на действительную военную службу в армии юношей, достигших определенного возраста и вследствие этого ставших военнообязанными, причем этот призыв осуществляется периодически, в мирное время. А զորահավաք (мобилизация) обозначает призыв из запаса на военную службу военнообязанных различного возраста во время объявления военного положения.

Но здесь есть один нюанс. Иностранное слово «мобилизация» обозначает не только мобилизацию военнообязанных, но и вовлечение в дело защиты страны транспортных и иных технических средств, перевод вооруженных сил из мирного состояния в полную боевую готовность, вообще приведение экономики страны, ее государственных институтов в соответствие с требованиями военного положения. Для выражения такого широкого смысла сохраняется термин մոբիլիզացիա, т. е. иностранное слово «мобилизация».

**«Ռազմագիտական բառարան», «ռազմագիտական տերմին»:** В советское время в Армении были изданы 4 военных словаря, три из которых были озаглавлены как ռազմական բառարան (военный словарь), а один—как ռազմական տերմինների բառարան (словарь военных терминов). Это—явная ошибка. В армянском языке словарь, термин не могут называться словом ռազմական (военный), а должны обозначаться словом ռազմա·գիտական (военно-научный). Ведь не могут быть տնտեսական (экономический в смысле хозяйственный), բարոյական (моральный) и другие подобные словари и термины, а они должны быть տնտեսա·գիտական (т. е. экономический от «экономика» в смысле науки), բարոյա·գիտական (т. е. словарь, термин этики как науки). Ошибка происходит от того, что в русском нет единого слова—ռազմա·գիտություն, а существует словосочетание «военная наука», от которого считается нецелесообраз-ным при необходимости образовывать прилагательное «военно-научный», а употребляется термин «военный». Но в армянском мы должны учитывать этот смысл русского слова «военный» и в подобных случаях переводить его словом ռազմա·գիտական (военно-научный).

## СПИСОК ИЛЛЮСТРАЦИЙ К СТАТЬЯМ


Стр

10 «Ной спускается с горы Арарат», фрагмент (1889 г.). Худ.—Ов. Айвазовский.

12 Посещение Президентом РА Р. Кочаряном церкви Св. Акопа. Иерусалим, 2000 г.

14 Задушевная беседа на духовно-моральные темы.

16 Остатки языческого капища в Кафедральном соборе Эчмиадзина.

19 Стелла с изображением свиноголового царя Трдата (V в.).

22 «Месроп Маштоц». Фрагмент гобелена Г. Ханджяна «Армянский алфавит» (1980 г.).

25 «Саак Партев». Фрагмент гобелена Г. Ханджяна «Армянский алфавит» (1980 г.).

28 «Давид Анахт (Непобедимый)» (XIII в.). Матенадаран, рук. № 1746.

35 «Св. апостол Фаддей» (XVIII в.). Худ.—Ов. Овнатанян.

37 «Св. апостол Варфоломей» (XVIII в.). Худ.—Ов. Овнатанян.

39 «Св. Григорий Просветитель» (XVII—XVIII вв.). Неизвестный армянский художник.

41 «Царь Трдат» (XVIII в.). Худ.—Ов. Овнатанян.

48 Миниатюра из рукописи «О Вардане и Армянской войне» (1539 г.). Матенадаран.

52 Церковь Св. Ншана, или Вардановцев, в Ахалцихе (1862 г.).

60 Войсковая церковь (XIII в.). Алаяз.

63 Верховный Духовный Совет (Синод) Св. Эчмиадзина, 1927 г.
**Слева направо**: I ряд—*архиеп. Матеос Матеосян* (предв. Бакинской и Туркестанской епархии), *архиеп. Хорен Мурадбекян* (местоблюститель патр. престола), *Католикос Геворг V, архиеп. Баграт Вардазарян, архиеп. Гарегин Овсепян;* II ряд—*еп. Артак Смбатян* (предв. Сюникской епархии), *Андреас Салтикян, архиеп. Геворг Чорекчян* (предв. Грузинской епархии), ученый-арменовед *С. Малхасян, еп. Гют Тер-Газарян, Исаак Амирян;* III ряд—*свящ. Погос I Беделян, архимандрит Григорис Ярамишян, архимандрит Рубен Манасян* (послан. католю в Ираке), *Врам Гарагуюмджян, архимандрит Исаак Тер-Микаелян* (предв. Ширакской епархии), *свящ. Акоп I* (местоблюститель предв. Араратской епархии), *архиеп. Вртанес Акопян* (предв. Арцахской епархии).

66 Католикос Вазген I.

71 Из номера газеты «Банакин амар» (США) за 23 мая 1920 г.

76 Католикос Геворг VI.

77 Один из танков колонны «Давид Сасунский».

85 Предводитель Арцахской епархии архиепископ Паргев во время богослужения в Гандзасарском монастыре.

87 Часовня, воздвигнутая бойцами за свободу Арцаха в годы Арцахской войны.

92 Образцы крестных знамен (хоругвей).

95 Образцы крестных знамен (хоругвей).

100 Католикос всех армян Гарегин II и Министр обороны РА Серж Саркисян. Эчмиадзин, 2000 г.

101 Заместитель Министра обороны РА генерал-майор Микаел Григорян и заместитель предводителя Араратской Патриаршей епархии епископ Навасард Кчоян подписывают Положение о духовной службе Армянской апостольской церкви в ВС РА. Эчмиадзин, 14 сентября 2000 г.

160 Андраник со своими соратниками в Эчмиадзине, 1915 г. В центре—Андраник, слева—епископ Г. Овсепян (в дальнейшем—Католикос Великого Киликийского Дома), справа—епископ Г. Чорекчян (в дальнейшем—Католикос всех армян Геворг VI).

165 Полковник (в дальнейшем—генерал-майор) М. Мелик-Мурадян.


*На I стр. обложки:* использованы изображения «Складень Копья» (1687 г.) и «Всеспаситель Авуц Тара» (IX—X вв.) (из альбома «Сокровища Эчмиадзина»).

*На III стр. обложки:* Католикос всех армян Геворг V благословляет армянских добровольцев. Эчмиадзин, 1915 г.

*На IV стр. обложки:* Военная часовня в Ераблуре (1999 г.).

THE LIST OF ILLUSTRATIONS AFFILIATED TO THE ARTICLES

Page

10 «Noah is coming down the Ararat mountain» (fragment) (1889). Painter—Hov. Ayvazovsky.

12 The visit of the president of the Republic of Armenia R. Kocharian to the church of Saint Jacob. Jerusalem, 2000

14 Cordial talk on spiritual and moral topics.

16 Ruins of the heathenish pagan temple in Etchmiadzin's Cathedral.

19 Stella with the picture of Tiridat, the king with pig-shaped head (5th century).

22 «Mesrob Mashtots». The fragment of G. Khandjian's tabestry «The Armenian Alphabet» (1880).

25 «Sahak Partev». The fragment of G. Khandjian's tabestry «The Armenian Alphabet» (1880).

28 «David Anhakht (the Invincible)» (the 13th century). Matenadaran, manuscript N 1746.

35 «Saint Thaddeus the Apostle». Painter—Hov. Hovnatanian (18th century).

37 «Saint Bartholomeu the Apostle». Painter—Hov. Hovnatanyan (18th century).

39 «Saint Gregory the Illuminator» (17—18 centuries). Unknown Armenian painter.

41 «Tiridat King» (18th century). Painter—Hov. Hovnatanyan.

48 Miniature from the manuscript «About Vartan and the Armenian War» (1539). Matenadaran.

52 The church of Saint Nshan, or of Vartan's people, in Akhaltskha (1862).

60 Military church (13th century). Alayaz.

63 Supreme Spiritual Council (Synod) of Saint Etchmiadzin, 1927.

**From the left to the right:** the 1st row—*the archbishop Mateos Mateosian* (the leader of Baku and Turkestan's dioceses), *the archbishop Khoren Muradbekian* (the placekeeper of the patriarch's throne), *the Catholicos Gevorg V, the archbishop Bagrat Vardazarian, the archbishop Garegin Hovsepian*, the 2nd row—*the bishop Artak Smbatian* (the leader of Syunik's diocese), *Andreas Saltikian, the archbishop Gevorg Chorekchian* (the leader of Georgian diocese), the scientist—armenologist *St. Malkhasian, the bishop Gyut Ter-Gasaryan, Isahak Amiryan*, the 3rd row—*the priest Poghos I Bedelian, the archimandrite Grigoris Yaramishian, the archimandrite Ruben Manassian* (the envoy of the catholicos in Irak), *Vram Garaguyumjian archimandrite Isahak Ter-Michaelian* (the leader of the Shirak's diocese), *the priest Jacob I* (the placekeeper of leader of the Ararat's diocese), *the archimandrite Vrtanes Hacobian* (the leader of the Artsakh's diocese).

66 Vazgen I, the Catholicos.

71 From the number of the newspaper «Banakin hamar» (USA) on the 23rd of May, 1920.

76 Gevorg VI, the Catholicos.

77 One of the tanks of the column «Sasuntsi David».

85 The leader of the Artsakh's diocese the archbishop Pargev.

87 The chapel, erected by the fighters for the liberty of Artsakh during the Artsakh's war.

92 Patterns of crossflags (banners).

95 Patterns of crossflags (banners).

100 The Catholicos of all Armenians Garegin II and the Minister of Defence of the Republic of Armenia Serj Sarkissyan. Etchmiadzin, 2000.

101 The Deputy Minister of Defence of the Republic of Armenia Major-General Michael Grigorian and the Deputy leader of the Ararat patriarch's diocese the bishop Navasard Kchoyan sign the thesis about the spiritual service of the Armenian Apostolic church in the Armed Forces of the Republic of Armenia. Etchmiadzin, the 14th of September, 2000.

160 Andranik with his companions in arms in Etchmiadzin (1915). Andranik is in the centre, the bishop G. Hovsepian (further—the Catholicos of the Guater Cilician home) is on the left, the bishop G. Chorekchian (further—the Catholicos of all Armenians Gevorg VI) is on the right.

165 Colonel (further—major-general) M. Melik-Muradian.

*On the 1st page of the cover*—the pictures of «The reliquary of Geghard» (1687) and «Havouts Tar, Amenaprkich St. Nshan» (9—10 centuries) (from the album «The treasures of Etchmiadzin») are used.

*On the 3rd page of the cover*—Gevorg V, the Catholicos of all Armenians, gives his blessing to the Armenian volunteers. Etchmiadzin, 1915.

*On the 4th page of the cover*—Military chapel in Yerablour (1999).

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

¶ÉË³íáñ ËÙµ³·ñÇ ï»Õ³Ï³É` *². î. Ðáí³ÏÇÙÛ³Ý*
ä³ï³ëË³Ý³ïáõ ù³ñïáõÕ³ñ` *Ø. Ø. ´³É³ÝÛ³Ý*
Ð³Û»ñ»Ý ï»ùëïÇ ËÙµ³·Çñ` *Ì. Ê. ´³Õ¹³ë³ñÛ³Ý*
Ò¨³íáñáÕ ÝÏ³ñÇã` *ê. Ð. Ü³ñ³½Û³Ý*
î»ËÝÇÏ³Ï³Ý ¨ ·»Õ³ñí»ëï³Ï³Ý ËÙµ³·Çñ` *². ä. Ü³½³ñ»ÃÛ³Ý*
êñµ³·ñÇã` *î. Ø. îÇñ³óáõÛ³Ý*

î»ùëïÇ Ñ³ñ·Ù³ÝáõÃÛáõÝÁ` *¶. ². ä³ÉÛ³ÝÇ, ø. Ì. öÇñáÛ³ÝÇ, ¸. ê. âÇÉÇÝ·³ñÛ³ÝÇ*

Ð³Ù³Ï³ñ·³ÛÇÝ ³å³ÑáíáõÙÁ` *Ì. è. Ê³É³ýÛ³ÝÇ, È. Ð. ÎÇñ³ÏáëÛ³ÝÇ*

Þ³åÇÏÇ 1-ÇÝ ¿çáõÙ û· ï³·áñÍí³Í »Ý ¦¶»Õ³ñ¹Á å³Ñ³ñ³Ýáí§ (1687 Ã.)
¨ ¦Ð³íáõó Ã³éÇ ²Ù»Ý³÷ñÏÇã êµ. Üß³ÝÁ§ (9 – 10-ñ¹ ¹¹.) ÝÏ³ñÝ»ñÁ (¦¾çÙÇ³ÍÝÇ ·³ÝÓ»ñÁ§ ·ñùÇó):
Þ³åÇÏÇ 4-ñ¹ ¿çáõÙ å³ïÏ»ñí³Í ¿ ºé³µÉáõñÇ ½ÇÝíáñ³Ï³Ý Ù³ïáõéÁ (1999 Ã.)

Èáõë³ÝÏ³ñã³Ï³Ý ³å³ÑáíáõÙÁ` ÐÐ äÜ Éñ³ïíáõÃÛ³Ý ¨ ù³ñá½ãáõÃÛ³Ý í³ñãáõÃÛ³Ý

Խմբագրության հասցեն՝ Երևան, Նալբանդյան, 20:
Հեռ.՝ 56-36-88, 56-28-51

Ð³ÝÓÝí»É ¿ ß³ñí³ÍùÇ 06.02.2001: êïáñ³·ñí»É ¿ ïå³·ñáõÃÛ³Ý 22.05.2001:
ÂáõÕÃÁ` ûýë»Ã³ÛÇÝ: üáñÙ³ïÁ` 70´108 1/16 :
Ðñ³ï³ñ³Ïã³Ï³Ý 15,82 Ù³Ùáõß: îå³·ñ³Ï³Ý 12,0 Ù³Ùáõß + 4 Ý»ñ¹Çñ:
ä³ÛÙ³Ý³Ï³Ý ïå³·ñ³Ï³Ý 17,5 Ù³Ùáõß: îå³ù³Ý³ÏÁ` 500:
î³é³ï»ë³ÏÁ` ¦Â³ÛÙë§ ¨ ¦´³ÉÃÇÏ³§: îå³·ñáõÃÛáõÝÁ` ûýë»Ã:
¶ÇÝÁ` å³ÛÙ³Ý³·ñ³ÛÇÝ: ÌÏ³Û³Ï³Ý` 523: ¸³ëÇã` 69263:

îå³·ñí»É ¿ ¦²Ù³ñ³ë§ ïå³ñ³ÝáõÙ:

## ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

## ХРИСТИАНСТВО В АРМЕНИИ

## CHRISTIANITY IN ARMENIAN



Էջմիածնի Մայր տաճար (4-րդ դ.)։ Կառուցված է այն տեղում, որտեղ ըստ Գրիգոր Լուսավորչի տեսիլքի իջել է Միածինը

Кафедральный собор Эчмиадзина (IV в). Построен на том месте, куда сошел Единородный Сын Господень в видении Григора Просветителя. От слов «Эчк Миацин» (сошествие Единородного) образовано название собора (Эчмиадзин), а затем и города

Cathedral of Etchmiadzin (4th century). It is built on the place, where the only God's son came down in the vision of Gregory the Illuminator. From the words «Echk Miatsin» (ascension of the only son) the name of the cathedral (Etchmiadzin) and then the city was formed



Մայր տաճարի իջման սեղան

Место сошествия в Кафедральном соборе

Place of ascension in the Cathedral



Մասունքի պահարան Նոյան տապանի մասունքով

Складень с мощами Ноева ковчега

Reliquary with relic of Noah's ark



Սուրբ Թադեոս առաքյալի աջը մասունքներով

Длань Святого апостола Фаддея с мощами

Right Hand of St. Thaddeus the Apostle, with relic



Սուրբ Գրիգոր Լուսավորչի աջը

Длань Святого Григория Просветителя

Right Hand of St. Gregory the Illuminator



Խաչ Սբ. Կարապետի աջով (17-րդ դ.).
Սբ. Էջմիածին

Крест с мощами св. Карапета (XVII в.).
Св. Эчмиадзин

Cross with the Right Hand of St. Karapet
(17th century). St. Etchmiadzin



Աշոտ Երկաթի խաչի պահարանը
(914—928 թթ.). Սբ. Էջմիածին

Складень креста царя Ашота Железного
(914—928 гг.). Св. Эчмиадзин

Reliquary with relic of King Ashot the
Iron's cross (914—928). St. Etchmiadzin



Մասունքի պահարան. Արագածի Սբ. Նշան
(13-րդ դ.)

Складень церкви Св. Ншана Арагаца
(XIII в.)

Reliquary with relic of St. Nshan Aragats's
church (13th century)



Պահպանակ, Էջմիածնի ավետարան
(6-րդ դ.). Մատենադարան, ձեռ. հմ. 2374

Оклад. Эчмиадзинское Евангелие (VI в.).
Матенадаран, рукопись № 2374

Amulet, Echmiadzin's Gospel (6th century),
Matenadaran, N 2374



Գեղարդ (12—13-րդ դդ.)։ Ունի վիմափոր կառույցներ

Гегард (XII—XIII вв.). Имеет пещерные постройки

Geghard (12th—13th centuries). It has cave buildings



Սբ. Հռիփսիմեի տաճար (618 թ.). Էջմիածին։ Կառուցված է Հռիփսիմե կույսի վկայարան դամբարանի վրա

Собор Св. Рипсиме (618 г.). Эчмиадзин. Построен на месте древней часовни, стоявшей над могилой мученицы девы Рипсиме

Cathedral of St. Hripsime (618), Etchmiadzin. It is built on the place of the ancient chapel, standing over the grave of the martyr virgin Hripsime



Խոր Վիրապ վանքը (17-րդ դ.)։ Կառուցված է այն տեղում,
որտեղ պահվել է կալանված Գրիգոր Լուսավորիչը

Монастырь Хор Вирап (XVII в.). Построен на том месте,
где содержался в заключении Григорий Просветитель

Monastery Khor Virap ($17^{th}$ century). It is built on the place,
where Gregory the Illuminator was kept in prison



Սբ. Գայանեի տաճար (630 թ.). Էջմիածին։ Կառուցված է Գայանե
կույսի վկայարան դամբարանի վրա

Собор Св. Гаяне (630 г.). Эчмиадзин. Построен на месте древней часовни,
стоявшей над могилой мученицы девы Гаяне

Cathedral of St. Gayane (630), Etchmiadzin. It is built on the place of the ancient chapel,
standing over the grave of the martyr virgin Gayane



Նարեկ (1173 թ.), «Գրիգոր Նարեկացի».
Մատենադարան, ձեռագիր hմ. 1568

Нарек (1173 г.), Григор Нарекаци.
Матенадаран, рук. № 1568

Narek (1173), Gregory Narekatsi.
Matenadaran, manuscript N 1568



Ավետում. Էջմիածնի Ավետարան (6-րդ դ.).
Մատենադարան, ձեռագիր hմ. 2374

Благовещание. Эчмиадзинское Евангелие (VI в.).
Матенадаран, рук. № 2374

Lady Day. Etchmiadzin's Gospel (6th century),
Matenadaran, manuscript N 2374



Մկրտություն. Մուղնիի Ավետարան (11-րդ դ.).
Մատենադարան, ձեռագիր հմ. 7736

Крещение. Евангелие Могни (XI в.).
Матенадаран, рук. № 7736

Epiphany. Maugni's Gospel (11th century).
Matenadaran, manuscript N 7736



Շարակնոց (1482 թ.), «Ավարայրի ճակատամարտը».
Մատենադարան, ձեռագիր հմ. 1620

Часослов (1482 г.), «Аварайрское сражение».
Матенадаран, рук. № 1620

Hymnal (1482), «Avarayr's battle».
Matenadaran, manuscript N 1620



Հայոց այբուբեն (ոսկի, թանկարժեք քարեր). Էջմիածին (1976 թ.)

Армянский алфавит (золото, драгоценные камни). Эчмиадзин (1976 г.)

Armenian alphabet (gold, precious stones). Etchmiadzin (1976)



Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդը
օրհնում է հայ կամավորներին:
Սբ. Էջմիածին, 1915 թ.



# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

**1–2** (27–28). **2001**